

ԽԱՂԱՏՈՒՐ ԴԱԴԱՅԱՆ

ԱՊՐՈՅԱՆ

ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

*(XVIդ. – XXդ. ստուգիմ քառորդ)*



9047.925)

Պ-12

ԽԱՉԱՏՈՒՐ ԴԱԴԱՅԱՆ

Արդյուն  
Պատ.

# ԱՊՐՈՅԱՆ

ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(XVIդ.- XXդ. առաջին քառորդ)

4358



ԵՐԵՎԱՆ - 2010

ՎԱՀԱՆ ԳՐԻՍԱՅԻ ԱՓՐՈՅԱՆ

*Մույն գրքի ստեղծման և  
սպազրոքյան մեկնման*

ՀՏԴ 941(479.25):929.5  
ԳՄԴ 63.3(2Հ)+63.2  
Դ 123

Դ-աղայան Խ.  
Դ 123 Ապրոյան գերդաստանի պատմություն  
(XVԻդ. – XXդ. առաջին քառորդ) / Խ.Դ-աղայան. - Եր.:  
Գասպրինտ, 2010.- 208 էջ:

*Սույն գիրքը շուրջ հինգ դարի կենսագրություն ունեցող, հայոց հնագույն ազնվականական տոհմի «Քազազարմեան եւ ծիրանածին» Ապրոյան գերդաստանի համառոտ պատմությունն է: Այդ փառապանծ տոհմի ազգանվեր անդամները եվրասիական տարրեր երկրներում եղել են վաճառականներ ու պետական-քաղաքական գործիչներ, զինվորականներ ու թարգմանիչներ, արվեստագետներ ու գիտնականներ: Ապրոյանների միջոցով հեղինակը վեր է հանել հայ ժողովրդի պատմության բազմաթիվ դրամատիկ էջեր:*

*Հանրամատչելի շարադրանքով աշխատանքը հիմնված է սկզբնաղբյուրների, փաստաթղթերի, վկայագրերի վրա և ունի ազգաճանաչողական բնույթ:*

ՀՏԴ 941(479.25):929.5  
ԳՄԴ 63.3(2Հ)+63.2

ISBN 978-99941-2-443-5

© Խ. Դ-աղայան, 2010  
© Վ.Գ.Ափրոյան, 2010

## ԱՌԱՋԱԲԱՆ

2009թ. գարնանը Երևանում հանդիպեցի ռուսաստանաբնակ ձեռնարկատերեր Վահան և Ռուբեն Ափրոյան\* եղբայրներին: Հայաստան էին ժամանել մեկ-երկու օրով, և մեր հանդիպումը շատ կարճ տևեց. կարդացել էին տարիներ առաջ տպագրված հոդվածներիցս մեկը ու խնդրեցին որոշ աղբյուրներ:

Մեր հաջորդ հանդիպումը կայացավ նույն թվականի ամռանը և առաջինից ավելի կարճ տևեց. Վահանն առաջարկեց գիրք գրել Ապրոյան գերդաստանի մասին... Թեպետ զրկվելու էի մի շարք մտահղացումների իրականացումից, իսկ Ապրոյանների տոհմավագ Աստվածատուրը հիշատակվում էր 1521 թվականից, այսինքն՝ վիթխարի աշխատանք էր սպասվում, այդուհանդերձ համաձայնվեցի ակնթարթորեն: Պատճառները մի քանիսն էին:

Նախ, ինձ առաջադրվում էր պատմական, հայագիտական ուսումնասիրություն ստեղծել, և ազատորեն զբաղվելու էի *իմ գործով*:

Երկրորդ, հնարավորություն էր ընձեռնվում կոնկրետ մարդկանց ճակատագրերի միջոցով ներկայացնել մեր ժողովրդի պատմության բազմաթիվ էջեր:

Եվ, երրորդ, մեկ անգամ ևս խոսք բացել առայսօր անարդարացիորեն մոռացության մատնված, բայց ազգին նվիրված, ազգ պահպանած հայ վաճառականական հասարակախավի մասին: Այն դասի ներկայացուցիչների, որոնց վիթխարի ներդրման անանց դրսևորումներից մեկը նաև հայոց տպագիր գիրքն է: Վաճառականներին առանձնացնում են հատկապես, որովհետև թեպետ Ապրոյանների մեջ կային պետական-քաղաքական գործիչներ, արվեստագետներ, թարգմանիչներ, զինվորականներ և այլք, այդուհանդերձ նրանց մեծ մասը վաճառականներ էին:

Կար ևս մեկ օրինաչափություն. ամեն անգամ, երբ մեր ժողովրդի բազմադարյա անցյալում համագործակցել են վաճառական

ու մտավորականը՝ ստեղծվել են մնայուն արժեքներ, պատվաբեր արդյունքներ թե մեկի և թե մյուսի համար: Իմա՝ դա միաժամանակ բազմադարյա ավանդույթների շարունակական զարգացման դրսևորումն էր լինելու XXI դարում:

...Գլխովին մխրճվեցի շուրջ հինգ դարի պատմություն ունեցող Ապրոյանների կյանքի ու գործունեության ուսումնասիրման մեջ: Ասել, թե դա բարդ ու դժվարին գործ էր՝ նշանակում է ոչինչ չասել, և ընթերցողի համար հետաքրքիր էլ չէ: Նշեմ միայն հետևյալը:

Ժամանակների հեռվից եկող Ապրոյանների անշոշափելի ներկայությունը, նրանց ոգին էր թելադրում այս գրքի շարադրանքը, անգամ՝ կառուցվածքը, և սա պահանջում էր աղբյուրների հանդեպ ուշադիր, նրբանկատ վերաբերմունք, գիտական պատասխանատվություն ու բարեխղճություն:

Հասու աղբյուրները ցավալիորեն անբավարար են, և դա ունի բացատրություն: Կան սկզբնաղբյուրներ և տարբեր հետազոտողների կողմից դրանց մեկնաբանություն-աղբյուրներ: Իմ խնդիրն էր պարզաբանել այս ամենը, զարեհատիկն առանձնացնել թեփից, համադրումների միջոցով պարզել ճշմարիտը, հավաստին: Նույնիսկ՝ ուղղել բազմաթիվ տարրական սրբագրական սխալներ, որոնք լրացուցիչ գլխացավանք էին պատճառում: Դա հանգեցրեց այն բանի, որ նման աշխատությունների շարադրանքի համար ընդունված մենք-ի փոխարեն երբեմն գործածեմ ես անձնական դերանունը, ինչը ոչ թե էժանագին ինքնափառաբանման դրսևորում է, այլ պատասխանատվության ստանձնում: Բացի այդ, երբեմն չեմ վարանել անելու ենթադրություններ, քանզի կարծում եմ, որ գոյություն ունի պատմական իրադարձությունների տրամաբանություն:

Մղության հաջորդ պատճառն այն է, որ Ապրոյանները, լինելով հայ ավանդապահ գերդաստանի տիպական ներկայացուցիչներ, դարեր շարունակ ապրել են հայրիշխանության, տղամարդապաշտության կանոններով, և նրանց ճյուղագրության մեջ հաճախ բացակայում է իգական կողմը՝ կանանց մասին տեղեկությունները շատ քիչ են:

Հաջորդ պատճառը ողբերգականության աստիճանի ցավալի է: Բանն այն է, որ Ապրոյաններն ունեցել են հնամենի ձեռագրերի, վկայությունների իրենց սեփական մատենադարանը, որն անհայտ հանգամանքներում վաճառքի է հանվել Փարիզում (այս փաստը նշում են Շ. Ջրպետը, Հովհ. Ջավրյանը, Ն. Ալինյանը): Դրանց մի զգալի մասը ձեռք է բերել հնագրավաճառ Ռոզենթալը և 1930-ական թթ. վաճառքի հանել Մյունխենում (օրինակ, Ե. Բեօմիրճեանի «Վիպասանութիւն յԱպրօ Չելէպիի» 144 մագաղաթյա էջերից բաղկացած կաշեկազմ, բազմագույն ոսկեխառն լուսանցազարդերով, զարդագրերով ձեռագրի գինը 550 մարկ էր):

Բայց գոյություն ունի ևս մեկ հիմնական, գլխավոր պատճառ. դա Ապրոյանների ստիպողական գաղտնակյանքն էր: Նրանք սերնդե-սերունդ միմյանց էին փոխանցում պատմական այն հուշվարկածը, որ իրենք սերում են Բագրատունիներից: Ավելին, նրանք ունեին նաև վավերագրեր, որոնց բովանդակությանը ծանոթ էին սահմանափակ թվով մարդիկ: Նրանցից առաջինը Ապրո Չելեբիի\* հովանավորյալ ու մերձավոր բարեկամ Երեմիա Չելեպի Բեօմիրճեանն\*\* է, ով բազմիցս անդրադարձել է Ապրոյաններին, և այդ գրվածքներն, անկասկած, սկզբնաղբյուրային նշանակություն ունեն: Ի մասնավորի, Երեմիա Բեօմիրճեանն իր մեկենաս Ապրո Չելեբիի մասին գրում է.

*Ընդ Հեթմոյ եւ Լեւոնին թագազարմեան  
Ծիրանածինըս Աբրահամ հանգիտական  
Մինն ի նոցունց՝ ի սոյն կէտի յար եւ նըման\*\*\*:*

Ապրո Չելեբիին թագազարմեան և ծիրանածին անվանելն, անշուշտ, պատահական չէր:

Հաջորդ անվիճարկելի, վստահելի սկզբնաղբյուրը Չմյուռնիայի հոգևոր առաջնորդ Մարտիրոս եպիսկոպոսի 1804թ. ապրիլի 20-ին վավերացրած վկայագիրն է:

1877թ. փետրվարի 9-ին, շատ հին ու վստահելի վկայություններ

րի հիման վրա, նույնպիսի մի հաստատում է տվել Պոլսո պատրիարք Ներսես Վարժապետյանը:

Հարկ է նշել, որ Ապրոյաններից միակը, ով պաշտոնապես, աներկյուղ գործածել է Բագրատունի ազգանունը, եղել է Նեապոլում բնակվող ականավոր նկարիչ, հասարակական գործիչ իշխան Ասլան դ'Ապրոն: Նա է ժողովել իր գերդաստանի ծագումնաբանության վերաբերյալ վկայագրերը: Նա է Մարտիրոս եպիսկոպոսի 1804թ. փաստաթղթի ֆրանսերեն վավերական թարգմանության բնագիրը՝ մագաղաթի վրա, ի պահ հանձնել Սբ. Ղազար վանքին:

Նա է Վենետիկի Մխիթարյաններին ի պահ հանձնել Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Դ Չուղայեցու 1680թ. մի կոնդակի իտալերեն վավերական թարգմանությունը, որի բովանդակությունը հետևյալն է: Նպատակ ունենալով Լեհաստանի հայերին փրկել կաթողիկոսանքի վտանգից, կաթողիկոսը 1671թ. կոնդակով լեհահայերի հոգևոր առաջնորդ է կարգում Վաղարշապատում գտնվող վարդապետ Թեոդոր Վարդանանցին: Վերջինս, սակայն ի վիճակի չի լինում պաշտոնն ստանձնել (լեհահայոց աթոռը մինչև 1679թ. չի զիջում Հովհաննես Քարսառանենցը, որից հետո նրան փոխարինում է Նիկոլ չեպիսկոպոսը): Խոսելով այս ամենի մասին, Ասլան դ'Ապրոյի մերձավորներից մեկը՝ Մխիթարյան հայր Քերոբե Չրաքեանը գրում է. «Այս վաերաթուղթը սակայն զմեզ կը հետաքրքրե, որովհետև ապացուցանել կը թուի թե Թեոդոր բացի Բագրատունիներու ցեղին վերաբերելուն, Ապրոներու տոհմին մէկ ուրիշ ճիւղին կը պատկանի: Թեոդոր անունը, որ Աստուածատուր կը նշանակէ, կը տեսնուի Ապրոներու ազգատոհմին ճիւղագրութեան գլուխը և իրեն յաջորդներուն մէջ ալ: Իսկ Բագրատունի ցեղին յիշատակութիւնը եթէ դիտմամբ յետոյ կը ծածկուի և լռութեան կը տրուի, ինչպէս իշխանական միւս ցեղերու անունները, զգուշութեան հետեւանք էր տիրող կառավարութիւններուն (թուրքերուն և պարսիկներուն) կասկածը չարթնցընելու համար, հասկնալի պատճառով»<sup>1</sup>:

<sup>1</sup> Բ. Չրաքեան, Ապրոյեան գերդաստանը, «Բազմավէպ», 1953թ., էջ 7:

Ի՞նչ «հասկնալի պատճառի» մասին է խոսքը: Ապրոյանները ձեռներեց, ունևոր, հասարակական ակնառու դիրք գրավող անձինք էին, ծառայում էին թուրքական սուլթաններին ու Եգիպտոսի կուսակալներին, հարաբերվում էին ռուսաց կայսեր, տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաների հետ, ու հանկարծ պարզվեր, որ սերում են հայոց վերջին արքայատոհմից և պետականությունից զրկված ժողովրդի ազնվականներ են: Ինչպիսի՞ն կլիներ նրանց հանդեպ վերաբերմունքը... Հենց նրանց ծագումն էր վտանգի հիմնական սպառնալիքը, և բռնություններից, հալածանքներից, ոչնչացումից խուսափելու համար Ապրոյանները ստիպված էին ծածուկ կյանք վարել, հնարավորինս հեռու մնալ հրապարակայնությունից:

Կուզենալի նշել մեկ բանի մասին ևս. խստորեն պահպանելով գիտականությունը, հիմնվելով փաստերի, իրադարձությունների հավաստիության վրա, այդուհանդերձ ձգտել են ստեղծել ընթերցողական, ինքնագիտակցային, ազգաճանաչողական գիրք: Աշխատել են նաև Ապրոյանների միջոցով ցույց տալ այն երկրների իրողությունները, այն պայմաններն ու ժամանակները, որոնցում նրանք գործել են:

Թե ինչ է ստացվել այս ամենից, անկեղծորեն և առանց սեթևեթանքի խոստովանում են՝ դժվարանում են ասել: Թողնում են ընթերցողի դատին:

Մրտանց ափսոսում են միայն մեկ բանի համար՝ գիտեմ բազմաթիվ փաստաթղթերի, վկայագրերի, հարակից նյութերի գոյության մասին, որոնք սակայն ինձ հասու չեն: Դրանք գտնվում են Ալեքսանդրիայում ու Կահիրեում, Վենետիկում ու Նեապոլում, Երուսաղեմում ու Վիեննայում, Ամստերդամում ու Փարիզում, Լոզանում ու Մոսկվայում, Թուրքիայում: Եվ հիմա ունեն մեկ՝ կիսատության, թերասացության, անավարտության զգացողություն...

## ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ՏՈՀՍԱՎԱԳ

Ուսումնասիրելով Ապրոյան գերդաստանում պահվող, ինչպես նաև Չմյուռնիայի առաջնորդարանում եղած թղթերը, Երեմիա Քեօմիրճեանի գրվածքները և այլ հավաստի աղբյուրներ՝ 1804թ. ապրիլի 20-ին Չմյուռնիո հոգևոր առաջնորդ Մարտիրոս եպիսկոպոսը կազմեց ու հաստատեց Ապրոնների ծագումնաբանական վավերագիրը<sup>1</sup>: Փաստաթուղթն սկսվում է տոհմավագ Աստվածատուրի մասին հետևյալ հիշատակությամբ. «Յայտ առնենք զի նախնիքն այսր տոհմի յետ փախստեան յերեսաց աւերածոյ Անի քաղաքին՝ անընդհատ շարունակութեամբ իջեալ ի սերունդս որդւոց՝ զան ժամանեն մինչեւ ի նախահաւն սոցա ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, այր ճոխ եւ փառաւոր, որ նոյնպէս զհայրենին գնալով ճանապարհ՝ բաստազեղուն ստացուածովք պերճացեալ՝ ոչ սակաւ նպաստամատոյց ամենեցուն լինէր: Սոյն սա ծնանի ի Կարին զերկուս որդիս, զորս վարժեալ ի հայրենի կրթութիւնս՝ զմահտեսի\* ԱԼՓԻԱՐՆ ասեմ եւ զԱՍԼԱՆ, ալեւորեալ լի ատուրքք կնքէ զկեանս իւր»: Այսինքն, ամենքին նպաստ բերած, խոր ծերության հասակում վախճանված Աստվածատուրն ունեցել է Ալփիար և Ասլան անուններով երկու որդի, որոնք Կարինում (Էրզրում) հայկական կրթություն են ստացել:

Այստեղից սկսվում է Ապրոյան զարմի պատմությունը:

<sup>1</sup> Տե՛ս սույն գրքի «Ակայագրեր» բաժնում:

## ԱՍԼԱՆ ԵՎ ԱԼՓԻԱՐ.


«ՊԱՏԵՐԱԶՍԻ ԶԱՂԱՔԻ» ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Նույն վկայագրում Ալփիարի և Ասլանի մասին ասվում է. «Յետ սորա յաջորդէ ի տանուտերութիւն անդրանիկն իւր մահտեսի ԱԼՓԻԱՐ. եւ այն ինչ դուն գործէ ի բարիոք տնօրէնութիւն կառավարութեան, յառնէ խոռովութիւն ի մէջ երկուց ազգաց Օսմանցոց եւ Պարսից, որ ձգի ցմիջոցս իբր ամաց յիսնից. ի թագաւորել ի վերայ Հազարու սուլդան Միւլէյմանայ, եւ ի վերայ Պարսիցն շահ Դահմասայ առաջնոյ յամի Տեառն 1521: Վասն որոյ թողեալ մահտեսի Ալփիար զկողմանս զայնոսիկ՝ առնու զեղբայրն իւր զԱսլան եւ զամենայն ընտանիս իւր եւ զնորա՝ հանդերձ ծառայիւք եւ աղախնօք, աճապարէ ի կողմանս արեւմտից, զտեղի բնակութեան առեալ ի սահմանս Մաճառաց ի Պէլլղատ, ու սկսանի զվաճառականութիւն, եւ համբաւ բազում ստանայ յայնոսիկ կողմանս: Ծնանին սմա երկու ուստերք՝ ՄՈՒՐԱՏԻԱՆ եւ ՅՈՎՀԱՆՆԷՍ. եւ երկու եւս դասերք՝ ԿԻԼԶԱՏԷ եւ ՍԱՐԻԱՍ: Եւ եղբօր սորա եւս լինին երկու որդիք՝ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եւ ԵԱՂՈՒՊ. որք սերեալ ցերկրորդ ծնունդս՝ լրենն. նմանապէս եւ դուստր մահտեսի Ալփիարայ ժամանեալ յերկրորդ ծնունդս՝ դադարէ: Իսկ ինքն մահտեսի Ալփիար հանգուցեալ ի Զրիստոս՝ թաղի ի Պէլլղատ»:



Հայ վաճառականներ

Ինչն էր պատճառը, որ եղբայրներին ստիպեց իրենց ընտանիքներով, ծառաներով և աղախիններով Կարինից գաղթել ու հաստատվել Բելգրադում: Անշուշտ, թուրք-պարսկական պատերազմը, որի արհավիրքների հիմնական կրող հայությունը հարկադրված էր փրկություն գտնել Կ.Պոլսում ու շրջակա բնակավայրերում, ինչպես նաև Բալկաններում, այդ թվում և՛ Բելգրադում:



Հին Բելգրադ

Քաղաքը սերբական Բելգրադ (Beograd) անվամբ առաջին անգամ հիշատակվում է IX դարից: Սավա և Դունայ (Դանուբ) գետերի միախառնման տեղում կելտերի կառուցած այդ բնակավայրը նվաճել են հռոմեացիները, գոթերն ու ֆրանկները, բուլղարացիներն ու հունգարները: Բելգրադի ամրոցի պարիսպներն առել են 40 բանակներ, ու 38 անգամ մոխրակույտերից և ավերակներից քաղաքը կրկին ու կրկին վերաշինվել է:

Բելգրադի պատմությունն ու դիմագիծը փոխվեցին 1521թ., երբ այն նվաճեց 27-ամյա թուրքական սուլթան Սուլէյման I-ը: Նվաճեց ու 364 տարով հանձնեց իր հաջորդներին: Գրավեց այն բնակավայրը, որին թուրքերն իրենք անվանում էին «պատերազմի քաղաք»:

Ով էր սուլթան Սուլէյման I-ը կամ Քանունին\*, որը Եվրոպայում ուներ Հրաշալի մականունը: Սա Օսմանյան կայսրության 10-րդ սուլթանն էր, որ գահ բարձրացավ 1520թ. սեպտեմբերի 22-ին և իր նախորդների նման շարունակեց զբաղվել «բնական» գործով՝ զավթողական պատերազմներով: Նա իրեն անվանում էր Աստծո ուժով օժտված տիրակալ, Տիրոջ տեղապահ՝ աշխարհի վրա, բո-

լոր ազգերի վրա տարածվող Աստծո ստվեր և հավատում էր, որ ամբողջ աշխարհն իր տիրապետության ներքո պիտի լինի՝ որպես Տիրոջ ընծայած պարգև:



Սուլթան Սուլեյման

Իր կյանքի ընթացքում Սուլեյմանն իրականացրեց 10 ռազմական արշավանք Եվրոպայում, 3-ը՝ Ասիայում, ու գրեթե բոլորը՝ հաջող: Նրա օրոք Օսմանյան կայսրության սահմաններն ընդլայնվեցին հազարավոր կիլոմետրերով, և առաջինն էր, ով Եվրոպային ներշնչեց հավաքական սարսափի զգացում:

Բելգրադի առումը տեղի ունեցավ սրընթաց: 1521թ. Սուլեյմանի զորքերը գրավեցին Դունայի ափին գտնվող Շաբաց ուժեղ ամրոցը և պաշարեցին հուն-

գարների իշխանության ներքո գտնվող, Հունգարիայի դարբաս հանդիսացող Սերբիայի մայրաքաղաքը: Բելգրադը մարտնչեց մինչև վերջ. երբ կայազորից մնաց 400 հոգի՝ քաղաքն անձնատուր եղավ, և բոլոր պաշտպանները սպանվեցին:

Ակնհայտ է, որ Ասլանն ու Ալփիարը Բելգրադում հաստատվել են օսմանցիների կողմից քաղաքը գրավելուց հետո (հավանաբար, 1550-ին), բայց նրանք հայերից միակը չէին:

1598թ. ապստամբություն բարձրացրեցին ջալալիները: Սրանք գավառների ցեղապետեր կամ կուսակալներ էին, որոնք ավազակախմբերի գլուխ անցած՝ ասպատակում և անխնա կողոպտում էին ամբողջ Փոքր Ասիան ու հայկական նահանգները: Մ. Նշանեանը գրում է. «Էրզրումի նահանգը ամենէն աւելի ենթարկուած էր ջալալիներու հարստահարութեանց»<sup>1</sup>: Սա ստիպեց, որ Երզնկա-

<sup>1</sup> Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղոյ, աշխատասիրութեամբ Մ. Նշանեանի, Երուսաղէմ, 1915թ., էջ ԺԳ:

լից, Կամախից, Ակնից, Տիվրիկից և այլ վայրերից գաղթականության նոր հոսք սփռվի Կ.Պոլիս, եվրոպական Թուրքիա, հասնի Լեհաստան, Հունգարիա, Մոլդավիա, Դրիմ ու Սերբիա: Օսմանյան կայսրության ժամանակագիր Գրիգոր Դարանաղցին հայտնում է. «Եւ ի սորա ժամանակին ջալալիքն զաշխարհն Անատոլեաց ծածկեալ էին որպէս զձիւն: Ի Սուլթան Սուրատէն սկսան բորբոքումն կայծականց հրոյն եւ ի հօրն ժամանակին՝ Սուլթան Մուհամմատին՝ ճարակեցաւ ամենայն աշխարհ հրով բոցոյ ջալալեացն, որ ոչ գոյր խաղաղութեան տեղի ուրեք, բայց միայն ի Կոստանդնուպօլիսս եւ ի Թրակացոց աշխարհիս, որ Ուռումել ասի: Վասն որոյ աշխարհ ամենայն՝ հայք եւ տաճիկք աստ հաւաքեալ եւ ցրուեցեալ մինչեւ ցԲելլրդատն, մինչեւ ցաշխարհն Պուղտանաց\* եւ Գոթացոց եւ ամենայն Իսկութացոց»<sup>2</sup>:\*\*

Հայոց երրորդ հոսքը Բելգրադ սկսվեց 1600-ական թթ.՝ Դրիմից: Նույն Դարանաղցին գրում է. «Եւ յորժամ ի Կաֆայէն յԼստամբօլ եկաք, եւ ամենայն Հայոց աշխարհքն ի Թեոդուպօլսէն ի վայր, ոմանք երկու ամաւ յառաջ եկեալ էին եւ ոմանք բազումք ընդ մեզ եկին, որ էր թվ. ՌԾԴ<sup>3</sup>. եւ շատք այլ յետոյ եկին եւ ցրուեցան յԱնատօլ եւ յՈւռումէլս՝ յամենայն քաղաքս, մինչ ի Պէլլրդատ, մինչ Պուղտանաց աշխարհն եւ ի Լեհաց»<sup>4</sup>:\*\*\*

Այսպիսով, Բելգրադի գաղթավայրի ձևավորումը տևել է շուրջ մեկ դար, և XVII դ. սկզբներին այստեղ կար բավականին մեծաթիվ հայություն: Իսկ հիմնադիրների շարքին, անշուշտ, պետք է դասել Ասլանին և Ալփիարին:

Ո՞րն էր նրանց զբաղմունքը. անշուշտ, վաճառականությունը: Պետականությունից զրկված հայի համար ինքնապահպանական լավագույն միջոցը փողն էր՝ առևտրատնտեսական գործունեության աստվածատուր, բնական, դարավոր գեղի արդյունքը: Ինք-

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>3</sup> =1605թ.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 69:

նապաշտպանական այդ զորեղ կռվանը հային հնարավորություն տվեց փրկվել իսպառ ոչնչացումից և անցնել պատմական անցքերի արհավիրքների միջով: Պատմագիտական այս հայեցակարգային դրույթը լիովին կիրառելի նաև Ասլանի և Ալփիարի նկատմամբ: Ամենայն հավանականությամբ նրանք վաճառականությամբ զբաղվել էին դեռևս Կարինում՝ իրենց հոր հետ: Ասլանի մասին Ղ. Ալիշանն ուղղակիորեն գրում է. «Ասլան՝ մի ի նախահարց ծանօթ եւ ճոխ տոհմի այժմու Ապրոյեանց՝ առաքեր անդր<sup>5</sup> զՅակոբ ընտանի իւր, եւ ի վաճառ՝ պղպեղ բարձեալ յԱնկոնա»<sup>6</sup>.\*

### ՃՅՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ասլանն ունեցավ երկու որդի՝ Աստվածատուր ու Յաղուբ, որոնց մասին տեղեկութուններ չեն պահպանվել: Ալփիարն ունեցավ երկու որդի՝ Մուրադխան, Հովհաննես ու երկու դուստր՝ Գյուլզադե, Մարիամ:

Հաջորդ գլուխը Մուրադխանի որդի Ապրո Չելեբիի մասին է:

<sup>5</sup> Վենետիկ, 1624-ին:

<sup>6</sup> Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1892թ., էջ 449:

### ԱՊՐՈ ՉԵԼԵԲԻ. «ԱՅՐ ԼԱՅՆԱԽՈՐՀՈՒՐԴ»


Մուրադխանի որդի Աբրահամը, ում անվան կրճատված տարբերակով գերդաստանն սկսեց կոչվել Ապրո, ոչ միայն տոհմի ամենաականավոր դեմքերից է, այլև մեր ժողովրդի եկեղեցաշեն անձանցից մեկը:

Այս մարդու կյանքն ու գործը, էությունն ըմբռնելու համար հաճախակի հղում պիտի կատարեն Երեմիա Չելեպի Քեօմիւրճեանին: Բանն այն է, որ Աբրահամը գրագետ էր ու գրասեր. մի հիշատակարանում 1656թ. սա փաստում է Հովհաննես դպիրը. «Արդ ցանկացող եղեալ այսմ հոգեմուտագ մատենիս... այրս այս բարեպաշտ եւ աստուածասէր Պելլրդատցի Աբրահամ չելեպի, որ ուներ նախկնաբար ի սրտի իւրում զջերմեռանդ տարփումն ուսումնասիրութեան առ աստուածային գիրս, եւ փիլիսոփայական արհեստից հմուտ, մինչ զի յաւուրս յայս ոչ ոք գտաւ համեմատ սմա գրամատիկոս ի մէջ հայասեռ ազանցս. եւ ուներ լիով զուսումն աստուածաշունչ տառից՝ զհնոց եւ զնորոց...»<sup>1</sup>: Եվ ահա Աբրահամ Չելեբին մերձենում է երիտասարդ Երեմիայի հետ, ընդունում իր ընտանիքում և դարձնում երեխաների ուսուցիչ ու դաստիարակ: Երեմիան այդ մասին նշում է. «Դարձեալ եւ յիշեացի Պարոն Աբրահամ Չելեպին եւ վասն իմս անարժանութեան որ նորուն բարեսիրութեան՝ սէր ցուցեալ ընտանեցոյց»<sup>2</sup>.\* Կ. Պոլսում ապրելով Աբրահամ Չելեբիի տանը, ուր լինում էին հայ և օտարազգի բազմաթիվ բարձրաստիճան հյուրեր, Ե. Քեօմիւրճեանը հաղորդակից էր դառնում զանազան անցողարձերի ու դրանք արժարժում իր երկերում: Բացի այդ, նա ուղղակիորեն կամ անուղղակիորեն վե-

4358

<sup>1</sup> Ն. Ալիմեան, Երեմիա Չելեպի Քեօմիւրճեան. կեանքն եւ գրական գործունեութիւնը, Վիեննա, 1933թ., էջ 251:

<sup>2</sup> Ն. Ալիմեան, նշվ. աշխ., էջ 109:



րածվում է Ապրո գերդաստանի յուրատեսակ տարեգրի:

Տարիների ընթացքում մեկենասի ու հովանավորյալի հարաբերություններն այն աստիճանի ջերմ, բարեկամական դարձան, որ Ապրոն միտք հղացավ Կ. Պոլսում տպարան հիմնել ու դրա համար Երեմիային զգալի ֆինանսական միջոցներ տրամադրեց: Ե. Քեօմիրճեանը գիտակցելով, որ դա խիստ ծախսատար ձեռնարկ է՝ փորձեց Ապրոյին ետ պահել այդ մտքից.

*Մէր իմ սրտիս, ո՛վ Չէլէպի,  
Քեզ լինիցիմ ծառայ՝ գերի  
Մի՛ հետեւիլ զայն որ ասցի,  
Տպագրութեանն անպատեհի<sup>3</sup>.\**

Սակայն Չէլէբին անդրդվելի մնաց, և միայն մահը խանգարեց տեսնելու իր մտադրության իրականացումը: Կատարելով մեկենասի կամքը՝ Երեմիան 1677թ. տպարանը հիմնեց ու տպագրեց երկու գիրք\*\*:

Ապրո Չէլէբին ծնվել է 1621թ.: Նրա ծնողներին Երեմիան այսպես է բնութագրում. «Զբարեպաշտ եւ զքրիստոսասէր հայրն իւր զմահտեսի Մուրադխան եւ զբազմահամեստ մայրն իւր զԵահրիտան»<sup>4</sup>.\*\*\*

Իսկ Չմյուռնիո վավերագրում ասվում է. «Չկնի այսր պայազատե՛ զտանուտիրութիւն անդրանիկն իւր<sup>5</sup> մահտեսի ՄՈՒՐԱՏԻԱՆ. եւ առաւել ընդարձակի ի բարօրութիւն ընչաւետութեան. որ եւ յետ բազմաց բարեպաշտութեանց ի ծերութեան իւրում զնացեալ յուխտ ի սուրբ Երուսաղէմ յամի Տեառն 1634, յամս ծռագարկին. եւ դարձեալ ի Փիլիպպուպօլիս, կնքե՛ անդ զկեանս իւր: Լինին սմա

<sup>3</sup> Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քեօմիրճեանի, աշխատասիրությամբ Մ. Նշանեանի, Երուսաղէմ, 1939թ., էջ 563:

<sup>4</sup> Ն. Ալիմեան, նշվ. աշխ., էջ 108:

<sup>5</sup> Խոսքն Ալփիարի մասին է:

որդիք երկու՝ ԱԲՐԱՀԱՄ, որ եւ ԱՊՐՕ, եւ ՊԵՏՐՈՍ, եւ երեք դստերք, ԱՆՆԱ, ԹԱԳՈՒՀԻ եւ ՄԱՐԻԱՄ. յորոց միայն Աբրահամ յարուցանէ ժառանգ, զի այլք ի ծաղկահասակ տիս փոխին յաստեացս»:

Այստեղից պարզ է դառնում, որ բազմաթիվ աղբյուրներում խոջա\* Մուրադխան անվանվող հայրը 1634թ. ուխտի է գնացել Երուսաղէմ՝ հետը տանելով 13-ամյա որդուն: Հայր և որդի մահտեսիները տունդարձի ճանապարհին հասնում են Ֆիլիպե\*\*, որտեղ Ալփիարի վաճառականական գործն ընդարձակած Մուրադխանը կնքում է մահկանացուն:

Յ. Քիրտեանը գրում է. «Ուխտէն դարձին հաւանաբար Ապրոյ Չէլէպի ընդգրկեց վաճառականական ասպարէզը: Ան խելացի էր, ուշիմ և ճարպիկ, միանգամայն վեհանձն և առատաձեռն. իր այս յատկութիւններն էին որ զինք համբաւատր ըրին»<sup>6</sup>: Իսկ Զ. Չրաքեանը հավելում է. «Հ. Ալիշան կը յիշատակէ որ արդէն 1636-ին Վենետիկ կը գտնուէր, Պէլկրատէ ապրանք բերելով: Իր արտակարգ խելքով մեծ անուն հանեց քան իր նախնիքը, ու վաճառականութեամբ շատ հարստացաւ»<sup>7</sup>:

Այն, որ վաղ պատանեկությունից Աբրահամն սկսել է զբաղվել վաճառականությամբ և նույնիսկ 15-ամյա հասակում Բելգրադից ապրանքներ տարել Վենետիկ (հավանաբար, ինչ-որ մեկի ուղեկցությամբ) ենթադրել է տալիս, որ վաճառականության մեջ ներգրավվել, վաճառականական «արվեստին» հաղորդակից է դարձել մայրական կողմի մերձավորների շնորհիվ: Քանզի Յահրիդանն ինքը սերում էր Բելգրադում հաստատված հայ վաճառականական ընտանիքից:

Ժամանակագրական առումով Աբրահամ Չէլէբիի ազգանվիրության առաջին վկայությունը վերաբերում է 1646թ., սակայն

<sup>6</sup> Յ. Քիրտեան, Նիսեր պուլկարահայոց պատմութեան համար, «Բազմավէպ», 1925թ., էջ 415:

<sup>7</sup> Զ. Չրաքեան, նշվ. աշխ., էջ 8:

հարկ է պատկերացում կազմել այն ժամանակաշրջանի մասին, որում նա գործել է:



**Սուրբան  
Իբրահիմ**

1640թ. գահ բարձրացավ օսմանյան 18-րդ սուլթանը՝ 25-ամյա Իբրահիմ I-ը: Դաժան, հեշտասեր ու վատնող այս մարդը Վենետիկյան Հանրապետությանը\* մեղադրելով մալթացի ասպետներին աջակցելու համար, որոնք Միջերկրական ծովում հարձակումներ էին գործում թուրքական նավերի վրա, 1645թ. ամռանը 60-հազարանոց զորքով հարձակվեց Կրետեի վրա: Օգոստոսի սկզբին, երկամսյա պաշարումից հետո, 40 հազար զոհ տալու գնով թուրքերը գրավեցին Խանիա, Ռետիմո և Կանդիա\*\* քաղաքները: Բայց ոչ ամբողջ կղզին, Կրետեի համար պատերազմը վենետիկցիների դեմ

ձգձգվեց ավելի քան 20 տարի:

Գրավյալ քաղաքներում թուրքերը եկեղեցիների մեծ մասը վերածեցին մզկիթների, կառուցեցին նորերը, ինչպես նաև՝ բաղնիքներ ու շատրվաններ, դրանով հանդերձ իրենց ներկայության նյութական կնիքը թողնելով մինչ մեր օրերը:

Ահա այս իրադրությունում մենք առնչվում ենք Աբրահամ Բելգրադցու հետ, ով 1644-ից հանդիսանում էր Կրետեի մի մասը նվաճած թուրքական զորաբանակի վաճառականը:

Ի՞նչ է նշանակում զորքի վաճառական: Բացի այն, որ ռազմական գործողությունների ժամանակ թուրքերը ավերում, կողոպտում ու թալանում էին, կիրառում էին նաև ժամանակի «քաղաքակիրթ» միջոցներից մեկը՝ պահում էին վաճառականներ, որոնք օգտվում էին որոշակի արտոնություններից, հովանավորությունից և բանակին մատչելի գներով պարենամթերք մատակարարում: Դա առևտրային գործարք էր, որը ձեռնառու թե թուրքերին, թե առավել ևս վաճառականին, քանզի վերջինս ոչ միայն անասելի հարստանում էր, այլև ձեռք էր բերում ներազդելու հնարավորություն: Ահա այս հնարավորությունից, ի շահ ազգի, առաջին ան-

գամ օգտվեց 25-ամյա Աբրահամ Չելեբին:

Չնյուռնիո վավերագիրն ասում է. «Մա յորժամ ի Կրիստե էր ընդ բանակին Օսմանցոց՝ արքունի վաճառական գոլով Հիսեին փաշային, յառնուլն նոցա զկղզին ճարտարաբան վիճաբանութեամբ առնու զեկեղեցի մի վասն Հայոց, զոր վասն զի ի ոմբացն թնդանօթից քայքայեալ էր, իւրովք իսկ ինչիւք նորոգէ, պատրաստեալ էր զամենայն զարդս նորա:

Եւ վասն զի բազում նպաստաւորութիւն արարեալ էր բանակին եւ հաւատարմութիւն յիրս արքունի ըստ ամենայնի, զգօրաւոր խաթիշէրիֆ մի շնորհէ նմա սուլդան Իպրահիմն որպէս զի յամենայնի ազատ լիցի եւ համարձակ՝ եւս եւ ի մաքսիցն անգամ յամենայն տեղիս իշխանութեան իւրոյ»:

Փաստորեն, Աբրահամ Չելեբին սուլթան Իբրահիմից ունեցել է ազատ և անմաքս առևտրով զբաղվելու հրովարտակ, լինելով օսմանյան բանակի արքունական վաճառական՝ զգալի նպաստ բերել զորքին և «ճարտարաբան վիճաբանութեամբ» կարողացել համոզել թուրքական զորաբանակի հրամանատար Հուսեյին փաշային, որ իրեն տրվի հունաց ուղղափառ կիսավեր, ոմբահարված, «ամենայն թնդանօթիցն քայքայեալ» եկեղեցին:

Հավելենք, որ Աբրահամ Չելեբիի ծախքով այդ եկեղեցին արագորեն վերանորոգվել է, վերածվել Սբ. Հովհաննես և հանձնվել տեղի հայերին (ինչն, ի դեպ, վկայում է, որ Կանդիայում եղել է բավականին մեծաթիվ համայնք):

Կուզենայի մի դիտարկում անել: Դարեր շարունակ հայոց առաքելական եկեղեցիները ավերել, կողոպտել կամ մզկիթների են վերածել ոչ միայն մահմեդականները, այլև յուրացրել են դավանակիցները՝ ուղղափառներն ու կաթոլիկները: Այդպիսի դեպքերը բազմաթիվ են: Աբրահամ Չելեբին հայոց պատմության մեջ, թերևս, առաջին և այն եզակի անձնավորություններից է, ով հայի ձեռքով չկառուցված եկեղեցի պարզևեց ազգակիցներին: Բայց դա ամենևին բռնազավթում չէր, ճիշտ հակառակը. թուրքերը հունաց եկեղեցին կամ հիմնովին ավերելու էին, կամ վերածելու էին

մզկիթի, այնինչ Բելգրադցու ջանքերի, համառության, «ճարտարաբան վիճարանութեան» շնորհիվ այն գոնե ժամակավորապես մնաց քրիստոնեական:

1646-ից ի վեր Աբրահամ Չելեբիի վերաբերյալ այլևս գրավոր հիշատակություններ չկան: Միակ բացառությունը Հովհաննես Դպիր Լեհացու ընդօրինակած Աստվածաշնչի 1656թ. հիշատակարանն է, որը նոր բան չի պարունակում<sup>8</sup>: Մա մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ ընթացքում Բելգրադցին զբաղվել է բացառապես վաճառականությամբ, թուրքական բանակի մատակարարմամբ: Մակայն նրա հետագա ողջ կյանքն ու գործունեությունն ընթացան օսմանյան 19-րդ սուլթանի օրոք:

Այն բանից հետո, երբ 1648թ. Իբրահիմ I-ը գահընկեց եղավ, բանտարկվեց ու մի քանի օր անց խեղդամահ արվեց, վեցամյա հասակում գահ բարձրացավ և մինչև 1687թ. իշխեց նրա եղբայրը Մեհմեդ IV-ը: Մրա մականունն էր Ռոստոդ (թուրք. Ավջի), որովհետև սիրում էր որսորդություն, բացօթյա խաղեր, տրվում էր հաճույքների ու վայելքների և ամենևին հակում չուներ զբաղվելու պետական գործերով: Նրա իշխանության օրոք ծագեց ներքին ճգնաժամ և սկիզբ դրվեց Օսմանյան կայսրության աստիճանական անկմանը:



Սուլթան Մեհմեդ

Մեհմեդ IV-ի կառավարման ժամանակաշրջանը հայտնի է «ներքինիների սուլթանություն» անվամբ: Նրա օրոք ծաղկում ապրեցին կաշառությունը, անձնական մվիրվածության հատկանիշի հիման վրա պաշտոններ բաժանելը, իշխանության չարաշահումը, բանասարկությունն ու խարդավանքը: Կենտրոնական իշխանությունը կորցրեց վերահսկողությունը Անատոլիայի մեծ մասի ու Բալկանների նկատմամբ:

Օգտվելով այս հանգամանքից, Վենետիկյան Հանրապետությունը պատերազմ հայտարարեց, գրավեց Էգեյան ծովի օսմանյան կղզիները, հարձակվեց Դարդանեղի վրա և 1656թ. հուլիսի 6-ին ծովային ճակատամարտում գլխովին ջախջախեց թուրքական նավատորմը: Մահացու վտանգը կախվեց Կ.Պոլսի վրա:

Այս ծայրահեղ իրավիճակում օսմանյան արքունիքը պատանհի սուլթանին ստիպեց երկրի կառավարման դեկը հանձնել կարող ուժերի: Այսպես պատմական թատերաբեմ ոտք դրեց և իշխանությունն ստանձնեց Քյոփրյուլու ֆեռդալական տոհմը:

Մեհմեդ-փաշա Քյոփրյուլուն զավակն էր մի արբանացու, որը տեղափոխվել էր Փոքր Ասիա և բնակություն հաստատել Քյոփրյու (թուրք. կամուրջ) գյուղաքաղաքում: Եվ այս արբանացու որդին էր, որ Դարդանեղում վենետիկցիներից կրած ծանր պարտությունից հետո նշանակվեց Մեծ վեզիր կամ, ըստ հայկական աղբյուրների, Մեծ եպարքոս:

Նախ նշենք, որ մինչև վեզիրությունն ստանձնելը Մեհմեդ Քյոփրյուլուն մի «աննշան և դառնաղբատ» մարդ էր ու որպեսզի տիրանա Տրապլուսի (Տրիպոլի) մանսուպին՝ փող էր պարտք առել բազմաթիվ հայ սեղանավորներից\*: Այս առիթով Ե. Քեօմիւրճեանը գրում է.

«Որ աննըշան եւ դառնաղբատ, ի շատ Հայոց գիտիս էր խնդրեալ, Շատ ջանայր ըզՏրապոլիս առնել, եւ ըստակ ոչ էր գըտեալ»<sup>9</sup>:\*\*

(Ի դեպ, Քյոփրյուլուն «վարձահատույց» եղավ խիստ թուրքավարի. դառնալով մեծ վեզիր՝ եռապատիկ ավելացրեց *քյուրեք ակչեսին*՝ հայոց թիավարման տուրքը):

Չմյուտնիո վավերագիրն ասում է. «Աբրահամ, այր լայնախորհուրդ, ժամանեալ յաստիճան տանուտիրական, քան զիր նախնիսն առաւել եւս հետամուտ լինի բարի համբաւոյ, եւ ըստ նախ-

<sup>9</sup> Երեմիա Քեօմիւրճեան, Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ Օսմանցոց թագաւորացն, աշխատասիրությամբ Ժ.Ավետիսյանի, Ե., 1982թ., էջ 53:

<sup>8</sup> Տե՛ս «Ակայագրեր» բաժնում:

նական կրթութեան եւ մտացն առատութեան եւ եւս բարգաւաճի օր ըստ օրէ, սիրելի եղեալ յաչս ամենեցուն, եւ մանաւանդ Հիւսէյին հռչակատր փաշայի, որ զօրագլուխն էր զօրաց պատերազմականաց ընդ Կրէտացիս, եւս ապա Քէօփրիլի օղլու Մեհմետ փաշայի մեծահամբաւ Եպարզոսի եւ ամենայն աւագանոյն դրան արքունի, զորոյ եւ զանուն իսկ փոխեալ Քէօփրիլի օղուն հրամայէ Ապրօ ձայնել յետ այնորիկ, որ կոչումն կայ մտաց ցայսօր ժամանակի յազգս նորա»:

Այսինքն, Քյոփրյուլի ցանկութեամբ ու հրամանով է Աբրահամ Չելեբիի անունն ստանում Ապրո կրճատված ձևը, և տոհմն այդուհետ սկսում է կրել Ապրո ազգանունը:

Մեհմեդ Քյոփրյուլուն պահանջեց ու ստացավ անսահմանափակ իշխանություն և անցավ գործի: Նա դաժանորեն ճնշեց կայսրությունում բռնկված ապստամբությունները, բարեփոխումներ իրականացրեց բանակում, վեներտիկցիներին դուրս մղեց Դարդանեղից և 1660թ. նրանցից ետ գրավեց Սիփիլենա ու Լեմնոս կղզիները:

Այդ տարի տեղի ունեցավ Ապրո Չելեբիի ազգապահպանության մի դրսևորում, որն ըմբռնելու համար, սակայն, հարկ է պատկերացում կազմել այն բարքերի մասին, որոնք տիրում էին պոլսահայոց վերնախավում:

XVII դ. Կ. Պոլսում բնակվում էր շուրջ 100 հազար հայություն և կար 6 եկեղեցի: Ըստ Օսմանյան կայսրության օրենքների, Արևմտյան Հայաստանի հայության իրավունքներն ու շահերը ներկայացնող միակ մարմինը Պոլսո պատրիարքությունն էր, որ հաստատվել էր դեռևս 1461թ.՝ Մուհամեդ II-ի կողմից: Պատրիարքությունն էր, որ կարգավորում էր իշխանության հետ փոխհարաբերությունները, տնօրինում հարկերի, տուրքերի գանձման ու վճարման հարցերը՝ փաստացի վերահսկելով ֆինանսական զգալի հոսքեր և լուծելով ունեցվածքային խնդիրներ: Բնական է, որ նման պայմաններում պատրիարքությունը վերածվել էր յուրատեսակ բիզնես-միավորի, իսկ պատրիարքը՝ բիզնես-գործչի, ու եր-

կուսն էլ գտնվում էին թե թուրքական իշխանությունների, թե հայ աշխարհական մեծատունների հետաքրքրությունների կիզակետում. առաջինների համար՝ որպես «կթան կով», անաշխատ ֆինանսներով սնվելու աղբյուր, երկրորդների համար՝ որպես կովախնձոր, սեփական ազդեցությունն ընդլայնելու միջոց: Եվ այստեղ մենք առնչվում ենք պոլսահայ աշխարհական սերուցքի երկու ազդեցիկ խավերի՝ չելեբիության ու խոջայության դաժան հակադրությանը, անողորմ զգվոտոցին:

Չելեբիներն իրենց համարում էին Պոլսո բնիկներ և հայության արհեստակրատներ: Նրանք գտնվում էին թուրքական արքունիքի մերձավոր շրջապատում և հիմնականում զբաղվում էին սեղանավորությամբ՝ սուլթաններին ու պալատական բարձրաստիճան պաշտոնյաներին ֆինանսավորելով, տոկոսով փող տրամադրելով: Հանդիսանալով արքունիքի սպասարկու և օգտվելով բարձր հովանավորությունից՝ նրանք տնօրինում էին ազգային, եկեղեցական, հոգևոր-մշակութային, ասել է թե՛ արևմտահայության հետ կապված բոլոր հարցերը:

Սակայն Նոր Ջուղայի հիմնադրմամբ (1605թ.), հայ պրոֆեսիոնալ վաճառականական դպրոցի հաստատմամբ դարի առաջին քառորդում երևան եկան խոջաները: Նրանք ունևոր, հմուտ, աչքաբաց, աշխարհաշրջիկ առևտրականներ էին, որոնք օգտագործելով ազգային պատկանելության հատկանիշը՝ արագորեն ներթափանցեցին Արևմտյան Հայաստան և մասնավորապես՝ Կ. Պոլիս: Արդեն 50-ական թթ. նրանք լիուլի տիրում էին Պոլսի վեց հայաբնակ քաղամասերից զուտ վաճառականական հանդիսացող Դալաթիային՝ Խոջա-խանով և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցինով: Ընդ որում, խոջա պատվանունն սկսեցին կրել ոչ միայն արևելահայ, այլև առավել աչքի ընկնող արևմտահայ վաճառականները (կային անգամ մարդիկ, ովքեր կրում էին թե խոջա, թե չելեբի պատվանունները): Խոջաները գավառածին էին, գավառացի, բայց ոչ՝ գավառամիտ: Ունենալով բոլոր գավառացիներին հատուկ սքափ, հաշվենկատ մտածելակերպ, շփումներ ու կապեր

տարբեր երկրների բազմաթիվ գործընկերների հետ՝ նրանք բառի լայն իմաստով հեղափոխականներ էին և գրոհեցին պոլսահայ չելեբիության դիրքերը: Ինչպես նշում է Հ. Անասյանը. «Հայ խոջան զգալի չափով բաժնեկից էր հայ ժողովրդի ճակատագրին սուլթանական բռնակալ կարգերի տակ, մինչդեռ հայ չելեբիությունը, գլխավորապես մայրաքաղաքում ապրելով, համեմատական ապահովություն էր վայելում»<sup>10</sup>:


Այսպիսով, XVII դ. 30-ական թթ. սկսվեց հայոց վերնախավի երկու դասերի հակամարտությունը, ներազգային յուրատեսակ անհանդուրժողականությունը, որին հաճույքով հետևում էին թուրքական իշխանությունները՝ հարկ եղած դեպքում մտցնելով իրենց «սրբագրումները», անշուշտ՝ հոգուտ սեփական շահերի:

Ապրո Չելեբին իր դասի ներկայացուցիչն էր, սակայն բացառիկ էր: Մի կողմից, լինելով արքունի վաճառական, օսմանյան բանակի մատակարար, սերտ հարաբերություններ ունենալով սուլթանի ու մեծ վեզիրի հետ՝ նա, թերևս, իր ժամանակի ամենահարուստ արևմտահայն էր և կարիք չունեի աչք տնկելու ազգային գանձարանին: Մյուս կողմից, նրա երակներում հոսում էր Բագրատունյաց, հայոց հինավուրց ազնվականական արյունը, որի կանչը դրդեց նվիրաբերվել եկեղեցաշինությանը, դրանով հանդերձ՝ ազգապահպանությանը: Առանց իմանալու, որ հանդիպելու է թե Պոլսոս պատրիարքության, թե չելեբիության դիմադրությանը:

1660թ. հուլիսի 14-ին Պոլսում ահավոր, ամենակուլ հրդեհ բռնկվեց, որի ճարակ դարձան հունական ու կաթոլիկ եկեղեցիները, ինչպես նաև հայոց եկեղեցիներից երկուսը՝ Սբ. Նիկողայոսը և Սբ. Սարգիսը: Թուրքական հրովարտակներում առաջինը կոչվում էր Քեֆեյի քիլիսեսի՝ կաֆացիների եկեղեցի, որովհետև ծառայում էր Կաֆայից (Թեոդոսիա) գաղթածներին, երկրորդը՝ Բրուսայի քիլիսեսի, և սպասարկում էր բրուսացի հայերին:

<sup>10</sup> Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., 1961թ., էջ 71:

Ապրո Չելեբին ձեռնամուխ եղավ եկեղեցիների վերաշինությանը: Նախ, ցանկացավ գնել Սբ. Սարգսի տարածքը և նորը կառուցել, սակայն հակառակվեցին Խաչատուր կաթողիկոսը և չելեբիները: Այնժամ, ստանալով Սբ. Նիկողայոսի հավատացյալների համաձայնությունը, գնեց դրա տարածքը և անհրաժեշտ գումար տրամադրելով Երեմիա Չելեբի Քեօմիլոնեանին՝ նրան հանձնարարեց նոր եկեղեցի կառուցել: Իսկ ինքը Քյայիա Վելի փաշայի հետ առևտրական գործերով մեկնեց Մորա\*: Հարկ է նշել, որ Ապրոն եկեղեցի կառուցելու պաշտոնական թույլտվություն չունեի և հույսը դրել էր մեծ վեզիր Մեհմեդ Քյոփրյուլուի հետ անձնական հարաբերությունների վրա: (Ի դեպ, հայերի այս նախաձեռնությունը տեսնելով՝ նույն կերպ, առանց թույլտվության, իրենց եկեղեցիները վերաշինեցին նաև հույներն ու կաթոլիկները):



Մեծ վեզիր  
Ֆազիլ Ահմեդ  
Քյոփրյուլու

Բայց իրադրությունը կտրուկ փոխվեց այն բանից հետո, երբ 1661թ. Մեհմեդ Քյոփրյուլուն մեռավ և վեզիրությունն անցավ նրա որդի Ֆազիլ Ահմեդ Քյոփրյուլուին: Պետության հանդեպ անհավատարմության մեղադրանքով՝ սա սկսեց բռնություններ գործել: Ե. Քեօմիլոնեանը գրում է. «Ի վեզիր լինելն Քեօփրուլիի ի նուաճումն զօրաց եւ ի կոտորումն պարոնաց եւ պէկլերպէկաց. յոլովից միջի եւ սպան զՏէլի Հուսէին փաշան: Կալան եւ զՉէլեպիս. խըւեցին դրամս»<sup>11</sup>:\*\* Այսինքն, նոր վեզիրը սրի է քաշում բազմաթիվ բարձրաստիճան անձանց, գլխատվում է նաև Դելի Հուսեյին փաշան, իսկ Ապրո Չելեբին՝ որպես մեղսակից բանտարկվում է, և դրանը խլվում: Մեծ դժվարությամբ Չելեբին կարողանում է արդարանալ, ազատվել բանտից, որից հետո, վախենալով, որ նոր վեզիրը եկեղեցին կավերի, Մորայից նամակ է գրում Երեմիա Չելեբիին ու հանձնարարում երեք խորանները փակել և շինությունն օգտագործել որպես դպրոց:

<sup>11</sup> Ն. Ալիմեան, նշվ. աշխ., էջ 98:

1662թ. հայոց Եղիազար պատրիարքը Ֆազիլ Ահմեդ Քյոփրյուլուն հայտնում է, որ Սբ. Նիկողայոսը կառուցվել է առանց թույլտվության: Թուրքերը հետաքննություն են սկսում, ապա երեք օրվա ընթացքում հողին հավասարեցնում ինչպես Սբ. Նիկողայոսը, այնպես էլ ուղղափառ ու կաթոլիկ նորակառույց եկեղեցիները: Դրանից հետո սկսում են փնտրել նախաձեռնողներին ու կառուցողներին: Չորբակալեցին 11 հուլյնի ու 4 հայի: Հուլյներին գլխատեցին, այնինչ չելեքիները վեզիրին հայտնեցին, թե ձերբակալված հայերն անմեղ են, իսկական մեղավորը Բելգրադցին է, որն ունի ապարանքներ ու մեծ հարստություն, թող տուգանք վճարի, իսկ բանտարկյալներն ազատ արձակվեն: Վեզիրը, բնականաբար, չէր կարող հաշվի չնստել Ապրոյի պետականաճապաստ դերակատարության հետ և հրամայեց Բելգրադցու դեմ ամբաստանության եկողներին ծեծի ենթարկել ու բանտարկել: Ի վերջո, բանը հասավ սուլթանին, որն ազատեց հայ բանտարկյալներին, բայց արձակեց հրովարտակ, ըստ որի թուրքերն ու հրեաները կարող էին ավերված եկեղեցիների տարածքները գնել: Այդպես էլ եղավ. մի հրեա գնեց Սբ. Նիկողայոսի տարածքը, տուն կառուցեց, պարտեզ գցեց, իսկ հայերը զրկվեցին սեփականությունից...

Սակայն Ապրո Չելեքին ամենևին չփիստվեց այս «տհաճություններից», և նրա եկեղեցաշեն գործունեությունն ունեցավ նոր դրսևորումներ:


1669թ. սեպտեմբերի 6-ին, քառամյա պաշարումից հետո, Ֆազիլ Ահմեդ Քյոփրյուլուն գրավում է Կրետեի Կանդիա քաղաքը ու եկեղեցիները վերածում սգկիթների: Ապրո Չելեքին, որ գտնվում էր զորքի հետ, վեզիրից խնդրում է եկեղեցիներից մեկը վաճառել իրեն՝ բանակում գործող հայ վաճառականների, արհեստավորների և այլ սպասարկուների համար: Քյոփրյուլուն համաձայնվում է. մեկ եկեղեցի տրամադրում է հուլյներին, որը գնում է Պանայոտի ազգանվամբ մի դրամատեր, մյուսը՝ Ապրոյին, որը վճարում է 1400 ոսկի: Չելեքին այդ ուրախ լուրը նամակով հայտնում է Երեմիային, և Քեօմիւրճեանը գրում է. «Եւ յետ այս քան բերկրանաց Պա-

րոն Արրահամու առաքեաց անդէն մեզ գիրս որպէս եւ յամենայն ժամու եւ զայս աւետիս արդ ժամանեցոյց յունկն մեր ըստ յուսոյ իմ եթէ Որդեակ իմ աղօթիւք քովք Եկեղեցի մի ստացայ ի սոյն պանդխտութեան ի քաղաքիս Գասարո\*»<sup>12</sup>:\*\*

Լուրն առնելուն պես Ե. Քեօմիւրճեանը շտապում է Կրետե՝ հետևելու Ապրոյի գործողություններին:

«Չի երեք նաւ պատրաստական,  
որ ի Կիրիտ երթալ շտապեալ.  
Վաղվաղեցի հասի նոցա.  
ուր Չելէպուն արքն հետեւեալ»<sup>13</sup>:\*\*\*

1670թ. մարտի սկզբից Ապրո Չելեքին սկսում է վերանորոգել ձեռք բերած եկեղեցին, ապրիլի 3-ին ավարտում, որից հետո այն վերածվում է Սբ. Կարապետի:



Սբ. Կարապետ եկեղեցու գծագիր տեսքը

<sup>12</sup> Ն. Ալիմեան, նշվ. աշխ., էջ 107:

<sup>13</sup> Ն. Ալիմեան, նշվ. աշխ., էջ 111:

Ապրո Չելեքին անուղղակի առնչություն ունեցավ նաև թուրք-լեհական պատերազմի, մասնավորապես Կամենեց-Պոդոլսկի\* անկումից հետո այդ հրաշագեղ քաղաքի հայ բնակչության հետագա ճակատագրի հետ:

1667թ. սկզբին Ռեչ Պոսպոլիտան ու Ռուսաստանը կնքեցին Անդրուսյան դաշնագիրը, որով նախատեսվում էր Ուկրաինայի բաժանումը երկու պետությունների միջև: Աջափնյա Ուկրաինայում այդ գործի գլուխ անցավ հետման Դորոշենկոն, որը դաշնակից ձեռք բերելու համար դիմեց Թուրքիային: Օսմանյան կայսրությանը դա հրաշալի առիթ էր խարխլված դիրքերը վերականգնելու ու Եվրոպայի մեջ մխրճվելու համար: Նույն թվականին Մեհմեդ IV-ը Յան Կազիմիր թագավորին նախազուշացրեց, որ պաշտպանելու է իրեն դիմած կազակներին:

Մակայն 1671թ. Յան Սոբեսկին Դորոշենկոյին ջախջախելու անհաջող փորձ ձեռնարկեց, ինչն էլ պատերազմի ծագման պատրվակ հանդիսացավ: 1672թ. մարտին Օսմանյան կայսրությունը հռչակեց «սրբազան պատերազմ»:

Օգոստոսի 12-ին Ժվանեց քաղաքի մոտ թուրքերն անցան Դնեստրը և մտան Ռեչ Պոսպոլիտա: Երկու օրվա ընթացքում, հընթացս գրավելով մի քանի բնակավայրեր, օգոստոսի 14-ին հայտնվեցին Կամենեց-Պոդոլսկի առջև:

170-հազարանոց զորքը, որի կազմի մեջ էին մտնում նաև Մոլդավիայի ու Վալաքիայի իշխանների 6000 զինվորները, Գրիմի խան Սելիմ-Գիբեյի 10.000 թաթարները և հետման Դորոշենկոյի 3000 կազակները, ի պաշտոնն գլխավորում էր սուլթան Մեհմեդ IV-ն ինքը, բայց բուն զորահրամանատարը մեծ վեզիր Ահմեդ Զյոփյոյուն էր:

Կամենեցի խառնամբոխ ու տարաբնույթ պաշտպանների ընդհանուր թիվը 1500 էր, որոնց ղեկավարում էր քաղաքի ավագ Նիկոլայ Պոտոցկին:

Ի՞նչ էր իրենից ներկայացնում Կամենեց-Պոդոլսկը:

Դնեստրի ձախ վտակ Սմոտրիչի մեծ օղակի միջև գտնվող այդ

վաճառաշահ բնակավայրը ոչ միայն ցամաքային ու ջրային ուղիների հատույթն էր, այլև քրիստոնեական ու մուսուլմանական մշակույթների, քաղաքակրթությունների սահմանաբաժանը: Աշխարհաքաղաքական կարևոր դիրք ունեցող ամրոց, որտեղ առաջատար դերակատարություն ունեին հայերը:



Կամենեց-Պոդոլսկը հնում...




... և այժմ

Պոդոլյեում հայերը հայտնվել են դեռևս XI դարում՝ Անիի, Բագրատունյաց թագավորության անկումից հետո: Գաղթականության մի հատված՝ հատելով Գրիմը և Մոլդո-Վալաքիան, բնակություն հաստատեց այս հողերում: XIIIդ. վերջին, արձագանքելով Գալիցիայի իշխան Լև Դանիլովիչի հրավերին, հայերի նոր հոսք սկսվեց, որոնք հաստատվեցին ոչ միայն Կամենեցում, այլև հիմնեցին երկու նոր բնակավայր՝ Արմյանե և Արմյանկի: 1344թ. Կամենեցի համայնքը ամենամեծաթիվն էր Հին Ռուսիայի տարածքում՝ 300 ընտանիք կամ շուրջ 6000 մարդ: Նրանք համախումբ ապրում էին քաղաքի հարավային մասում, ունեին սեփական քաղամասերը և հիմնականում զբաղվում էին ինչպես առևտրով՝ գորգերի ու համեմունքների, կտորեղենի ու ոսկյա իրերի, ձիերի ու սառը զենքի առքուվաճառքով, այնպես էլ՝ արհեստներով: Հայերն ունեին առանձին ինքնավարություն՝ մագիստրատ, ենթարկվում էին Գոշի «Դատաստանագրքով» առաջնորդվող սեփական դատարանին և տիրում էին չորս եկեղեցու: Հայերին էին պատկանում բազմաթիվ արհեստանոցներ, պահեստներ (Армянские склады), պատնեշ (Армянский бастион), ջրհոր (Армянский колодец), իսկ Հայկական շուկան ամենանշանավոր վայրն էր, ուղտերի քարա-

վաններով բերվող արևելյան ապրանքների մի խոշոր վաճառատեղի, ուր չորս կողմից ժամանում էին այլազգի առևտրականներ:

Ուկրաինայի ամենամեծաթիվ և ամենահարուստ համայնքը քաղաքին նվիրեց մի քանի եկեղեցի, չունևորների համար՝ ապաքինարան, հայ վարպետների շնորհիվ լայն տարածում ստացավ քարակոփի շինարարությունը, և նրանք էին, որ ոչ միայն նորոգեցին քաղաքի պաշտպանական ամրությունները, այլև կառուցեցին նորերը: Ի վերջո, Կամենեցի մեծահարուստ հայերն էին, որ ռազմապաշտպանական նպատակներով խոշորագույնար վարկեր էին տրամադրում լեհ թագավորներին:



Կամենեց-Պոդոլսկի  
Սբ. Նիկողայոս  
հայկական եկեղեցին



Կամենեց-Պոդոլսկի հայ

Եվ ահա 1672թ. օգոստոսի 14-ին քաղաքի մոտ հայտնվեցին թուրքական առաջին ջոկատները: Մեկ օր անց, կեսօրին, ժամանեց մեծ վեզիր Ահմեդ Քյոփրյուլուն ու վրան խփեց: Բացի այն, որ թուրքերն ունեին ավելի քան հարյուրապատիկ թվային գերակշռություն, նրանց տրամադրության տակ կար 100 թնդանոթ (26-ը՝ հեռահար), և անմիջապես սկսվեց Կամենեցի ռմբահարումը: Քաղաքը չորս կողմից պաշարվեց ու կտրվեց արտաքին աշխարհից:

Արդեն օգոստոսի 16-ին թուրքերը կամենցիներին առաջարկեցին դադարեցնել կռիվը և բանակցություններ վարել, ինչը հավասարագոր էր առանց մարտի քաղաքը հանձնելուն: Այդ իսկ պատճառով խիզախ պաշտպանները, այդ թվում և հայերը, մերժեցին առաջարկը:

Սկսվեց լայնածակատ ու մեթոդական ճնշում: Կամենեցի վիճակն օրեցօր դառնում էր օրհասական, և քաղաքի վրա կախվեց ռմբակոծություններից հիմնահատակ ավերվելու վտանգը:

Օգոստոսի 27-ի ցերեկը Ահմեդ Քյոփրյուլուն բանագնացների հետ ուղարկեց լատիներեն մի համաձայնագիր, որով առաջարկում էր առանց քննարկման անձնատուր լինել: Փոխարենը խոստանում էր կյանքի անձեռնմխելիություն, ցանկացողներին թույլ էր տալիս ընտանիքներով և ունեցվածքով հեռանալ ու երդվում մնացողներին բռնաճնշումների չենթարկել ու չպղծել կրոնական սրբությունները: Նույն օրը երեկոյան, որպես ծանրակշիռ փաստարկ, պայթեցրեցին Հին ամրոցի պահեստը, ինչը հանգեցրեց ոչ միայն ահռելի ավերածությունների ու մարդկային զոհերի, այլև՝ լիակատար բարոյալքման: Քաղաքի ճակատագիրը վճռված էր:

Օգոստոսի 28-ին Կամենեցի խորհրդանշական բանալիները հանձնվեցին թուրքերին: Տրվեց երկու օր ժամանակ, և օգոստոսի 30-ին քաղաքի բնակիչների մի մասը՝ հիմնականում լեհեր և ուկրաինացիներ, 300 բեռնասայերով հեռացան:

Մեպտեմբերի 2-ին սուլթան Մեհմեդ IV-ը՝ նժույգ հեծած, Ռուսական դարբասով մտավ քաղաք: Անցնելով Հայկական ու Լեհական շուկաներով՝ նժույգն ուղղեց Մայր կոստյոլում հապշտապ սարքված մզկիթ, ուր նամազ կատարվեց:

Քաղաքը գրավելով, թուրքերը մեկ հեռահար, ռազմավարական նպատակ էին հետապնդում՝ ամրապնդվել ու մշտատև դարձնել իրենց ներկայությունը Պոդոլյեում: Քանի որ անհնար էր Բոսֆորի ափերից բերել թուրքերի և այստեղ վերաբնակեցնել, զինվորական իշխանությունը պատրաստակամություն հայտնեց օժանդակել նրանց, ովքեր կհամաձայնեին որոշ ազատությունների դիմաց մնալ քաղաքում և ընդունել սուլթանի հպատակությունը:

Լեհերն անմիջապես հրաժարվեցին ու հեռացան այլ վոյեվոդություններ: Ուկրաինացիներն էլ էին ազատ կյանք երագում, այդ պատճառով նվաճված բնակավայրերից թողեցին-զնացին անտառներ ու տափաստաններ:

Հայերը մնացին, և դա պատճառ ուներ:

Հարկ է նշել, որ Կամենեցի հայությունը կրոնական տեսակետից միատարր չէր, տարանջատված էր երկու մասի. մեծաթիվ հատվածը 1666թ. ընդունել էր կաթոլիկություն, իսկ փոքրաթիվ մասը պահպանել էր հավատարմությունը լուսավորչական եկեղեցուն: Նոր նահանգապետ Հալիլ փաշան իր մոտ կանչեց երկու հատվածների ներկայացուցիչներին, երաշխավորեց սուլթանի բարեհաճությունը և առաջարկեց մնալ ու առաջվա նման զբաղվել առևտրով, ընդ որում՝ խոստանալով պահպանել այն արտոնությունները, որոնք ստացել էին լեհական կենտրոնական իշխանությունից: Ըստ նահանգապետի, իրենք պատերազմ էին մղում Լեհաստանի դեմ, այդ իսկ պատճառով լեհական փոյթը փակվելու էր, այնինչ հայկական ու ռուսական մագիստրատները շարունակելու էին գործել:

Հայերին թույլատրվում էր նաև ազատորեն կատարել կրոնական ծեսեր, սակայն մեկ սահմանափակմամբ՝ եկեղեցիներից պետք է հանվեին զանգերը: Պատճառաբանությունն այն էր, որ, ըստ իրենց հավատքի, մեռած մուսուլմանների հոգիները թռչում էին երկնքում՝ հավատակիցների գլխավերևով, իսկ զանգերի դողանջները վախեցնում էին դրանց:

Կաթոլիկություն ընդունած հայերը չհամաձայնվեցին ու հեռացան: Լուսավորչականները համաձայնվեցին, մնացին, միայն թե պահպանվեին իրենց քաղաքացիական իրավունքները:

Մնացին և արժանացան Քրիստոսի չարչարանքների, մինչև վերջ ըմպեցին թուրքական բարբարոսությունների դառնության բաժակը:

Հայկական չորս եկեղեցիներից բացի, Կամենեցում կային 11 ուղղափառ և 9 կաթոլիկ եկեղեցիներ. հաշվված օրերի ընթացքում դրանցից թողնվեց մեկական, մյուսները վերածվեցին մզկիթների: Թուրքերը քաղաքը վերածեցին մշտական կայազորով հզոր ամրության:

Գրեթե անմիջապես թանկացան հացն ու վառելիքայտը: Մեծաթիվ կայազորը պարզապես ի վիճակի չէր տեղավորվել կացա-

բաններում, երբեմն հարյուր հոգով խցկվում էին մեկ շինության մեջ: Դա զայրացրեց ասկյարներին, որոնք հայերին հանիրավի մեղադրելով լեհերի հետ հարաբերություններ պահպանելու մեջ՝ խլեցին նրանց ունեցվածքը և վոնդեցին հատկապես փայտաշեն տներից. վերջիններս քանդեցին և 1674թ. խստաշունչ ձմռանը դիմանալու համար օգտագործեցին որպես վառելիքայտ:

Սկզբում հայերն իրավունք ունեին վաճառել ոգելից խմիչքներ, բայց դա էլ արգելվեց այն բանից հետո, երբ զինվորները հարբեցին, ու երկու ենիչեր սպանվեց:

Մզկիթի չվերածված միակ Սբ. Նիկողայոս հայկական եկեղեցուն կից կար կուսանոց: Հալիլ փաշան կանանց արգելեց փողոց դուրս գալ, ապա հայ քահանա Մաղաքիային հրամայեց փակել եկեղեցին. ճիշտ է, եթե քահանան մահմեդականություն ընդուներ և կուսանոցը հռչակեր հարեմ, ապա կարող էր մնալ...

Հայոց վիճակը դարձավ օրհասական: Ելքը գտնվեց. 1674թ. հայերը վիթխարի կաշառք՝ 1500 լեվ, հանձնեցին Հալիլ փաշային, ինչի դիմաց նա տվեց մի քանի տասնյակ ուղտ, պահակախումբ և թույլատրեց, որ 600 հոգի ճանապարհվի հարավ՝ դեպի Սև ծով: Իսկ քաղաքում մնացած հայերին, որպես ստրուկ, սկսեց աջուձախ վաճառել...

Կամենեցի անկմամբ, փաստորեն, վերացավ ամենահին, ամենաշեն, ամենաուռևոր հայկական գաղթօջախներից մեկը: Դիշտ է, 27 տարի անց, 1699թ. Կարլովիցի դաշնագրի\* հիման վրա որոշ թվով հայեր վերադարձան, բայց Հռոմի և լեհական իշխանությունների ճնշման ներքո ստիպված եղան գլխովին կաթոլիկություն ընդունել, ինչն ուղղակիորեն հանգեցրեց ուժացման: 1767թ. նույնիսկ վերանորոգեցին Սբ. Նիկողայոս եկեղեցին, իսկ 1775թ. հաշվվում էին արդեն 1800 հոգի, բայց, միևնույն է, համայնքը բնականոն զարգացման ծիրից դուրս ընկավ ու մարեց...

Սակայն վերադառնանք ու հետևենք բնավեր եղած այն 600 հայերի ճակատագրին, որոնք ուղղություն վերցրեցին դեպի հարավ ու հասան Սև ծով:

Այստեղ թուրքերը նրանց տեղավորեցին երեք նավերի վրա և հանձնեցին բախտի քմահաճույքին: Ուժեղ փոթորկի և ալեկոծության հետևանքով նավերը միմյանցից բաժանվեցին: Մեկը կարողացավ բուլղարական ափին հասնել՝ Ղալաթիայի հրվանդանին, մյուսը Սոգոպոլ\*, իսկ երրորդը պոնտական ծովեզերքի մոտ նավաբեկության ենթարկվեց. 97 հոգի խեղդվեց, ողջ մնացածները ցամաք դուրս եկան, ուր մեկ տարի տառապագին կյանք վարելով՝ զոհ գնացին ժանտախտին:

Կամենցիների՝ անեցիների ժառանգների, այս դառնադետ վիճակն էր, որ Ապրո Չելեբիին դրդեց գործի անցնել: Ըստ սուլթանի հրովարտակի՝ իրադեի, հայ գաղթականներին արգելված էր քափանցել Օսմանյան կայսրության ներքին նահանգներ և բնակություն հաստատել: Ապրոն՝ օգտագործելով իր ազդեցությունը, կարողացավ ոչ միայն չեղյալ հայտարարել տալ այդ հրովարտակը, այլև ձեռք գցել նորը, ըստ որի գաղթական հայերին իրավունք էր տրվում ունենալ եկեղեցիներ:

Կամենցիները, որ «եկեալ հասին ի Փիլիպուպոլիս եւ անդ տեսեալ զմիմիանս յարտասուս ցնդէին վասն կրեալ տառապանաց եւ ազգին ազգի վշտակրութեանց իւրեանց որ էհաս ի վերայ նոցա<sup>14</sup>»\*\*, դիմեցին Ապրո Չելեբիին՝ խնդրելով նրա միջամտությունը, որպեսզի Ֆիլիպետում մի եկեղեցի ունենան:

Չելեբին, որի ծնողները թաղված էին Ֆիլիպետում, կարողացավ սուլթանից թույլտվություն կորզել, ինչի հետևանքով 1676թ. հույների ութ եկեղեցիներից մեկը տրվեց հայերին: Ապրոն 400 դուրուշ տրամադրեց, որպեսզի եկեղեցին վերանորոգվի, բայց մահը խանգարեց տեսնել արդյունքը: Հոր գործը շարունակեց որդին՝ Մատթեոսը, որը հատկացրեց 1636 դուրուշ, և Ֆիլիպեի հայերն ունեցան Սր. Գևորգ եկեղեցին: Սա, սակայն, այլ պատմություն է, այս մասին՝ քիչ ուշ:

<sup>14</sup> Տե՛ս «Վկայագրեր» բաժնում՝ «Վիպասանութիւն առման Ս. Գեորգ եկեղեցոյ. որ ի Մակեդոնիայ ի Փիլիպուպոլիս. ի ձեռաց ազգին Յունաց» փաստաթուղթը:



Պրովիպի (Ֆիլիպե) Սր. Գևորգ եկեղեցին

Ճիշտ նույն կերպ Ապրո Չելեբին 1675թ. ձեռք բերեց Սիլիվրիի\* հունական Այի Յորգի եկեղեցին և վերանորոգելով այն՝ Սր. Գևորգ անվամբ հանձնեց ազգակիցներին<sup>15</sup>:

Հավելեմ, որ Չելեբին իր ծախսով կառուցեց նաև Իսլիմիեյի\*\* ու Մահալլեհի\*\*\* հայոց եկեղեցիները:

Ապրո Չելեբին վախճանվեց 1676թ. ապրիլի 15-ին Էդիրնեում\*\*\*\*: Նրա դին հողին հանձնեցին տեղի Յըլդրիմ կոչվող հայոց գերեզմանատանը: Տապանաքարի վրա կային թուրքերեն ու հայերեն հետևյալ արձանագրությունները.

ՊԵԼԸՐՂԱԹԼԻ ԽՕՃԱՅ ԱՊՐՕ ՉԷԼԷՊԻՆԸՆ ՏԸՐՊՈՒ ՍԷՉԱՐ. ԿԵՕՐՆԻՃԻ ԽԱԹԻԼԷ. ԵԶՍԱՆԷՅԼԷ ԻՇ ՏԸՐ. ՌՈՒԶԻԿԵԱՐ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԵԼԸՐՂԱՏՅԻ ՄԱՀՏԵՍԻ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ՈՐԴԻ ՊՐՆ. ԱՊՐԱՀԱՍ ՉԷԼԷՊՈՒՆ, ՈՐ ՀԱՆԳԵԱԻ ԱՌ ԹՐԻՍՏՈՍ ԹՈՒԻՆ ՌՃԻԵ. ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1676ԻՆ ԱՊՐԻԼԻ Ժ ՀՆԿԻՆ<sup>16</sup> \*\*\*\*\*

Մարդը մահացավ, բայց իր անունը ոսկե տառերով թողեց մեր ժողովրդի պատմության մեջ:

<sup>15</sup> Տե՛ս «Վկայագրեր» բաժնում՝ «Առումն Սուրբ Գեորգ Եկեղեցոյս ի ձեռանէ Հոռոմոց ազգին, թուին ՌՃԻԿ» փաստաթուղթը:

<sup>16</sup> Ն. Ակիմեան, նշվ. աշխ., էջ 250-251:

Ինչ էլ ասում Ջմյուռնիո վավերագիրը. «Ծնանին սմա երեք որդիք Մագսուտ, Մատթեոս եւ Մուրատիսան եւ դուստր մի Սառայ, յորոց Մատթեոսն սերէ ի ծնունդս մինչեւ ցայսօր»:

Ապրո Չելեբիի ամուսինն էր բելգրադաբնակ ազնվազարմ ընտանիքի դուստր Գյուլիհանը, որին Երեմիա Չելեբին անվանում էր «գրքիստոսագգեստ եւ գյոքնագգաստ»<sup>17</sup>. \* Նրանք ունեցան չորս զավակ՝ Սարգիս (այլ անվամբ՝ Մաքսուդ), Մատթեոս (այլ անվամբ՝ Մաթուսաղա), Մուրադխան և Սառա:

Մուրադխանը մահացել է ծծկեր հասակում, Սառան՝ 6-ամյա տարիքում:

Անդրանիկ զավակը՝ Սարգիսը, ծնվել է 1644թ., և արդեն 14 տարեկան հասակում հայրը նրան ուղարկել է Լիվոռնո՝ վաճառականության արվեստի մեջ խորամուկս լինելու (անշուշտ, ինչ-որ մեկի ուղեկցությամբ ու հովանավորությամբ):

Ինչու՞ Լիվոռնո: Բանն այն է, որ դեռևս 1593թ. Տոսկանայի դուքս Ֆերդինանդ Մեդիչին Լիգուրիական ծովի ափին գտնվող այս նավահանգիստը հռչակեց ազատ քաղաք և վերացրեց ներմուծվող ապրանքներից մաքսերի գանձումը: Դա հանգեցրեց հայ վաճառականների թվի կտրուկ աճի. արդեն 1600թ. այստեղ կային 200 հոգի, որոնց պատկանում էին 120 վաճառատեղիներ ու խանութ-սենյակներ: Թվաքանակի ավելացումը և տնտեսական ամուր դիրքերի առկայությունը հայերին դրդեց ձեռնարկել եկեղեցու կառուցում: Այդ նախաձեռնության հեղինակներից ու գործունե անդամներից մեկը 19-ամյա Սարգիս Ապրոն էր, որը 1663թ. դիմեց Ֆլորենցիայի Քահանայապետական ժողովին՝ Լիվոռնոյում հայոց եկեղեցու շինարարության թուլյտվություն ստանալու խնդրանքով: Այս գործընթացը տևեց տասնյակ տարիներ: Եվ ահա 1692թ. մենք հանդիպում ենք Սարգսի որդի Գևորգ Ապրոյին, ով որպես համայնքի լիազորանձ 120 վաճառականների ժողոված 5489 պեցցայով (26.512 ֆրան-

<sup>17</sup> Ն. Ալիմեան, նշվ. աշխ., էջ 108:

սիական ֆրանկ) ֆրանցիսկյան միաբաններից զնում է մի կանաչապատ տարածք՝ ապագա եկեղեցու կառուցման համար:

1700թ. փետրվարի 8-ին Լիվոռնոյի 24 հեղինակավոր հայ վաճառականներ նոր աղերսագիր են հղում Հռոմ. ստորագրյալների թվում էր և Գևորգ Սարգսյանը, նույնիսկ Սարգսի որդի Գևորգը<sup>18</sup>:

Գևորգ Ապրոն վախճանվել է 1713թ. Լիվոռնոյում, իսկ տապանաքարի արձանագրությունը հետևյալն էր. «ԱՊՐՕ ՉԷԼԷՊԻ ՈՐԴԻ ՄԱԽՍՈՒԴԻ. Դ. ԱՊՐԻԼ ՌՃԿԲ»<sup>19</sup>. \*

Մեր գրքի հաջորդ գլուխը Մատթեոսի մասին է, բայց՝ Ջմյուռնիայի մասին մի համառոտ միջարկությունից հետո:

Բանն այն է, որ Մատթեոս Ապրոն իր գերդաստանի զմյուռնական ճյուղահատվածի հիմնադիրն է. այդտեղ են ծնվել և իրենց վերջին հանգրվանը այդտեղ գտել Ապրոններից շատերը: Այդտեղից են ծագում նրանց ազգակցական-խնամիական կապերը, որոնք էական նշանակություն ունեցան իրենց ճակատագրերում:


Ջմյուռնիան է եղել այն մայր-մեղվանոցը, որտեղից սկիզբ են առել հայոց բազմաթիվ ականավոր ընտանիքների սերունդներ, որոնք ապրանքների հետ մեկտեղ հեռանում էին այլ երկրներ, բայց որպես կանոն վերադառնում՝ ողջ թե մեռած:

Ի վերջո, Ջմյուռնիան է եղել մեր ժողովրդի մեծափարթամ, բարձրակիրթ ու ողբերգական վերջաբանով գաղթավայրերից մեկը: Վերջաբան, որը պատմության մեջ հայտնի է Ջմյուռնիո աղետ բառակապակցությամբ:

<sup>18</sup> Ավելի մանրամասն տե՛ս մեր «10 կապիտալիստ» գիրքը (Ե., 2001թ.), էջ 16-21:

<sup>19</sup> Ն. Ալիմեան, նշվ. աշխ., էջ 254:

## ՉՍՅՈՒՌՆԻԱ՝ ՄՅՈՒՌՆԻՅ ԾՆՎԱԾԸ



Չմյուռնիա

Շուրջ 70 կիլոմետրով մայրցամաքի մեջ խրված, Էգեյան ծովածոցում ծվարած Չմյուռնիան քաղաքակիրթ աշխարհի տարիքն ունի: Մարդկության վաղ շրջանի այս բնակավայրը Ք.ծ.ա. X դարում հիմնել են եղացիները: Հետո բազմիցս անցել է ձեռքից-ձեռք, ապա Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո հին քաղաքի ավերակներից 20 ստադիում\* հեռավորության վրա դեպի հարավ-արևմուտք Անտիզոնը հիմնեց նոր Չմյուռնիան, իսկ կառուցապատումն ավարտի հասցրեց Լիզիմաքոսը: Աշխարհագրական հարմար դիրքի, փոթորիկներից և ալեկոծություններից պաշտպանվածության շնորհիվ այն մշտապես եղել է Փոքր Ասիայի ռազմական և առևտրատնտեսական ապահով հանգրվանը:

Հռոդոսցիներից, միկեացիներից, ճենովացիներից հետո XIV դ. սկզբին քաղաքը նվաճեցին թուրքերը և իրենց նավատորմով Միջերկրական ծովում սկսեցին զբաղվել ծովահենությանը ու թալանով: Նույն XIV դ. կեսերին Չմյուռնիայի վրա իշխող Պազուս լեռան վրա ձևավորվեց քրիստոնեական թաղամասը:

1535թ. Ֆրանսիայի և Օսմանյան կայսրության միջև կնքվեց պայմանագիր, ըստ որի նավահանգիստը դարձավ ազատ առևտրի գոտի: Դրա շնորհիվ Չմյուռնիայում հայտնվեցին հազարավոր այլազգի վաճառականներ՝ քաղաքը վերածելով հայտնի և անհայտ ժողովուրդների, ազգերի և ազգությունների խառնարանի:

Հայերի առաջին ներհոսքը Չմյուռնիա տեղի ունեցավ 1380-ական թթ.: Կիլիկյան թագավորության անկումից հետո: Նրանք հունական Smirna անվանումը հայեցի թարգմանեցին և կոչեցին Չմյուռնիա, այսինքն՝ մյուռնից ծնված, մյուռնից ծագած, մյուռնով օծված: Ապա Վերին փողոցում (Apano mahala) կառուցեցին մատուռ, որին կից կար գերեզմանատուն. վերջինիս երեք տապանաքարեր հետագայում փոխադրվեցին Սբ.Ստեփանոս եկեղեցու գերեզմանատուն ու պահպանվեցին մինչև 1920-ական թթ.:

Հայոց երկրորդ ներգաղթը սկսվեց 1610թ. հետո, երբ թուրք-պարսկական պատերազմի ժամանակ Շահ Աբասը մոխրակույտի վերածեց Արևելյան Հայաստանը, իսկ երրորդը՝ 1800-ական թթ. վերջերին:

Ինչպիսի՞ն էր Չմյուռնիան, ի՞նչ տեսք ուներ:

Քաղաքի յուրատեսակ արյունատար երակները օրնիբուն շարժման մեջ գտնվող ուղտերի քարավաններն էին: Հում մետաքսով\*, համեմունքներով, մրգերով ու պտուղներով բեռնավորված՝ դրանք Փոքր Ասիայից գալիս ու ծանրաքայլ մոտենում էին Չմյուռնիայի դարպասին՝ հանրահայտ Քարավանի կամրջին (Pont des Caravans): Առջևից ընթանում էր ավանակի վրա նստած քնատ ուղտապանը: Նրան հաջորդում էր քարավանի առաջնորդը՝ զանգուլակներով ու ծուպերով զարդարուն, սպիտակ փրփուրը բերանին, բարձրագլուխ *փեհլիվան* ուղտը: Քարավանը հասնում էր նավահանգստի առափնյակ, բեռնաթափվում, ապա բեռնավորվում եվրոպական ապրանքներով ու բռնում ետդարձի ճամփան: Եվ այսպես՝ գիշերուզօր, անընդհատ, միմյանց հաջորդելով:

Դրանք փոխանակում էին ոչ միայն ապրանքներ, այլև եվրասիական նոր բարքեր, սովորույթներ, կենցաղավարություն: Չմյուռնիայում և Չմյուռնիայի միջոցով էր կատարվում Ասիայի ու Եվրոպայի քաղաքակրթական շփումը, մշակութային ներթափանցումը:

Բերենք մի քանի նկարագրություններ, որոնք, ճիշտ է, ուշ ժամանակների են, սակայն հրաշալի են ներկայացնում քաղաքը, նրա շունչն ու ոգին: 1876թ. Չմյուռնիա այցելած ականատեսը գրում էր. «Չմիւռնիոյ բնակութիւնները՝ միայրկ, երկյարկ եւ քի-

չերն եռայարկ եւ քառայարկ կ'բարձրանան, ընդհանրապէս ընդարձականիստ, քարաշէն եւ հոյակապ են. Քրիստոնէից թաղերն եւ նաւահանգստի փողոցներն մաքուր են եւ վայելուչ սալաշատակներով կ'ծածկուին, լայն ու ընդարձակ են եւ մեծաւ մասամբ կազի լապտերներով կ'զարդարին, որք գիշերն ի բուն կ'վառին. կան այնպիսի փողոցներ ալ որ միջին դարէ մնացած են»<sup>1</sup>:

1899թ. մեկ այլ ականատես հավելում էր. «Երբ նաւ մ'այս խորշին մէջ կը մտնէ, յարկին վրայ գտնուող օտարական ճանապարհորդը, որ անհամբերութեամբ կը սպասէ նոր քաղաք մը տեսնելու, վեր վար ելլելով իջնալով՝ աջ ու ձախ հետաքրքրական նայուածք նետած ժամանակ, վերջապէս կը նշմարէ հեռուն կարգ մը բլրակներու վրայ եւ անոնց ստորոտը շինուած Չմիտնիոյ քաղքին շէնքերը, երկայն կարգի մը վրայ ճերմակ տները, մզկիթներու գմբէթներն ու աշտարակները: Քիչ մ'աւելի քաղքին մօտեցած ժամանակ՝ կը տեսնէ ցած, խառնաշփոթ ու գոյնզգոյն տներուն վրայ տիրող եկեղեցիներու գմբէթաւոր յարկերը, զանգակաւոր բարձր աշտարակներն եւ նշանաւոր շէնքերը: Իսկ երբ նաւը բոլորովին կը մերձենայ նաւահանգստին, միայն կարգ մը շէնքեր կը տեսնուին, որոնք ծովեզերեայ քարափանց վրայ վերէն վար շինուած, գեղեցիկ տեսարան մը, երոպական քաղքի մը տեսքը կ'ընծայեն նաւուն յարկին վրայ կեցող հետաքրքիր աչքերուն:

Բաց՝ խորշին մէջտեղէն՝ Չմիտնիոյ շուրջն ակնարկ մը նետելով՝ կը տեսնենք քաղքին ետեւի կողմը՝ հոս հոն նոճիի (sypres) մշտադալար անտառակներ, որոնց կռնակը բարձրացած է Պագոս լեռնաբլրակն իւր աւերակներով: Հարավակողմը, դէպ ի Եփեսոս կը տարածուին հարուստ արգասատր դաշտագետիւններ, որոնց վրայ կարծես թէ կ'իշխէ կրկնագագաթ եւ «Երկու Եղբարք» (Իթի գարտաշլար) ըսուած լեռը: Հիւսիսային կողմը կը տեսնուին Միպիլ լեռանց շարքը, Գորտելիոյ ցած եւ Պայրաքը բարձր գիւղերն եւ ամառնային ուրիշ բնակավայրեր: Իսկ հիւսիս-արեւելեան կողմը

<sup>1</sup> Հ.Դիմաքսեան, Շիթք մ'անունք ի Միջերկրականէ, Կ.Պոլիս, 1878թ., էջ 323:

կը տեսնուին Պուռնապատ եւ Հաճըլար գիւղերուն ձորերն ու ծործորները: Չմիտնիոյ ծովն եւ երկինքն անոյշ կապուտակ են, օդն այնպէս մաքուր եւ յստակ է որ խորշին արեւմտեան կողմը՝ հեռուն եւ շուրջը բարձրացած լեռները կ'երեւան մօտ եւ անշփոթ»<sup>2</sup>:

Քաղաքի փողոցները նեղիկ էին, ծուռնոտիկ, քաղաքաշինական որևէ համակարգվածությունից զուրկ, ու միայն Հայկական քաղամասն (Quartier Armenien) ուներ կանոնավոր բաժանումներ: Եվ հենց նեղիկ փողոցների պատճառով ներքաղաքային հիմնական փոխադրամիջոցը էլն էր: Ավանակ նստած ֆրանսիական շրջագգեստով ու հովանոցով բաղնիս գնացող հայ տիկինը սովորական բան էր:

Տներն առհասարակ երկհարկանի էին, իսկ եռահարկ կամ քառահարկ շէնքերը հազվադեպ էին: Տան հիմքը կառուցվում էր քարից, իսկ վերնամասը՝ գերաններով, որոնք ծեփվում էին քարերով և աղյուսներով: Տնաշինության այս ձևը պատահական չէր, դա արվում էր ոչ հազվադեպ երկրաշարժերի ծանր հետևանքներից՝ ավերածություններից ու մարդկային զոհերից հնարավորինս խուսափելու համար:

Քաղաքի բնակչությունը հիշեցնում էր զարմանազան ազգ-ազգությունների ներկայացուցիչների մի խառնիճադանճ ամբոխ: Այստեղ էին անգլիացին ու ֆրանսիացին, իտալացին ու հոլանդացին, ավստրիացին ու գերմանացին, հույնն ու սերբը, իսպաններեն կամ իտալերեն խոսող հրեան, թուրքը, պարսիկը, քուրդը, թաթարը, գնչուն ու մալթացին: Եվ հայը... Առևտրի լեզուն հունարենն էր, և միայն գրագրությունն էր արվում այն երկրի լեզվով, որի հետ հարաբերվում էր վաճառականը:

Հայոց թվաքանակը Չմյուռնիայում մեծ չի եղել, տատանվել է 5-12 հազարի սահմաններում: Այսպես, 1631թ. 90 հազար բնակչից 8 հազարն էր հայ, 1840թ. 130 հազարից՝ 5 հազարը, 1868թ. 187

<sup>2</sup> Յ. Քօսեան, Հայք ի Չմիտնիա եւ ի շրջակայս, հտ. Ա., Չմիտնիա եւ հայք, հետազոտութիւն արձանգրութեանց եւ յիշատակարանաց, Վիեննա, 1899թ., էջ 15-16:

հազարից՝ 12 հազարը, 1898թ. 340 հազարից՝ 11 հազարը: Սակայն համեմատաբար փոքրաթիվ հայությունը բացահայտ առաջատար էր տնտեսական ասպարեզում: Հնագույն փաստաթղթերի հիման վրա Չմյուռնիայի, այդ թվում և զմյուռնահայոց պատմությունը հիմնովին ուսումնասիրած եվրոպացի Բոնավենթյուր Սլաարսը գրում է. «Չմյուռնիոյ Հայերն ընդհանրապես վաճառական են. Եւրոպայի հետ ուղղակի յարաբերութեան մէջ մտած են, ի մասնաւորի Մանչեսթերի եւ Լոնդոնի հետ, ուր այս օրս վաճառականական խէլ մը տներ բռնած են: Անգղիական բամբակի ձեռագործութիւնն (manufacture) իրենց տուրեւառին գլխաւոր մէկ ճիւղը կը կացուցանէ: Հայք իրենց աւանդական վաճառականի հանճարովն եւ իրենց ունակութեամբն այնպիսի մեծ մրցութեան մէջ մտած են անգղիական եւ յունական վաճառատանց հետ, որ այս վերջինները ստիպուած են իրենց գործքը դադրեցընել: Չմյուռնիոյ տարազագործութեան (manufacture) վաճառականութիւնը՝ միահամուռն եւ մասնականը՝ այսօրւան ամբողջ Հայոց ձեռքն է, որոնք շուկայի մէջ խանութպաններու եւ ձեռագործութեան վաճառականներու մեծագոյն մասը կը կազմեն: Աննշան թուով մէկ մասնալ՝ ամենայն յաջողութեամբ ոսկերչութեան, նարօտաներկութեան, դարբնութեան եւն կը զբաղի:

...Հայերն անհամեմատաբար աւելի հարուստ են քան զԼատինները, եւ համեմատաբար աւելի հարուստ են քան զՅոյները: Հայոց մէջ կան ընչաւետ եւ կալուածատէր անձինք, որոնց գոյքը Յունաց եւ Լատինաց ունեցածներէն աւելի է՝ համեմատաբար»<sup>3</sup>:

Միս մոտավորապես այսպիսին էր Չմյուռնիան Մատթեոս Ապրոյի օրոք:

Այն Չմյուռնիան, որտեղից, Ապրոններից բացի, սերում էին այլ ականավոր հայեր ևս, ինչպես՝ Յուսուֆյան եղբայրները, Սպարտայան եղբայրները, Պաքրճյան եղբայրները, Պայլոզյան եղբայրները, Եսայան գերդաստանը, Էքիզյան եղբայրները, Պապո-

յանը, Արապյանը, Զոյյունճյանը, Սիվրիսարյանը և այլք:

Այն Չմյուռնիան, ուր, Սբ.Ստեփանոսից բացի, հետագայում ունեցանք Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Սբ.Հարություն մատուռը, Սբ. Լուսավորիչ հիվանդանոցը:

Այն Չմյուռնիան, որտեղ 1799թ. Գալուստ և Մարգար Ապրոնների շնորհիվ հիմնվեց Մեսրոպյան արական վարժարանը, որտեղ կար Հոնիփսիմյանց իգական վարժարանը:

Այն Չմյուռնիան, ուր գործում էին Աղքատասիրաց, Անձնվեր, Արագածունյաց, Սյունյաց, ազնվափայլ տիկնանց Հոգատար, համեստափայլ օրիորդաց Կրթասեր, Աղքատախնամ ընկերությունները, մի խումբ զարգացած երիտասարդների հիմնած Հաշտենից միությունը, Հայ ընթերցատունը, Արևելյան ակումբը: Ուր տպագրվում էին գրքեր ու լույս էին ընծայվում մեկ տասնյակից ավելի լրագրեր:

Այս ամենին վերջ դրվեց 1922թ. սեպտեմբերի 9-ին, երբ թուրքական զորքը գրավեց քաղաքը, կոտորածի ենթարկեց հայ ու հույն ազգաբնակչությանը, բազմաթիվ եվրոպացիների, թալանեց ու բռնազավթեց վիթխարի նյութական ունեցվածք: Ռմբահարեց Սբ. Ստեփանոս եկեղեցին, ուր պատասպարվել էին հարյուրավոր խաղաղ հայ բնակիչներ, հրկիզեց քրիստոնեական թաղամասերը: Իսկ սեպտեմբերի 11-ին ջարդերի կազմակերպիչ ու ղեկավար Մուստաֆա Բենալը հայտարարեց. «Երկար նայեցեք այս տեսարանին: Սա մեր երկրում օտար միջամտության վախճանն է: Այս կրակը դրա խորհրդանիշն է: Այն նշանակում է, որ մեր հայրենիքը վերջնականապես ազատագրվել է դավաճաններից և առևտրականներից: Այսուհետև ազատագրված ու մաքրագարդված Թուրքիան կպատկանի միայն և միայն թուրքերին»<sup>4</sup>:

<sup>3</sup> Bonaventure F. Slaars, Etude sur Smyrne, 1868: Մեջբերումն արված է Յ. Բուենանի նշված աշխատությունից, էջ 33, 35:

<sup>4</sup> Ռ. Պյուռ, Չմյուռնիայի վախճանը (Ա. Վանդալ, Հայերը և բարենորոգումները Թուրքիայում, Ե., 2001թ., էջ 3):

## ՄԱՏԹԵՈՍ ԱՊՐՈ.

### ԱՍՏԾՈ ԿԱՄՔՆ ՈՒ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Աստծո գործերն, այո, անմեկնելի են, բայց կարծում եմ Բարձր-  
յալի կամքն էր, որ Մատթեոսը բաժին դառնար Չմյուռնիայի Սբ.  
Ստեփանոս եկեղեցուն՝ զմյուռնահայոց հոգևոր օջախին, որի  
հիմնման տարեթիվն այդպես էլ ոչ ոքի չհաջողվեց պարզել:

Չմյուռնիո վավերագիրն ասում է. «Առ կենդանութեամբ Հօր իւ-  
րոյ ՄԱՏԹԵՈՍԸ ելեալ ի Կոստանդնուպօլսոյ գայ ի Չմիւռնիս աստ  
յամի 1668. ուր յետ ամի միոյ սկսանի շինել տուն. գոր յետ պատ-  
շաճ յօրինուածով կատարման՝ լեալ սաստիկ գետնաշարժ՝ տա-  
պալէ ի հիմանց եւ ընդ փլածով ճմլին չորեքին մանկունքն եւ այլն,  
ազատելով միայն ամուսնոյն իւրոյ ի պարտէզ»:

Երեմիա Չելեքին 1675թ. հիշատակագրերից մեկում ասում է, որ  
Մատթեոսը կրթվել է իր ձեռքի տակ և 20 տարեկան է: Հետևաբար՝  
ծնվել է 1654թ. Կ. Պոլսում: Սակայն այս դեպքում առնչվում ենք Չմ-  
յուռնիո վավերագրի մի անճշտության հետ. եթե 1668-ին 15-ամյա  
Մատթեոսը հաստատվել է Չմյուռնիայում, մեկ տարի անց տուն  
կառուցել, որն ավերել է հայտնի երկրաշարժը (ինչին դեռ կանդրա-  
դառնամ), ապա մման բան լինել չէր կարող, որովհետև երկրաշար-  
ժը տեղի է ունեցել 1688թ. հունիսի 7-ին: Ըստ իս, իրականությունը  
հետևյալն է. Ապրո Չելեքին պատանի Մատթեոսին ուղարկել է Չմ-  
յուռնիա (ինչպես Սարգսին՝ Լիվոռնո) վաճառականություն սովո-  
րելու: Անշուշտ, նա ապրել է ինչ-որ մերձավոր մարդկանց մոտ,  
որոնց անունները չեն պահպանվել և որոնք պատանուն ներգրա-  
վել են վաճառականության մեջ:

Ինչո՞վ կարող էր զբաղվել Մատթեոսը: Առաջին հերթին, անկաս-  
կած, հում մետաքսի առևտրով, որ Պարսկաստանից տարիներ շա-  
րունակ և մեծ խմբաքանակներով այստեղ էին բերում նորջուղայե-  
ցի վաճառականները: Կարող էր զբաղվել նաև գլխադրի\*, զանա-  
զան մրգերի, չամիչի, բամբակի, ցորենի, գարու, ծխախոտի, ափիո-

նի, ձիթայուղի, մորթիների, գորգերի, հայ արհեստավորների պատ-  
րաստած վարագույրների, կտավե հագուստեղենի, ինչպես նաև  
ֆրանսիական մետաքսե կտորեղենի, հոլանդական մահուղի, անգ-  
լիական բամբակեղենի ու բրդյա գործվածքների, իտալական շի-  
մափայտի ու ճենապակու, ավստրիական ապակու և ապակեղենի,  
եգիպտոսյան բրնձի, սուրճի ու կաշիների և այլնի առևտրով: Այս  
ապրանքների մի մասը նա, անշուշտ, պետք է ուղարկեր հորը, մյուս  
մասը «լատինացոց երկրում»՝ Իտալիայում, գտնվող Սարգիս եղ-  
բորը, մնացյալն ինքնուրույնաբար իրացներ տեղի շուկայով:

1675թ. Մատթեոսը Չմյուռնիայում ամուսնանում է (կնոջ անու-  
նը երբեք և ոչ մի փաստաթղթում չի հիշատակվում), և հարսանիքին  
ներկա է լինում հայրը: Այս ամենի մասին գրում է Մատթեոսն ինքը  
Հակոբ Թոխաթեցու սաղմոսարանի վերջում. «Թվին ՌՃԻԴ. Նո-  
յեմբերի Ը. օրն երկուշափթի էր, որ առավոտուն Ե սահաք կայր որ  
ես Մաթեոս պսակվեցայ Իզմիր:

Ալվի նոյն թվին նոյեմբեր ԺԱ. օրն հինգշափթի աղան նաւըն  
ճանքեցինք, որ գնաց Ալիկօռնայ\*։ Աստուած բարի ճանապարհ  
տայ»<sup>1</sup>:\*\*

1680թ. ծնվում է Մարա անունով դուստր, որը շուտով մահանում  
է, իսկ 1682-ին՝ Հռիփսիմե անունով դուստր: Նույն սաղմոսարա-  
նում Մատթեոսն իր ձեռամբ նշում է. «Թվին ՌՃԻԹ. ունվարի Թ  
օրն ուրփաք եաթսիէին Ա սահաք ետոյ ծընաւ Մարան. տանուտըր  
տարուն Կարիճըն. եօքներեակըն Դ: Քրիստոս միածին ընդ եր-  
կայն աուրս արասցէ. ամէն: - Դ. ամսու էր կէնդանի. եւ ետ նորայ  
ի մահ փոխեցաւ:

Ամենասուրբ Երրորդութեան փառք եւ պատիւ եւ զօվութիւն եւ  
երկրպագութիւն Հօր եւ Որդոյ եւ սուրբ Հոգոյն. որ իւր առատ ողոր-  
մութեամբն եւ բարեխօսութեամբ սուրբ կոյս ծընօղին իւրոյ. շնոր-  
հեաց զդուստր իմ Հռիփսիմէն թվին ՌՃԼԱ ունվարի ամսոյն Լ օրն  
երկուշափթի, կէս օրին: Աստուած ընդ երկայն աուրս արասցէ բա-

<sup>1</sup> Ն.Ալիինեան, նշվ. աշխ., էջ 256:

րեխօսութեամբ սուրբ կոյս Աստուածածնին եւ ամենայն սրբոց նորայ. ամէն»<sup>2</sup>.\*

1676թ. Էդիրնեում գտնվող Ապրո Չելեբին Մատթեոսին նամակ է ուղարկում, որ գա, միասին տոնեն Ջատիկը: Մխիթարյան միաբան, Ապրոյան գերդաստանի պատմության՝ ժամանակային առումով վերջին լավագույն գիտակ Քերոբէ Չրաքեանը գրում է. «Սակայն հօրմէն նամակ առնելով որ Էտիրնէ գայ Ջատիկը միասին անցընելու, ճամբայ կ'ելլէ, բայց Ապրոյ Չելեբի այդ օրերուն կը փակէ աչքերը, և Մատթեոս ութ օր վերջը հասնելով, ցաւակցութիւններ կ'ընդունի տեղոյն կղերէն և մեծամեծներէն»<sup>3</sup>:

Ֆիլիպեի հայերը տեղեկանալով, որ Մատթեոսը գտնվում է Էդիրնեում, ցավակցական թղթեր են ուղարկում և հայտնում, թե՛ Ապրո Չելեբին իրենց քաղաքում կառուցում էր Սբ. Գևորգ հայոց եկեղեցին, տրամադրել էր 400 մառչիլ\*\*, ու շինարարությունն անավարտ է մնացել: Հոր սկսած գործը կիսատ չթողնելու համար Մատթեոսը հատկացնում է հարկ եղած գումարը՝ 1636 մառչիլ:

1687 թվականը Մատթեոսի կյանքում բեկումնային եղավ: Չնայած յոյնի վավերագիրն ասում է. «Եւ ինքն դարձեալ մեծանուն վաճառականութեամբ եւ իշխանաւոր պատուով ընդունի եւ ի Լուդովիկոս ԺԴ. արքայէ Գաղղիացոց թուղթ ազնուութեան եւ հովանաւորութեան, 1687»:

Ի՞նչ է սա նշանակում, ի՞նչ առնչություն կարող էր ունենալ Մատթեոսը Ֆրանսիայի թագավորի հետ:

1687-ին Լյուդովիկոս XIV-ը գտնվում էր փառքի ու հզորության գագաթնակետին: Նա հաղթական պատերազմներ էր մղել Իսպանիայի և Ավստրիայի, Ֆլանդրիայի ու Նիդերլանդների, Իտալիայի և գերմանական հերցոգությունների դեմ ու Եվրոպայում նվաճել այն ամենը, ինչ հնարավոր էր: Նրա բանակն ամենամեծաթիվն էր, իսկ ֆրանսիական նավատորմը հաղթանակներ էր տոնել ոչ միայն

<sup>2</sup> Ն.Ակիմեան, նշվ. աշխ., էջ 256-257:

<sup>3</sup> Զ. Չրաքեան, նշվ. աշխ., էջ 10:

անգլիացիների և իսպանացիների նկատմամբ, այլև ոմբահարել Տրիպոլին, Ալժիրն ու Ճենովան:

Սակայն Ֆրանսիայի Արև-Արքան ոչ միայն զորեղագույն տիրակալ էր, այլև իր ժամանակի խոշորագույն տնտեսական գործիչներից մեկը: Դեռևս կարդինալ Մազարինիի, ապա ֆինանսների նախարար Կոլբերի աջակցությամբ նրա ուշադրության սևեռակետում հայտնվեց Արևելքը՝ Թուրքիա-Պարսկաստան-Հնդկաստան առանցքը: Արևելքի հետ առևտուրը էական նշանակություն ուներ ֆրանսիական զանձարանի համար, և այդ գործում առաջնակարգ դերակատարություն էր վերապահված հայ վաճառականներին:

Սակայն եթե Լյուդովիկոս XIV-ին ու ֆրանսիական տնտեսությանն անհրաժեշտ էին արևելյան ապրանքները և հայոց բացարձակ մենաշնորհ հանդիսացող հում մետաքսի մատակարարումը, որից Լիոնում արտադրվում էր նրբահյուս մետաքսե գործվածք, ապա հայերի համար զորեղ թագավորը նաև տնտեսական ու քաղաքական խնդիրների հնարավոր լուծման խորհրդանիշ էր:

Ստույգ հայտնի է, որ Լյուդովիկոս XIV-ի հետ հայերը հանդիպել, անձնապես տեսակցել են 1683 թվականին. բաղիշեցի Մահտեսի Խոջա Մուրատը թողել է հիշատակարան, ըստ որի ինքն ու ընկերները այդ թվականի փետրվարի 2-ին այցելել են արքայական Վերսալ նստավայր և Սեն-Կլո պալատ: Խոջա Մուրատը Ֆրանսիայում առևտրային գործունեությամբ զբաղվում էր դեռևս 1666-ից և քաջատեղյակ էր թե տնտեսական, թե քաղաքական անցուղարձին: Թուրքերի կողմից Խանիան գրավելուց հետո նա փրկել էր բազմաթիվ ֆրանսիացի գերիների, իսկ 1678թ. իր ծննդավայր Բաղեշում Սբ. Կիրակոս եկեղեցուն էր նվիրել Դավիթ Ճնճղուկի ձեռքով ընդօրինակված մի երկաթագիր ավետարան: Խոջա Մուրատի պատվիրակության կազմի մեջ էին Կ.Պոլսո նախկին պատրիարք Հովհաննես վարդապետ Թութունջին, լատինասեր հոգևորական Ջաքարիա վարդապետ Միսիանցին, Մարսելի հայկական տպարանի սեփականատեր Սողոմոն Լևոնյանը՝ Աստվածաշնչի առաջին տպագրիչ Ռսկան Երևանցու քեռորդին, վաճառականներ

Գրիգոր Էրզրումցին, Մուրատ Ղազանչեցին և Խոջա Առաքել Ղրիմեցին, ով ժամանակին եղել էր Ղրիմի թաթար խանի վաճառականը ու բազմաթիվ ֆրանսիացի գերիների էր գնել և ազատ արձակել: Առաքելության այսպիսի կազմը վկայում է, որ հայերն Արև-Արքայից ունեին երկու սպասելիք՝ տնտեսական և քաղաքական, այսինքն՝ զարգացնել հայ-ֆրանսիական առևտրատնտեսական կապերը ու զորեղ թագավորի միջոցով թոթափել թուրք-պարսկական լուծը, վերականգնել պետականությունը:

Ըստ իս, Մատթեոսն անձնապես ծանոթ էր զոնե Խոջա Մուրատի հետ, քանզի սա վախճանվել էր 1684թ.՝ Չմյուռնիայում<sup>4</sup>: Բացի այդ, նա հայ-ֆրանսիական առևտրատնտեսական հարաբերություններին անկասկած քաջատեղյակ էր սեփական փորձից:

Ահա քաղաքական ու տնտեսական խնդիրների այս բարդ թնջուկում, առևտրատնտեսական փոխշահավետ հարաբերությունների զարգացման գործում Մատթեոս Ապրոն մեկն էր այն հայ վաճառականներից, ով արժանացավ Լյուդովիկոս XIV-ի հովանավորությանը:

Իսկ ո՞րն էր հովանավորության ստացման մեխանիզմը:

Մատթեոս Ապրոյի հանձնարարությամբ 1687թ. Երեմիա Չելեբին գրում է մի ուղերձ՝ «Առ թագաւորն Ֆռանցու», որի առաջաբանը հետևյալն էր. «Ի փառս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի վերայ աշտանակի եօթնջահեան լուսով բարձրացեալ քրիստոսաւեր թագաւորն Լուսովիզոս, որ ընկալեալ է զթագաւորութիւն առ ի հովելոյ զբազմահոյլ ժողովորդս Տեառն: Չորս եւ արժանապէս կարգաւորեալ եւ զարդարեալ՝ ըստ որում եւ ինքն հոգեկան մասամբք պայծառացեալ, եւ մեղաց աղտն ի բաց բարձեալ հեռի յինքեմէ, եւ առ տէրունի զշաւիղն որ է ճշմարիտ ճանապարհի եւ կեանք: Վասն որոյ խնդրեսցուք եւ աղօթս ձիզս տարածեսցուք առ ամենակարող բարձրեալն Քրիստոս, զի զարժանաւոր ծառայն իւր ԳԴԺ-ան Լուսովիզոս թագաւորն ի ստուգապէս ճանապարհն եւ կեանս հասցէ

յանեղծ եւ յաւիտենական փառս օրհնեալ արքայութեան: Եւ զծիրանաձին զպայազատեցեալ թագաժառանգ զորդիսն իւր փառօր թագաւորականօք պսակեցէ յազգաց ազգս ամբողջ կենօք ի պարծանս եւ ի յաղթութիւն ժողովրդեան իւրոյ. ամէն»<sup>5</sup>:\*

Ուղերձի բովանդակությունը հայտնի չէ, քանզի բուն փաստաթուղթը կորսված է, սակայն դա, ամենայն հավանականությամբ, եղել է վերին աստիճանի գեղարվեստական բարձրաճաշակ մի ձեռագիր, որն ըստ արժանվոյն գնահատել է Լյուդովիկոս XIV-ը:

Հօգուտ այս ենթադրության խոսում է Ն.Ակիմեանի հետևյալ միտքը. «Ուղերձս կ'երեւայ թէ մատուցած է Լուդովիկոս ԺԴ-ին Մատթեոս Ապրո Չելեպիի կողմէն, որուն փոխարէն ստացուծ է թագաւորէն «թուրք ազնուութեան եւ հովանավորութեան»<sup>6</sup>:

Եվ այսպես, 1687թ. Մատթեոսը մտածեց, որ Լյուդովիկոս XIV-ի հովանավորությանն արժանանալը պարտավորեցնող է և իր կենցաղը պետք է համապատասխանի հասարակական դիրքին: Ու որոշեց տուն կառուցել: Ընտանիքի համար կացարան վարձակալեց, Հայկական թաղամասում հողատարածք գնեց և սկսեց շինարարությունը: Մեկ տարի անց նա մոր՝ Գյուլիհանի, զոքանչի, կնոջ, չորս երեխաների՝ Հռիփսիմեի, Աբրահամի, Մուրադի, Պետրոսի ու յոթ աղախիճների հետ հաստատվեց նոր տանը: Դա երկհարկանի, քարաշեն, լուսավոր սենյակներով մի շինություն էր, որտեղ ծնունդ տաք էր լինելու, իսկ ամռանը՝ զով:

Հունիսի 7-ն էր, և տապը չէր մեղմում անգամ ծովից փչող թույլ քամին: Այդ օրը Մատթեոսը սովորականի պես առևտրով զբաղվեց՝ ապրանք առավ, առաքեց, ապա որոշեց տնեցիներին ուրախացնել. նավահանգստի այլազգիներից գնեց քաղցրավենիք, զարմանազան մրգեր ու էշ նստած՝ բռնեց տան ճամփան:

Հասավ Սբ. Ստեփանոս եկեղեցուն, էշից իջավ, խաչակնքեց ու կանգնեց պատի տակ՝ շունչ առնելու: Թե ինչ կատարվեց հետո՝ Մատ-

<sup>4</sup> Հ.Անասյան, նշվ. աշխ., էջեր 160, 173, 219:

<sup>5</sup> Ն.Ակիմեան, նշվ. աշխ., էջ 149-150:

<sup>6</sup> Ն.Ակիմեան, նշվ. աշխ., էջ 150:

թեոսը չհասցրեց հասկանալ: Հողը ոտքերի տակ երերաց, նա վայր ընկավ ու նկատեց, թե ինչպես թափվեցին մրգերն ու քաղցրավենիքը, ապա մթություն տիրեց: Երբ աչքերը բացեց, տեսավ, որ արյունվա է, հողուվոշու մեջ կորած, քարակոյտերի տակ, և ականջին աղաղակներ հասան: Հասկացավ՝ երկրաշարժ էր տեղի ունեցել, և Սբ. Ստեփանոսը փլվել էր:

Մատթեոսը չգիտեր ու չէր կարող իմանալ, որ տեղի էր ունեցել մի սարսափելի բնական աղետ, որը մնալու էր Չմյուռնիայի պատմության մեջ: Քաղաքի տների մեկ երրորդը փլվեց, և ավերակների տակ զոհվեց 14 հազար մարդ: Երկրաշարժից հրդեհ բռնկվեց, որը Ֆրանկաց փողոցից իջնելով՝ հասավ Հայոց թաղին: Լափլիզող հրո ճարակ դարձան կաթոլիկների երեք, կապուչինների, հիսուսյանների ու ֆրանցիսկյանների եկեղեցիները, հունաց մեծ տաճարը: Տասնյոթ մզկիթներից միայն երեքը կանգուն մնաց, այն էլ՝ կիսավեր վիճակում: Կրակը տարածվեց նաև շուկայում՝ վերջ դնելով առևտրին, իսկ անվնաս մնացած ապրանքները տեղնուտեղը թալանվեցին՝ աղքատացնելով դրանց տերերին ու հարստացնելով թալանչիներին: «Երկրաշարժին առաջին ցնցումին գետինը բացուելով՝ սեւ ջուր ժայթքեց, որ կարծես կը պըճալըճար եւ կ'եռար եւ անտանելի ժանտահոտուիւն մ'ունէր: Երկրին սոյն պատռուածներուն վրայ անկենդան ձկներ մնացած էին, որոնք կարծել կու տային, թէ այս ջուրը ծովէն եկած ըլլայ»<sup>7</sup>:

...Մատթեոսը քարերը հրիրեց, դուրս եկավ ու նկատելով, թե Սբ. Ստեփանոսի ավերակների միջից ինչպես են կրակի բոցեր վեր խոյանում՝ նետվեց տուն: Դանապարհին հանդիպում էր խելացնոր, այսուայն կողմ վազվզող, աղաղակող մարդկանց:

Նա դեռ հեռվից նկատեց, որ իր նորակառույց տունը հողին է հավասարվել և աղետը կանխազգալով՝ փղձկալով ու գոռալով նետվեց առաջ:

Տան առջևի պարտեզում տեսավ գլխաբաց, սուկանքի կնիքը դեմքին, արձանի պես քարացած ու լուռ արտասվող կնոջը: Կո-

<sup>7</sup> Յ. Զօւեան, նշվ. աշխ., էջ 24:

ղակցի մազերը ճիւղ-ճերմակ էին:

Նորակառույց տան փլատակների տակ զոհվել էին ընտանիքի բոլորը անդամներն ու սպասավորները:

...Մեկ տարի անց՝ 1689թ. նոյեմբերի 13-ին, Աստված Մատթեոսին ընծայեց արու զավակ, որն ի հիշատակ նախնյաց ու երկրաշարժի զոհ գնացած երեխայի, ստացավ Աբրահամ անունը: Մանկիկը հորն ուրախություն ու զվարթություն էր պարգևում, բայց Մատթեոսի վիշտն, ավաղ, անամոք էր...

Այս ամենը հորինվածք չէ և մանրակրկիտ շարադրված է մի ձեռագիր Աստվածաշնչի հիշատակարանում<sup>8</sup>: 1681թ. Կ.Պոլսո Սբ. Հրեշտակապետ եկեղեցում Մատթեոս Ապրոն տեսավ գեղեցիկ մանրանկարներով զարդարուն Աստվածաշունչ և այն գնեց: Ձեռագիրն ու մանրանկարները պատկանում էին ծնունդով ակնեցի, Վահրամի ու Շողակաթի որդի Հակոբ սարկավազին, որն իր աշխատանքն ավարտի էր հասցրել 1647 թվականին՝ Պոլսո Սբ. Նիկողայոս մայր եկեղեցում:

1691թ. փետրվարի 18-ին՝ երկրաշարժից երեք տարի անց, Մատթեոս Ապրոյի խնդրանքով Աստվածաշնչի վերջին բաց էջերի վրա հիշատակարանը շարադրեց Սբ. Ստեփանոսի Հովսեփ եպիսկոպոսը:

Սակայն հիշատակարանը արժեքավոր է մեկ այլ բանով ևս: Բանն այն է, որ բուն տեքստին հաջորդում են այլ ձեռագրով արված (անկասկած, Մատթեոսի հանձնարարությամբ) նոր գրառումներ: Ահա դրանք.

«Տղաս Աբրահամ ծնած է չորեքշաբթի 13 Նոյեմբեր 1138<sup>9</sup> լուսնի տասնըմեկերորդ օրը, միջօրէի ժամը 2ին»:

«Աղջիկս Հոփսիսիմե ծնած է ուրբաթ օրը 22 Յունուար 1141<sup>10</sup> ցերեկուան ժամը 12ին»:

<sup>8</sup> Տե՛ս «Վկայագրեր» բաժնում:

<sup>9</sup> = 1689թ.

<sup>10</sup> = 1692թ.

«Տղաս Պետրոս ծնած է հինգշաբթի 24 Օգոստոս 1143<sup>11</sup> առտու-  
ան դէմ ժամը 9-10»:

Բայց Մատթեոսն ունեցել է ևս մեկ որդի՝ Ստեփան անունով,  
որն, ըստ իս, պետք է ծնված լինէր 1695-ին կամ 1696-ին:

Այս ամենի մեջ, թերևս, նախախնամական և առեղծվածային  
ինչ-որ բան կար՝ Աստված տարավ Մատթեոսի երեք որդիներին ու  
աղջկան, բայց փոխարենը պարզևեց ևս երեք որդի ու մեկ դուստր:

Երբ Մատթեոսը վախճանվեց (հավանաբար, 1697-ին կամ  
1698-ին), նրան թաղեցին Սբ. Ստեփանոսի բակում՝ երկու վաղա-  
մեռիկ որդիների կողքին, որոնց դամբանաքարի վրա փորագրված  
էր հետևյալ արձանագրությունը. «Այս է տապանք Ապրօեան Մա-  
թոս աղայի որդիք Աբրահամ եւ Մուրատխան աղայներաց որ հան-  
գեան ի շարժէն ի թուին ՌՃԼԷ հունիսի է»<sup>12</sup>:

Ըստ Մատթեոս Ապրոյի վերջին ցանկության, նրա նորակա-  
ռույց տան երկրաշարժից անվնաս մնացած մուտքի դուռը նվիրվեց  
Մազնեսիայի հայոց եկեղեցուն:

Իսկ հաջորդ գլուխը նրա որդի Պետրոսի մասին է:



Չմյուռնիայի  
Սբ. Ստեփանոս եկեղեցին

<sup>11</sup> = 1694թ.

<sup>12</sup> Յ. Բօսեան, նշվ. աշխ., էջ 85:

## ՊԵՏՐՈՍ ԱՊՐՈՆ ԵՎ ՊՅՈՏԻ ԱՌԱՋԻՆԸ

1717թ. հունվարի վերջին Ամստերդամում հանդիպեցին Ապրո  
Չելեքիի թոռ, Մատթեոսի որդի 23-ամյա Պետրոսը և 45-ամյա ռու-  
սաց ցար Պյոտր Ալեքսեևիչը՝ Պյոտր I-ը, Պյոտր Մեծը, Ռուսաստա-  
նի առաջին կայսրը, ով իր երկիրը վերածեց պետության և ապագա  
հզոր տերության հիմքը դրեց: Այդ հանդիպումից ծնվեց պատմա-  
կան արժեք ներկայացնող մի փաստաթուղթ, որի գոյությունը կարե-  
լի է սոսկ արձանագրել և անցնել: Մակայն հնամենի վկայագրի ար-  
ժեքը հենց այն է, որ երբ սկսում ես ուսումնասիրել դրա լույսաշ-  
խարհի գալու պատճառներն ու պայմանները՝ հանդիպում ես վերին  
աստիճանի հետաքրքրական պատմական ծալքերի:



Հին Ամստերդամ

Բայց, նախ, հարկ է պարզաբանել մեկ հարց՝ ի՞նչ գործ ունեին  
Պետրոսն ու Պյոտրը Հոլանդիայում:

Արդեն մեկ դարից ավելի Ամստերդամը, շնորհիվ այն բանի, որ  
Հոլանդիան աշխարհի ամենահզոր պետությունն էր՝ գտնվում էր  
փառքի գագաթնակետին: Եվ գործության աղբյուրը Արևելքն էր:

Մինչ Հնդկաստան տանող ծովային ուղու հայտնագործումը  
Արևելքի ու Եվրոպայի միջև ապրանքափոխանակումը տեղի էր  
ունենում ցամաքային ճանապարհով: Հնդկաստանից ու Պարս-  
կաստանից ուղտերի քարավանները հասնում էին Միջերկրակա-  
նի ափեր, որտեղից իտալացի, պրովանսալցի, կատալոնացի վա-

ճառականները գնում էին արևելյան ապրանքները և Վենետիկով ու Մարսելով դրանք սփռում Եվրոպայով մեկ:

Երբ XVIIդ. պորտուգալացիները հայտնագործեցին Բարեհուստ հրվանդանով Հնդկաստան տանող ծովային ուղին՝ փոխվեց Եվրոպայի ողջ դիմագիծը, ներեվրոպական հակամարտությունը տեղափոխվեց նաև ծով: Եվ ասպարեզ իջավ ծովերի արքա Հոլանդիան:

XVIդ. ընթացքում հոլանդացիներն արևելյան ապրանքները՝ թեյը, պղինձը, արծաթը, բամբակը, գործվածքները, մետաքսը, համեմունքներն ու ափիոնը, ստանում էին Լիսաբոնից և Անտվերպենից՝ անչափ թանկ գներով: Դա հոլանդացիներին ստիպեց ուղիղ կապ հաստատել Հնդկաստանի հետ:

1602թ. Ամստերդամում ստեղծվեց աշխարհի առաջին բաժնետիրական կառույցը՝ «Հոլանդական արևելահնդկական ընկերությունը» (Verenigde Oostindische Compagnie): Հիմնադիրները 17 վաճառականներ էին, որոնք ներդրեցին 6,6 մլն գուլդեն, թողարկեցին 2153 բաժնետոմս\* և սկսեցին նավերն ուղարկել Հնդկաստան: Ըստ վիճակագրության, յուրաքանչյուր երեք նավից մեկն էր տուն վերադառնում, իսկ երկուսը կամ խորտակվում էին, կամ ծովահենների բաժին դառնում, կամ բախվում այլ անհաղթահարելի խոչընդոտների: Սակայն Ամստերդամ հասած նավը առասպելական եկամուտ էր բերում, միայն համեմունքները ոսկու գին ունեին:



«Հոլանդական արևելահնդկական ընկերության» զինանշանը

Ընկերությունն ստեղծեց առևտրային կայանների մի ամբողջ ցանց Բարեհուստ հրվանդանում, Պարսկաստանում, Բենգալիայում, Մալակայում\*, Չինաստանում, Սիամում\*\*, Ֆորմոզայում\*\*\* և, պորտուգալացիներին դուրս շարտելով, դարձավ Ճապոնիայում, Չինաստանում, Ցեյլոնում, Ինդոնեզիայում առևտուր անող անմրցակից մենատերը: Ավելին, «Հոլանդական արևելահնդկական ընկերությունը» վերածվեց պետության՝ պետության մեջ, որն այլ տերությունների հետ հարաբերվում էր ինքնուրույնաբար և անգամ կայացնում քաղաքական որոշումներ: Արդեն 1669թ. աշխարհի այդ ամենահարուստ մասնավոր ֆիրման ուներ 150 առևտրանավ, 40 ռազմանավ, 50 հազար ծառայող և 10 հազար զինվորներից կազմված առանձին բանակ:

Արևելքի գաղութների «առատության եղջյուրից» թափվող ապրանքները Ամստերդամը վերածեցին աշխարհի ամենահարուստ քաղաքի, իսկ ամստերդամցիներին՝ հողագնդի ամենաուժեղ մարդկանց: Բնականաբար, տնտեսական բուռն վերելքը, բարձր կենսամակարդակը նպաստեցին գիտության, արվեստի, մշակույթի զարգացմանը, փիլիսոփայական նոր հայացքների ձևավորմանը: Ավելին, հարստությունը, բարեկեցությունը, ազատության, ազատականության ոգին հանգեցրեցին ևս մի բացառիկության՝ նոր բարոյականության հաստատմանը, որն արտահայտվում էր այլ կրոնադավանաբանական հավատք ունեցողների հանդեպ լիակատար հանդուրժողականությամբ, ինչը եզակի երևույթ էր կրոնական պատերազմներից բզկտվող Արևմտյան Եվրոպայի համար:

Իսկ ինչպիսի՞ն էր հայության մասնակցությունը Ամստերդամի «տոնախմբությանը», ազգերի, ազգությունների, ժողովուրդների հոլանդական այս «տոնավաճառին»: Պատասխանը միանշանակ է՝ հայերը համաշխարհային հանրակցության լիիրավ անդամներ էին և Ամստերդամի թատերական բեմականացման ժամանակ հանդես էին գալիս ոչ թե որպես միզանցեմի անխոս պերսոնաժներ, այլ՝ ինքնուրույն դերակատարներ: Եվ պատճառը միջազգա-

յին առևտրատնտեսական հարաբերություններում նրանց նվաճած կայուն, անասան դիրքերն էին:

Քանի դեռ պորտուգալացի ծովագնացները չէին հայտնագործել Հնդկաստան տանող ծովային ուղին, և Արևելքի հետ առևտուրը կատարվում էր ցամաքային ճանապարհով, արդեն այդ ժամանակ Երասխի ձախ ավազանը ծվարած Հին Չուղայի աշխարհաշրջիկ հայ վաճառականներին կարելի էր հանդիպել Հնդկաչինի երկրներից մինչև արևմտաեվրոպական քաղաքներ ընկած վիթխարի տարածքում:

Հնդկաստանում ադամանդներ, մարգարիտներ և այլ թանկագին քարեր հայթայթած և Ամստերդամ բերած հինջուղայեցիներն առաջին անգամ հիշատակվում են 1560-1565թթ.: Ասվածի ապացույցն է ժամանակը ներկայացնող մի ալբոմ, ուր կա արևելյան տարագով մարդու պատկեր՝ այսպիսի մակագրությամբ. «Ֆոշոր ադամանդավաճառ մի հայ»<sup>1</sup>:

Պարսից շահ Աբաս I-ը ուներ հում մետաքսի ահռելի պաշարներ և, անշուշտ, տեղյակ էր, թե այդ ապրանքատեսակն ինչպիսի բարձր պահանջարկ էր վայելում եվրոպական շուկաներում: Սկզբում նա փորձեց հում մետաքսն իրացնել պարսիկ վաճառականների միջոցով, սակայն ձեռնարկը ձախողվեց. վերջինները, նախ, չունեին եվրոպացիների հետ առևտուր անելու անհրաժեշտ փորձառություն, երկրորդ՝ ենթարկվեցին կրոնական անհանդուրժողականության դրսևորումների և, երրորդ, չդիմացան եվրոպական ազատականության գայթակղություններին՝ առևտրային գործարքներից վաստակած գումարները մսխեցին, ինչի հետևանքով ոմանք ստիպված եղան մնալ Եվրոպայում, իսկ տուն դարձածները կրեցին դաժանագույն պատիժներ:

Սա շահ Աբասին դրդեց նոր ուղիներ որոնել, և նա «ելքը գտավ»՝ թուրք-պարսկական պատերազմի ժամանակ 1604թ. աս-

պատակեց Արևելյան Հայաստանը, տարածքը վերածեց մոխրակույտի, իսկ բնակչությանը բռնի տեղահանեց: Ավերեց նաև Հին Չուղան, սակայն վաճառականներին ապահով տեղափոխեց Սպահանի մոտ, տարածք տրամադրեց, ուր նրանք մեկ տարվա ընթացքում կառուցեցին Նոր Չուղան: Ստահլացումը պարզ էր՝ Եվրոպայում հում մետաքսի առևտրով պետք է զբաղվեին պարսկահպատակ քրիստոնյա հայերը, որոնք ունեին առևտրային գործունեության դարավոր ավանդույթներ: Այս քաղաքականությունը լիովին արդարացրեց իրեն:


Նորջուղայեցիները չմոռացան առևտրային հին հանգրվանները, մասնավորապես՝ Ամստերդամը, և հայ-հոլանդական տնտեսական կապերը նոր թափ ստացան: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ 1612 թ. պայմանագիր կնքվեց Թուրքիայի ու Հոլանդիայի միջև, համաձայն որի «Հոլանդական արևելահնդկական ընկերության» նավերը կարող էին մտնել թուրքական նավահանգիստներ: Օգտվելով այդ դյուրությունից, Չմյունիայի կամ այդ նավահանգիստն իբրև փոխադրակետ օգտագործող հայ վաճառականները, որոնք առևտրական տներ ունեին Իտալիայում, Ֆրանսիայում և անմիջական շփման մեջ էին նաև Հոլանդիայի հետ, սկսեցին բնակություն հաստատել կամ առևտրական տների մասնաճյուղեր հիմնել Ամստերդամում: Դա հնարավորություն էր տալիս ուղղակիորեն, առանց միջնորդների զբաղվել ներմուծմամբ ու արտահանմամբ, և արդեն 1617-ին քաղաքի սակարանում նորջուղայեցի խոջաները առևտրական խոշոր գործարքներ էին կատարում:

Թուրք-հոլանդական առևտրային պայմանագրում թուրքերը մի նախապայման ունեին՝ իրենց նավահանգիստներում թույլ էին տալիս խարիսխ ձգել բացառապես Հոլանդիայի դրոշ կրող, այլ ոչ օտարերկրյա, թեկուզև հոլանդական ապրանքներով բեռնավորված նավերին: Հայ վաճառականներն ուշադրություն դարձրեցին պայմանագրի այդ կետին. մի կողմից ակնհայտ էր, որ հոլանդական նավերով ապրանքներ փոխադրելը շահավետ էր, մյուս կող-

<sup>1</sup> Catalog Muller, IV, 4166. (Ա.Մարուխան, Հոլանդան և հայերը ԺԶ-ԺԹ դարերում, Վիեննա, 1926թ., էջ 45):

մից պարզ էր, որ ավելի ձեռնառու էր ոչ թե վարձակալելը, այլ սեփական նավ ունենալը, քանզի ապրանքի ինքնարժեքը, բնականաբար, կնվազեր:

Եվ ահա, ըստ 1653թ. ապրիլի 21-ի թվակիր մի հիշատակության, Ամստերդամից դուրս են գալիս 5 առևտրանավեր, որոնց ուղեկցում էին 7 ռազմանավեր՝ ծովահեններից պաշտպանելու համար: Հոլանդական դրոշի ներքո լողացող առևտրանավերից չորսն ուղևորվում էին Թուրքիա, մեկը՝ Վենետիկ: Այդ չորս նավերից երկուսն իրենց կողերին կրում էին այսպիսի անվանումներ՝ Coopman van Armenian («Հայաստանի վաճառական») և Coopman van Persien («Պարսկաստանի վաճառական»): Կասկածից վեր է, որ այդ նավերը պատկանում էին հայ վաճառականներին, թերևս՝ նորջուղայեցիներին, որովհետև անհնար է պատկերացնել, թե հոլանդացիներն իրենց նավերն այդպիսի անուններով կոչեին: Բնական է նաև ենթադրել, որ հայերն իրենց նավերը կառուցել ու պաշտոնապես գրանցել էին Ամստերդամում:



Հայկական առևտրանավ

Չմյուռնիայի հոլանդական հյուպատոսի գրավոր տեղեկագրում նշվում է, որ 1653թ. մայիսի 5-ին «Հայաստանի վաճառականը»՝ «Գերդերլանդ» ռազմանավի ուղեկցությամբ, բարեհաջող խարխիս է ձգել նավահանգստում: Հայկական այս առևտրանավի մասին հաջորդ հիշատակությունը վերաբերում է 1699-ին, ըստ որի այն Ամստերդամից եկել ու բեռնաթափվել էր Չմյուռնիայում: Վերջին անգամ այս նավը հիշատակվում է Չմյուռնիայում 1714թ.

Smirnsche Coopman («Չմյուռնիայի վաճառական») անվամբ. այսինքն, հայոց առևտրանավը Միջերկրականի ջրերում լողացել է առնվազն 61 տարի:

Հայ վաճառականները, որոնց շարքում նորջուղայեցիներից բացի կային նաև ազուլեցիներ, դարաբաղցիներ, դափանցիներ և այլ զանգեզուրցիներ, առևտուր էին անում Ամստերդամի «Արևելյան շուկայում» (Oostmarkt): Իսկ բնակություն էին հաստատել Կրոնավորների փողոցում (Monnikenstraat), Թագավորական փողոցում (Koningstraat), Թմբի փողոցում (Dykstraat), Կայսերական փողոցում (Keiserstraat) և Բոմի առափնյակում (Boomsloot)<sup>2</sup>: 1660թ. Ամստերդամում արդեն կար առնվազն 60 հայկական առևտրային տուն, որոնցից շատերը հաջողության էին հասել և հարստության տիրացել:

Հայ վաճառականները, որպես կանոն, Ամստերդամ էին գալիս ժամանակավորապես: Հաջողության հասնելու դեպքում բնօրրանից բերում էին ընտանիքներին և մշտական բնակություն հաստատում: Ամուրի վաճառականները երբեմն ամուսնանում էին հոլանդուհիների հետ կամ տեղացիների ընկերակցությամբ հիմնում համատեղ առևտրային տներ և գրանցվում որպես քաղաքացի: Ահա այսպես, աստիճանաբար ձևավորվեց կայուն համայնք, որն ավարտուն տեսք ստացավ եկեղեցու կառուցմամբ: Տաճարն օծվեց Թովմաս եպիսկոպոսի ձեռամբ, և ահա թե ինչ է ավետում հիշատակարաններից մեկը. «Եւ իբրեւ ժամանէ ի յիշեալ քաղաքն, աստանօր գոյր կառուցեալ հոյակապ եկեղեցի Հայոց, զոր յանուն ամենասուրբ Հոգւոյն նուիրեալ՝ օծանէ մեծաւ հանդիսիւ. և այս իսկ ըստ տեառն յաջողելոյն լինէր»<sup>3</sup>։\*

Դեռևս 1668թ. հայերը Թմբի փողոցում ունեին մի աղոթատուն: 1713-ին Բոմի առափնյակում գնեցին պահեստարան, որի տեղում մեկ տարի անց նորջուղայեցի վաճառականներ Բաբաջան Սուլ-

<sup>2</sup> Ա.Մարուխան, նշվ. աշխ., էջ 53:

<sup>3</sup> Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե., 1959թ., էջ 590:

թանյանը և Նիկողայոս Թեոդորյանը կառուցեցին հայոց Սբ. Հոգի եկեղեցին:

Հարկ է նշել, որ XVII դ. հայ վաճառականների՝ Եվրոպա տանող հիմնական ճանապարհն անցնում էր Չմյուռնիայով: Մասնավորապես, նորջուղայեցիները Սպահան-Թավրիզ-Կարին-Թոքատ երթուղով հասնում էին այստեղ, ապա նավերով հատում Միջերկրականը: Թեպետ այս ուղին ամենակարճն էր, սակայն տնտեսական առումով ուներ մի շարք խոչընդոտներ: Նախ, վտանգը Միջերկրականում էր, ուր վխտում էին ծովահենները, բացի այդ, քաղաքական նկատառումներից ելնելով և ծովում գերիշխանություն հաստատելու նպատակով, հայ վաճառականների ապրանքներով բեռնավորված առևտրանավերը բռնագավթում էին թեթուրքերն ու ֆրանսիացիները, թե անգլիացիներն ու իտալացիները, թե իսպանացիներն ու պորտուգալացիները: Հաջորդ պատճառը Թուրքիայի ճանապարհների անապահովությունն էր. բացի այն, որ թուրքական իշխանություններն «առանձնահատուկ» վերաբերմունք ունեին հայ վաճառականների (հատկապես՝ պարսկահպատակ) նկատմամբ՝ շատ ավելի բարձր հարկեր, տուրքեր ու մաքսեր գանձելով, իրենց հերթին բազմաթիվ մանր ու մեծ պաշտոնյաներ խոշոր կաշառքներ էին շորթում:

Այս ամենի հետևանքով բարձրանում էր ապրանքի ինքնարժեքը և նվազում շահույթը: Եվ հենց սա՝ էր գլխավոր դրդապատճառը, որը հայ վաճառականներին ստիպեց նոր ուղիներ որոնել: Ակնհայտ էր, որ լավագույն այլընտրանքը Ռուսաստանն էր:

Հյուսիսային հարևանը նորջուղայեցիների համար սկզբում հետաքրքրություն էր ներկայացնում որպես տարանցիկ երկիր՝ դեպի Արևմտյան Եվրոպա: Ընդ որում, առևտրային մի ուղին անցնում էր Արխանգելսկով ու Սկանդինավիան շրջանցելով հասնում Ամստերդամ, մյուսը՝ Նովգորոդով դեպի Շվեդիա ու մերձբալթյան այլ երկրներ: Չոր չէ, որ «1618 թվականի Դեսպանական գեկույցը Պարսից շահին» փաստաթղթում նշվում էր. «...Մոսկվայում կան հայ վաճառական մարդիկ՝ ոչ թուրք ցարի կողմից ուղարկվածներ.

այդ վաճառական մարդիկ առանց խոչընդոտների գնում են բոլոր պետություններ»<sup>4</sup>: Այսինքն, ակնհայտ է, որ Նոր Չուղայի հիմնադրումից գրեթե անմիջապես հետո պարսկահպատակ վաճառականներն արդեն ներկա էին Մոսկվայում\*:

Տասնամյակների ընթացքում այս տարանցիկ առևտրային գործունեությունը, բնականաբար, ունեցավ զարգացում: Մի կողմից, հայ վաճառականների որոշակի մասը մշտական բնակություն հաստատեց Ռուսաստանում՝ ձևավորելով կայուն համայնքներ (հատկապես՝ Աստրախանում ու Մոսկվայում), մյուս կողմից՝ ռուսական իշխանությունները նկատեցին նորջուղայեցիների առաջնակարգ, մենատիրական դերակատարությունը Արևելքի հետ առևտրում և սկսեցին ըստ ամենայնի խրախուսել, վարել հովանավորչական քաղաքականություն:



Արխանգելսկով Եվրոպա գնացող առևտրային ուղին

Արդյունքում, 1660թ. ապրիլի 12-ին Նոր Չուղայի առևտրային պատվիրակությունը՝ Չաքար Սահրադի Շահրիմանյանի գլխավորությամբ, Մոսկվայում արժանացավ ցար Ալեքսեյ Միխայլովիչի ընդունելությանը, ինչի հետևանքով նորջուղայեցի վաճառա-

<sup>4</sup> “Посольский наказ к Персидскому шаху 1618 года” փաստաթուղթը հրատարակված է “Опыт трудов Вольного Российского собрания, ч. 4, 1778г., ч. 5, 1780г.”:

կաններին տրվեցին մաքսային, տուրքային, հարկային և այլ արտոնություններ երկրի ներսում, ինչպես նաև արևմտաեվրոպական երկրների հետ տարանցիկ առևտրով զբաղվելու դյուրություններ:

Բայց եթե Ալեքսեյ Միխայլովիչի համար հայ-ռուսական առևտրային հարաբերություններն ունեին զուտ տնտեսական նշանակություն, ապա նրա որդի Պյոտր Ալեքսեևիչը դրանց հաղորդեց իմաստային այլ լիցք, ինչին դեռ կանդրադառնանք:

Նորջողայեցիները տարանցիկ առևտրի իրավունքից օգտվեցին մինչև 1718թ.: Մասնավորապես, նրանք Ամստերդամ էին տանում հում մետաքս, մետաքսե գործվածքեղեն, մորթիներ, սուրճ, բուրուննավետ յուղեր, գինի, ինչպես նաև պարսկական բրինձ, որին հոլանդացիներն անվանում էին «Մոսկովյան բրինձ»:

Ազատականության, հանդուրժողականության ոգով ապրող, հարուստ, մեծափարթամ, վաճառաշահ Ամստերդամում հայոց ներկայությունը մեր ժողովրդի պատմության մեջ ունեցավ ևս մեկ բարեբաստիկ դրսևորում. դա գրատպությունն էր...

Հայ գրքի տպագրության պատմության «հոլանդական էջն» ուներ իր առանձնահատկությունները: Նախ, դա ամբողջովին վաճառականների նախաձեռնությունն ու ձեռնարկն էր: Երկար տարիներ գտնվելով օտարության մեջ, նրանք, որ իրենք իրենց անվանում էին «մերագնեայ վտարանդի վաճառականքս», նրանք, որ վերին աստիճանի բարեպաշտ ու եկեղեցուն նվիրված քրիստոնյաներ էին՝ ուղղակիորեն իրենց լուսավորչական հավատքի կարիք, ասել է թե՛ ինքնապահպանվելու նպատակ ունեին: Երկրորդ, թե՛ Հոլանդիայում և թե՛ եվրոպական այլ երկրներում հայ վաճառականներն այնքան մեծաթիվ էին, որ տպագիր գիրքը կարող էր վերածվել պահանջարկ վայելող ապրանքի, այսինքն՝ թեպետ լիներ թանկ հաճույք, այդուամենայնիվ գրատպությունը զուտ բիզնեսի տեսակետից ուներ ակնհայտ հեռանկար:

Սակայն միայն դրամական միջոցների առկայությունը, տպարան ձեռք բերելու կարողությունը դեռևս բավարար նախապայմաններ չէին. անհրաժեշտ էր միտք: Եվ Ամստերդամում հանդի-

պեցին վաճառականն ու մտավոր ներուժի կրող հոգևորականը, հայոց ազգային կապիտալը և ինտելեկտը: Արդյունքը պարզապես ապշեցուցիչ էր:

1658թ. Ամստերդամ է գալիս կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու նոտար, վաճառական Հովհաննեսի եղբայր Մատթեոս դպիր Ծարեցին: Այստեղ նա միանում է երևանցի Թորոսի որդի Ոսկան վարդապետի եղբայր, վաճառական Ավետիս Գլիճենցուն: Նրանց պատվերով ամստերդամցի փորագրիչ Վան Դիրկը պատրաստում է հայկական տառամայրեր, և 1660-1661թթ. լույս է տեսնում հոլանդահայ առաջին գիրքը՝ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» ստեղծագործությունը: Վաճառքից ստացված շահույթը պիտի կիսեին, սակայն Մատթեոս Ծարեցին վախճանվում է, Ավետիսը վճարում է նրա պարտքերը, դառնում միանձնյա սեփականատեր՝ նպատակ ունենալով տպարանը նվիրել Սբ. Էջմիածնին: 1661թ. Ավետիսը տպագրում է երկրորդ գիրքը՝ «Տետր ժամու ես պարգատօմարի»: Մեկ տարի անց, Կարապետ Ադրիանացու հետ, լույս է ընծայում «Մաղմոսարանը», որի հրատարակմանը ֆինանսապես օժանդակում են նորջողայեցի խոջա Շահիրմանը, նրա որդիներ Մահրատը, Չաքարիան, Մարգարեն ու վերջիններիս գործընկերներ Միրզայենց Հովհան ու Սկրտում եղբայրները: 1663թ. Ավետիսն ու Կարապետն ավարտում են «Ժամագիրք»-ի տպագրությունը՝ 3000 օրինակ տպաքանակով:

Ավետիս Գլիճենցին, այդուամենայնիվ, վաճառական էր, և գրատպությունը խանգարում էր նրա առևտրային գործունեությանը: Այդ իսկ պատճառով նա տպարանը նվիրում է Սբ. Էջմիածնին, և Մայր աթոռը Ամստերդամ է ուղարկում նրա եղբորը՝ վարդապետ Ոսկան Երևանցուն: Վերջինս նորջուցայեցի վաճառականներ Եղումի որդի Խանենց Ստեփանոսի, Էդգարի որդի Քրոշենց Թեոդորոսի, Ավագի որդի Պետրոսի ֆինանսական աջակցությամբ 1666թ. առաջին անգամ տպագրում է «Աստուածաշունչը»:

Ապա վրա է հասնում Գողթան գավառից սերող Մատթեոս, Թովմաս, Միքայել և Դուկաս Վանանդեցի Նուրիջանյանների ժա-

մանակը: Մատթեոսը տպագրական գործը սովորում է հոլանդացի Նիկոլայուսից, հիմնում Սբ.Խաչի ու Մարիամ Աստվածածնի անվան տպարան և գործընկերներ դարձնելով քահանա Հովհան Երևանցուն ու նորջուղայեցի խոջա Պողոսին՝ 1685թ. հրատարակում «Շարակնոց»: Գրքի տպագրությանն օժանդակում են երևանցի վաճառական Ուղուրլուի որդի Օհան քահանան ու սրա եղբայրներ, վաճառականներ Ավետիքն ու Կարապետը, ինչպես նաև նորջուղայեցի խոջա Գուլիաթենց Ալեքսանի որդիներ Պողոսն ու Պետրոսը: Գրեթե նույն մարդկանց ընկերակցությամբ 1686թ. Մատթեոսը տպագրում է «Ժամագիրք»:

1695թ. Թովմաս, Ղուկաս, Միքայել Վանանդեցիները և Մատթեոս Հովհաննիսյանը հրատարակում են «Համատարած Աշխարհացոյցը՝ հայերեն առաջին տպագիր քարտեզը: Այն պատկերում էր աշխարհի զույգ կիսագնդերը, նկարագարող էր, փորագրությունը կատարել էին հոլանդացի Ադրիանուս և Պետեր Սխոնբեկ եղբայրները, իսկ վաճառքի գինը 15 ֆրանկ էր:

1696թ. Թովմաս Վանանդեցին, խոջա Սահրադի որդի Գասպարի պատվերով, տպագրում է Թոմա Գենթացու «Յաղագս համահետեմանն Քրիստոսի» ստեղծագործությունը՝ Հովհաննես Կոստանդնուպոլսեցու թարգմանությամբ:

Ղուկաս Վանանդեցին, նորջուղայեցի Խաչատուրի որդի խոջա Պետրոսի հովանավորությամբ, 1699թ. իրականացնում է մի բացառիկ հրատարակություն՝ տպագրելով «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ եւ դրամից բոլոր աշխարհի» 80-էջանոց, փոքրաչափ, աշխարհաբար գրքույկը: Դա «հայագուն վաճառասէր» եղբայրների՝ վաճառականների համար նախատեսված յուրատեսակ ձեռնարկ էր, տեղեկատու, որտեղ պարունակվում էին եվրոպական զանազան երկրներում կշիռների, չափերի, դրամի փոխարժեքների, բնակավայրերի միջև ընկած տարածությունների և այլնի վերաբերյալ օգտակար տվյալներ:

Ղուկասը տպագրեց նաև «Պաշտօն Աստուածային» (1704թ.), «Ժամագիրք» (1705թ.), «Սաղմոսարան» (1713թ.), «Պարզատօ-

մար Ազարիայի» (1714թ.), «Սաղմոսարան» (1714-1715թթ.) գրքերը, և բոլորը՝ բազմաթիվ վաճառականների աջակցությամբ, որոնց անունները չեն թվարկում տեղի խնայողության պատճառով: Մակայն մեկը կուզենայի առանձնացնել. դա 1716թ. լույս տեսած «Պատկերասէր պատկերատեսաց» գիրքն էր, որի ամբողջ ծախսը՝ ի հիշատակ իր հայր Սարգսի, հոգացել էր Պետրոս Գիլանեցը: Մի մարդ, ով 1714-1716թթ. Ամստերդամում վաճառականությամբ հաջողության հասավ, հարստացավ, ապա վերադարձավ հայրենիք, ռուսական գորքի կազմում ստեղծեց և կուտակած դրամը մինչև վերջ ծախսելով պահեց 80 ձիավորներից բաղկացած «Հայկական էսկադրոնը», կովեց պարսիկների դեմ և մարտի ժամանակ զոհվեց 1723-ին:

Ի վերջո, Ղուկաս Վանանդեցին 1717թ., այն տարի, երբ Պետրոսն ու Պյոտր I-ը հանդիպեցին Ամստերդամում, լույս ընծայեց իր վերջին հրատարակությունը՝ «Ժամագիրքը»<sup>5</sup>:

Ինչու՞ այսքան մանրամասն անդրադարձա հայոց ներկայությանը Ամստերդամում: Յույց տալու համար, որ Պետրոս Ապրոն հայ վաճառականական ավանդույթներ կրող տիպական ներկայացուցիչ էր և ոչ առաջին, ոչ էլ վերջին հայն էր Հոլանդիայի մայրաքաղաքում:

Չմյուռնիո վավերագիրն ասում է. «Որդիք սորա՞ ԱԲԲԱՀԱՄ, ՊԵՏՐՈՍ եւ ՄՏԵՓԱՆՆՈՍ ընդարձակեմ զվաճառականութիւնն մինչեւ ի ՀՆդիկս եւ ի Պարսս եւ յԵւպոպիայ. եւ բազմօք ճոխանան. որոց տուեալ լինի եւ հրովարտակ ի յախտենական յիշատակաց արժանի ի Պետրոս կայսերէ Ռուսաց յամի Տեառն 1717, որ կայ այժմ ի ձեռս սոցա կնքեալ արքունի մեծ կնքով. ուր զի եւ Պետրոսն էր նախկին թարգման Անգլիացոց»:

Ըստ երևույթին, անգլերենի տիրապետող Պետրոս Ապրոն վա-

<sup>5</sup> Ն.Ոսկանյան, Զ.Կորկոտյան, Ա.Սավալյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Ե., 1988թ., էջ 224:

<sup>6</sup> Նկատի ունի Մատթեոս Ապրոյին:

դուց և բավականին մշտատև է գտնվել Ամստերդամում, որովհետև դեռևս 1714թ. Թովմաս եպիսկոպոսը Հռոմում Կղեմես ԺԱ պապին Ալեքսանդր կաթողիկոսի նամակը հանձնելուց հետո գալիս է Ամստերդամ և այդ նամակի մի պատճենը տալիս Պետրոսին: Ակնհայտ է նաև, որ կրտսեր Ապրոն իր եղբայրներ Աբրահամի ու Ստեփանի առևտրային ներկայացուցիչն էր և նրանց ուղարկած ապրանքներն իրացնում էր հոլանդական շուկայում:

Այժմ դիտարկենք Պյոտր I-ի ներկայությունը Ամստերդամում:

Հանրահայտ է, որ նա երկու անգամ է այցելել Նիդերլանդներ՝ 1697-1698թթ. և 1716-1717թթ.: Ընտրությունը պատահական չէր, ռուսաց միապետը ցանկանում էր հիմնարար բարեփոխություններ իրականացնել իր երկրում, իսկ դրա համար անհրաժեշտ էր յուրացնել Արևմտյան Եվրոպայի ամենագործող, ամենաառաջադեմ, ամենահարուստ տերության փորձը, ընդօրինակել այն ամենը, ինչ հնարավոր կլիներ կիրառել Ռուսաստանում:

Առաջին ուղևորությունը 25-ամյա ցարը կատարեց Մեծ դեսպանության (*Большое посольство*) 250 հոգուց բաղկացած պատվիրակության կազմում՝ Պյոտր Միխայլով ծածկանվամբ. մի գաղտնապահություն, որն անիմաստ էր, քանզի գրեթե բոլորը գիտեին, թե իրականում ով է թաքնված այդ անվան տակ:

Ամստերդամում, «Հոլանդական արևելահնդկական ընկերության» նավաշինարաններում նա սովորեց նավեր կառուցելու արհեստ, այցելեց կետորսական նավեր, հոսպիտալներ, դաստիարակիչ տներ, ֆաբրիկաներ, արհեստանոցներ, ծանոթացավ հողմադացների մեխանիզմին: Հաճախեց անատոմիայի դասախոսությունների, մասնակցեց դիախերձումների, հետաքրքրվեց դիակների գնեսմամբ: Բացի այդ, ուսումնասիրեց մետաղների դրվագանախշման տեխնիկան և անգամ սեփական ձեռքով պատրաստեց գրավյուրա, որն անվանեց «Քրիստոնեության հաղթանակը իսլամի հանդեպ»:

1698թ. Ռուսաստանում բռնկվեց ստրելեցների ապստամբությունը, և Պյոտրը՝ անավարտ թողնելով յուրատեսակ ուսումնա-

ռությունը, շտապեց տուն՝ ճնշելու խռովությունը:

Երկրորդ այցելությունը որոշ իմաստով առաջինի շարունակությունն էր, ավելի շուտ՝ արդեն կայացած անհատականության, պետական-քաղաքական այրի, իմաստնացած արքայի յուրատեսակ տուրք՝ երիտասարդական տարիներին:

Նախքան Պետրոս, Աբրահամ ու Ստեփան Ապրոններին միապետի տված փաստաթղթի էությանն անդրադառնալը, փորձենք պարզել այն հանգամանքը, թե ինչպիսի պայմաններում է Պյոտրը այն շնորհել Պետրոսին: Փնտրտուքներ կատարելիս պարզվեց, որ դա բավականին դժվար գործ էր, որովհետև ռուսական պատմագրությունը, որ ամենայն մանրակրկիտությամբ, օր առ օր հետևել և լուսաբանել է Պյոտրի գործունեությունը, զարմանալի լռություն է պահպանում 1717թ. հունվարի ու հատկապես երկրորդ կեսի վերաբերյալ: Այդուամենայնիվ, ըստ իս, հաջողվեց գտնել հետաքրքրող հարցի պատասխանը:

Ուտրեխտի համալսարանի ձեռագրերի բաժնում պահպանվում է թիվ 47 վկայագիրը: Դա 20 սմ երկարությամբ և 16 սմ լայնությամբ խիստ արժեքավոր մի փաստաթուղթ է, որը պատկանում է քաղաքի Պատմագիտական ընկերությանը: Ձեռագրի հեղինակը հոլանդացի մահուդավաճառ Յան Կոռնելիսոն (Կոռնելիուսի որդի) Նոմենն է, ով Պյոտր Մեծի երկու այցելությունների ժամանակ էլ հանդիպել, շփվել է ռուս միապետի հետ և իր տպավորությունները շարադրելով՝ թողել Պյոտրի հոլանդական ուղևորությունների վերաբերյալ ամենահավաստի սկզբնաղբյուրը:\*

Մեզ հետաքրքրում է երկրորդ այցելությունը և 1717թ. հունվարի 28-ը:

Նոմենը գրում է. «Քանի որ թագուհին հղի էր, և ցարը ցանկանում էր, որ նա ծննդաբերի Ամստերդամում, թագուհին այստեղ ճանապարհվեց ձմռան սկզբին, և մեր գավառի պարոնայք նահանգները\*\* Վեզելում նախապատրաստեցին մի շքեղ զբոսանավ, որպեսզի այնտեղից փոխադրեն: Թագուհին Վեզելում զբո-

սանավ բարձրացավ 1717 թվականի հունվարի 12-ին, սակայն հաջորդ օրը կրկին ասի իջավ և հունվարի 13-ին Վեզելում բարեհաջող ծննդաբերեց մեծ իշխանին: Ցարը, որն այդ ժամանակ դեռևս գտնվում էր Ամստերդամում, 14-ին, կեսօրին մոտ, իր բնակարանում այդ հաճելի լուրն ստացավ Վեզելից ուղարկված սուրհանդակի միջոցով:

16-ին Վեզելից գրեցին, որ նորածին մեծ իշխանը ծնված օրը մահացել է՝ երեկոյան 7-ի և 8-ի սահմաններում, ինչի առթիվ խփել են զանգեր: Երեկ նրա մարմինը զմռսել են ու դրել մահվան սնարին: Ասում են, թագուհին բավականին թույլ է»<sup>7</sup>:

Այս նկարագրությունը միանգամայն ճշմարիտ է ու հավաստի: Հայտնի է, որ Պյոտր I-ը ամուսնացած է եղել երկու անգամ: Առաջին կինը՝ Եվդոկիա Լոպուխինան, 1689-1698թթ. ծնել է երեք արուզավակ, որից հետո արտաքսվել Մուզդալ-Պոկրովսկի վանք: Երկրորդ կինը՝ Եկատերինա I Ալեքսեևնան (Մարթա Սամոիլովնա Սկավրոնսկայա), որ 1703-ից ցարի սիրուհին էր, 1712-ից՝ կինը, ծնել է 11 երեխա՝ 6 աղջիկ ու 5 տղա: Չավակների մեծ մասը մահացել է կամ ծննդաբերությունից անմիջապես հետո, կամ մանուկ հասակում: Նոմենի գրառումը վերաբերում է Պավել անունով նորածնին:

Հետևենք հողանդացի ժամանակակցին. «Հետո նա (Պյոտրը – Խ.Դ.) մի քանի օր հիվանդ էր: Ոմանք ասում են, թե նա եղել է այնտեղ, որտեղ պետք չէր, իսկ ոմանք, թե չափից ավելի է խմել, երրորդները հիվանդությունը վերագրում են թե մեկին, թե մյուսին: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես այդ հարցին պատասխանել չեմ կարող, որովհետև հավաստի տվյալներ չունեմ»<sup>8</sup>:

Ինչպե՞ս հասկանալ ու մեկնաբանել այս հատվածը:

Օրինակ, ռուս նշանավոր պատմաբան Ս. Սոլովյովը նշում է, որ Պյոտրը հիվանդացել է 1716թ. դեկտեմբերին, և տկարություն

նր շարունակվել է մինչև 1717թ. փետրվարի սկիզբ<sup>9</sup>: Սակայն Նոմենը շատ ավելի կոնկրետ ու հստակ է՝ Պյոտրը հիվանդ է եղել մի քանի օր, գտնվել է այնտեղ, որտեղ պետք չէր և չափից ավելի է խմել: Սա ինձ հիմք է տալիս ենթադրելու, որ այդ մի քանի օրը կայսրը անցկացրել է Պետրոս Ապրոյի հետ... Որովհետև Պյոտրը շնորհագիրը Պետրոսին հանձնել է անձամբ, հունվարի 28-ին\*:

Այժմ անդրադառնանք փաստաթղթի բուն էությունը<sup>10</sup>:

Շնորհագիրը առանձնաշնորհային, անհատական, անվանական բնույթ ուներ և Ապրո եղբայրներին հնարավորություն էր տալիս առանց որևէ խոչընդոտի Ռուսաստանում զբաղվել առևտրատնտեսական գործունեությամբ՝ օգտվելով նորջուղայեցիներին ընձեռված արտոնություններից: Փաստաթուղթը նաև պաշտպանական իմաստ ուներ. տեքստում նշված զանազան կարգի բազմաթիվ պաշտոնյաների Պյոտրը նախազգուշացնում էր Ապրոների նկատմամբ անիրավություն ու կամայականություն չգործել և պարզորոշ նշում. «... մեր հպատակներից ոչ ոք չհամարձակվի կորզել և ոչ մի այլ հարկ ու դժգոհություն չհարուցի՝ աչքի առաջ ունենալով մեր զայրույթը և դաժան տուգանքը»:

Ենթադրել, թե Պյոտր I-ը Պետրոս Ապրոյին տրամադրելով նման գորավոր շնորհագիր՝ ցանկացել է ինչ-ինչ «լավությունների» դիմաց վարձահատույց լինել, կնշանակի գործել պարզունակ և անթույլատրելի սխալ: Այդ շնորհագիրը լիովին համապատասխանում էր Պյոտր Մեծի արևելյան քաղաքականության տրամաբանությանը:

<sup>9</sup> См. С. М. Соловьев, История России с древнейших времен, т. XVII, стр. 68.

<sup>10</sup> Շնորհագրի ռուսերեն բնագիրը տպագրված է «Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов» գրքում (т. II, ч. I, Е., 1964г., стр. 105-107): Ռուսերեն տեքստը և դրա իմ հայերեն թարգմանությունը տե՛ս «Վկայագրեր» բաժնում:

<sup>7</sup> <http://www.vostlit.info/Texts/rus15/Nomen/frametext.htm>

<sup>8</sup> Նույն տեղում:

Պյոտրը նպատակ ուներ Անդրկովկասն ազատագրել պարսիկներից ու թուրքերից և լիակատար վերահսկողության տակ առնել Կասպից ծովը: Ընդ որում, թե քաղաքական և թե տնտեսական առումով նա որոշակի դերակատարություն էր վերապահում հայերին: Այս բանը բավականին դիպուկ բնորոշել է Կարապետ Եզյանը՝ գրելով. «Ինչպիսի՞ նպատակներ էր հետապնդում Պյոտրը հայերի նկատմամբ, կապված իր արևելյան քաղաքականության ընդհանուր խնդիրների հետ. 1) հայերի միջոցով զարգացնել Ռուսաստանի և Պարսկաստանի առևտրային հարաբերությունները, 2) հայերին բնակեցնել Պարսկաստանից ազատագրված տարածքներում և 3) հայերին ազատագրել մահմեդականության լծից՝ անկախ քաղաքական նկատառումներից և «հանուն քրիստոնեության», ինչի մասին նա հիշատակում էր իր բոլոր ակտերում: Քրիստոնյաների ազատագրումը մահմեդականության լծից նա անվանում էր «Աստվածահաճո գործ»<sup>11</sup>:

Այսպիսով, Պետրոս Ապրոյին ու նրա եղբայրներին տրված շնորհագիրը լիովին համապատասխանում և համահունչ էր Պյոտրի քաղաքական ուղեգծին: Հայերի հանդեպ հովանավորչական այն քաղաքականությանը, որը փոխանցվեց Ռուսաստանի հաջորդ միապետներին:

Վերջում մնում է պատասխանել ևս մեկ հարցի՝ օգտվեցի՞ն, արդյոք, Ապրո եղբայրները շնորհագրից և առևտրային գործունեություն ծավալեցի՞ն Ռուսաստանում: Ո՛չ: \* Հավանաբար, նրանք բավարարվեցին Չմյունիա-Եվրոպա առևտրային ուղիով:

Հավելենք նաև, որ հողանդերենը յուրացրած Պետրոս Ապրոն, շարունակելով ամստերդաբնակ գրասեր հայ վաճառականների ավանդույթները՝ 1745-1746թթ. հայերեն է թարգմանել պատմաշխարհագրական մի գրվածք, որը ձեռագիր վիճակում պահպանվում էր Վիեննայի Մխիթարյան մատենադարանում. «Թարքմա-

նեցեալ ի հեզահոգի դայրէ Պետրոս աղայէ, ի տանէ բարեպաշտօն ազնուագարմէ Ապոյ չէլէպի կոչեցելոյ, ի ֆլէմէնկի բարբառոյն ի հայ բարբառ. յամի ներմարդութեանն Քրիստոսի 1745 եւ յամի 1746 ի Չմիւռին քաղաքի»<sup>12</sup>:

Պետրոսը վախճանվեց Չմյունիայում և թաղվեց Սբ.Ստեփանոսի գերեզմանատանը, ինչը փաստում է Չմյունիո վավերագիրը. «Այլ սոքա եւս լցեալ զկեանս իւրեանց՝ փոխին ի Քրիստոս. Արբահամ ի Կ.Պոլիսն, եւ Պետրոսն եւ Ստեփաննոսն աստ»<sup>13</sup>, թաղելով Պետրոսի ի հայրենի շիրիմն ի միջի եկեղեցոյն սրբոյ Ստեփաննոսի. եւ որդի սոքա Գալուստ ի սուրբ Լուսաւորչին»:

### ՃՅՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աբրահամ, Պետրոս և Ստեփան եղբայրների մասին Զմյունիո վավերագիրն ասում է. «Արդ ծնանին ԱԲՐԱՀԱՄՈՒ չորք ուստերք՝ ՍՍՏԹԷՈՍ, ՌԱՓԱՅԷԼ, ՍԵԹ եւ ՅՈՎՀԱՆՆԷՍ. եւ երկու դստերք՝ ԳԱՅԻԱՆԷ եւ ԹԱԳՈՒՀԻ, որք ոչ աճին ի սերունդս»:

Չորս որդիներից Սեթի մասին Ե. Ջրպետը գրում է. «Հայ Սեթ Ապրոն 1730-ին Հնդկաստանի Մադրաս քաղաքում գլխավորում էր ընկերություն»<sup>14</sup>: Սա վկայում է այն մասին, որ Սեթ Ապրոն զբաղվել է վաճառականությամբ: Հնդկաստանում և Հնդկաչինի տարբեր երկրներում Հայտնի են մի շարք Սեթյաններ, ու բացառված չէ, որ նրանք սերում են Սեթից (ինչի մասին 1804թ. չէր կարող իմանալ Մարտիրոս եպիսկոպոսը):

«Ծնանին եւ ՊԵՏՐՈՍԻ ուստերք չորք՝ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, ԳԱԼՈՒՍ, ԱՌԱԶԵԼ եւ ՍԱՐԳԱՐ. եւ դստերք երկու՝ ՍԱՐԱՅ եւ ՍԱՐ-

<sup>12</sup> Ն.Ալիմեան, նշվ. աշխ., էջ 259-260:

<sup>13</sup> Չմյունիա:

<sup>14</sup> «En 1730, Set Abro, arménien, était à la tête de la compagnie des Indes a Madras». Recherches curieuses sur l'histoire ancienne de l'Asie. Par J. M. Chahan de Girbiet et F. Martin, Paris 1806, p. 330 (ըստ Ն.Ալիմեանի նշվ. աշխ., էջ 260):

<sup>11</sup> Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898г., LXXI.

ԹԱՅ. յորոց Գալուստ եւ Մարգար կուսակրոն զկեանս իրեանց վճարեալ՝ թողուն յիշատակ գոյրատունն հոգետր մանկամբք»:

Զմյուռնիո վալերագրի հեղինակ Մեսրոպ եպիսկոպոսը սխալվել է. Մարգարն ամուսնացել է և ունեցել 3 որդի՝ Աստվածատուր, Դանիել, Ստեփան ու դուստր Տիրուհի:

Գալուստ ու Մարգար Ապրոններն են, որ 1799թ. տրամադրել են շենք, ուր բացվել է Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանը:

«Որդիք Պետրոսի ԱՍՏՈՒՄԾԱՏՈՒՐ եւ ԱՌԱՋԵԼ ըստ հայրենի ճանապարհին ունին ընդ վաճառականութեան եւ զքարզմանութիւն. առաջինն՝ զՀոլանդեայցն զնախկին քարզմանութիւն, եւ երկրորդն՝ զԱնգլիացոց. ուր եւ Աստուածատուրն զազգասիրութեան հանդէս զգեցեալ՝ բազմաց բարեկարգութեանց առիթ լինի եւ պատճառ. եւ երկրորդն իսկ գովանի ընծայեցին զանձինս յոլով բարեսիրութեամբ եւ փառատրեցան յամենայնի իշխանապետական փառօք յազգս մեր»:

Աստվածատուրը եղել է վաճառական և Զմյուռնիայում հոլանդացիների թարգմանիչը: Ունեցել է 13 զավակ. 9 որդի՝ Ալփիար, Մարգար, Մատթեոս, Պետրոս, ևս մեկ Ալփիար, Հակոբ, ևս մեկ Պետրոս, երկու Գալուստ, և 4 դուստր՝ Մարիամ, Աննա, Սրբուհի, Իսկուհի:

Զմյուռնիայում անգլիացիների թարգմանիչ Առաքելը վախճանվել է 1814թ. և թաղվել Սբ. Ստեփանոս եկեղեցու գերեզմանատանը: Առաքելը և կինը՝ Մարիամը, ունեցել են 3 որդի՝ Գալուստ, Աբրահամ, Սեթ, ու 3 դուստր՝ Գյուլհանե, Մենենդ, Աննա:

«Ծնանին նաեւ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ երեք ուստերք՝ ԲԱՐԴՈՂՈՎՄԵՆՈՍ, ՅԱԿՈՎԲ եւ ՅԱՐՈՒԹԻԻՆ. եւ երկու դստերք՝ ՍՐԲՈՒՀԻ եւ ԲՐԱԲՈՆ. որք ոչ սերեն ի ծնունդս. յորոց Բարդողովմեսն կայ ցարդ կենդանի: Այլ սոքա եւս լցեալ զկեանս իրեանց՝ փոխին ի Քրիստոս. Աբրահամ ի Կ. Պոլիսն, եւ Պետրոսն եւ Ստեփաննոսն աստ, թաղելով Պետրոսի ի հայրենի շիրիմն ի միջի եկեղեցոյն սրբոյ Ստեփաննոսի. եւ որդի սորա Գալուստ ի սուրբ Լուսատրչին»:

## ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԵՐ - Ա

Պետականությունից զրկված, տարբեր երկրների իշխանությունների ներքո գտնվող հայ վաճառականը ուներ մեկ խնդիր՝ պահպանել կապիտալը: Այն դրամագլուխը, որը ոչ միայն անձնական բարեկեցության աղբյուր էր, այլև ազատության, անկախության լավագույն երաշխիք: Այն կապիտալը, որը ոչ միայն բացում էր բազմաթիվ փակ դռներ, այլև շաղախվելով քրիստոնեական հավատքի, մշակույթի հետ՝ դառնում ազգապահպանության գորեղ գործիք:

Կապիտալի պահպանման մեխանիզմները ծնվել էին տրամաբանորեն ու դարեր շարունակ գործել արդյունավետ և անխափան: Վտանգներից, կորուստներից, ռիսկերից զերծ պահող գործունեներից մեկն այն էր, որ հայ վաճառականն առևտրային գործարքների մեջ առաջին հերթին ներգրավում էր իր ընտանիքի անդամ տղամարդկանց՝ որդիներին, ու եղբայրներին, ապա՝ մերձավոր ազգականներին. ասել է թե՛ բիզնեսն ուներ ընտանեկան բնույթ:

Երկրորդ գործոնը հիմնված էր հայրենակցության վրա. մեր վաճառականը գործ էր բռնում համազյուղացիների, համաքաղաքացիների, նրանց հետ, ում անձնապես ճանաչում էր: Եվ շատ հաճախ խնամիական կապերն անգամ հաստատվում էին այդ հոդի վրա, ինչը կրկին փոխաշահավետ էր, քանզի կապիտալը մնում էր ընտանիքում:

Եվ երրորդ գործոնը. հայ վաճառականը բիզնեսում գործակցում էր բացառապես ազգակիցների հետ: Օտարը գործարքի կողմ էր, բայց ոչ՝ շահատեր (ընդհուպ մինչև XXդ. հայ վաճառականության բազմադարյա պատմության մեջ չնչին թիվ են կազմում բացառությունները): Այսինքն, ընտանեկան, ազգակցական, հայրենակցական բնույթից բացի, հայոց բիզնեսն ուներ վառ արտահայտված ազգային պատկանելության հատկանիշ:

Վերջինս խիստ էական էր հատկապես աշխարհով մեկ սփռված հայոց առևտրատնտեսական համայնքների համար: Դրանք մշտապես կարիք ունեին նոր, թարմ ուժերի և հաճույքով ընդունում էին խելացի, ձեռնհաս, կրթված, օտար լեզուների տիրապետող մերձավորների, հայրենակիցների, ազգակիցների: Թվաքանակի ավելացմանը զուգընթաց՝ համայնքի անդամները լուծում էին ինքնապահպանության խնդիր՝ կառուցելով եկեղեցի ու դպրոց, ինչն էլ խոշոր հաշվով վերածվում էր ազգապահպանության: (Ավելորդ չենք համարում նշել, որ ջարդերից, Ցեղասպանությունից փրկվածները ապաստան էին գտնում այդ համայնքներում, ինչի հետևանքով փոխվում էր վերջիններիս սոցիալական դիմագիծը, և զուտ առևտրատնտեսական կառույցը վերածվում էր գաղթօջախի):

Ահա այս համատեքստում Ապրոնների շատերի ճակատագրում մեծ նշանակություն ունեցան ազգակցական-խնամիական կապերը: Այդ իսկ պատճառով, ամբողջական պատկեր ներկայացնելու ձգտումով, նպատակահարմար համարեցի անդրադառնալ դրանց:

### ՅՈՒՍՈՒՖՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ

#### ՊՈՂՈՍ ԲԵՅ ՅՈՒՍՈՒՖՅԱՆ

XVIII դ. կեսերին Կեսարիայից Ջնյունիա է տեղափոխվում Պողոսի որդի Հովսեփը՝ վաճառական Հովսեփ չելեբին: Այստեղ նա կնության է առնում Պյոտր Մեծի «գործընկեր» Պետրոս Ապրոնի դուստր Մարթային, և այդ ամուսնությունից ծնվում են երեք երեխաներ՝ Պողոս (1768թ.), Պետրոս (1778թ.) և Մարիամ: (Վերջինս ամուսնացավ Մկրտիչ Նուբարյանի հետ ու ծնեց Նուբար Նուբարյանին՝ Եգիպտոսի ապագա վարչապետին, բայց այդ մասին կխոսեն «Ազգակցական կապեր-Բ» գլխում):

Հովսեփ չելեբին վաղ է մահանում, ու երեխաներին պահում, կրթում, դաստիարակում է քեռին՝ Առաքել Ապրոն: «Ան, Յովսեփ Պո-

ղոսեան, կանուխեն կը վախճանի, վասնզի իրենց մօրեղբայրը Ապրոյեան Առաքել Աղան իր տունը առաւ զիրենք եւ իր զաւակացը պէս զուր ու խնամք ցցուց անոնց վրայ, ուստի ստակի շխնայեց, զատ զատ վարժապետներ բռնեց իր քեռորդոցը համար որ ուսմունք ու զանազան լեզուներ սորվին: Ամէն բանէ առաջ նայեցաւ որ իրենց մայրենի լեզու աղէկ սորվին»<sup>1</sup>:



Պողոս Յուսուֆյան

Պողոսը մասնավոր ուսուցիչներից սովորում է թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, իտալերեն, հունարեն, ֆրանսերեն, անգլերեն: Ինչպես այժմ, այնպես էլ այն ժամանակներում օտար լեզուների տիրապետելը մեկնարկային մեծ առավելություն էր տալիս, սակայն բանն այն է, որ XVIII-XIX դդ. բարձրակարգ թարգմանիչները հատուկեմտ էին, և հենց այս իրողությունը բախտորոշ նշանակություն ունեցավ Պողոս Յուսուֆյանի համար:

1800թ. նա առևտրական գործերով մեկնում է Կիպրոս ու ծանոթանում անգլիացի ծովակալ Միդնեյ Մմիթի հետ: Գնահատելով Պողոսի բազմալեզվագիտությունը՝ ծովակալը նրան իր հետ տանում է Կ.Պոլիս: Այստեղ Զյոռ Յուսուֆ փաշան Պողոսին առաջարկում է դառնալ Բարձր Դռան առաջին թարգմանը, սակայն Յուսուֆյանը հրաժարվում է, պատճառաբանելով, թե՛ այդ պաշտոնը զրեթե ժառանգաբար պատկանում է հույներին, ինքը չէր ցանկանա նրանց հացը խլել և խնդրում է ուղարկել Եգիպտոս:

<sup>1</sup> «Բազմավէպ», 1844թ., էջ 20:

Փաստարկը ողջախոհ համարելով՝ Քյոռ Յուսուֆ փաշան 1802թ. սուլթանական հատուկ հրովարտակով նրան նշանակում է Եգիպտոսի կուսակալ Խուրշիդ փաշայի թարգման: Այս ժամանակից սկսած Պողոս Յուսուֆյանի կյանքն ընթանում է այն հունով, որը նրան դարձնելու էր Եգիպտոսի ամենաազդեցիկ մարդկանցից մեկը ու եգիպտահայության առաջին, ամենախոշոր հովանավորը:

Պետք է ասել, որ Եգիպտոսի ընտրությունը պատահական չէր. Պողոս Յուսուֆյանը դեռևս 1791թ. եղել էր այդ երկրում և հայրենակցական կապերի շնորհիվ կարողացել 7 տարով վարձակալել Ռոզեթի (Ռաշիդ) մաքսատունը, մաքսահավաքման կապալը: Ապա վերադարձել էր Չմյուռնիա ու երկու տարի մորեղբայր Առաքել Ապրոյի հետ վաճառականությամբ զբաղվել, մինչև կմեկներ Կիպրոս ու կհանդիպեր անգլիացի ծովակալին:

1805թ. Եգիպտոսի փոխարքա դարձավ Մուհամեդ Ալին\* և Պողոս Յուսուֆյանին նշանակեց իր թարգման ու խորհրդական: Ժամանակի ընթացքում նրանց հարաբերությունները ձեռք բերեցին այն աստիճանի վստահական բնույթ, որ դարձրեցին շահակիցներ, գործընկերներ: 1814-1819թթ. Յուսուֆյանը վարձակալեց Ալեքսանդրիայի մաքսատունը հետևյալ պայմաններով: Վարձակալը գանձարանին տարեկան պիտի վճարեր 2500 քսակ ոսկի (մեկ քսակն այդ ժամանակ պարունակում էր 500 դուրուշ). եթե այդ գումարից պակաս եկամուտ ստացվեր, ապա սեփական գրպանից պիտի փոխհատուցեր Պողոսը, իսկ ավելի եկամտի դեպքում շահույթը կիսվում էր Յուսուֆյանի ու Մուհամեդ Ալիի միջև: Ըստ երևույթին, այդ բիզնեսը եղել է բավականին շահութաբեր և ապահովել ֆինանսական զգալի հոսքեր, ինչն էլ նպաստել է երկուսի էլ ավելի մերձեցմանը:

1825թ. Պ. Յուսուֆյանը նշանակվեց ֆինանսների վարչության տնօրեն, իսկ 1830-1842թթ.՝ Առևտրի և արտաքին գործերի, ինչպես նաև ռազմական նախարարությունների վերատեսուչ:

1839թ. դիվանագիտական մեծ հմտությամբ բանակցություններ վարելով Բարձր Դռան հետ՝ նա կարողացավ կուսակալու-

թյունը ժառանգականության իրավունքով ամրագրել Մուհամեդ Ալիին ու նրա հետնորդներին, դրանով, փաստորեն, էական նպաստ բերելով Եգիպտոսի ապագա անկախությանը: «27 Նոյեմբեր 1840ին, Անգլիոյ, Ֆրանսայի, Ռուսիոյ եւ Աստրիոյ Պետութեանց կողմէ զօրավար Նափիէ պաշտօնապէս հաղորդած էր Պողոս Պէյի թէ վերոհիշեալ չորս Պետութեանց միջնորդութեամբ Բարձրագոյն Դուռը վաւերացուցած Ալիի ժառանգորդները. այս առանձնաշնորհումը եւ ստացումը կատարուած էր Պողոս Պէյի ջանքերովը միջազգային դիւանագիտական գետնին վրայ»<sup>2</sup>:

Շատ հետաքրքիր է Յուսուֆյանի նկարագրությունը: Նա բարձրահասակ, նիհարակազմ, խարտյաշ, սմբած դեմքով մարդ էր: Հագնում էր սիրիական կապա, գլխին ուներ փաթթոց, գոտկատեղից, ըստ արևելյան սովորության, կախված էր արծաթե թանաքաման՝ եղեգնյա գրիչներով: Իսկ անգլիացի ժամանակակիցներից մեկը նրան բնութագրում է որպես «խորամանկ, ճարտար, նրբամիտ, հաշվենկատ անձնավորություն»:

Պողոս Յուսուֆյանը վախճանվեց 1844թ. հունվարի 10-ին ու թաղվեց Ալեքսանդրիայի հայոց եկեղեցու բակում: Դրանից հետո տեղի ունեցավ մի տարօրինակ իրադարձություն, որն այսօրվա ընթերցողի համար կարող է վայրենություն թվալ, սակայն այդպիսին էին ժամանակներն ու բարբերը...

Բանն այն է, որ Յուսուֆյանի մահվան ժամանակ խտիվ\* Մուհամեդ Ալին գտնվում էր Կահիրեում: Եվ ահա թե ինչ է գրում հայկական մամուլը. «Ան երբ որ լսեց թէ Ալեքսանդրիայի տաճիկ իշխանութիւններն ու բնակիչները պէտք եղած քաղաքական պատիւն ու մեծարանքը չըրին Պողոս Պէյին թաղման ատենը, որուն այնչափ արդիւնքը բոլորը վայելէր էին կենդանութեանն ատենը ու դեռ կը վայելէն»:

Մաստիկ յանդիմանութեամբ հրաման խրկեց Ալեքսանդրիա, որ նորէն հանդէս ընեն յուղարկաւորութեան զինուորական երաժշ-

<sup>2</sup> «Արշալոյս Արարատեան», 27 մարտի 1842թ.:

տութեամբ եւ թնդանօթներ արձակելով ու երոպացի հիւպատոսներուն եւ վաճառականներուն հետ (որ առաջին օրը մինակ ըրեր էին հանդէսը) 12 հազար հոգիի չափ բոլոր տաճկի մեծամեծներն ալ ներկայ ըլլան, ինչպէս որ կատարուցաւ ալ»<sup>3</sup>:

Զմյուռնիո «Արշալոյս Արարատեանը» հավելում է. «...Ետքը բարձրապատիւ փոխարքային ականջը հասնելով որ կառավարութեան քաղաքական ու զինուորական պաշտօնատարները ներկայ չգտնուէր են յիշեալ հանդէսին, անմիջապէս հրաման դրկեր է Գահիրէէն, որ նոյն սգալի արարողութիւնը վերըստին կատարուի նոյն հանդիսական շքով, որ հանգուցեալ մածահամբաւ Պէյին հազուագիւտ արժանատրութիւնը կը պահանջի:

Ուստի օտար Տերութեանց բոլոր հիւպատոսարաններուն եւ բազմաթիւ ժողովրդոց ներկայութեանը հանդիսատր պաշտօն մը կրկին կատարուէր է Աղեքսանդրիոյ հայոց եկեղեցիին մէջ:

Հազար վեց հարիւր (1600) զինուոր իրենց գլխատր պաշտօնատարներու առաջնորդութեամբը ու զինուորական երաժիշտներուն հետ, որոնք սգալի եղանակներ կը ներդաշնակէին, քաղաքին մէջտեղէն եւ Ֆռանկաց թաղէն անցնելով եկեր են եկեղեցիին պարտեզը, ուրտեղ պատերազմական կարգաւ շարուէր են:

Պատարագը լմննելէ ետքը աս գօրքերը ամենքը մէկտեղ չորս անգամ հրացանները պարպել են վսեմափայլ հանգուցելոյն գերեզմանին վրայ»<sup>4</sup>:

Այս կրկնաթաղման արարողոյսան պարտականութիւնը դրված էր հանգուցյալի մյուս մորեղբոր՝ Աստվածատուրի, որդի Ստեփան Ապրոյի վրա:

Գերեզմանի վրա կանգնեցվեց մահարձան, որի ձախ կողմում կար այսպիսի արձանագրություն.

<sup>3</sup> «Բազմավէպ», 1844թ., էջ 20:

<sup>4</sup> «Արշալոյս Արարատեան», 28 հունվարի 1844թ.:

ՈՎ

ՀՈԳԻ ԱԶԳԱՍԵՐ

ՊՕՂՈՍ ՊԷՅ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

ՈՐ ԶՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՒ ԶՆՈՐԱ ՀԱՐԱԶԱՏՍ

Ի ՍՈՒԳ ՏԱՐԱԺԱՄ

ԹՈՂԵԱԼ ՎԵՐԱՅԱՐ

Հայոց 29 Դեկտեմբեր 1843

ԶԱՅՍ

ՅԱԻԵՐԺ ՅԻՇԱՏԱԿ

ՉՆԱՇԽԱՐՀԻԿ ՀԱՆՃԱՐՈՅԴ

Ի ԶՈՅԻՆԴ ԴԱՍՏԱԿԵՐՏ

ՏԱՃԱՐ ՏԵՐՈՒԹԵԱՆ

ՅԱԶԳԱԿՑԱՅԴ ՍԻՐՈՅՆ

ԸՆԿԱ ԵՒ ՀԱՆԳԻՐ

Ֆրանկաց 10 Յունուար 1844<sup>5\*</sup>

Նոյն արձանագրությունը զետեղվեց մահարձանի աջ կողմում, բայց՝ ֆրանսերեն, այն լեզվով, որին Պողոս Յուսուֆյանը երախտապարտ էր և որի շնորհիվ հասել էր հաջողությունների ու բարձր դիրքի:

Հավելենք նաև, որ Մուհամեդ Ալին՝ ի հիշատակ իր մտերիմի և ամենահավատարիմ խորհրդականի, հրամայեց Աղեքսանդրիայի հայոց եկեղեցու ու հոգևորականների ծախսը հոգալ պետական գանձարանից, բացի այդ՝ համաներում հայտարարեց ու բանտերից ազատեց բազմաթիվ դատապարտյալների:

<sup>5</sup> Հ. Դիմաքսեան, նշվ. աշխ., էջ 288:

Պետրոսը ծնվել է Պողոսից տասը տարի անց՝ 1778-ին, և մորեղբայր Առաքելի տանը մասնավոր ուսուցիչներից սովորել թուրքերեն, հունարեն, իտալերեն ու ֆրանսերեն: 1793-ին մորեղբայրը 15-ամյա պատանուն հանձնեց զմյուռնաբնակ մի ֆրանսիացու, որի մոտ Պետրոսը հինգ տարի ձեռք բերեց վաճառականական գիտելիքներ՝ յուրացրեց հաշվապահություն ու հմտացավ առևտրային գործառնություններ կատարելու մեջ:

1798-ին, երբ ավարտվեց Ռոզեթի մաքսատան վարձակալության ժամկետը և ավագ եղբայր Պողոսը վերադարձավ Չմյուռնիա, այդ նույն թվականին 21-ամյա Պետրոսը մեկնեց Տրիեստ՝ վաճառականությամբ զբաղվելու: Եվ այդ ընտրությունը ևս պատահական չէր:

Տրիեստը կառուցվել է Ք.ծ.ա. 33թ.՝ Օկտավիանոս կայսեր օրոք, որպես նավերի հանգրվան և Տերզեստ անվամբ հիշատակվում է Կեսարի «Նոթեր Գաղղիական պատերազմի մասին» ձեռագրում: Վենետիկցիների շարունակական ոտնձգություններից պաշտպանվելու համար 1382թ. տրիեստցիներն անցան ավստրիական թագի ներքո, և մինչև XVIIIդ. այն աննշան մի բնակավայր էր՝ հիմնականում ձկնորսությամբ զբաղվող ընդամենը 5700 բնակչով: Իրադրությունը կտրուկ փոխվեց այն բանից հետո, երբ Ավստրիայի կայսր Կարլ VI Հաբսբուրգը 1719թ. Տրիեստը հռչակեց ազատ կայսերական քաղաք:\* Այստեղ ոտք դրեցին տարբեր ազգությունների ներկայացուցիչներ՝ իրենց կապիտալներով, և քաղաքը, խամրեցնելով Վենետիկի նշանակությունը, վերածվեց Արևելքի հետ առևտրի ամենախոշոր եվրոպական նավահանգստի: Բավական է ասել, որ 1814թ. Տրիեստի բնակչությունն արդեն կազմում էր 23 հազար մարդ, իսկ առևտրի ծավալներով Վենետիկին գերազանցում էր երեք անգամ:

Որո՞նք էին այս աննախադեպ առաջընթացի, բուռն զարգացման պատճառները: Ահա թե Կարլ Մարքսը ինչ է գրում իր «Ավստրիայի ծովային առևտուրը» հոդվածում. «Ինչպե՞ս պատահեց, որ

Ադրիատիկայում վերածնվող նավագնացության օրրան դարձավ ոչ թե Վենետիկը, այլ՝ Տրիեստը: Վենետիկը վերհուշների քաղաք էր, այնինչ Տրիեստը, Միացյալ Նահանգների նման, ուներ այն առավելությունը, որ առհասարակ զուրկ էր որևէ անցյալից: Իտալացի, գերմանացի, անգլիացի, ֆրանսիացի, հույն, հայ ու հրեա բախտախնդիր\* վաճառականների խայտաբղետ խուռներամի կողմից ստեղծված՝ այն ծովալճակների քաղաքի պես կաշկանդված չէր ավանդույթներով»<sup>6</sup>:

Բախտ որոնող հայ վաճառականներից ու՞մ կարող ենք նշել. անշուշտ, առաջին հերթին, Պետրոս Յուսուֆյանին, որի առևտրային տունը, բազմաթիվ հայկական աղբյուրների վկայությամբ, ամենախոշորն էր Տրիեստում: Սա մերկայապարանոց հայտարարություն չէ և ապացուցվում է վիճակագրական տվյալներով:

Արևելյան առևտուր ասելով, նախ, պետք է հասկանալ Թուրքիա ու Եգիպտոս: Օսմանյան Թուրքիա եվրոպական ապրանքները մուտք էին գործում ինչպես Կ.Պոլիս, այնպես էլ Չմյուռնիա՝ Յուսուֆյանների ու Ապրոյանների ծննդավայր, իսկ Եգիպտոս՝ Ալեքսանդրիա, որտեղ գրեթե մենաշնորհային դիրք էր գրավում Պողոս Յուսուֆյանը:

1835-1839թթ. Տրիեստից Չմյուռնիա կատարված ներմուծումը կազմում էր 93 մլն 500.456 թուրքական լիրա, Չմյուռնիայից արտահանումը Տրիեստ՝ 52 մլն 477.765 լիրա, և այս ցուցանիշը զիջում էր միայն թուրք-անգլիական առևտրային հաշվեկշռին:

1837թ. Տրիեստից Ալեքսանդրիա էր ներմուծվել 13 մլն 858 հազար ֆրանկի, իսկ Ալեքսանդրիայից արտահանվել էր 14 մլն 532 հազար ֆրանկի ապրանք, և այս ցուցանիշը առաջինն էր Եգիպտոսի արտաքին առևտրի ծավալում<sup>7</sup>:

<sup>6</sup> Կ.Մարքսն այս աշխատությունը գրել է 1856թ. վերջին: Տպագրվել է «New York Daily Tribune» թերթի 1857թ. հունվարի 9-ի համարում (<http://lugovoy-k.narod.ru/marx/12/013.htm>):

<sup>7</sup> Նույն տեղում:

Այս արդյունքների համար թե Թուրքիան, թե Եգիպտոսը պարտական էին Յուսուֆյան եղբայրներին՝ Պողոսին և Պետրոսին՝ Պյեր Յուսեֆին, ով Տրիեստի թիվ 1 վաճառականն էր:

Բիզնեսի ասպարեզում արձանագրած հաջողությունների համար Պետրոսի նեցուկն, անշուշտ, ավագ եղբայրն էր: Պողոսի խնդրանքով 1814թ. Մուհամեդ Ալին Յուսուֆյան-կրտսերին նշանակեց Ավստրիայում Եգիպտոսի առևտրային ներկայացուցիչ, ինչի հետևանքով Ալեքսանդրիայի ու Տրիեստի միջև կատարվող առևտրային գործարքներն ամբողջովին անցան Պետրոսի ձեռքը: Նա հիմնեց բանկ՝ Մարսելի, Ճենովայի ու Լիվոռնոյի մասնաճյուղերով, և սկսեց իրականացնել լայնածավալ առևտրատնտեսական գործունեություն:



Տրիեստի  
գինանշանը



Տրիեստ

1817թ. սաստիկ երաշտը Ավստրիայում սովահարության հանգեցրեց, և կառավարությունը դիմեց Պետրոս Յուսուֆյանին: Նրա և Պողոսի ջանքերով Եգիպտոսից հարյուրավոր նավերով հացահատիկ հասցվեց Տրիեստ: «Ի նուագութեան անդ պարենից 1817 ամին տայր նա բաշխել բազում անգամ ժողովրդապետացն էւ երիցանց ի կարօտեալս քաղաքին ցորեան բազում էւ ի կառոյցս աղքատանոցաց էւ հիւանդանոցաց էւ որբանոցաց հասարակաց ի նորկերտ քաղաքին առատապէս հանգանակէր էւ առաւել քան զամենեսեան»<sup>8</sup>.\*

<sup>8</sup> «Բազմավէպ», 1846թ., էջ 309:

1841թ. Տրիեստում սկսվեց ծանրագույն տնտեսական ճգնաժամ՝ բազմաթիվ տնտեսվարողների սնանկության մատնելով, և կրկին օգնության հասավ Պետրոս Յուսուֆյանը: Նա 100 հազար ֆիորին զանազան վարկեր տրամադրեց, ընդ որում նվազագույն՝ 5% դրույքով: «Յայնժամ պատմեն համարել մերոյ իշխանքն ի ցուցանել ոչ միայն զմեծանձն ձեռնտութիւն իւր, այլեւ զգուշաոր տնտեսութիւնն զարդեանս, եբաց զգանձս իւր առ ամենեսեան որք պէտս ունէին մեծագումար դրանոց, էւ այնուհետեւ ընդ ամենայն վաճառատունն շրջան առեալ յաժէին զաւուրս բազումս դրանք նորա էւ փոխանակագիրք, էւ զժողով վաճառականացն տուեալ միանգամայն – ֆիորինս հարիւր հազար – շահիւ հնգից առ հարիւր, յայտ յանդիման ժողովոյն վաճառականաց խոստացան էւս ազատաբար զի թէ էւ այլք ոմանք յօժարեսցէն, ասէ հանգանակել ի դուրսն, էւ կրկին էւս յաւելից տալ:

Մքանչացած ժողովն վաճառականաց ընդ նախանձ բարերարութեան նորա, էւ ոչ միայն շնորհակալութիւն նամակաւ մեծարեր գնա մեծ էւ առաջին կոչելով զնա քաղաքացի այլ էւ առակ օրինակի առնոյր անշահասէր էւ անստգիւտ գնացից»<sup>9</sup>.\*

Բացի այդ, եղբոր միջոցով Եգիպտոսից ստացավ ֆինանսական փոխառություն, ինչպես նաև ապրանքների մեծածավալ խմբաքանակներ, որոնք նույնպես նպաստեցին տնտեսական ճգնաժամի հետևանքների վերացմանը: «Նորին Վսեմութիւն Պօղոս Պէյ իսկոյն յօժարամիտ իր ստորագրութեամբ փոխանակութիւններ տուաւ 32.500.000 տաճկի դուրուշ վճարելի Թրիեստէ, իր եղբօր Չմիւռնացի մեծապատիւ Եուսուֆեան Պետրոս աղային: Ուստի Ն. Բարձր. Փոխարքան ալ 100 հազար խանթար, անցած տարուան բամպակներէ Թրիեստէ յիշեալ մեծաշուք հայազգի Աղային դրկեր է որ ծախէ իր հաշույն նմանապէս նոր հունձքին բամպակներէն ալ բաւական ապրանք դրկեր է»<sup>10</sup>.\*

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> «Արշալոյս Արարատեան», 18 հուլիսի 1843թ.:

Առողջական վիճակը բարելավելու նպատակով 1846թ. բարձրահասակ, համեստ վարքագծով և հանդարտ խոսվածքով 68-ամյա Պետրոս Յուսուֆյանը մեկնեց Գորիցա\*, որտեղ էլ, ավաղ, վախճանվեց օգոստոսի 10-ին: «Լոյդ» ընկերության շոգենավով նրա դին տեղափոխեցին Չմյուռնիա: «Խմբեցան քաղաքն ամենայն ի հանդէս յուղարկատրութեան նորա զի եւ չէր ոք ի քաղաքին որ անմասն եղեալ իցէ ի բարերարութեանց նորա, այլ մանաւանդ իբր եւ զհայր հասարակաց ողբային զնա ամենեքեան, եւ մեծաշուք պայծառութեամբ համօրէն բազմութիւն քահանայից քաղաքին, խնկովք եւ մոմեղինօք եւ խաչազարդ նշանօք տարեալ հանգուցին զնա ի մայր եկեղեցուջն, եւ յետ երից ատուրց զմոտեալ զպատուական դիակն յեղիցեն շոգենաւ ի Չմիւռնիա անդ ամփոփեալ զնա ի հայրենի շիրիմսն, այսինքն է ի դամբարանի հօր եւ մօր իւրոյ, որպէս աւանդեալն էր կտակաւ»<sup>11</sup>:\*\*

Պետրոս Յուսուֆյանին հողին հանձնեցին Սր. Ստեփանոսի գերեզմանատանը, իսկ տապանաքարն ուներ այսպիսի արձանագրություն.

«Աստ հանգչի մարմին Պետրոսի Եուսուֆեանց  
մեծանուն սեղանատրի եւ գործակալի  
փոխարքայի Եգիպտոսի ի Թրիեստ  
ծնեալ ի Չմիւռնիա 1780 եւ հանգեալ ի Կորիցա  
ի 10 Օգոստոս 1846

**Isi Repose**  
**PIERRE YOUSSEF**  
**Banquier et agent du Vice Roi d' Egypte**  
**A Trieste. Nè à Smyrne en 1780**  
**Dèsèdè à Goritz le 10 Aout 1846»<sup>12</sup>**

<sup>11</sup> «Բազմավէպ», 1846թ., էջ 309:

<sup>12</sup> Յ.Բօսեան, նշվ. աշխ., էջ 101:

ԵՂԲԱՅՐԵՆԵՐԻ ԲԱՐԵՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Յուսուֆյաններն ամուրի էին, անժառանգ, բայց դա ամենևին առնչություն չունի այն բանի հետ, ինչ արեցին ազգի համար: Նրանք հայոց կապիտալի դասական ներկայացուցիչներ էին, այսինքն՝ հավատարմորեն ծառայելով այն երկրներին, որտեղ գործում էին և տրնաջան աշխատանքով հարստություն ձեռք բերելով՝ ինքնաբերաբար ստանձնում էին հայ վաճառականության առաջնային ավանդույթը ու նվիրաբերվում մեկ վերանձնական առաքելության իրականացման՝ պահում-պահպանում էին սեփական ազգը:

Դեռևս 1833թ. Պողոս Յուսուֆյանը Ալեքսանդրիայի Մենչիյե քաղամասում՝ Թեքիյե Ակամի (Պարսկական մզկիթ) և Սիդի Մուհամեդ մզկիթի հարևանությամբ գնեց մի կավվածք՝ երկհարկանի շինությամբ, կառուցեց եկեղեցի ու նվիրաբերեց տեղի համայնքին: «Չմիւռնացի Եուսուֆեան Պողոս մեծանուն եւ ազգասէր Ամիրայն հաստատեաց ի ցուցակ գոյից իւրոց զեկեղեցիին հայոց յԱղեքսանդրիա Եգիպտոս յանուն Սրբ. Գլխատր Առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի, ամենայն հարկատր սպասիւք եւ անօթիւք, յամի Փրկչին 1833ի, Հոկտեմբեր 1»<sup>13</sup>:

Հենց այս եկեղեցին էլ, ի պատիվ եղբայրների, 1844թ. կոչվեց Սր. Պողոս-Պետրոս\*: «Գաբրիէլ Ս. Արքեպս.ը Աղեքսանդրիա կը գտնուէր եկեղեցիին վերաբերեալ հարկատր կարգադրութեանց վրայօք զբաղեալ էր, որոնք վսեմ. Պողոս Պէյին մեռնելէն ետքը, հարկ եղաւ գործ ընել: Աղեքսանդրիոյ սակաւաթիւ հայազգի ժողովուրդը նմանապէս բոլոր մեր ազգը արժանատր կերպիւ կարգի դնելով այս քաղաքին հայոց եկեղեցին, որ նոր նուիրեց յանուն Սրբոց Առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի, ի յիշատակ հանգուցեալ վսեմափայլ Պողոս Պէյի որ իւր ծախիւք շինել տուաւ նոյն եկեղեցին եւ անոր մեծապատիւ եղբօրը Եուսուֆեան Պետրոս Ամիրային, որ Թրիեստ կը բնակի»<sup>14</sup>:

<sup>13</sup> Ա.Գարտաշեան, Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, հտ. Ա, Կահիրե, 1943թ., էջ 122:

<sup>14</sup> «Արշալոյս Արարատեան», 18 սեպտեմբերի 1844թ.:

Իսկ եկեղեցում պահվող հիշատակարանում ասվում էր. «Յիշեա Տէր ողորմածութեամբդ զհոգի Եուսուֆեան Պօղոս եւ Պետրոս երկուց հարազատ եղբարց եւ համօրէն ննջեցելոցն, որք կանգնեցին զՍուրբ Եկեղեցին եւ ընծայեցին սմա անօթս բազումս եւ լայնատարած պարտէզ: Տէր Աստուած ի փառս քո ընկալցիս եւ ամենայն յանցանաց նոցա թողութիւն շնորհելով երկնից արքայութեանդ արժանի արասցես զհոգիս նոցա. ամէն:

Գրեցաւ սա հրամանաւ Գաբրիէլ Արքեպիսկոպոսի յամի Փրկչին մերոյ 1844 Յունուար 1»<sup>15</sup>.\*

1842թ. Պողոս բեյի ծախքով Չմյուռնիայում տպագրվեց իր քրոջ աղջիկ Հռիփսիմեի ամուսին Գրիգոր Կոստանդյան-Հնայակյանցի ֆրանսերենից կատարած թարգմանությունը՝ «Տրամաբանութիւն հասարակ» գիրքը:

Եգիպտոսում հնագիտական պեղումներ կատարելիս իտալացի Ջովանի Բելցոնին հայտնաբերել էր երկու սֆինքսյան արձաններ ու վաճառել Պետրոս Յուսուֆյանին: Երբ Ավստրիայի կայսր Ֆրանցիսկը ժամանեց Տրիեստ՝ Պետրոս ամիրան դրանք նվիրեց կայսրին, ինչի դիմաց ստացավ արքայական դրոշմակնիքով մատանի: Դրանից ոգևորված, նա 1823թ. Վիեննայի թանգարանին նվիրեց եգիպտական հնագիտական իրեր և կայսեր կողմից պարգևատրվեց շքանշանով:

1830թ. Պետրոսը Երուսաղեմի Սբ. Հակոբա վանքին նվիրեց տպարան՝ փայտյա մամուլով ու կապարե տառերով:

Նույն թվականին նրա ծախքով տպագրվեց Մեսրոպ վրդ Աղաջրաղյանցի «Համառօտ արուեստաբանութիւն եւ նորանոր հնարք», 1836-ին՝ Միքայել Հակոբյան-Մալլանթյանցի «Հրահանգ ճարտասանութեան կամ ճոռոմաբանութեան» գրքերը: Իսկ Վենետիկի Մխիթարյանները հրատարակեցին «Կրկնատումարն վաճառականութեան եւ հաշուետումարն պարզագիր» վաճառականական ձեռնարկը:

<sup>15</sup> Հ. Դիմաքսեան, նշվ. աշխ., էջ 284-285:

1843թ. 500 արծաթե ֆիորին վճարելով՝ Պետրոս Յուսուֆյանն անդամագրվեց Վիեննայի Մխիթարյանների հիմնած «Արամեան ընկերությանը»:

1845թ. ամիրան նվիրաբերեց 100 հազար դուրուշ, որով գնվեցին Ալեքսանդրիայի Սբ. Պողոս-Պետրոս եկեղեցու հարակից պարտեզները:

Սակայն Յուսուֆյան եղբայրներն առանձնակի խանդաղատական խոնարհում ունեին իրենց ծննդավայրի հանդեպ:

«Պետրոս Ամիրա Եուսուֆ իր եղբոր Պօղոս Պէյի հետ Իզմիրի հայոց ս. Ստեփանոս եկեղեցիին դիմացը գտնուող շահին խանին – 35 խանութներով – մեծ կալուածը նուիրած էին Իզմիրի հայ համայնքին որ տարեկան 800 ոսկիի հասոյթ ապահոված էր»<sup>16</sup>:

Եղբայրները հատուկ վերաբերմունք, կասեի՝ պարտականություն, ունեին Մեսրոպյան վարժարանի հանդեպ: Բանն այն է, որ վարժարանն իրենց մորեղբայրների «հոգեզավակն» էր, հետևաբար հենց իրենցն էր. 1799թ. նրանց մորեղբայրներ Գալուստն ու Մարգարն էին դրել վարժարանի հիմքը. «Ապրօեան ընտանիքը՝ այժմու վարժարանի տեղոյն վրայ գտնուած եւ իրեն սեպհական փայտաշէն մէկ տունը կը նուիրէ ազգին, որուն փոքրիկ սրահներուն մէջ կը հաւաքուին մանկունք՝ կարդալ գրել սորվելու»<sup>17</sup>:

Դա Սբ. Ստեփանոսին կից միհարկանի համեստ շինություն էր՝ բաղկացած սրահից ու երկու-երեք սենյակներից, որը 1825թ. գնյունահայոց հանգանակությամբ հիմնովին վերակառուցվեց. «...Կրկնայարկ, քարուկիր եւ ամուր, հոյակապ, ընդարձակ, օդաւետ եւ գեղեցիկ, ունենալով վերն ու վարը բաւական լայնութեամբ երկարածիգ սրահներ՝ երկու կողմէն քառեակ դասասրահներով»<sup>18</sup>:

<sup>16</sup> «Ս. Էջմիածին», Վենետիկ, 1903թ., էջ 303:

<sup>17</sup> Յ. Զօսեան, նշվ. աշխ., էջ 117:

<sup>18</sup> Թ. Ճերմակեան, Չմիւռնիա եւ ազգայինք, «Հանդէս Ամսօրեայ», 1890թ., էջ 106:

Զմյուռնիո առաջնորդարանի դիվանատանը պահպանվում էր հետևյալ արձանագրությունը. «Մ. Մեսրոպեան վարժարան Հայոց Զմյուռնիոյ: Հին յիշատակ Ապրօեանց տոհմի, մինչև ցարդ աւանդութեամբ իմացեալ: Նոյն կառուցեալ ի 1825ի վերայ գետնոյ հնոյն արդեամբք Ս. Եկեղեցոյ. ունի յիշատակարան ի ճակատ Դրան վերին ուսումնարանին. որ է

Դպրատունն այս ի հիմանց նորոգ կառուցաւ արդեամբք եւ ծախիք Ս. Ստեփանոս Եկեղեցոյս Զմյուռնիոյ, Տիրապահ քաղաքիս, ի վարժումն օրհնեալ Ազգիս դեռաբոյս մանկաց: Յամի Տեառն 1825, Նոյեմբեր 15»<sup>19</sup>.\*

Եվ ահա Մեսրոպայան վարժարանում անգլերեն ու ֆրանսերեն դասավանդելու համար 1832-1835թթ. եղբայրներն սկսեցին իրենց ծախքով պահել մեկական ուսուցիչ, Պողոսը՝ անգլերենի, Պետրոսը՝ ֆրանսերենի: Դասավանդումը մշտապես դարձնելու համար ամիրան 40 հազար ֆիորին կտակեց «Ազգային սնտուկին», որով պիտի կալվածք գնվեր և դրանից ստացված եկամուտով հոգացվեր ուսուցիչների աշխատավարձը: Զմյուռնիայի Այի Յորգի ու Դերվիշ փողոցներում գնեց երկու քարակերտ տուն, վերածեց խանութների, որոնց շահույթը ևս պիտի ծառայեր Մեսրոպայան վարժարանի կարիքներին:

Բացի այդ, Պետրոս Յուսուֆյանը 10 հազար ֆիորին կտակեց Մեսրոպայան վարժարանին, 10 հազար՝ Սարգիսյան (հետագայում՝ Հոփսիսիյանց) վարժարանին, 10 հազար՝ Ազգային հիվանդանոցին:

...Ահա այսպիսիք էին Առաքել Ապրոյի քրոջ որդիները՝ երջանկահիշատակ Պողոս և Պետրոս Յուսուֆյանները:

Հաջորդ գլուխը Առաքելի որդի Աբրահամի մասին է:

<sup>19</sup> Յ. Բութան, նշվ. աշխ., էջ 118-119:

## ԱԲՐԱՀԱՄ ԱՊՐՈ.

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԸ, ՀԱՅՐ, ՀԱՅՐԸ

...1952թ. Լոզանի քաղաքապետարանը որոշեց հին գերեզմանատան տեղում դպրոց կառուցել: Հնամենի դամբանների մեջ աչքի էր զարնում գոթական ոճով, մասամբ ավերված մի հուշասյուն, որի վրա սակայն լավ պահպանված էր ընտանեկան զինանշանը՝ արքայական թագ, ներքևում երկու առյուծներ, որոնց միջև նոյյան աղավմին էր՝ ձիթենու ճյուղը կտուցին:

Հուշասյան վրա կային այսպիսի արձանագրություններ.

Abraham Abro 1857

Pierre Abro 1857

Rafael-Charles Abro 1867

Arakel-Pierre Abro mort a` Gondar en Abyssine 1875

Marie There`se Abro 1889



Աբրահամ Ապրոյի և նրա ընտանիքի անդամների դամբանը Լոզանի հին գերեզմանատանը

Ուլբե՞ր էին այս մարդիկ:

Աբրահամը ծնվել է 1793թ.: Նրա մանկությունն ու պատանեկությունն անցան մոր փեշի տակ: Ավելի ճիշտ՝ հոր խնամքի ու հոգածության ներքո. Առաքելի ցանկությունն էր, որ երեխաները մշտապես լինեն աչքի առաջ և անհոգ ապրեն: Այս պատճառով էր, որ Աբրահամը գրեթե պարապ-սարապ կյանք վարեց: Միակ բանը, որ նրան հետաքրքրում էր, հոր առևտրային գործարքերն էին, որոնց հաճույքով մասնակցում էր: Բայց հենց նրա մեջ ծլարձակեց հայոց դարավոր վաճառականական գենը:

Երբ 1814թ. Առաքել Ապրոն վախճանվեց, որոշվեց, որ Ջմյունհիայի առևտրային գործարքները թողնվեն Գալուստին ու Սեթին, իսկ 17-ամյա Աբրահամը մեկնի Տրիեստ՝ իրենց տանը մեծացած մորեղբոր որդի Պետրոս Յուսուֆյանի մոտ, որն այդ թվականին նշանակվել էր Եգիպտոսի առևտրային ներկայացուցիչ:

Տրիեստում Աբրահամի զուտ առևտրատնտեսական գործունեության մասին տեղեկությունները խիստ սուղ են: Հայտնի է, որ շատ արագ խորանուխ է եղել բիզնեսի գաղտնիքների մեջ ու, քանի որ Պետրոս Յուսուֆյանը նստակյաց կյանք էր գերադասում, ստանձնել է առևտրային տան արտաքին կապերի տնօրինումը և բազմիցս այցելել եվրոպական երկրներ, այդ թվում և՛ Եգիպտոս: Իսկ երբ 1846թ. Պետրոս Յուսուֆյանը վախճանվեց՝ առևտրային տան տնօրինումն ամբողջովին անցավ նրան: Աբրահամի ներդրումը Եգիպտոս-Տրիեստ առևտրային հարաբերություններում այնքան նշանակալի է եղել, որ Մուհամեդ Ալին նրան պարգևատրել է «Նիշան Իֆթիխարի» շքանշանով:

1835թ.՝ 42 տարեկան հասակում, Աբրահամն ամուսնացավ գերմանուհի Մարիա-Թերեզա Կրամերի հետ և ունեցավ չորս զավակ՝ Ռաֆայել, Առաքել, Պետրոս ու Մարիամ: Թերևս, ընտանեկան խաղաղ կյանքով ապրելու ձգտումն էր պատճառը, որ 1853թ. բիզնեսը թողեց ավագ եղբորը՝ Գալուստին, և, արդեն որպես մեծահարուստ մարդ, բնակություն հաստատեց Ֆրանսիայի մայրաքաղաքում: Այստեղ նա միանգամից դարձավ փարիզահայության ամենաականավոր դեմքերից մեկը:



Աբրահամ Ապրոն

Փարիզում Աբրահամի մտերիմ անձանցից մեկը «Մասեաց Աղանի» ամսագրի խմբագիր Կարապետ վարդապետ Շահնագարյանն էր: Երբ վերջինս փարիզահայության իղձը կատարելու՝ եկեղեցի ու վարժարան կառուցելու խնդրանքով դիմեց նրան՝ Ապրոն պատրաստակամորեն տրամադրեց 10 հազար ֆրանկ, իսկ իր բարեկամներից ժողովեց ևս 50 հազար ֆրանկ: Բայց ձեռնարկը խափանվեց: Եվ պատճառը, որ մենք Ֆրանսիայի մայրաքաղաքում եկեղեցի ունեցանք ոչ թե XIXդ. 60-ական թթ., այլ 1904թ., այն էլ՝ բացառապես Ալեքսանդր Մանթաշյանցի շնորհիվ, տեղի հայության անկազմակերպվածության և որոշ անձանց անհիմն հավակնությունների արդյունք էր:

Խոսելով Ապրո-հայի մասին, «Մասեաց Աղանին» գրում էր. «Աբրահամ Աղային դժուարագիտ չքնաղ բարեմասնութեանց գլխատրներն էին Ողորմածութիւն եւ Ազգասիրութիւն: Ըրած ողորմութիւնները բազմաթիւ ու բազմատեսակ են, որոց կանոն եւ առաջնորդ ունէր Քրիստոսի Տեառն մերոյ սքանչելի խօսքը. «Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ նախ քո զի՛նչ գործէ աջ քո, որպէս զի եղիցի ողորմութիւն քո ի ծածուկ, եւ հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուցէ քեզ յայտնապէս\*». ուստի եւ ըրած ողորմութիւններն ոչ որդիքը եւ ոչ կողակիցը կարող էին երբէք իմանալ»<sup>1</sup>: Այս մեջբերումից պարզ է դառնում, որ Աբրահամ

<sup>1</sup> Հանդիսարան աշխարհաշէն մարդկան, «Մասեաց Աղանի», 1857թ., էջ 235:

Այրոն բազմաթիվ նվիրատվություններ է կատարել և, որպես բարեպաշտ քրիստոնյա, արել ծածուկ, առանց իր անձը տարփողելու, ինչը բարեգործության բարձրագույն դրսևորումն է:

Այրոն նաև զարմանալի հայր էր. թեպետ ուներ չորս երեխա, սակայն առանձնակի կապվածություն ու ջերմություն էր տածում երրորդ զավակի՝ Պետրոսիկի նկատմամբ: Երբ 1857թ. հունիսի 27-ին 10-ամյա այս մանչուկը մահացավ, Աբրահամը կարծես փլուզվեց: Հիվանդացավ և ընդամենը երկու ամսվա ընթացքում մահվան դուռը հասավ\*: Կանխազգալով մոտալուտ վախճանը, սեպտեմբերի 17-ին հրավիրեց Կարապետ վարդապետ Շահնազարյանին, խոստովանություն արեց, հաղորդություն ընդունեց, օրհնեց սնարի շուրջը բոլորած ընտանիքի սգալի անդամներին ու երկու օր անց հոգին ավանդեց:

1857թ. սեպտեմբերի 21-ին «Փարիզու մեծ ճեմելիքով» Շանգ Էլիզեով, փարիզահայության հոծ բազմությունից բաղկացած սգո թափորը Աբրահամ Այրոյի դին տարավ Պեր-Լաշեզ գերեզմանատուն և հողին հանձնեց վաղամեռիկ Պետրոսիկի աճյունի կողքին:

Դա ժամանակավոր հանգրվան էր. Աբրահամի ցանկության համաձայն, աճյունները հետագայում պիտի տեղափոխվեին Այրոների ծննդավայր՝ չքնաղ Չմյուռնիա: Բայց այդպես չեղավ, նրանց վերջին հանգրվանը դարձավ շվեյցարական Լոզանը:

Այժմ ուշադրություն դարձնենք հուշասյան մյուս արձանագրություններին:



Աբրահամ Այրո

Աբրահամի որդի Ռաֆայել Այրոն 1866թ. Վենետիկը Իտալիային հանձնելու առիթով կազմված պատգամավորության կազմում եղել է իտալական դեսպանության քարտուղար: Եթե ընդունենք, որ նա ծնվել է ծնողների ամուսնության տարում՝ 1835-ին, ապա վախճանվել է 32 տարեկան հասակում, մեզ անհայտ պատճառով:



Առաքել Այրո

Իսկ ինչու և ինչպես է մահացել Առաքել Այրոն Հաբեշտանի Գոնդար հնամենի մայրաքաղաքում: Նա բարձրակարգ կրթություն է ստացել Գերմանիայում, տիրապետել է գերմաներենի, ֆրանսերենի, անգլերենի, թուրքերենի: Ապա տեղափոխվել է Եգիպտոս և 1868-1870թթ. եղել խտիվ Իսմայիլ փաշայի\* անձնական քարտուղարը: 1870-1874թթ. Եգիպտոսի արտաքին գործերի նախարարությունում վարել է ավագ պաշտոնյայի ու թարգմանչի պաշտոն: 1874թ. խտիվը նրան նշանակել է Մասաուայի\*\* առաջին կառավարիչ:

1872-ից Եգիպտոսն սկսեց նվաճել Եթովպիայի ու Մոմալիի տարածքները: 1875թ. եգիպտոսյան 30-հազարանոց զորաբանակը ներխուժեց Եթովպիա, բայց գլխովին ջախջախվեց: Չոհերի թվում էր նաև Առաքել Այրոն: Այս ողբերգական իրադարձությունը լուսաբանվել է մի շարք աղբյուրներում: Մեջբերեն մի քանիսը:

«Բարձրապատիւ փոխարքայն Իսմայիլ Փաշան բարեհաճեցաւ հազարապետի աստիճան շնորհել մեծարգոյ Այրոյեան

Առաքել էֆենտիին, որ Նուպար Փաշայի մօրեղբոր որդին է, եւ միանգամայն պաշտօնակալ կարգեց զնա ընդ հրամանատարութեամբ Նորին Վսեմութեան»<sup>2</sup>:

«Աղեքսանդրիայէն հասած լուրերէն կը ծանուցանեն թէ եգիպտական զօրագունդ մի բաղկացեալ գրեթէ ի հազար զինուորաց, յառաջանալով անխոհեմաբար Հապէշիստանի ներքին կողմն ու անհարթ եւ դժուարին տեղ մը հասնելով, յանկարծ պաշարեալ գտնուեցան ի բազմաթիւ տեղացի հապէշ բարբարոսաց, որք անխնայաբար ջարդեցին զյիշեալ բոլոր եգիպտական զօրագունդը: Ամենացաւալին այն է որ այս զօրաբաժնին առաջնորդն վսեմ Ապրոյեան Առաքել Պէյն էր, կառավարիչն Մասավայի, ընկերութեամբ տանիմարքացի զօրապետի մը եւ Ջիչի կոմսին, որ Կ.Պոլսոյ Աւստրօ-Հունգարիոյ դեսպանին որդին կամ եղբորորդին էր»<sup>3</sup>:

«1875-1876ի ձմեռան Եգիպտոսի խտիվ Իսմայիլ Փաշայի հրամանով, եգիպտական բանակը հրամանատարութեամբ Zichi եւ Arendra զօրավարներու, արշաւած է Հապէշիստանի վրայ 5000 զինուորներով: Առաքել Պէյ Ապրօ կը հրամայէր 800 սուտանցիներէ բաղկացած վաշտի մը: Ճակատամարտը տեղի ունեցած է Կուտա-Կուտի կոչուած վայրին մէջ, որ կը գտնուի Կունտէի եւ Ատիս-Հօալայի միջեւ: Առաքել Պէյ սուտանցի զինուորներով քաջութեամբ կռուած է հապէշներու դէմ եւ սպաննուած: Առաքել Պէյի մարտականութիւնը եւ քաջութիւնը Սուտանի մէջ առասպելի կարգը անցած էր»<sup>4</sup>:

<sup>2</sup> «Արշալոյս Արարատեան», 26 դեկտեմբերի, 1864թ.

<sup>3</sup> «Արշալոյս Արարատեան», 29 նոյեմբերի, 1875թ.

<sup>4</sup> Մույն մեջբերումը թարգմանություն է L'Ethiopie – Voyage en Abyssinie et chez les Gallas-Raias, par Gabriel Simon, Paris 1885, t. I, p. 110-115 գրքից, որ զետեղված է Ա. Գարտաշեանի «Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, հտ. Բ, Պատմութիւն եգիպտահայ բարերարներու եւ կրթական հաստատութիւններու» աշխատությունում (Վենետիկ, 1986թ., էջ 190):

«Երբ որ Առաքել Պէյ Ապրօ իմացաւ աղէտը, հարիւր հոգինոց պզտիկ խումբով մը փութաց եգիպտական բանակին օգնութեան, բայց ինքն ալ բնաջինջ եղաւ հապէշներու կողմէ: Առաքել Տ'Ապրօ մեռաւ կռիւին մէջ, հերոսական դիմադրութիւն մը ընելէ ետք եւ այս երկրորդ աղէտէն միակ վերապրողը Հիսէյ անուն պերպերի գերի մը որ պատմեց եղելութիւնը»<sup>5</sup>:

«Առաքել Պէյ Ապրօ երբ որ կը տեսնէ որ զինքը շրջապատող մարդիկ կ'իյնան մէկ մէկ, Առաքել Պէյ կը քաշէ ատրճանակը եւ կը պարպէ զայն հապէշներու վրայ: Երբ որ կը հատնին փամփուշտները, զինուորի մը ձեռքէն ինկած սուր մը կը վերցնէ եւ անով հերոսական պայքար կը մղէ, մինչեւ որ հապէշներու հարուածին տակ անշնչացած կ'իյնայ գետին»<sup>6</sup>:

Ինձ հայտնի չէ՝ ունեցե՞լ են, արդոյք, ժառանգներ Ռաֆայել և Առաքել Ապրոները: Լոզանի հին գերեզմանատան հուշասյան վրա բացակայում է 1850թ. ծնված Մարիամ Ապրոյի անունը, և չգիտեմ՝ ունեցե՞լ է, արդոյք, նա ժառանգներ:

Յավալի է մտածել, որ նշանավոր կապիտալիստ, ազնվասիրտ հայ ու փխրասիրտ հայր Աբրահամ Ապրոյի ճյուղը կտրվել է...

Իսկ թե ինչ եղավ Լոզանի հին գերեզմանատան և Ապրոների շիրիմների հետ...

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> «Յուսաբեր», 30 մարտի 1940թ.

ՆՈՒԲԱՐՑԱՆՆԵՐ

1700-ական թթ. Չանգեզուրից Չմյուռնիա ներգաղթեց Նուբարյան գերդաստանը, որը սերում էր Չավնդուրի Թորոս իշխանի տոհմից<sup>1</sup>: Սկրտիչ Նուբարյանը (1805-1849), որ զբաղվում էր վաճառականությամբ, ամուսնացավ «ամասերդամցի» Պետրոս Ապրոյի թոռնուհի, Հովսեփ Յուսուֆյանի ու Մարթա Ապրոյի դուստր, Պողոս և Պետրոս Յուսուֆյանների քույր Մարիամի հետ: Ամուսնությունից ծնվեց երկու երեխա՝ Հռիփսիմե և Նուբար:

Հռիփսիմե Կոստանդյանը, ի հիշատակ մորեղբայրների, 1849թ. Չմյուռնիայում կառուցեց Հռիփսիմյան իգական վարժարանը. «Դպրոց աղջկանց անուան սրբոյ Հռիփսիմեանց որ ի յիշատակ պայազատաց Պողոս Պէյի եւ Պետրոս Ամիրայի Երուսուֆեանց դուստր քեռ նոցին բարեպաշտուհի Հռիփսիմէի տիկնոջ, յԻզմիր 1849»<sup>2</sup>.\*



Նուբար փաշա  
Նուբարյան

<sup>1</sup> Ա. Խառատյան, Հայ գաղթականությունը Էգեյանի մերձափնյա շրջանում (XIV-XVIIIդդ.), ՊԲՀ, թիվ 4, 1988թ.:

<sup>2</sup> Հ. Դիմաքսեան, նշվ. աշխ., էջ 336:

Նուբար Նուբարյանին (1825, Չմյուռնիա - 1899, Փարիզ) վերապահված էր այլ ճակատագիր, նրան՝ պետականություն չունեցող ժողովրդի զավակին, վիճակված էր դառնալ այլ երկրի՝ Եգիպտոսի, ամենաբարձրաստիճան այլազգի պետական այրը:

Նուբարը նախնական կրթությունն ստացավ ծննդավայրի Մեսրոպյան վարժարանում, ապա ուսանեց Ժնևում ու Սորբոնում, բնականաբար՝ փայլուն յուրացնելով ֆրանսերենը: 1842թ. մորեղբայր Պողոս Յուսուֆյանը նրան հրավիրեց Եգիպտոս ու դարձրեց իր քարտուղար: Տեսնելով բարձրակիրք երիտասարդի անուրանալի ընդունակությունները՝ փոխարքա Մուհամեդ Ալին 1844թ. նրան նշանակեց իր քարտուղար-թարգմանիչ: 1846-ին Եգիպտոսյան պաշտոնական պատվիրակության կազմում մեկնեց Փարիզ և պարտականությունները հրաշալի կատարելու համար Ֆրանսիայի արքա Լուի Ֆիլիպի կողմից պարգևատրվեց Պատվո լեգեոնի\* խաչով: Վերադարձից հետո նշանակվեց Մուհամեդ Ալիի խորհրդական:

1849-ին Եգիպտոսի նոր փոխարքա Աբասը\*\* Նուբարյանին շնորհեց բեյի տիտղոս, նշանակեց իր առաջին քարտուղար, միաժամանակ՝ Ալեքսանդրիայի առողջապահության վարչության տնօրեն: Սակայն փոխարքայի հետ հարաբերությունները սրվեցին, ինչի պատճառով 1853թ. Նուբարյանը հրաժարական ներկայացրեց ու մեկնեց Վիեննա՝ որպես Եգիպտոսի ներկայացուցիչ:

Այս ընթացքում, 1850-ին, նա Կ.Պոլսում ամուսնացավ Գևորգ բեյ Երամյանի դուստր Յուլիանե-Ֆուլկի (1831-1906) հետ:

1856թ. նոր կառավարիչ Սայիդ փաշան\*\*\* Նուբարյանին ետ բերեց Եգիպտոս ու նշանակեց ընդհանուր դատախազության նախագահ, իսկ 1858-ին՝ երկաթուղիների վարչության տնօրեն:

1863թ. խտիվ Իսմայիլը Նուբարյանին շնորհեց Ֆերիք և փաշա տիտղոսներ, իսկ մեկ տարի անց Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ը, ֆրանս-եգիպտոսյան հարաբերությունների զարգացման գործում մեծ ավանդի համար, նրան պարգևատրեց Պատվո լեգեոնի սպայական խաչով:

Նուբարյանը շարունակեց իր սրընթաց առաջխաղացումը. 1865-ին նշանակվեց հանրօգուտ շինությունների նախարար ու երկաթուղիների վարչության տնօրեն, 1866-ին՝ արտաքին գործերի նախարար, 1875-ին՝ արտաքին գործերի և առևտրի նախարար: Մակայն մեկ տարի անց ընդհարվեց խտիվի հետ և մեկնեց Եվրոպա: 1878թ. Իսմայիլն ստեղծեց նախարարների խորհուրդ, Նուբարյանին ետ բերեց ու նշանակեց այդ մարմնի նախագահ: Մակայն որոշ ժամանակ անց կրկին ընդհարվեց Իսմայիլի հետ ու հեռացավ Եգիպտոսից: Հետագայում ևս երեք անգամ (1884-1889, 1894 և 1895թթ.) զբաղեցրեց վարչապետի պաշտոնը:

Կյանքի վերջին տարիները Նուբարյանն անցկացրեց Փարիզում, ուր և կնքեց մահկանացուն: Նրա աճյունն ամփոփված է Ալեքսանդրիայի հայոց եկեղեցու տարածքում, իսկ տապանաքարի վրա կար այսպիսի արձանագրություն. «Արդարութիւնը հիմն է ամեն պետութեան»<sup>3</sup>:

Ընթերցողը կարող է թյուր պատկերացում կազմել, թե Եգիպտոսի փոխարքաների հետ Նուբար Նուբարյանի շարունակական ընդհարումների հիմքում նրա անձնական որակներն էին, ինչն ամենևին չի համապատասխանում իրականությանը: Պատճառը Եգիպտոսի և այլ պետությունների (հատկապես՝ Անգլիայի) փոխհարաբերություններն էին. Նուբարյանը մշտապես, սկզբունքորեն պաշտպանում էր Եգիպտոսի շահերը, այնինչ խտիվները, քաղաքական իրադրությունից ու նպատակահարմարությունից դրդված, ստիպված էին զիջումների դիմել:

Եգիպտոսի մեծ ջրանցքներից մեկն այսօր կրում է «Նուբարիե» անվանումը, *նուբարիե* է կոչվում նաև բամբակի տեսակներից մեկը:

Ալեքսանդրիայի ու Կահիրեի մեկական փողոց կրում են Նուբար փաշա անունը: Ալեքսանդրիայում կանգնեցված է նրա հուշարձանը, որ կառուցվել է եգիպտոսցիների հանգանակությամբ, և բացումը տեղի է ունեցել 1904թ. հունիսի 3-ին:

<sup>3</sup> Գ. Արսլանեան, Ուղեւորութիւն յ'Եթովպիա, Կ.Պոլիս, 1933թ., էջ 77:

Նուբար Նուբարյանն ու կողակիցն ունեցան երեք զավակ՝ Պողոս, Նոյեմի\* և Ջիբա:

Ես չեմ խոսի Պողոս Նուբար փաշայի՝ մեր ժողովրդի ազգընտիր զավակի, Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադրի ու ցկյանս նախագահի, Ազգային պատվիրակության ղեկավարի, բոլոր ժամանակների մեծագույն հայերից մեկի մասին: Չեմ խոսի, որովհետև նրա մասին գրվել են հարյուրավոր ուսումնասիրություններ ու հոդվածներ, և սույն գրքի հետ ուղղակի առնչություն չունի:

Կխոսեմ Ջիբայի մասին, ով կինն էր Տիգրան դ'Ապրոյի, ում վերաբերյալ է հաջորդ գլուխը:

## ՀԱՅՐԵՐ ԵՎ ՉԱՎԱԿՆԵՐ

Ստեփան Մարգարի Ապրոյանը ծնվել է 1804թ. ապրիլի 14-ին Չմյուռնիայում: Եղել է Բելգիայի ու Հոլանդիայի հյուպատոսությունների թարգմանիչը: Ապա հորաքրոջ որդի Պողոս Յուսուֆյանի հովանավորությամբ հիմնել է առևտրային տուն ու զբաղվել եգիպտոսյան բանակի մատակարարմամբ:

Տեղափոխվել է Կահիրե և 1840թ. նշանակվել Եգիպտոսի ջրամբարների (barrage) կառուցման հանձնախմբի անդամ: 1843թ. ֆինանսանյութական օժանդակություն է ցուցաբերել Չմյուռնիայի «Սյունյաց ընկերությանը»:

Փոխարքա Մուհամեդ Ալիի հանձնարարությամբ, Եգիպտոսի և Իտալիայի միջև առևտրատնտեսական հարաբերությունները խթանելու նպատակով, բնակվել է Նեապոլում:

Ամուսնացել է հոլանդուհի (այլ տվյալներով՝ անգլուհի) Էմմա Սփարքսի հետ և ունեցել 4 զավակ՝ Տիգրան, Ասլան, Գյուլիանում (ծնվել է 1850թ. Չմյուռնիայում) ու Երանուհի (ծնվել է 1851թ. Չմյուռնիայում):

Պատմում են, որ մի անգամ նա ճաշելիս է լինում Հռոմի պապ Գրիգոր XVI-ի հետ, և քահանայապետը հարցնում է.

-Ե՞րբ եք հայերդ ազգովին ուղղափառ դառնալու:

-Երբ Ձերդ Սրբությունը մեր ազգին անկախություն պարգևի,- հետևում է պատասխանը:

Ստեփան Ապրոն վախճանվել է 1852թ. ապրիլի 26-ին Նեապոլում: Աճյունը տեղափոխվել է Չմյուռնիա ու հողին հանձնվել Սբ. Ստեփանոս եկեղեցու գերեզմանատանը:

Հաջորդ երկու գլուխները Տիգրան, Ասլան Ապրոների ու նրանց ժառանգների մասին է:

## ՏԻԳՐԱՆ ՓԱՇԱ Դ՛ԱՊՐՈ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. ՊԵՏԱԿԱՆ ԱՅՐԸ

Այս մարդը մինչև ուղնուծուծը Եգիպտոսին հավատարմորեն ծառայած, այդ երկրի հոգսերով ապրած պետական ու քաղաքական գործիչ էր: Դրան զուգահեռ, թեպետ օտար լեզուներից զատ տիրապետում էր «քիչ մըն ալ հայերենի»<sup>1</sup>, այդուհանդերձ հայ էր՝ հասկացության ամենալայն իմաստով: Եգիպտոս-հայրենիքի պետական այրի և ազգանվեր հայի մի բարեբաստիկ զուգորդության մարմնացում էր:



Տիգրան դ'Ապրո  
Բագրատունի

Տիգրան դ'Ապրոն\* ծնվել է 1846թ. ապրիլի 10-ին\*\* Կահիրեում և նույն թվականի մայիսի 28-ին մկրտվել եգիպտահայոց հոգևոր առաջնորդ Գաբրիել Եպիսկոպոս Մարաշցու ձեռամբ և ամիրա Ալեքսան Միսաքյանի կնքահայրությամբ: Նախնական ուսումն առել է Կահիրեում, ապա բարձրագույն կրթություն ստացել Շվեյցարիայում, Ֆրանսիայում և Անգլիայում: Հրաշալի տիրապետե-

<sup>1</sup> Ա.Գարտաշեան, Նիթեր Եգիպտոսի պատմության համար, հտ. Բ, Պատմութիւն եգիպտահայ բարերարներու և կրթական հաստատութիւններու, Վենետիկ, 1986թ., էջ 106:

լով ֆրանսերենի և անգլերենի, ինչպես նաև խոսակցական թուրքերենի, իտալերենի ու հունարենի՝ 1868-ին վերադառնում է Եգիպտոս ու ոտք դնում մի բարդ ուղի՝ հասնելով պետական բարձրագույն պաշտոնների:

Նախ, ազգական Նուբար Նուբարյանի միջամտությամբ աշխատանքի անցավ արտաքին գործերի նախարարությունում: Մեկ տարի անց՝ 1869-ին, նշանակվեց Եգիպտոսում միջազգային Խառը դատարանների\* ինստիտուտի հաստատման կապակցությամբ հրավիրված 2-րդ համագումարի քարտուղար: 1870թ. կարգի բերեց արտգործնախարարության դիվանների գործունեությունը, ապա նշանակվեց թարգմանական վարչության արաբական ու եվրոպական բաժինների պետ և, ի գնահատանք բարենպաստ ջանքերի, արժանացավ բեյի տիտղոսի: Այդ առթիվ հայ մամուլը գրեց. «Նորին Բարձրութիւնն ի յիշեալ մայրաքաղաքն (Կ.Պոլիս – Խ.Գ.) գտնուած ժամանակ, ըստ առաջարկութեան վսեմ. Նուպար Փաշայի, Պէյութեան աստիճան շնորհեց մեծաշուք Տիգրան Էֆէնտիին, որ Ապրոյեան հանգուցեալ Ստեփան Աղային որդին է: Ապրոյեան Տիգրան Պէյը, որ Եգիպտոսի Արտաքին Գործոց պաշտօնատան մէջ վսեմ. Նուպար Փաշային խորհրդոց քարտուղարն է լի շնորհօք, ուշիմ եւ ազնիւ երիտասարդ մըն է»<sup>2</sup>:

1873-1876թթ. Տիգրան բեյ դ'Ապրոն եղավ արտգործնախարարության թղթակցության բաժնի խմբագիր, դատական համակարգի բարեփոխման հանձնախմբի անդամ, 1876-ին՝ արտգործնախարարության 2-րդ քարտուղար, 1877-ին՝ ընդհանուր վարչության պետ, 1878-ին՝ վարչապետ Նուբար Նուբարյանի քարտուղար: 1881թ., Շերիֆ վաշայի նախարարության օրոք, Տիգրան բեյը նշանակվեց արտգործնախարարության տնօրեն, 1882-ին՝ նախարարի խորհրդական:

Ահա այս ժամանակ՝ 1882թ. հուլիսին, Եգիպտոսում տեղի ունեցան նշանակալի իրադարձություններ, որոնք էական ազդեցու-

թյուն գործեցին նաև Տիգրան դ'Ապրոյի հետագա կենսուղու վրա: Մակայն այս կապակցությամբ հարկ է որոշ պարզաբանումներ ներկայացնել այդ իրադարձությունները կանխորոշող պայմանների, Եգիպտոսում տիրող դրության շուրջ:

Դեռևս 1854թ. Մուհամեդ Ալիի կրտսեր որդին՝ փոխարքա Մայիդ փաշան բանակցություններ վարեց ֆրանսիացի ձեռնարկատեր Ֆերդինանդ դե Լեսերի հետ Սուեզի ջրանցքը\* բացելու վերաբերյալ: Ի սկզբանե պայմանագիրը խիստ անշավետ էր Եգիպտոսի համար, և փոխարքան նոր բանակցություններ վարեց: Որպես փոխհատուցում՝ նա ստիպված եղավ դե Լեսերին վճարել 3 մլն եգիպտական ֆունտ և դրա համար արտասահմանյան վարկ վերցրեց. դա դանդաղ գործողության ակն էր, որը պայթեց հետագայում:

Սուեզի ջրանցքի շինարարությունն սկսվեց 1859թ., և բացումը մեծ շուքով կատարվեց 1869թ. նոյեմբերի 17-ին:

1863-1879թթ. խտիվությունն ստանձնած Իսմայիլը շարունակեց իր պապ Մուհամեդ Ալիի ուղեգիծը՝ ձգտելով քաղաքական անկախություն ստանալ թուրքական սուլթանից ու Եգիպտոսը վերածել Եվրոպայի հարգանքը վայելող արդիական պետության: Բայց, նախ, նա ինքը ձեռք բերեց վիթխարի անձնական ունեցվածք, բացի այդ սկսեց օգտագործել պետական գանձարանի միջոցները, ինչը հանգեցրեց ահռելի պարտքերի: Աշխատելով իրադրությունը շտկել՝ Իսմայիլը 1875թ. նոր խոշոր վարկ վերցրեց, սակայն ֆինանսական խնդիրները չլուծվեցին: Արդյունքը եղավ այն, որ 1876թ. նա ստիպված եղավ Սուեզի ջրանցքը վաճառել Մեծ Բրիտանիային: Վերջինս անմիջապես Եգիպտոս ուղարկեց փորձագետների՝ պարտքերի հետ կապված իրավիճակը ստուգելու նպատակով: Մրա հետևանքով երկրի ֆինանսների լիակատար վերահսկողությունն անցավ անգլո-ֆրանսիական համատեղ հանձնաժողովին, որն սկսեց պարտքերի դիմաց երկրի տարեկան եկամտի 3/4-ը գանձել:

1879թ. Իսմայիլը գահից հրաժարվեց՝ հօգուտ իր որդի Թաու-

<sup>2</sup> «Արշալոյս Արարատեան», 10 օգոստոսի 1873թ.:

Ֆիկի, որի մասին հենց ինքը ասում էր. «Նա ոչ գլուխ ունի, ոչ սիրտ, ոչ քաջություն»: Հենց Թաուֆիկի օրոք, ընդդեմ օտարերկրյա միջամտությունների, սկսվեց ուժգին ազգայնական շարժում, որը գլխավորեց գնդապետ Ահմեդ Ուրաբին (1839-1911թթ.): Դեռևս 1879թ. վերջինս մասնակցել էր եգիպտոսյան սպաների հայրենասիրական շարժմանը, իսկ 1881թ. սեպտեմբերից ղեկավարեց Կահիրեի կայազորի ապստամբությունը, որի նշանաբանն էր «Եգիպտոսը եգիպտոսցիների համար»: Շուտով կազմավորվեց ազգային կառավարություն, որտեղ Ուրաբի փաշան զբաղեցրեց ռազմական նախարարի պաշտոնը:



*Ահմեդ Ուրաբի*

Չգտելով օգուտել խառնակությունից՝ օսմանյան սուլթանը պահանջեց կրճատել եգիպտոսյան բանակի թվաքանակը: Թաուֆիկը դեմ չէր, սակայն այդ պահանջը կտրականապես մերժեց Ուրաբին, որը 1882թ. սեպտեմբերի 11-ին զինված ապստամբություն սկսեց ընդդեմ խտիվի: Վերջինս պաշտոնապես դիմեց բրիտանական կառավարությանը՝ պաշտպանություն խնդրելով:

Անգլիացիների արձագանքը ակնթարթային էր: Հուլիսի 12-ին բրիտանական արքայական նավատորմը՝ ծովակալ Սեյմուրի հրամանատարությամբ, 12 ժամ ռմբահարեց Ալեքսանդրիան, իսկ հուլիսի 15-ին անգլիական դեսանտը զավթեց քաղաքը: Օգոստոսի 2-ին բրիտանական զորքերը գրավեցին Սուեզը, օգոստոսի 20-ին՝ Իսմայիլիեն, սեպտեմբերի 13-ին եգիպտոսցիներին ջախջախեցին Թել-էլ-Զեբիրի մատույցներում և մեկ օր անց մտան Կահիրե: Ուրաբի փաշան գերեվարվեց ու դատապարտվեց մահապատժի:

Ռազմական պարտությունը ծանրագույն հետևանքներ ունեցավ Եգիպտոսի համար՝ սկսվեց երկրի լիակատար գաղութայնացման գործընթացը:

Խտիվ Թաուֆիկին պետք էր փրկել սեփական իշխանությունը,

և նա ծովակալ Սեյմուրի հետ բանակցությունների ուղարկեց երկու հայերի՝ արտգործնախարարի խորհրդական Տիգրան բեյ դ'Ապրոյին ու ռազմական նախարարության խորհրդական Էդուարդ փաշա Չոհրապին: Բանագնացներին հաջողվեց լուծել երկու խնդիր՝ վերահաստատել Մուհամեդ Ալիի հետնորդների ժառանգական խտիվական իրավունքը և Ահմեդ Ուրաբիի մահապատժը փոխարինել աքսորով: Փոխարենը ստիպված էին ընդունել Անգլիայի գերիշխանությունը՝ որպես երկրի անդորրի և Սուեզի ջրանցքի անվտանգության երաշխավորի:



*Անգլիական նավատորմը ռմբահարում է Ալեքսանդրիան*



*Ալեքսանդրիան ռմբահարումից հետո*

Բանակցությունների արդյունքից խտիվն այնքան գոհ մնաց, որ դ'Ապրոյին շնորհեց փաշայի տիտղոս, պարգևատրեց «Օսմանիյե» շքանշանով և 1883թ. նշանակեց փոխարտգործնախարար:

Անգլիացիները ձեռնամուխ եղան պատերազմական հաղթանակի պտուղների քաղմանը: Եվ այստեղ պատմական թատերաբեմ բարձրացավ մի անձնավորություն, որին եգիպտոսցիներն իրավամբ կարող էին համարել չարյաց հանճար, իսկ անգլիացիները՝ իրենց ականավոր գործիչներից մեկը: Խոսքը Իվլին Բերինգի՝ բարոնի (1892թ.), վիկոնտի (1899թ.), կոմսի (1901թ.), նույնիքը լորդ Քրոմերի մասին է: Այս մարդը 1877-1879թթ. եղել էր եգիպտոսյան պարտքի անգլիական կոմիսարը, 1879-1890թթ.՝ Եգիպտոսի պետական պարտքի միջազգային հանձնաժողովի վերահսկիչը: Ապա մեկնել էր Հնդկաստան՝ որպես փոխարքայի ֆինանս-

սակն խորհրդական: Իսկ 1883թ. վերադարձավ Եգիպտոս՝ որպես Անգլիայի գլխավոր հյուպատոս և 24 տարի բացարձակ իշխանությամբ փաստացիորեն ղեկավարեց երկիրը:



Լորդ Քրոմեր

Լորդ Քրոմերի կամոք եգիպտոսյան վարչակազմում բոլոր առանցքային պաշտոններն սկսեցին զբաղեցնել անգլիացիները՝ պետական ու տնտեսական ղեկավար դիրքերից դուրս մղելով նաև հայերին: Չուր չէ, որ վարչապետ Նուբար Նուբարյանը մի առիթով Քրոմերին ասել էր. «Դուք (անգլիացիները – Խ.Դ.) Եվրոպայի թուրքերն եք»: Գրեթե նույն ոճով արտահայտվեց փոխարտգործնախարար Տիգրան դ'Ապրոն, երբ Քրոմերը նրանից պահանջեց բոլոր որոշումները հանձնաձևեցնել իր հետ, այսինքն՝ գործել ի շահ Անգլիայի: Չայրացած դ'Ապրոն պատասխանեց. «Եգիպտոսի նախարար մըն եմ ե՞ս թե Անգլիական կառավարութեան վճարեալ մէկ պաշտօնեան»<sup>3</sup>: Սա անթույլատրելի հանդգնություն էր, և Քրոմերի պահանջով դ'Ապրոն պաշտոնանկ արվեց:

1884թ. Տիգրան փաշան ամուսնացավ Նուբար Նուբարյանի դուստր Չիբայի հետ և 1885թ. մեկնեց Փարիզ ու Լոնդոն՝ Եգիպտոսի հետ առևտրատնտեսական կապերը զարգացնելու նպատակով:



Տիկին Չիբա դ'Ապրոն

<sup>3</sup> Վ.Չարդարեան, Յիշատակարան տարեգիրք 1941 տարւոյ, Կահիրե, 1940թ., էջ 3:

1885թ. մարտի 18-ին Կահիրեում ծնվեց նրա առաջնեկը՝ Մարգարիտ-Ինջին (կնքահայրը մորեղբայրն էր՝ Պողոս Նուբարը), իսկ 1886թ. մայիսի 20-ին\*՝ որդի Արամը: Սակայն ընտանեկան երջանկությունը, ավաղ, կարճ տևեց. 1889թ. փետրվարի 1-ին Նեպոլում, իր տագր Ասլան դ'Ապրոնի տանը 47-ամյա հասակում վախճանվեց տիկին Չիբա դ'Ապրոն: Նրա դին տեղափոխեցին Կահիրե և փետրվարի 18-ին հողին հանձնեցին հայոց Սբ. Մինաս եկեղեցու՝ Ապրոյան գերդաստանի մատուռ-դամբանում:

Թաուֆիկին փոխարինած Աբաս Հիլմի փաշան, ով փայլուն եվրոպական կրթություն էր ստացել և ազգային ինքնիշխանության գաղափարների կրող էր, 1891թ. Տիգրան փաշային կրկին նշանակեց արտգործնախարար, ինչն ամենևին Քրոմերի սրտով չէր: Երբ 1894թ. Սասունում ու Չեյթունում տեղի ունեցան հայկական կոտորածները, լորդն ուղղակիորեն թափանցիկ ակնարկ արեց, թե՛ իսլամական ծայրահեղականների կողմից քրիստոնյաների մի ջարդ էլ հնարավոր է Եգիպտոսում: Առաջնորդվելով երկրի ու սեփական ազգի բարձրագույն շահերով, անգլիացիների խարդավանքից հոգնած՝ Տիգրան փաշա դ'Ապրոն 1894թ. վերջնականապես հեռացավ քաղաքական ասպարեզից:

Այս առթիվ ուշագրավ է Քրոմերի հետևյալ միտքը. «Երկար ժամանակ Տիգրան Փաշայի բուռն փափաքը եղաւ Եգիպտոսի մէջ Անգլիական ազդեցութիւնը նուազած տեսնել եւ սակայն այդ ազդեցութիւնը աճեցնելու գործիք մը եղաւ: Ժամանակ առ ժամանակ խաւաքարտէ դիւանագիտական տուներ կը կառուցանէր եւ կը մտածէր, թէ անոնք փափաքուած արդիւնքը պիտի տան: Երբոր անգլիացիները զանոնք կը փլցնէին իրենց ճկոյթովը՝ չէր սարսափէր: Չէր գիտեր, թէ անգլիացիներուն լուծը թօթափելու համար ամենէն յարմար միջոցը անոնց ընդդիմանալ չէ, այլ անոնց հետ գործակցիլ»<sup>4</sup>: Սա վկայում է մեկ բան՝ Տիգրան դ'Ապրոն (ինչպես

<sup>4</sup> Ս.Չեյթեան, Հայութեան ներդրումը վաղ միջնադարեան եւ արդի Եգիպտոսի պատմութեան մէջ, Մոնրեալ, 2004թ., էջ107:

և, ի դեպ, մյուս հայերը) իր բարձր պաշտոնեական դիրքը պահպանելու համար անգլիացիների հետ գործարքների մեջ չի մտել, զիջումներ չի արել, այլ հավատարմորեն ու նվիրվածությամբ ծառայել է Եգիպտոսին, այդ երկրի շահերին:

Այժմ անդրադառնանք դ'Ապրո – հային, նախնիներից ժառանգած նրա ազգանպաստ գործունեությանը: 1883թ. Տիգրան փաշան ընտրվեց Կահիրեի Ազգային գավառական ժողովի երեսփոխան, իսկ 1892-ին՝ ատենապետ: Համիդյան ջարդերից փրկված ու Եգիպտոսում ապաստանած ազգակիցների ողբալի վիճակը մեղմելու համար գլխավորեց Ալեքսանդրիայի Գաղթականաց հանձնախումբը, վրանավաններ հիմնեց եկեղեցու պարտեզում, իսկ դպրոցի բակում երեխաների համար կազմակերպեց դպրոց ու դպրոց-արհեստանոց: Կահիրեի Ազգային առաջնորդարանին նվիրեց Էշմուն Գրեյս գյուղում գտնվող մշակելի հողերով իր կալվածքը, որի հասույթը հատկացվեց գաղթական ու չքավոր հայերին՝ որպես դրամագլուխ:

1899թ. ապրիլի 24-ին Տիգրան դ'Ապրոն կազմեց կտակ, որով 50 հազար ֆրանկ հատկացրեց Կահիրեի Ազգային առաջնորդարանին, որը պետք է գներ մշակելի բարեբեր հողատարածք և դրա հասույթով հոգար իր կարիքները: Կտակակատարն էր նրա աներորդին՝ Պողոս Նուբար փաշան:

...1904թ. առողջությունը քայքայած Տիգրան դ'Ապրոն ապաքինման նպատակով մեկնեց Էվիան-լե-Բեն\*: Հենց այստեղ էլ հուլիսի 28-ին, 58-ամյա հասակում կնքեց իր մահկանացուն: Հուլիսի 30-ին նրան թաղեցին Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանատանը:

Եգիպտոսի ականավոր պետական ու քաղաքական գործչի, դիվանագետի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի, Շվեդիայի, Պարսկաստանի, Անգլիայի բարձրագույն շքանշանների ասպետի մահը ցնցեց եգիպտահայ գաղութը:

Հայկական մամուլը գրեց. «Տիգրան փաշա ոչ միայն հին դպրոցէն չէ, այլ կը պատկանի ամենէն նորագոյնին: Սակայն եւ այնպէս մարդը էապէս հաւատարմօրէն եգիպտացի է որքան զգացումնե-

րով նոյնքան ալ գաղափարներով եւ իր հայկական ծագման արտակարգ յարմարութիւնը կը պարտի այսպէս անցնելով մէկէն, իւրացուցած է Եւրոպայի ոգին եւս»<sup>5</sup>:

«Տիգրան փաշա տ'Ապրո Բագրատունիի մահը եգիպտահայ գաղութին համար զգալի կորուստ մըն է, այս մահը որով կ'անհետանայ անոր երեւելի եւ պատմական դէմքերէն մին եւս: Բացի իր դիւանագիտական այնքան փայլուն ասպարէզէն, Տիգրան փաշա ունեցած է նաեւ ազգային գործունեթիւն մը, եղաւ երեսփոխանական ժողովոյ – Գահիրեի հայոց – մշտական ատենապետը, անկեղծ ըլլալու համար հարկ է ըսել սակայն, թէ այս վերջին հանգամանքով չէ որ հանգուցեալը օկտակար կրցած է ըլլալ իր ազգին, որուն մատուցած ամենամեծ ծառայութիւնը եղած է հայ անունը Եգիպտոսի մէջ եւ Եւրոպայի առջեւ պանծացնել հայ ցեղը, բարձրօրէն ներկայացնել անոր յատկութեանց եւ ձիրքերուն ապացոյցը տալով իր տաղանդով եւ բազմադէմի կարողութիւններով, որոնք զինքը արժանացուցած էին մէկ քանի խտիւնէրու վստահութեան եւ ատակ զարգացած ամենաբարձր պաշտօններ վարելու»<sup>6</sup>:

«Ազնուական արիւն, բնական եւ մտաւորական շնորհներ, փառաւոր դիրք, բարձր նկարագիր, ճոխ կենցաղ. այս ամենը իր վրայ միացուցած էր Եգիպտոսի Արտաքին Գործոց երբեմնի նախարարը»<sup>7</sup>:

Տիգրան դ'Ապրոյի երկրային կյանքն ունեցավ մի կարճատև վերջաբան ևս: 1904թ. նոյեմբերին Մարսելից Ալեքսանդրիա ճանապարհվեց «Շլեզվիզ» շոգենավը, որի ընդերքում գտնվում էր փաշայի աճյունը: Վերահուղարկավորությունը նախաձեռնել էին նրա հարազատները և աներորդի Պողոս Նուբարը, որոնց ցանկությամբ Տիգրան փաշան պետք է հավերժ հանգրվաներ կնոջ՝ Զիբայի կողքին:

<sup>5</sup> «Մասիս», 3 նոյեմբերի 1904թ.:

<sup>6</sup> «Ազատ Բեն», 6 օգոստոսի 1904թ.:

<sup>7</sup> «Լուսաբեր», թիվ 3, 1904թ.:

Կրկին խոսքը տանք հայկական մամուլին:

«Այսօր 15 Նոյեմբեր 1904ին Գահիրեի մէջ, ժամը 10ին, տեղի ունեցաւ Տիգրան Փաշայի յուղարկատրութեան տխուր հանդէսը: Եկեղեցական արարողութեանց կը նախագահէր Դանիէլ Վրդ. Բարսեղեան, որ յատկապէս Աղեքսանդրիայէն Գահիրէ հրաւիրուած էր:

Թափօրին կը մասնակցէին Գալուստեան Ազգ. Վարժարանի աշակերտներն ու աշակերտուհիները՝ սուգի միօրինակ տարագով, անոնց կ'ընկերանային իրենց ուսուցիչները: Վարժարանը ու Առաջնորդարանը ամբողջ օրը փակուած մնացին՝ ի նշան սգոյ:

Յուղարկատրութիւնը կ'առաջնորդէր վսեմ. Պօղոս Փաշա Նուպար՝ իր մօտ ունենալով հագուցեալին որդին եւ անոր ամէնէն մերձաւոր ազգականները, որոնք յայտնապէս յուզուած էին:

Քառածի կառքին, որ դագաղը կը կրէր, կը հետեւէին Լորտ Քրօմէր, Նորին Բարձրութեան խտիւէն պատուիրակ պալատական արարողապետ Չէքի փաշա, բոլոր նախարարները, դիւանագիտական մարմնի անդամները, բազմաթիւ՝ մեծ պաշտօնատարներ, երեսնի ազգայիններ եւ խոտն բազմութիւն մը:

Թափօրին ճամբան կը բանար ձիաւոր եւ հետեւակ զօրքերու ջոկատ մը: Դագաղին առջեւէն երեք թաւիշէ բարձերու վրայ կը տանէին հանգուցեալին շքանշանները, ծաղկեպսակներ՝ որոնց թիւը քսանէն պակաս չէր»<sup>8</sup>:

«Դագաղակիր կառքին կը հետեւէին վսեմ. Պօղոս Փաշա Նուպար, աջ կողմը ունենալով հանգուցեալին եղբայրը՝ իշխան Ասլան Տ'Ապրօ Բագրատունին եւ մէկ հատիկ որդին՝ Արամ-Ստեփան Պէյ Տ'Ապրօն, ասոնց էլ կը հետեւէին վսեմ. Իշխան Հիւսէյին Քամէլ, բոլոր նախարարները, անգլիական եւ ֆրանսական ներկայացուցիչները, Լորտ Քրօմէր եւ Պարոն տը Պալոնիէր, Պր. Շէնատիս եւ Մաքսընս, Պարոն տը Վիլլպուա, Ռէյմոն Լը Գօնթ Ֆինտլէյ, Մարիանըսթի ռուսական դեսպանը, Պր. Շլէզօթի, վսեմ.

<sup>8</sup> «Ազատ Բեմ», 24 դեկտեմբերի 1904թ.

Ռիսազ փաշա, Տանիւօ փաշա, Սըր Էտուարտ Չօհրապ փաշա, Թիրքսօն փաշա, Ապատ փաշա, Փէնշին փաշա, Ազիզ Իզէթ փաշա էլ-Արնավուքի, Եագուպ Արթին փաշա, Ֆապրիքաս փաշա, անգլիական զօրաց հրամանատարը Գոր Պէյ, եւայլն:

Ծածկոյթի ծուլերէն բռնած էին՝ վսեմ. Մուսթաֆա փաշա Ֆեհմի, Պութրօս փաշա Ղալի, Մագլու եւ Ապանի փաշաները, իսկ երեք բարձիկներու վրայ շարուած էին հանգուցեալին պատուանշանները, որոնք ձեռքի վրայ բռնած ունէին՝ վսեմ. Կարապէտ Պէյ Շէրիտճեան, Արթին Պէյ Ստեփան, Ժօրժ տը Մարդինօյ»<sup>9</sup>:

Տիգրան դ'Ապրոյին թաղեցին Սբ. Մինաս եկեղեցու գերեզմանատանը՝ վաղամեռիկ կնոջ կողքին:

Ինչպէս վերևում նշել էինք, Տիգրան փաշայի կտակակատարը Պողոս Նուբարն էր, ով 1929թ. ձեռնամուխ եղավ փեսայի վերջին կամքի կատարմանը: Նա սեփական միջոցներով, ինչպէս նաև փաշայի կտակած մշակելի հողերի հասույթներից զոյացած գումարներով կառուցեց Կահիրեի Ազգային առաջնորդարանի նոր, հրաշակերտ շէնքը: Մուտքի դռան վերնամասում զետեղվեց մարմարյա հուշատախտակ՝ հետևյալ արձանագրությամբ. «Վասն անմոռաց յիշատակի հանգուցեալ Տիգրան Փաշայի Տ'Ապրօ Բագրատունոյ եւ անուան վսեմ. Պօղոս Փաշայի Նուպար, սատարողաց շինութեան Ազգային Առաջնորդարանիս Հայոց ի Գահիրէ:

Արձանագիրս այս եղաւ ասդէն նշանակ յաւերժական սիրոյ եւ երախտագիտութեան համօրէն Հայոց Եգիպտոսի. 1930 – Ռ-ՉԸՀ».\*

1952թ. երախտապարտ եգիպտահայութիւնը առաջնորդարանի բակում տեղադրեց երկու բարերարների՝ Տիգրան դ'Ապրոյի և Պողոս Նուբարի կիսանդրիները (քանդակագործ՝ Օննիկ Ավետիսյան):

Այսպիսին է Տիգրան դ'Ապրո Բագրատունու կյանքի ու գործունէության համառոտ պատմութիւնը: Մի մարդու, ով ոչ միայն

<sup>9</sup> «Արշալոյս Արարատեան», 20 նոյեմբերի 1904թ.:

Եզիպտոսի ականավոր պետական այրն էր, այլև մեր ժողովրդի արժանավոր զավակներից մեկը:

\* \* \*

Վերևում արդեն ասել եմ, որ Տիգրան դ'Ապրոն ուներ երկու զավակ՝ Ինջի և Արամ, ովքեր 3-4 տարեկան էին, երբ մորեորք մնացին: Երբ նրանց հայրը վախճանվեց, Ինջին 19 տարեկան էր, Արամը՝ 18: Թե նրանք ինչ դաստիարակություն, կրթություն են ստացել՝ հայտնի չէ: Առհասարակ շատ բան պարզել հնարավոր չեղավ: Այդուհանդերձ, հաջորդ երկու ենթազուլվսները Ինջիի և Արամի մասին են, ուր շարադրել եմ այն ամենը, ինչ կարողացել եմ հայթայթել:

#### ԻՆՋԻ Դ'ԱՊՐՈՆ-ՋԻՆՈՐԻ

Տիգրան դ'Ապրոյի դուստրն ամուսնացել է Ռոբերտո Վենտուրի Ջինորիի հետ և կրել մարկիզուհու տիտղոս:

Ջինորի ընտանիքը Իտալիայի արիստոկրատական հնամենի և անվանի գերդաստաններից մեկն է: Դեռևս 1735թ. Ֆլորենցիայի մեծ հերցոգության մարկիզ Կառլո Անդրեա Ջինորին Կոլոնատա քաղաքի մոտ գտնվող Դոչա սեփական կալվածքում (այժմ՝ Ֆլորենցիա նահանգի Սեստո Ֆիորենտինո շրջան) հիմնեց ճենապակու արտադրության Եվրոպայի առաջին մանուֆակտուրաներից մեկը:

1896թ. Ջինորի ֆիրման միացավ միլանցի Աուգուստո Ռիչարի արդյունաբերական խմբին, հագեցվեց նորագույն տեխնիկայով և վերանվանվեց «Ռիչար-Ջինորի»՝ դառնալով Եվրոպայում ամենաշքեղ, գեղագիտական տեսակետից բարձրաճաշակ ու թանկարժեք կերամիկական արտադրության առաջատարը:

Լարդերելո շրջանում գտնվող տաք ջրադրյուրներից ստացվում էր բորաթթու: Եվ ահա մեկ այլ Ջինորի՝ մարկիզ Կոնտին,

միտք հղացավ դա վերածել էլեկտրաէներգիայի: 1904թ. նա աշխարհում առաջին անգամ փորձասարքի վրա էլեկտրականությամբ ստացավ, իսկ ևս ինը տարի անց շահագործման հանձնեց առաջին արդյունաբերական երկրաջերմային էլեկտրակայանը:

Տեղեկացնեմ նաև, որ Richard-Ginori ֆիրման գործում է մինչ օրս, նրան են պատկանում Laveno Richard-Ginori Group և Laure Japy, Paris աշխարհահռչակ ապրանքանիշները:

Ինջի դ'Ապրո-Ջինորի\* ունեցել է երեք զավակ, որոնք բնակվել են Նեապոլում ու Ֆլորենցիայում:

#### ԱՐԱՄ Դ'ԱՊՐՈՆ

Տիգրան դ'Ապրոյի որդու մասին շատ քիչ բան է հայտնի, սակայն հասու նվազագույն տեղեկությունները հուշում են, որ գործունեության ուսումնասիրումը առանձին նյութ է:

Արամ դ'Ապրոն կրթություն է ստացել Փարիզում, ունեցել է բեյի տիտղոս, խտիվ Աբաս Հիլմիի կողմից պարգևատրվել «Le Grade de Sanie» շքանշանով:

Բայց նրա եզակիությունն այն էր, որ իր ժամանակի հանրահայտ գիտնականներից մեկն էր՝ ֆիզիկոս, ֆիզիկոս-մեխանիկ, փիլիսոփա, գիտական տեսությունների մեկնաբան:

Ահա նրա մի քանի գրքերի ցանկը.

1. Rise of the New Physics
2. The evolution of scientific thought from Newton to Einstein
3. The rise of the new physics; its mathematical and physical theories
4. The Decline of Mechanism in Modern Physics

Կրկնում եմ, Արամ դ'Ապրոն դեռ սպասում է իր հետազոտողին:

\* \* \*

1913թ. սեպտեմբերին Վենետիկի Սբ.Ղազար կղզում մեծ հանդիսավորությամբ նշվեց հայ գրքի տպագրության 1400-ամյակը: Այդ կապակցությամբ Արամ դ'Ապրոն և մարկիզուհի Ինջի Ջինոնին այցելեցին Մխիթարյան միաբաններին ու կատարեցին խոշորագույն անվիրատվություն, ինչի շնորհիվ իտալացի նկարիչներից մեկը նկարագարդեց վանքի մատենադարանի ձեռագրերի բաժնի առաստաղը: Կենտրոնական բոլորակում Մեսրոպ Մաշտոցը՝ ծունր դրած Հայաստանի առջև, ներկայացնում էր նորագյուտ այբուբենը, իսկ Հայաստանը խորհրդանշող թագուհին՝ կողքին ունենալով կրոնն ու գիտությունը, ոտնակոխ էր անում տգիտությունը մարմնավորող խեչափառը: Սրահի պատերի վրայի նկարները մատնացույց էին անում դարաններում ամփոփված գրչագիրների նյութը...

ԻՇԽԱՆ ԱՍԼԱՆ Դ՛ ԱՊՐՈՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.  
ԵՐՋԱՆԻԿ ՆԿԱՐԻՉԸ ԵՎ ԴԺԲԱԽՏ ՀԱՅՐԸ



Ասլան դ'Ապրո Բագրատունի,  
ինքնանկար

1848թ. օգոստոսին Ստեփանն ու Էմման ճամփորդում էին ու գտնվում էին Սիրա\* կղզում: Տիկինը հղիության վերջին շրջանում էր և օգոստոսի 30-ին հենց կղզում ծննդաբերեց երկրորդ արու զավակին, ու Ստեփանը՝ ի հիշատակ իր մի քանի նախապապերի, երեխային անվանակոչեց Ասլան: Մանկանը մկրտեցին Չմյունիայի հայոց եկեղեցում:

Ասլանը չորս տարեկան էր, երբ հայրը վախճանվեց, և Էմմա Սփարքսը երեխաների՝ Տիգրանի, Ասլանի, Գյուլհանումի ու Երանուհու հետ Չմյունիայից տեղափոխվեց Իտալիա ու հաստատվեց Նեապոլում՝ իրեն նվիրաբերելով երեխաների կրթությանն ու դաստիարակությանը:

Ասլանը դեռ մանկուց հակում դրսևորեց նկարչության հանդեպ և նախնական կրթություն ստանալուց հետո ընդունվեց Նեապոլի գեղարվեստի ակադեմիա, ուր դասավանդում էին Մանչինելին, Ռոտոն և ուր աշակերտեց նշանավոր Մորելլին: Ակադեմիան ավարտեց փայլուն, բարձր առաջադիմությամբ՝ պարգևատրվելով շքանշանով:

1870թ. 22-ամյա երիտասարդը գնեց Նեապոլի մոտ՝ Պոսիլիպո արվարձանում գտնվող մի ապարանք, այն վերակառուցեց նեոռոմանտիզմի ոճով և դարձրեց իր մշտական տունն ու արվեստանոցը:

Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի քննարկման ժամանակ, իտալական հանրությանը խնդիրը ներկայացնելու նպատակով երիտասարդ Ասլանը անգլերենից իտալերենի թարգմանեց ու ձրի բաժանեց կանոնիկոս Մալքոլմ Գոլի «Անգլիայի պարտականությունը Հայաստանի հանդեպ» գիրքը:

1875-ից Ասլան դ'Ապրոն սկսեց ակտիվորեն զբաղվել հասարակական գործունեությամբ՝ անդամակցեց Նեապոլի առողջապահական, բարեգործական, կրթական հանձնաժողովների, 1878-ից տնտեսական պաշտոններ զբաղեցրեց քաղաքապետարանի խորհրդում ու դարձավ Պոսիլիպոյի փոխքաղաքապետ:

Նույն 1878-ին Պոսիլիպոյում բացվեց Մարգարիտա թագուհու անվան մանկանոցը, և դ'Ապրոն դարձավ ոչ միայն դրա հիմնադիրներից, այլև ամենաեռանդուն բարերարներից մեկը. նախ տրամադրեց իր կտավների ու ջրաներկ աշխատանքների վաճառքից ստացված 50 հազար լիրա շահույթը, ապա տարիներ շարունակ մշտապես՝ եկամտի կեսը:

1879-ից դարձավ Նեապոլի գեղարվեստի ակադեմիայի պատվավոր դասախոս, Գեղարվեստի զարգացման ընկերության խորհրդական, Կարմիր խաչի անդամ, Նեապոլի քաղաքային բանկի վարչության պատվավոր անդամ, թագավորի հրովարտակով մշանակվեց Նեապոլի արվեստի և արդյունաբերության թանգարանի տնօրեն:

Երբ 1882թ. Մարգարիտա թագուհու անվան մանկանոցը փակվեց, մեկ տարի անց իշխան դ'Ապրոն իր միջոցներով այն վերաբացեց ու վերածեց որբանոցի՝ լքյալ պատանիների ապաստանի: Բանն այն է, որ 1884թ. մոլեզմած ժանտախտի պատճառով Նեապոլում տնանկ ու թափառաշրջիկ էին դարձել բազմաթիվ ծնողակորույս երեխաներ: Դ'Ապրոն 14-18 տարեկան պատանիներին ժողովում էր, բերում որբանոց, ուր նրանց սովորեցնում էին տար-

բեր արհեստներ, որից հետո իշխանը աշխատանքի էր տեղավորում զանազան հաստատություններում: Այսպես շուրջ 500 ծնողագուրկ երեխաների դարձրեց գուլպայագործ, կոշկակար, ատաղձագործ և այլն: Ուշագրավ է, որ անձնական հեղինակության շնորհիվ այս գործի մեջ ներգրավեց նեապոլցի բազմաթիվ այլ ազնվականների, որոնք ցուցաբերում էին ֆինանսական, նյութական, կազմակերպչական աջակցություն:

1884թ. դ'Ապրոն ամուսնացավ ազնվականական ընտանիքից սերող, մարկիզ Մանուելե դի Վիլլա Մարինայի ու Պասլա Ռեյնոյի դուստր Մելանիայի հետ, և 1886թ. հոկտեմբերի 16-ին ծնվեց նրանց արու զավակը: Մանկանը մկրտելու ցանկություն հայտնեց անձամբ Մարգարիտա թագուհին, և հենց նրա իսկ կամոք երեխային անվանեցին Ումբերտո:

Հարկ է նշել, որ հանդիսանալով իտալական բարձրաշխարհիկ հասարակության ներկայացուցիչ, այլ մշակույթի, այլ քաղաքակրթական արժեքների կրող՝ իշխան Ասլան դ'Ապրոն երբեք չհրաժարվեց ազգային ինքնությունից և ուժերի ներածին չափ իր նպաստը բերեց հայությանը: 1880-1888թթ. ազգային գործերով պարբերաբար մեկնում էր Փարիզ ու Լոնդոն, Հայկական հարցի շուրջ եռանդուն ցանակագրություն էր վարում Ներսես պատրիարքի, Ջեյմս Բրայսի, Մինաս Չերազի, Ժան Բրուսալիի, Հայրենասիրական ընկերության քարտուղար Մ. Սըվազլիի, Մխիթարյան միաբան Սուքիաս Պարոնյանի հետ: Վեստմինստրի դքսի նախագահությամբ, անգլիացի հոգևորականների, պառլամենտի անդամների, լրագրերի հրատարակիչների անդամակցությամբ ստեղծել էր հայկական վարժարանների աջակցության հանձնախումբ: Հայոց կրթական գործին նպաստելու համար տիկին Մահակ Ապրոյի (ծնյալ Մանուելա Գաֆաֆյան) միջոցով ամեն տարի ֆինանսապես օժանդակում էր Կ.Պոլսո «Ազգանվեր հայուհյաց դպրոցասեր տիկնանց միությանը» և «Միացյալ ընկերությանը»: Խոշոր գումարներ էր հայթայթում նաև իտալական կառավարությունից, Հռոմի Լևոն XIII պապից և «Կիլիկյան», «Արարատ-

յան», «Արևելյան», «Դպրոցասիրաց» ընկերությունների միջոցով տրամադրում դպրոցներին: Պատահական չէ, որ Վիեննայում բնակվող խոշոր վաճառական, իր անվամբ կրթական հիմնադրամ ստեղծած Աստվածատուր Ջունդը նրան գրում էր. «Դու առանձին այնչափ ըրիր, որչափ մենք անկարող եղանք»:

1895-1896թթ. Համիդյան ջարդերի ժամանակ նա մի ծրագիր ներկայացրեց Իտալիայի խորհրդարանին, որով առաջարկում էր երկրագործ հայերին տեղափոխել երկրի հարավային շրջաններ, ուր նրանք կկարողանային ապրել ու բերրի դարձնել անմշակ հողերը:

1904թ. նոյեմբերի 15-ին իշխանը Կահիրեում մասնակցեց ավագ եղբոր՝ Տիգրան փաշայի հուղարկավորությանը: Առիթն, անշուշտ, տխուր էր, բայց նա չանսաց իր պարտականությունները. Ազգային առաջնորդարանի նոր շենքի կառուցման համար եղբոր կտակած 50 հազար ֆրանկին ավելացրեց 2000 եգիպտական ֆունտ ստերլինգ, 50 ֆունտ նվիրաբերեց Կահիրեի «Աղքատախնամ հանձնախմբին», 40 ֆունտ՝ Ջեյթունի «Բարեսիրաց միությանը», 25 ֆունտ՝ Կահիրեի «Որբախնամ հանձնաժողովին» և 10 ֆունտ՝ հայկական փողային նվագախմբին:

Հուղարկավորությանը հաջորդող օրերին էր, որ շարունակեց արմատների փնտրտուքը և Ազգային առաջնորդարանի պահոցներում հայտնաբերեց իր տոհմի ազնվականական ծագման վերաբերյալ Մեսրոպ եպիսկոպոսի կազմած 1804թ. վավերագիրը:

Այժմ անդրադառնանք նրա միակ զավակին:

Նախնական կրթություն ստանալուց ու լիցեյն ավարտելուց հետո իշխան Ումբերտո դ'Ապրոն ընդունվեց Նեապոլի համալսարանի իրավագիտության ֆակուլտետ: Պետք է ասել, որ նա իր լրջմտությամբ ճիշտ հակապատկերն էր բարձրաշխարհիկ ազնվականական շրջանակների տարեկիցների. մինչ վերջիններս հարավիտալական ավյունով անհոգ ու զվարթ կյանք էին վարում՝ Ումբերտոն գլխովին նվիրաբերվեց ուսմանը: Բարձր առաջադիմությամբ ավարտեց համալսարանը՝ ստանալով օրենսգիտության ու

միջազգային իրավունքի մագիստրոսի կոչում, ինչպես նաև յուրացրեց ֆրանսերենը, անգլերենը, գերմաներենը, ռուսերենը, հին ու նոր հունարենը, լատիներենը: Նրան սպասվում էր փայլուն ապագա, բայց սկսվեց Առաջին աշխարհամարտը, և կատարվեց անսպասելին՝ Ումբերտոն վճռեց կամավոր մեկնել ռազմաճակատ:



Ումբերտո դ'Ապրոն  
Բագրատունի



Ումբերտո դ'Ապրոն  
պատերազմի ժամանակ

Այս քայլը կարիք ունի պարզաբանման: Ընդունված կարգի համաձայն, ազնվականների զավակը, իշխանը, անշուշտ, հեշտությամբ կարող էր խուսափել զինվորական ծառայությունից, և, ի դեպ, ոչ ոք նրան չէր էլ գորակոչել: Բայց այն դաստիարակությունը, որ ստացել էր, հոր ակտիվ հասարակական գործունեությունը Ումբերտոյին ներարկել էին պատասխանատվության զգացում ու հայրենասիրություն՝ առ Իտալիան: Սա էր պատճառը, որ ձևավորված աշխարհայացքով, կայուն մտածելակերպով երիտասարդը 1915թ. մայիսին մեկնեց ռազմաճակատ՝ որպես հրետանու սպա:

Իշխան Ումբերտոյի մարտական ուղին գրանցվել է բազմաթիվ զինվորական զեկուցագրերում, ըստ որոնց եղել է քաջ, խիզախ, հմուտ հրամանատար: Խոսում է հետևյալ փաստը. երբ 1917թ. վիրավորվեց՝ հիվանդանոցում ապաքինվելուց հետո իրավունք ուներ 10-օրյա արձակուրդ ստանալ և մեկնել տուն, բայց հրաժարվեց թողնել իր զինվորներին ու ընկերներին:

Եվ այստեղ տեղի ունեցավ խորհրդանշական մի իրադարձություն: Գրեթե նույն ժամանակ, երբ Ումբերտոն հրաժարվեց արձակուրդ մեկնել, Մխիթարյան միաբան Քերոբե Չրաքյանը Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի մի խումբ սաների այցելության տարավ Ասլան դ' Ապրոյին: Նա գրում է. «Երբ 1917-ի ամառը Մուրատ-Ռաֆայելյան վարժարանին աշակերտները Նոչերիայի իր ամառանոցը այցելութան տարած էի, Ապրոյի երակներուն մէջ կրկին արժարժեցաւ նոյն օրը հայկական արիւնը. ամէն կողմ անձամբ առաջնորդելէ ու հիւրասիրելէ վերջ իր բնական զուարթ կատակաբանութիւններով, ուզեց նոյն օրուան յիշատակը յաւերժացնել նուիրելով Ս.Ղազարու թանգարանին իր «Մառնոյի հովիտը» իտլանկարը, որ ուրիշ Հայ հեղինակներու նուիրած նկարներու քով զարդն է պատկերներու հայկական բաժնին»<sup>1</sup>:

Ումբերտո դ' Ապրոն պատերազմի զոհ դարձավ, բայց մարտահաշտում չընկավ. Եվրոպայում մոլեզնող իսպանական գրիպը, որ խլեց 50 մլն մարդու կյանք, չխնայեց նաև երիտասարդ իշխանին: 1918թ. մարտի 27-ին, կանխազգալով իր մահը, Սան Մարտինո դի Լուպարի ավանում տեղակայված զինվորական հոսպիտալի մահճակալին պատկած 22-ամյա Ումբերտո դ' Ապրո Բագրատունին ասաց. «Մա իմ վերջին հիվանդությունն է» և ընդմիշտ փակեց աչքերը:

Մարտական ընկեր, սպա Անֆոզի Դոազոն այսպիսի դամբանական կարդաց. «Երեկ ալ, ինչպէս ամէն օր, մեզմէ երեք հոգի զքեզ գտնելու եկան: Առողջութիւնդ լսելու վստահութեամբ եկած՝ կուրծքերնուն մէջ ծածկուած ամենատխտոր պարբերութեամբ մը դարձան: Մեզի իմացուցին զայն որ իրենց կը սպասեինք. Ապրոն մեռա՞ծ է:

Ամէնքն ալ բնական ազդմամբ քու վայրդ գտնելու դիմեցին, պարա՛պ, շա՛տ պարապ: Ես ալ պէտք էի, ուրիշներուն պէս աչքերուս բիրբերը սևեռել դէպ ի անանց Յաիտենականութիւնը, և սիրտս կարծես այլևս չէր բաբախեր:

<sup>1</sup> Ք. Չրաքեան, նշվ. աշխ., էջ 17:

Ապրոն մեռա՞ծ է, վատախտ հիւանդութենէ մը բռնուած մեռած է արդեօք: Անկարելի կը թուի ինձ:

Երբ Հայրենիքը 1915ի պայծառ Մայիսին մէջ հաւաքեց իր լաւագոյն Որդիները, նա, որ չէր կրնար պակսիլ, մեզի հետ եկաւ, Իտալական ամենագեղեցիկ և ամենահզոր երիտասարդութեան հետ, որ կը յառաջէր նուագելով ամենաքաղցր Մօր Հայրենիքի երգերը, կը յառաջէր գերագոյն զաղափարներու ընդառաջ, Քաղաքակրթութեան դատին համար, տևտոնական բարբարոսութիւններուն դէմ, տակաւին ընկճեալ Եղբայրներուն փրկութեան համար:

Քարսոյի, Բագուպիոյի, Բաինզիցցայի վրայ տեսանք զքեզ, անցեալ նոյեմբերի ողբերգական օրերուն մէջ, յորում մեզմէ իւրաքանչիւրը երկաթեայ կամք մըն էր, գերմարդկային ոյժ մը:

Թշնամին՝ Հայրենիքի ուրիշ հող մը կոխտտելու համար, պէտք էր մեր ցուրտ դիակներուն վրայէն անցնէր, և յետոյ Յունիսի մեր զօրաւոր և ամրապինդ դիմադրութիւնը ջախջախել: Եւ յետոյ միշտ պատերազմիկներուն մէջ գտնուեցար բովանդակ հաւատքովդ, ապստամբութեան և անդիմադրելի յաղթութեան վերջին օրերուն:

Յորդահեղեղ Բիաւէի վրայ նետուած առաջին թեթև կամուրջին վրայէն անցնելով, կրակի փոթորկի մը տակ, ամէն տեղ կը հասնէր ուր որ իտալացի զինուոր մը կար, լուսաւորելու համար զայն իր արևադէմ ճակտովը: Արշավ մը, ցնորք մը:

Ոչ մէկ թշնամի ոյժ՝ չպիտի կարենար մեզի դիմադրել: Տարիէ մը ի վեր մեզի սպասող, զմեզ բարձրաձայն կոչող եղբայրներն ազատելով սահմանագլխին վրայ հասանք, յետոյ Դրէնոյ, Դրիէտդ, և ուրիշ վայրեր:

Իսկ դու միշտ մեզի հետ եղար: Ահա թէ ինչու համար չեմ կրնար մտածել թէ Յաղթութենէն քիչ վերջ, յետ բոլոր կռուին մասնակցելու բովանդակ իր զոհողութիւններով, իր բոլոր վտանգներով և ամէն ժամանակ պատրաստ եղած պատահարներով, Դու մեռած ըլլաս ո՞վ Տ՝ Ապրոյ փոխանցիկ հիւանդութենէ մը:

Միսալ է, Դու՝ կռուելով ինկար, մահացու վիրաւորուելով թշնամիէն՝ Իտալական էն փառահեղ օրուան մէջ:

Վատաբախտ Մայրոյ իր սրբազան ձեռքերն ընկղմեց վերքերուդ արիւնին մէջ, որ յետոյ օրհասի ժամուն կուրծքին վրայ միաորեց, թողլով քեզի տրտմաթախիծ ցաւով խաչ մը, միւս խաչին վրայ ան ևս ցաւով մը սիրաթաթախ և գթայեղց, որուն հանդէպ հազարաւոր վշտագին եղբայրներ ձեռքերնին տարածեցին օրհնելու համար:

Երկինք կը բարձրանան այժմ այն ձեռքերը քու յաւիտենական հանգիստդ խնդրելու համար և սակաւ մը ամոքում ծնողացոյ ցաւերուն: Թող մխիթարութիւն անոնք գիտնալով թէ այսպէս սիրուած ես, թէ գերեզման կ'իջնես մեր յաւերժական յիշատակի բոլոր ծաղիկներովը:

Խաղաղություն»<sup>2</sup>:

Իշխանագուն Ումբերտոյի ողբալի մահվան կապակցությամբ Նեապոլի նահանգապետ Լաբրիոլան 1919 թ. հունվարի 20-ին այսպիսի նամակ հղեց Ասլան դ'Ապրոյին. «Մեծապայծառ իշխան տ' Ապրոյ Բագրատունի: Նահանգային ժողովը, որ պանծանօք կը յիշէ իր քաղաքացիները, որոնք անմահ էջեր գրեցին ներկայ պատերազմին մէջ, նորագոյն նստի մը մէջ յիշատակեց արժանապէս Ումպերթոյ տ' Ապրոյ Բագրատունի սպան, որ, կամաւոր մեկնելով, կռուեցավ ամենադժնդակ պատերազմներ, տալով յարատև ապացոյց դիցազնութեան, և մասնաւորապէս նշանաւոր հանդիսանալով Կրափփայի և Բիաւէի վրայ, և որ յետոյ հարկադրուեցաւ ընկճուիլ զինուորական հիւանդանոցի մը մէջ, զարնուած վայրագ ախտէն:

Քաղաքային երեսփոխանութիւնը կ'ուղղէ իր մխիթարութեան խօսքը հանգուցելոյն թախծագին հօրը, յարգալիր կը խոնարհի վշտակիր մօրը առջև, որ պատերազմի բոլոր տևողութեան ինքնուրացութեան ամենաազնուական օրինակ տուաւ, վիրաւոր և հիւանդ զինուորներուն օգնութիւն ու քաջալեր տալով, և կ'ուղղէ

<sup>2</sup> Ս. Տէր-Մովսէսեան, Իշխան Ումպերթոյ Տ'Ապրոյ Բագրատունի, «Բազմավէպ», 1919թ., էջ 114:

իրենց ըղձանքը՝ թէ այն ազնուական պատճառին մտածութիւնը՝ որու համար իրենց որդեակը կամաւորապէս նուիրեց իր կեանքը, ըլլայ մեղմացում իրենց անհուն վշտին:

Ամենայն մեծարանօք՝ ԼԱՊՐԻՈԼԱ»<sup>3</sup>:

Այս ողբերգությանը Ասլան դ' Ապրոն զարմանալիորեն արձագանքեց. կարծես պատասխանելով բոլոր ցավակցություններին, վշտակիր ուղերձներին՝ նա մի նամակ գրեց Իտալիայի պառլամենտի անդամ, մեծ հայասեր Լուիջի Լուցատիին, որտեղ... Հայոց խնդրին էր անդրադառնում. «Ձերոյ վստմութիւն: Հայ եմ ծագումով և իտալական քաղաքացի, և այդ սիրելի Հայրենիքին համար ու կ'ապրիմ, տուած կ'ըլլայի բազուկս՝ եթէ տարիները թոյլ տային ինձ:

Այդ բանը ըրավ իմ միակ որդին, փաստաբան Ումպերթոյ, որ պատերազմի սկզբին զինուորագրվեցաւ կամաւոր, սպայ հրետանիին. հաւատքով ու խանդով կատարեց իր պարտքը, և յետ ամենամեծ վտանգներ անցընելու, Բասուպիոյ վրայ, Քարսոյի վրայ, ի Բահնզիցցա, ի Կրափփա աւանդեց հոգին, դեռ քանի մ'օր կ'ընէ, պատերազմական հիւանդանոցի մը մէջ հիւանդութեամբ «հետևանք պատերազմի աղէտներուն»:

Լքուած հայր, որու ոչինչ կը մնայ յուսալ կեանքի մէջ, կ'ուղղուիմ Ձերոյ Վստմութեան՝ յայտնելու համար իմ ամենախորին երախտագիտութիւնը զոր արթնցուցած է ոգույս մէջ հիւանալի պաշտպանութիւնը զոր Դուք կատարեցիք ի նպաստ Հայոց, և ուղղել Ձեզի ուրիշ ո'չ նուազ եռանդագին խնդրուածք մը, այն է՝ որ ուզենաք շարունակել և՛ թեւարկել ամենամուկիական իրաւունքները Հայոց որոնց մէջէն կը համրուին այնքան հայրեր ու մայրեր, որոնք կրեցին բարբարոս հարստահարիչներու կատաղութենէն՝ ինձի վիճակուած ճակատագիրը, և չ'ունեցան Հայրենեաց համար եղած զոհին մխիթարութիւնն ու փառապսակը:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 115:

Չեմ տարակուսիր որ Ձերդ Վսեմութիւնը պիտի ընդունի սիրա-  
յօժար իմ շնորհակալութիւններս և աղաչանքս, և այդ վստահութե-  
ամբ կը հայտարարեմ զիս Ձերդ Վսեմութեան, ևն»<sup>4</sup>:

Միակ որդու կորուստը ծանր հարված հասցրեց Ասլան դ' Ապ-  
րոյին, զվարթ, կատակասեր, ճամփորդել սիրող մարդը դարձավ  
ինքամփոփ, հրաժարվեց հանրային հավաքներից ու փակվեց իր  
առանձնատանը՝ զբաղվելով բացառապես գեղանկարչությամբ:

Նրա կենսագրության մեջ երկու իրադարձությամբ հիշարժան  
դարձավ 1922 թվականը...

Ապրիլ-մայիս ամիսներին Նեապոլի Ազգային պալատում  
բացվեց նրա ստեղծագործությունների անհատական ցուցահան-  
դեսը: Յուցադրված էին «Հեսինգեն», «Ավոնի Ստրատֆորդը»,  
«Պոսիլիպոյի ծովը», «Ուշիո», «Գիլարնեյի լճակի մոտ» և այլ աշ-  
խատանքներ, որոնք արժանացան բազմաթիվ հիացական գնա-  
հատականների: Այսպես, Նեապոլի նահանգապետը գրեց. «Կը  
ճանչնայի ու կը գնահատի Ձեր լուսատու և կրթեալ միտքը, բայց  
մտքես իսկ չեր անցներ թե Դուք միանգամայն ստոյգ և մեծ արու-  
եստագէտ մ'ըլլաք: Ձեր նկարներուն ցուցադրութիւնը ամենախօ-  
սուն յայտնութիւններէն մին է իրապէս իտալական արուեստին»<sup>5</sup>:

Իսկ Նեապոլի քաղաքապետ Ա. Հերեմիզգան գրեց. «Մարդա-  
սիրական գործը՝ զոր դուք այնքան տարիներէ ի վեր կը կատարեք  
մեր քաղքին մէջ, որ պատիւն ունի ունենալու զՁեզ իր քաղաքացի-  
ներու դասին մէջ, հիմայ վերստին կը պայծառանայ նոր լուսով  
Ձեր վերջերս կատարած գործին միջոցաւ, որ ազնիւ խանդավա-  
ռութեամբ կը միացնէ արուեստը բարերարութեան:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 115-116:

<sup>5</sup> Կ. Ք., Բարերար արուեստագէտ մը, «Բազմավէպ», 1918թ., էջ 92:  
Կարող է հարց ծագել, թե 1918թ. «Բազմավէպում» ինչպես է գետնովել  
1922 թվականին վերաբերող նյութ: Բանն այն է, որ հրա-  
տարակութեան խմբագրությունը հողվածների կարոտ է եղել, և  
որպեսզի պարբերականությունը չխախտվի՝ 1922-ին լույս է ընծայվել  
1918թ. համարը:

Այն ցուցահանդէսը՝ որ իրեն ձգեց գիտակից հիացողներու  
խոտն բազմութիւն մը՝ ապացոյց է թէ Ձեր արուեստագէտի ու բա-  
րերարի կեանքը ինչպիսի բարձր զգացումներ ներշնչած է. և ես  
պարտք կը համարիմ այն բոլորին համար՝ զոր Դուք անսպառ  
հաւատքով կատարեցիք բարեգործական ունէ նպատակաւ, յայտ-  
նել Ձեզ իմ և քաղքիս Հոգաբարձութեան հաճութիւնն և գոհունա-  
կութիւնը, առիթ առնելով այս պարագայն՝ որ պսակը կը կազմէ կե-  
անքի մը, օրինակելի կերպով նուիրուած հանրային բարւոյն, ար-  
տայայտութեամբ արուեստի մը՝ որ միանգամայն բարձր է և զգուշ-  
ացող դիրքաւ շռայլուած դրուատիքէ»<sup>6</sup>:

Հաջորդ իրադարձությունը զուտ անձնական բնույթ էր կրում:  
Նրա որդու շիրիմը գտնվում էր Սան Մարտինո դի Լուպարի գյու-  
ղակի գերեզմանոցի մատուռի գետնահարկ նկուղում, և Ասլան  
դ'Ապրոն որոշեց Ումբերտոյի աճյունը տեղափոխել Նեապոլ:

Հուլիսի 25-ի առավոտյան խաղաղ գյուղակը կերպարանա-  
փոխվեց անձանոթ ու ներկայանալի հյուրերի այցելությունից:  
Ժամանել էին իշխան և իշխանուհի դ'Ապրոները, Վենետիկի  
Մխիթարյան հայրերը, Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի փո-  
ղային նվազախումբն ու սաները, այլ անձինք:

Ումբերտո դ'Ապրոյի դագաղը ծածկվեց Իտալիայի պետական  
դրոշով ու երեք ծաղկեպսակով՝ Մարգարիտա թագուհու, Մխի-  
թարյան միաբանության ու Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի  
կողմից: Դիակառքի առջևից ընթանում էին Շոպենի մահվան քայ-  
լերգը տարածող վարժարանի նվազախումբը, Սբ. Ղազարի զույգ-  
զույգ աշակերտները՝ վանական տարագով, Դպրաց դասը՝ եկեղե-  
ցական շապիկներով, քահանայից խումբը, իսկ ետևից՝ վշտահար  
ծնողները, Մխիթարյան վարդապետները և պաշտոնական այլ  
անձինք:

Թափորը կանգ առավ Սան Մարտինոյի եկեղեցու առջև: Դա-  
գաղը դրվեց խորանի դիմաց, իսկ Դպրաց դասը երգեց հայկական

<sup>6</sup> Նույն տեղում:

շարականներ: Հոգեհանգստի պաշտոն կատարեց Ասլան դ'Ապրոյի մտերիմ, հայր Քերոբէ Չրաքեանը, իսկ դամբանական իտալերեն արտասանեց հայր Աետոն Տայեանը, ով մասնավորապէս ասաց. «Կտրիճ պարմանին՝ ծնունդ անվեհեր Հայ Բագրատունեան իշխաններու և Մարքիզ Վիլլամարինաներու՝ համաշխարհային պատերազմի նախօրեակէն զգաց զինուորելու սրբազան խանդ մը, պաշտպանելու Հայութեան և Իտալիոյ իրատունքներն ու պատիւը: Անոր հայրը Արսլան տ'Ապրոյ Բագրատունի դիւանագիտութեան մէջ մեծ համբաւ ստացած էր, և ազնուագարմ որդին ուզեց վեհանձնօրէն ընծայել իր արիւնը այն ծայրագոյն վտանգին մէջ՝ ընտանեաց աւանդական արժանիքէն ոչինչ պակսեցնելու համար:

Իր բոլորանուէր ողջակէզը, բարեպաշտ ու վեհանձն զոհը տեղի ունեցաւ Վիտորիոյ Վենետոյի մէջ քաղցր ու ժպտուն յոյսերով՝ թէ Ապրոյ Բագրատունեաց հին հայրենիքն ալ պիտի կտրէ գերութեան շղթաները և պիտի ստանայ իր ազատութիւնը, իր անկախութիւնը»<sup>7</sup>:


Հանդիսավոր արարողությունից հետո դագաղը դրեցին հատուկ մահավազոն (Camera ardente), և գնացքը շարժվեց: Երկու օր անց՝ 1922թ. հուլիսի 27-ին, Ումբերտո դ'Ապրոյի աճյունը հավերժական հանգիստ գտավ Նեապոլի ընտանեկան դամբանում: Եվ պարզվեց, որ ծնողները որդու ամբողջ ունեցվածքը՝ 100 հազար լիրա արժողությամբ, նվիրաբերել են Մարգարիտա թագուհու անվան մանկատանը...

Դ'Ապրոն առանձնակի ջերմ հարաբերություններ էր պահպանում Վենետիկի միսիթարյանների հետ: Մի քանի կտավներից բացի, նա 1923թ. Սբ.Ղազարի վանքի մատենադարանին նվիրեց Ապրոյան տոհմի սեփական Աստվածաշունչը՝ ձեռագիր մի մատյան, որ 1647թ. Կ.Պոլսում գրել ու բազմաթիվ մանրանկարներով զարդարել էր Հակոբ Լվովցի սարկավազը: Իսկ վաղամեռիկ Ումբերտո

<sup>7</sup> Խմբ., Բագրատունի Ու. տ'Ապրոյ իշխանին ոսկերաց փոխադրութիւնը, «Բազմավէպ», 1922թ., էջ 346-347:

զավակի հիշատակին ի հավերժացում՝ Մուրատ-Ռաֆայելյան վարժարանին տրամադրեց 100 հազար լիրա դրամագլուխ՝ սաներ պահելու համար:

Ահա այսպիսին էր իտալական մշակույթի արդյունք, երջանիկ նկարիչ ու դժբախտ հայր իշխան Ասլան դ'Ապրո Բագրատունին: Նա վախճանվեց 1928թ. դեկտեմբերի 1-ին՝ 80-ամյա հասակում և հողին հանձնվեց Նեապոլի ընտանեկան դամբանում, Ումբերտոյի կողքին:



Ոսկեհյուս խաչ, Ջմյուռնիա, XVIIIդ. կեսեր



Պյոտր I-ի գրույցը Հովանդիպյում:  
Անհայտ հեղինակ, 1690-ական թթ.



Ասլան դ'Ապրո Բագրատունու ստեղծագործություններից

ՎԿԱՅԱԳՐԵՐ

**ՉՄՅՈՒՆԵՒԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԳ  
ՄԱՐՏԻՐՈՍ ԵՊԻՄԿՈՊՈՍԻՒՊՐՈՅԱՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1804Թ. ԱՊՐԻԼԻ  
20-Ի ՎԿԱՅԱԳԻՐԸ<sup>1</sup>**

Յայտ առնենք զի նախնիքն այսր տնայի յես փախստեան յերեսաց աւերածոյ Անի քաղաքին՝ անընդհատ շարունակութեամբ իջեալ ի սերունդս որոնց՝ զան ժամանէն մինչեւ ի նախահաւն սոցա ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, այր ճոխ եւ փառաւոր, որ նոյնպէս զհայրենին զնալով ճանապարհ՝ բասսազեղուն ստացուածով պերճացեալ՝ ոչ սակաւ նպաստամասոյց ամենեցուն լինէր: Սոյն սա ծնանի ի Կարին զերկուս որոյս, զորս վարժեալ ի հայրենի կրթութիւնս՝ զմահեստի ԱԼՓԻԱՐՆ ստեմ եւ զԱՍԼԱՆ, ալեւորեալ լի աւուրք կնիք զկեանս իւր:

Յես սորա յաջորդէ ի սանուէրութիւն անդրանիկն իւր մահեստի ԱԼՓԻԱՐ. եւ այն ինչ որն գործէ ի բարիոք սնորէնութիւն կառավարութեան, յառնէ խոռովութիւն ի մէջ երկուց ազգաց Օսմանցոց եւ Պարսից, որ չգի գմիջոցս իբր ամաց յիսնից. ի բազաւորել ի վերայ Հազարու սուլդան Սիւլէյմանայ, եւ ի վերայ Պարսիցն շահ Գահմասայ առաջնոյ յամի Տեառն 1521: Վասն որոյ թողեալ մահեստի Ալիիար զկողմանս զայնոսիկ՝ առնու զեղբայրն իւր զԱւլան եւ զամենայն ընտանիս իւր եւ զնորս՝ հանդերձ ծա-

<sup>1</sup> Տեքստը քաղված է Ն. Ալիանեանի «Երեսիա Չելեպի Բէօմիւրճեան. կեանքն եւ գրական գործունէութիւնը» գրքից (Վիեննա, 1933թ., էջ 239-263):

ռայիւք եւ աղախնոք, աճապարէ ի կողմանս արեւմտից, զտեղի բնակութեան առեալ ի սահմանս Մաճառաց ի Պէրդաս, ու սկսանի զվաճառակաւորութիւն, եւ համբաւ բազում ստանայ յայնոսիկ կողմանս: Ծնանին ամա երկուստեք ՄՈՒՐԱՏԻՄԱՆ եւ ՅՈՎՀԱՆՆԷՍ. եւ երկու եւս դստերք ԿԻԼԶԱՏԷ եւ ՄԱՐԻԱՄ: Եւ եղբոր սորա եւս լինին երկու որոյիք ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եւ ԵԱՂՈՒՊ. որք սերեալ ցերկորոյ ծնունդս՝ լռեն. նմանապէս եւ դուստր մահեստի Ալիիարայ ժամանեալ յերկորոյ ծնունդս՝ դադարէ: Իսկ ինքն մահեստի Ալիիար հանգուցեալ ի Քրիստոս՝ քաղի ի Պէրդաս:

Չկնի այսր պայազատէ զսանուէրութիւն անդրանիկն իւր մահեստի ՄՈՒՐԱՏԻՄԱՆ. եւ առաւել ընդարշակի ի բարօրութիւն ընչաւեսութեան. որ եւ յես բազմաց բարեպաշտութեանց ի ծերութեան իւրում զնացեալ յոխս ի սուրբ Երուսաղէմ յամի Տեառն 1634, յամս ծոպազակին. եւ դարձեալ ի Փիլիպպոսպոլիս, կնիք անդ զկեանս իւր: Լինին ամա որոյիք երկու՝ ԱԲՐԱՀԱՄ, որ եւ ԱՊՐՕ, եւ ՊԵՏՐՈՍ, եւ երեք դստերք, ԱՆՆԱ, ԹԱԳՈՒՀԻ եւ ՄԱՐԻԱՄ. յորոց միայն Աբրահամ յարուցանէ ժառանգ, զի այլ ի ծաղկահասակ սիւ փոխին յաստեաց:

ԱԲՐԱՀԱՄ այր լայնախորհուրդ ժամանեալ յաստեան սանուէրական, քան զիւր նախնիսն առաւել եւս հետամուտ լինի բարի համբաւոյ. եւ ըստ նախնականն կրթութեան եւ մտացն ստատութեան եւ եւս բարգաւաճի որ ըստ օրէ, սիրելի լեալ յաչս ամենեցուն, եւ մանաւանդ Հիսուէին հոշակաւոր փաշային, որ զօրագլուխ էր զօրացն պատե-

րազմականաց ընդ Կրեւացիս. եւս եւ յաշս Քէօփրիւլի օղլու մեծահամբաւ եպարֆուսին եւ ամենայն աւագանոյն դրան արֆունի. զորոյ եւ զանուն իսկ փոխեալ Քէօփրիւլի օղլուն՝ հրամայէ Ապրօ շայնել յեւ սյնորիկ, որ կոչումն կայ մնայ ցայսօր ժամանակի յազգս նորս:

Սա յորժամ ի Կրիսէս եր ընդ բանակին Օսմանցոց՝ արֆունի վաճառական գոլով Հիւսէին փաշային, յառնուլն ճոցս զկղզին ճարտարաբան վիճաբանութեամբ առնու զեկեղեցի մի վասն Հայոց, զոր վասն զի ի ոմբացն քնդանօթից ֆայֆայեալ էր, իւրով իսկ ինչիւմք նորոգէ, պատրաստեալ եւ զամենայն զարդս նորս:

Եւ վասն զի բազում նպաստաւորութիւն արարեալ էր բանակին եւ հասարակութիւն յիրս արֆունի ըստ ամենայնի, զգօրաւոր իսպրիշէրիֆ մի շնորհէ նմա սուլթան Իպրահիմն որպէս զի յամենայնի ազատ լիցի եւ համարչակ՝ եւս եւ ի մաֆիցն անգամ յամենայն տեղիս իշխանութեան իւրոյ:

Շինէ սա եւ զեկեղեցին արքոյն Նիկողայոսի ի Կոստանդնուպօլիս ընչիւք իւրով եւ զմի եւս ի Սիլիւրի, եւ զմի եւս ի Մահալլճ. եւ ի գալ գերեացն Կամենիցայոյ ի Փիլիպպուպօլիս՝ շինէ անդ եւ զեկեղեցի մի, որ ամփոփեալ կայ մարմին հօր իւրոյ մահտաի Մուրաշխանի:

Ծնանին սմա երեք որդիք Մագուն, Մասթնու եւ Մուրաշխան եւ դուստր մի Սառայ, յորոց Մասթնուն սերէ ի ծնունդս մինչեւ ցայսօր:

Այլ նա ինքն Աբրահամ որ եւ Ապրօ, իբրեւ տեսանէ քէ չկայ անդորրութիւն ի կողմանս Պէլրդասու, առնու զիւրսն ամենայն եւ չուէ գայ ի Կոստանդնուպօլիս յամի Տեառն 1661. եւ յեւ բազում ազգաշահ գործոց՝ լնու զընթացս կե-

նաց իւրոց յԱնդրիանուպօլիս, որ լինէր յայնժամ ընդ արֆունեացն օսմանեան:

Առ կենդանութեամբ Հօր իւրոյ ՄԱՏԹԷՈՍԵ ելեալ ի Կոստանդնուպօլիս գայ ի Չմիւռին սաս յամի 1668. որ յեւ սամի միոյ սկսանի շինել տուն. զոր յեւ պատշաճ յօրինուածով կատարման լեալ սաստիկ գեւեցաւոր՝ սապալէ ի հիմանց եւ ընդ փրածով ճմլին չորեքին մանկունքն եւ այլն, ազատելով միայն ամուսնոյն իւրոյ ի պարտէզ: Այլ յեւոյ պարգեւէ նմա Աստուած եւ դարչեալ չորս զաւակս՝ զԱԲՐԱՎԱՄ, զՊԵՏՐՈՍ, զՍՏԵՓԱՆՆՈՍ եւ զԿԻԻԼՀԱՆ: Եւ ինքն դարչեալ մեծանուն վաճառականութեամբ եւ իշխանաւոր պատնով ընդունի եւ ի Լուդովիկոս ԺԳ. արքայէ Գաղղիացոց քուրթ ազնութեան եւ հովանաւորութեան, 1687: Որում ժամանեալ էլք հասարակաց կենաց մարդկան՝ հանգչի ի Քրիստոս, քաղեալ ի մէջ սուրբ Ստեփաննոս եկեղեցոյ Չմիւռնոյս:

Որդիք սորս ԱԲՐԱՎԱՄ, ՊԵՏՐՈՍ եւ ՍՏԵՓԱՆՆՈՍ ընդարչակեն զվաճառականութիւնն մինչեւ ի Հնդիկս եւ ի Պարսս եւ յԵւրոպայ. եւ բազմօք ճոխանան. որոց տեալ լինի եւ հրովարտակ ի յալիսեանական յիշատակաց արժանի ի Պեճրու կայսերէ Ռուսաց յամի Տեառն 1717, որ կայ այժմ ի շեռս սոցա կնքեալ արֆունի մեծ կնքով. որ զի եւ Պեճրուն եր նախկին քարզման Անգլիացոց:

Արդ ծնանին ԱԲՐԱՎԱՄՈՒ չորք ուսերք ՄԱՏԹԷՈՍ, ՌԱՓԱՅԷԼ, ՍԵԹ եւ ՅՈՎՀԱՆՆԷՍ. եւ երկու դուսերք ԳԱՅԻԱՆԷ եւ ԹԱԳՈՒՀԻ, որք ոչ աճին ի սերունդս:

Ծնանին եւ ՊԵՏՐՈՍԻ ուստի չորք ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, ԳԱԼՈՒՍՏ, ԱՌԱՔԵԼ եւ ՄԱՐԳԱՐ. եւ դստի երկու՝ ՄԱՐԱՅ եւ ՄԱՐԹԱՅ. յորոց Գալուս եւ Մարգար կուսակրոն զկեսանս իրեանց վճարեալ՝ քողուն յիշասակ զդպրասունն հոգեւոր մանկամբ:

Ծնանին նաեւ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ երեք ուստի ԲԱՐԴՈՂՈՎՄԷՆՈՍ, ՅԱԿՈՎԲ եւ ՅԱՐՈՒԹԻԻՆ. եւ երկու դստի ՍՐԲՈՒՀԻ եւ ԲՐԱԲՈՆ. որք ոչ սերեն ի ծնունդս. յորոց Բարդողովէնսն կայ ցարդ կենդանի: Այլ սոքա եւս լցեալ զկեսանս իրեանց՝ փոխին ի Քրիստոս. Աքրահամ ի Կ.Պոլիսն, եւ Պետրոսն եւ Ստեփաննոսն սաս, քաղերով Պետրոս ի հայրենի շիրմնն ի միջի եկեղեցոյն սրբոյ Ստեփաննոսի. եւ որդի սորա Գալուս ի սուրբ Լուսաւորչին:

Որդիք Պետրոսի ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եւ ԱՌԱՔԵԼ ըստ հայրենի ճանապարհին ունին ընդ վաճառականութեան եւ զքարգնանութիւն. առաջինն՝ զՀոլլանդեայցն զնախկին քարգնանութիւն, եւ երկրորդն՝ զԱնգլիացոց. որ եւ Աստուածասուրն զազգասիրութեան հանդէս զգեցեալ՝ բազմաց բարեկարգութեանց առիթ լինի եւ պատճառ. եւ երկոքին իսկ գովանի ընծայեցին զանչիւս յոյով բարեսիրութեամբ եւ փառաւորեցան յամենայնի իշխանապետական փառոք յազգս մեր:

Եղեն ԱՍՏՈՒԱԾԱՏՐՈՅ ինն որդիք. ԱԼՓԻԱՐ, ՄԱՐԳԱՐ, ՄԱՏԹԷՆՈՍ, ՊԵՏՐՈՍ. դստեալ՝ ԱԼՓԻԱՐ, ՅԱԿՈՎԲ. դստեալ՝ ՊԵՏՐՈՍ եւ երկու ԳԱԼՈՒՍՏՔ եւ չորս եւս դստիք ՄԱՐԻԱՄ, երկու ՍՐԲՈՒՀԻՔ եւ ԻՍԿՈՒՀԻ.

յորոց կան այժմ չորք որդիք ՄԱՐԳԱՐ, ՄԱՏԹԷՆՈՍ, ՅԱԿՈՎԲ եւ ՊԵՏՐՈՍ. եւ դուստր մի ՄԱՐԻԱՄ:

Են եւ ԱՌԱՔԵԼԻՆ, որ սակաւին կենդանի է եւ նախկին քարգնան Անգլիացոց, երեք որդիք ԳԱԼՈՒՍՏ, ԱՐՐԱՀԱՄ եւ ՍԷԹ. եւ երեք դստիք ԿԻԻԼՀԱՆ, ՄԷՆԷՆՏ եւ ԱՆՆԱ:

Նոյն եւ ի քերց անգլի ի ՍԱՌԱՅԷ եղեն որդի մի եւ դուստր մի՝ ՅԱՐՈՒԹԻԻՆ եւ ԾԱՂԻԿ: Եւ ի ՄԱՐԹԱՅԷ կան այժմ երկու որդիք ՊՕՂՈՍ եւ ՊԵՏՐՈՍ, եւ դուստր մի ՆԱԶԼՈՒ:

Այլ ինն ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եւս լնու զկեսանս իւր եւ քաղի ի հայրենի դամբարանի ի միջի սուրբ Ստեփաննոս եկեղեցոյն Չմիսոնոյ:

Որդիք Աստուածասոյ՝ ՄԱՐԳԱՐ, ՅԱԿՈՎԲ եւ ՊԵՏՐՈՍ, որ կան այժմ, նոյնպէս ըստ հայրենի կրթութեան վաճառականութեան լեալ հետամուտ, ունի Մարգար եւ նախկին քարգնանութիւնն Հոլլանդիոյ. եւ Յակովբ եղբայր իւր զերկրորդականն, արքա սոսամիսք եւ պայազաւսք որք ջանան միշտ զառ ի նախնեացն շուք տոմի իրեանց յաւէտ քարգնանեալ ազնուասիրական իմն բարոք, որ արդարեւ փափաքեալ իմն է ամենեցուն. յորոց միայն ՄԱՐԳԱՐՆ ամուսնացեալ ունի զերկու ազնուածին որդիս՝ զԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եւ զԴԱՆԻԷԼ. եւ զդուստր մի ՏԻՐՈՒՀԻ: Նոյնպէս եւ քերց անգլի ՄԱՐԻԱՄՈՒ կան երեք դստիք ՄԱՐԳԱՐԻՏ, ԿԻԻԼԶԱՏԸՆ եւ ԹԱԳՈՒՀԻ:

**ՉՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԳ  
ՄԱՐՏԻՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ՝  
ԱՊՐՈՅԱՆՆԵՐԻ  
ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
1804 Թ. ԱՊՐԻԼԻ 20-Ի ՎԿԱՅԱԳԻՐԸ**

Հայտնում ենք, որ այս տոհմի նախնիները Անի քաղաքի ավերումից փախչելով, որդիների սերունդների անընդհատ հաջորդությամբ գալիս-հասնում են մինչև սրանց նահապետ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐԸ՝ հարուստ և փառահեղ մի այր, որը նույնպես հայրենի ճանապարհով ընթանալով, բարեբեր ունեցվածքով լիացած՝ ամենքին ոչ քիչ չափով նպաստ մատուցեց: Նրանից Կարինում երկու որդիներ են ծնվում՝ մահտեսի ԱԼՓԻԱՐԸ և ԱՍԼԱՆԸ, որոնք դաստիարակվելով հայոց կրթությամբ՝ ալևոր հասակում կնքում են իրենց մահկանացուն:

Սրան որպես տոհմապետ հաջորդում է իր անդրանիկ ԱԼՓԻԱՐ մահտեսին, և մինչև նա անդուլ աշխատում էր՝ բարվոք կառավարելու իրենց գործը, խոշորություն է բարձրանում օսման և պարսիկ երկու ազգերի միջև, որը տևում է շուրջ հիսուն տարի. հազարացիներից թագավորեց սուլթան Մուլեյմանը, իսկ պարսիկներից՝ առաջին Թահմազ շահը տերունական 1521-ին: Դրա համար մահտեսի Ալփիարը, լքելով այդ կողմերը, վերցնում է իր եղբայր Ասլանին և նրա ու իր ամբողջ ընտանիքները՝ ծառաներով և աղախիներով, շտա-

պում արևմտյան կողմերը, բնակություն հաստատում մաջարների սահմաններում՝ Բելգրադում, վաճառականություն է սկսում և մեծ համբավ ձեռք բերում այդ կողմերում: Նրանից ծնում է երկու որդի՝ ՄՈՒՐԱՍԻՄԱՆ ու ՀՈՎՀԱՆՆԵՍ և երկու դուստր՝ ԳՅՈՒԼՉԱԴԵ ու ՄԱՐԻԱՄ: Նրա եղբայրը ևս ունենում է երկու որդի՝ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ և ՅԱՂՈՒԲ, որոնք սերունդ տալով մինչև երկրորդ զավակը՝ դադարում են, մահտեսի Ալփիարի դուստրը նույնպես հասնելով երկրորդ զավակին՝ դադարում է: Իսկ ինքը մահտեսի Ալփիարը մահանում ու թաղվում է Բելգրադում:

Նրանից հետո նահապետությունը գլխավորում է իր անդրանիկ մահտեսի ՄՈՒՐԱԴԻՄԱՆԸ և առավել է բարգավաճում բարվոք ունեցվածքով, որը նաև մեծամեծ բարերարություններից հետո, իր ծերության օրոք տերունական 1634-ին՝ ծոազատկի տարին, ուխտի է գնում սուրբ Երուսաղեմ և վերադառնալով Ֆիլիպոպոլիս՝ այնտեղ կնքում իր մահկանացուն: Սա ունենում է երկու որդի՝ ԱԲՐԱՀԱՄ, որ է ԱՊՐՈՈՈՒ ՊԵՏՐՈՍ և երեք դուստր՝ ԱՆՆԱ, ԹԱԳՈՒՀԻ և ՄԱՐԻԱՄ. սրանցից միայն Աբրահամն է ժառանգ ունենում, քանզի մյուսները դեռահաս տարիքում հեռանում են կյանքից:

Մեծախորհուրդ այր ԱԲՐԱՀԱՄԸ, հասնելով տոհմապետության աստիճանի, իր նախնիներից ավելի է հետամուտ լինում բարի համբավի և ըստ նախնա-

կան կրթության և մտքի լայնախոհության էլ օրըստօրե ավելի է բարգավաճում՝ բոլորի աչքում սիրելի դառնալով և, մանավանդ, Հուսեյին հռչակավոր փաշայի, որ կրետացիների դեմ պատերազմող զորքի հրամանատարն էր, ինչպես նաև մեծանուն եպարքոս Քյոփրյուլու օղլու աչքին, նաև՝ արքունի ամբողջ ավագանու. նույնիսկ անունն էլ փոխելով Քյոփրյուլի օղլին հրամայում է այդուհետ Ապրո կոչել նրան, և այդ անունն էլ ցայսօր մնում է նրա ազգի վրա:

Երբ նա օսմանցիների բանակի հետ Կրետեում էր՝ լինելով Հուսեյին փաշայի արքունական վաճառականը, երբ նրանք գրավեցին կղզին՝ ճարտար ճառախոսությամբ մի եկեղեցի է ստանում հայերի համար, որը վնասված էր թնդանոթի ռումբերից, իր իսկ ծախսերով նորոգում է՝ տրամադրելով նաև ամբողջ կահավորանքը:

Եվ քանի որ մեծ նպաստ էր բերել բանակին և ամեն ինչում հավատարիմ էր արքունիքին, սուլթան Իբրահիմը նրան մի զորավոր հրովարտակ է շնորհում, որպեսզի ամենուրեք ազատ և համարձակ, անգամ իր իշխանության ներքո եղած վայրերում մաքսից զերծ լինի:

Նա Կոստանդնուպոլսում իր ծախքով կառուցեց Սուրբ Նիկողայոս եկեղեցին, նաև մեկը՝ Միլիվրիում, նաև մեկը՝ Մահալճում: Եվ Կամենեցի գերիների՝ Ֆիլիպոպոլիս գալուց հետո, այնտեղ նույնպես մի եկեղեցի է շինում, ուր ամփոփված է իր հայր մահտեսի Մուրադխանի մարմինը:

Նա ծնում է երեք որդի՝ ՄԱԶՍՈՒԴ, ՄԱՏԹԵՈՍ ու ՄՈՒՐԱԴԻՄԱՆ և մի դուստր՝ ՍԱՐԱ, որոնցից Մատթեոսի սերունդները կան մինչ օրս:

Իսկ նա՝ Աբրահամը, որ և Ապրոն է, երբ տեսնում է, թե Բելգրադի կողմերում անդորր չկա, վերցնում է իր բոլոր յուրայիններին և տերունական 1661-ին չվում-գալիս Կոստանդնուպոլիս և ազգաշահ բազում գործերից հետո իր կյանքի ընթացքը վերջացնում Ադրիանապոլսում, որն այն ժամանակ օսմանյան կայսրության մեջ էր:

Իր հոր կենդանության օրոք ՄԱՏԹԵՈՍԸ Կոստանդնուպոլսից դուրս ելնելով՝ գալիս է այստեղ՝ Չմյուռնիա 1668-ին, որտեղ մեկ տարի հետո սկսում է տուն շինել, որն ըստ ամենայնի պատշաճ կառուցելուց հետո, ուժեղ երկրաշարժ է լինում, հիմնահատակ կործանելով այն և փլատակների տակ ճգնելով չորս մանուկներին և այլոց. միայն նրա կինն է փրկվում՝ պարտեզում լինելով: Բայց հետո Աստված նրան դարձյալ չորս զավակ է պարգևում՝ ԱԲՐԱՀԱՄԻՆ, ՊԵՏՐՈՍԻՆ, ՍՏԵՓԱՆՈՍԻՆ և ԳՅՈՒԼՀԱՆԻՆ: Իսկ ինքը դարձյալ մեծապատիվ վաճառականությամբ և իշխանական մեծարանքով ընդունելության է արժանանում և 1687-ին ֆրանսիացիների Լյուդովիկոս XIV արքայից ստանում ազնվականության և հովանավորության հրովարտակ: Երբ առհասարակ մարդկանց սահմանված կյանքի ելքի ժամն է հասնում, վախճանվում է՝ թաղվելով Չմյուռնիայի Սուրբ Ստեփանոս եկեղեցում:

Նրա որդիներ ԱԲՐԱՀԱՄԸ, ՊԵՏՐՈՍԸ և ՍՏԵՓԱՆՈՍԸ վաճառականությունն ընդարձակում են մինչև հնդիկներ և պարսիկներ ու Եվրոպա և շատ են հարստանում, որոնց նույնպես հավերժ հիշատակության արժանի հրովարտակ է տրվում ռուսաց Պետրոս կայսրի կողմից տերունական 1717-ին, որն այժմ նրանց ձեռքին կա՝ կնքված արքունական մեծ կնիքով. Պետրոսը անգլիացիների նախկին թարգմանն էր:

Ապա ԱԲՐԱՀԱՄՆ ունենում է չորս որդի՝ ՄԱՏԹԵՈՍ, ՌԱՓԱՅԵԼ, ՍԵԹ և ՀՈՎՀԱՆՆԵՍ ու երկու դուստր՝ ԳԱՅԱՆԵ և ԹԱԳՈՒՀԻ, որոնք ժառանգներ չեն ունենում:

ՊԵՏՐՈՍԸ նույնպես ունենում է չորս որդի՝ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ, ԳԱԼՈՒՍՏ, ԱՌԱԶԵԼ և ՄԱՐԳԱՐ ու երկու դուստր՝ ՄԱՐԱ և ՄԱՐԹԱ, որոնցից Գալուստն ու Մարգարը կուսակրոնությամբ իրենց կյանքի վախճանին հասնելով՝ իբրև հիշատակ թողնում են մանուկների հոգևոր դպրատուն:

Ստեփանոսն ունենում է երեք որդի՝ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ, ՀԱԿՈԲ և ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ու երկու դուստր՝ ՍՐԲՈՒՀԻ և ԲՐԱԲԻՈՆ, որոնք սերունդ չեն տալիս և որոնցից Բարդուղիմեոսը մինչ հիմա ողջ է: Բայց սրանք նույնպես ավարտելով իրենց կյանքի ընթացքը վախճանվում են, Աբրահամը՝ Կ.Պոլսում, Պետրոսն ու Ստեփանոսն՝ այստեղ. Պետրոսը թաղվում է

իր հայրենական շիրիմում՝ Սուրբ Ստեփանոսի եկեղեցում, իսկ նրա որդի Գալուստը՝ Սուրբ Լուսավորչում:

Պետրոսի որդիներ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՆ ու ԱՌԱԶԵԼԸ հայրենական վաճառականության հետ մեկտեղ տիրապետում էին նաև թարգմանական արվեստին. առաջինը նախապես հուլանդերենից թարգմանիչ էր, և երկրորդը՝ անգլերենից: Աստվածատուրը ազգասիրություն ստանձնելով՝ շատերի բարվոքության պատճառ և առիթ է լինում: Եվ երկուսն էլ գովասանքի արժանի են ներկայանում իրենց բարեսիրությամբ և մեր ազգի մեջ ըստ ամենայնի փառավորվում:

Աստվածատուրն ունեցավ ինը որդի՝ Ալփիար, Մարգար, Մատթեոս, Պետրոս, դարձյալ Ալփիար, Հակոբ, դարձյալ Պետրոս և երկու Գալուստներ, նաև չորս դուստր՝ Մարիամ, երկու Սրբուհիներ և Իսկուհի, որոնցից այժմ կան չորս որդիները՝ ՄԱՐԳԱՐԸ, ՄԱՏԹԵՈՍԸ, ՀԱԿՈԲԸ և ՊԵՏՐՈՍԸ ու մի դուստրը՝ ՄԱՐԻԱՄԸ:

ԱՌԱԶԵԼՆ էլ, որ տակավին ողջ է և նախապես անգլիացիների թարգմանն էր, ունի երեք որդի՝ ԳԱԼՈՒՍՏ, ԱԲՐԱՀԱՄ և ՍԵԹ ու երեք դուստր՝ ԳՅՈՒԼՀԱՆ, ՄԵՆԵՆԴ և ԱՆՆԱ:

Նույնպես և սրանց քույր ՄԱՐԱՅԻՑ ծնվեցին մի որդի՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ և մի դուստր՝ ԾԱՂԻԿ: ՄԱՐԹԱՅԻՑ էլ այժմ կան երկու որդիներ՝ ՊՈՂՈՍ և ՊԵՏՐՈՍ և մի դուստր՝ ՆԱԶԼՈՒ:

Իսկ ինքը՝ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐԸ, իր կյանքի ընթացքը ևս ավարտում է և թաղվում Չմյուռնիայի Սուրբ Ստեփանոս եկեղեցում՝ իր հայրենական դամբանում:

Աստվածատուրի որդիներ ՄԱՐԳԱՐԸ, ՀԱԿՈԲԸ և ՊԵՏՐՈՍԸ, որ այժմ ողջ են, նույնպես վարժ են հայրենական վաճառականության մեջ. Մարգարը նախկինում հոլանդերենի թարգման էր, նաև իր եղբայր Հակոբը՝ իբրև երկրորդ գործ. խոհեմ և ազնվաբարո այրեր են, որոնք մշտապես ջանում են իրենց նախնյաց տոհմի փառահեղությունը շքեղացնել առանձնահատուկ վեհանձն բարքով, որը հիրավի փափագելի է ամենքին: Միայն Մարգարն ամուսնացած լինելով՝ երկու ազնվազարմ որդիներ ունի՝ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ու ԴԱՆԻԵԼ և մի դուստր՝ ՏԻՐՈՒՀԻ: Սրանց քույր ՄԱՐԻԱՄԸ ունի երեք դուստր՝ ՄԱՐԳԱՐԻՏ, ԳՅՈՒԼԶԱԴԻՆ և ԹԱԳՈՒՀԻ:

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՊԻՐ ԼԵՀԱՅՈՒ ԱՍՏՎԱԾԱԾՆՉԻ

(1656թ.)

### ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ<sup>1</sup>

*«Փառք ամենասուրբ երրորդութեան hor եւ որոյ եւ հոգոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաիսեանս: Արդ ցանկացող եղևալ այսմ հոգեկնուագ մասեկիս, ու ականաւք Ասուածաշունչ յորջորջեալ է ի Հարցն սրբոց, զի զամենայն ինչ ունի նեւ սրամադրեալ է ի ծոց իւր. ի սկզբակէ ստեղծմանէ արարածոց մինչեւ ցմիսս ականաւ գալուստեանն:*

*Վասն որոյ եռափափաւ սիրով սենչացեալ այսս այս բարեպաշտ եւ Ասուածասէր Պէղրատցի Աբրահամ Չէլէպի, որ ունէր նախնականաբար ի սրի իւրում զջերմեանոյ սարսումն Ոսումնասիրութիւն առ Ասուածային զիրս, եւ փիլիսոփայական արեւսից հմուտ. մինչ զի յաւուրս յայս ոչ ոք գտաւ համեմատ սմա ի գրամասիկս ի մէջ հայասէն ազանցն, եւ ունէր լիով զուսումն Ասուածաշունչ սառից զհնոց եւ զնորոց, ներսրամադրեալ յիւրումն սրի Սենեկիին եւ արագ ի պատասխանիս ամենայնի որ խնորէ գրանն. բայց զսա եւս շատցաւ ի յարդար վասսակոց իւրոց. ով ոք հաղիպիք սմա կարդալով, արիւնակելով յիշեցէք ի մաքրափայլ յարարս Չէր զհայրն իմ զմահեւսի խօճայ Մորատիսանն, եւ զմայրն իմ Եայրիսանն եւ առ Ասուած հազուցեալ մանուկ տիօք զեղբայրն իմ զՊետրոսն, եւ զվայելչագեղ զնորափոքիս հարազատ զորդիքն իմ զՍարգիս Չէլէպիին եւ զՄարութիսանն եւ զամենայն արեւան մերշարսն, եւ ոք յիշէք յիշեալ լիջիք ի միսս ականաւ գալուսեան Քրիստոսի Ասուծոյ ամէն»:*

<sup>1</sup> Տպագրված է՝ «Բազմավեպ», 1925թ., էջ 259:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՊԻՐ ԼԵՀԱՅՈՒ  
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ (1656 թ.) ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ**

Փառք ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս: Ահա ցանկացա ձեռնարկել այս հոգեգմայլ մատյանը, որ սուրբ Հայրերի կողմից Աստվածաշունչ անունով է պատվված, քանի որ իր մեջ բովանդակում է ամեն ինչ՝ արարչագործության սկզբից մինչև Տիրոջ հաջորդ գալուստը:

Ինչի պատճառով էլ այս բարեպաշտ և աստվածասեր Բելգրադցի Աբրահամ Չելեբի այրը եռափափազ սիրով տեղնչում էր սրան, որ սկզբնապես իր սրտում ուներ Աստվածային գրերի ուսումնասիրության ջերմեռանդ բաղձանք, նաև փիլիսոփայական արվեստում էր հմտացած, այնքան, որ այս օրերում հայազգի սերնդակիցների մեջ ոչ ոք չգտնվեց նրան գրագիտությամբ հավասար գիտակ, որ նաև ամբողջապես տիրապետում էր Հին և Նոր Աստվածաշունչ գրերի ուսմանը՝ դրանք ունենալով իր սրտի խոհական սենյակում, նաև արագ պատասխանում էր յուրաքանչյուրին, ով խոսք էր փնտրում, այլև սրանով ևս առավել գերազանց գտնվեց իր արդար վաստակը բազմապատկելով: Ով պատահի, որ կարդալու լինի սա կամ ընդօրինակի, հիշեցեք ձեր սուրբ աղոթքներում իմ հայր Մահտեսի Խոջա Մուրադխանին և իմ մայր Յահրիդանին և մանուկ տարիքում վախճանված իմ եղ-

բայր Պետրոսին, նաև իմ գեղեցկատես դեռահաս հարազատ որդիներ Սարգիս Չելեբիին և Մաթուսաղային և բոլոր արյունակից մերձավորներին, և ովքեր կհիշեն՝ թող հիշատակվեն Քրիստոս Աստծո հաջորդ գալուստյանը. ամեն:



զգերանդի հնչեալ արմատնոց կենաց եքարչ ի վշտաց աստի  
անկայուն կենցաղոյս եւ սակս որոյ վերսին անկանի ի  
սուգ srsմութեան:

Այլ ասէն վերսին օգնական զսաւ Աբրահամ այսմ ժո-  
ղովրդեան. զի զնացեալ ոմանք ի սոցունց զյիսաւորաց ի  
Անդրիանուպոլիս առ դուռն արեւնի խնորեալ ինկնեանց  
զաղօթարան իմն արքայական հրամանէ զոր անդ ուրեմն  
յուսացնէր նոցա Աբրահամ Չէլէպի զկերպ խնորանաց  
գրոյն եւ զորպէս շարժելուին ինկնեանց, ընդ որս խնորէր  
անչամբ եւ զաղաչանքս մատուցանէր երեւելաց սան:

Ապա մինչ հրաման եղել յարքայէն սալ ի Փիլիպուպո-  
լիս մինն յոթից եկեղեցեաց յունաց՝ ազգին հայոց, չոքան  
հրամանաւ այնու եւ ուրախութեամբ մեծաւ ի Փիլիպու-  
պոլիս քեպէտ եւ չսալ երեւոցիկն յոյնք զեկեղեցիկն. սա-  
կայն վասն հրամանին եւ իրաւանց առին զեկեղեցիկն՝ որ  
կառուցանել յանուն Սրբոյն Գէորգայ:

Ապա յորժամ տեսին քէ ունի զեկեղեցիկն զկարօտութիւն  
նորոգման ըստ ամենայնի. վասն որոյ յորժամ լուաւ Աբ-  
րահամ Չէլէպին, եթէ բանի եւ եթէ գրով հանչն էառ վճա-  
րել որքան որ զնած է ի պէտս շինութեան Եկեղեցոյ՝ անչին  
իրոյ ի յիշատակ յաիտեանական եւ սակաւ ինչ փող եւս յե-  
աց զսկիզբն առնել շինութեան. աստի սկիզբն արարին նո-  
րոգել բանիս յուսադրութեան Աբրահամ Չէլէպոյն: Բայց  
ի յայսմ հոգեւոր ուրախութեան պարսպիլն էհաս անդարչ  
հրամանն վերին փոխել յաստեայց Աբրահամ Չէլէպոյն  
յանանց կեանսն, զի հազեաւ ի Տէր հաստատական անու-  
ամբ յիսուն եւ հիւնգ ամաց, ի թուականութեան հայոց հա-  
զար հարիւր քսան եւ հիւնգ եւ եղաւ ի սասանի յԱնդրիա-  
նուպոլիս: Այլ որդին Սարգիս Չէլէպի ո՛չ զսաւ առընթեր

զի յեալ էր յԻսալիս վաճառականութեամբ:

Եւ երկրորդ որդին Պարոն Մասթէնու Չէլէպի մինչ էր ի  
Զմիւռնիս՝ գրէր առ նա զալ ինկն զի տն մեծի Զատկին ի  
միասին արաւոցով. եւ միշտ յապասելն ճանապարհի նորս  
նի Մասթէնու հառաչելով եւ որդոյն կտակ առնելով յանչն  
արար զհոգի իւր ի շեռն հրեշտակին մարդասէր խնամոցն:  
Իսկ յեւ ութ աւուրց ապա եկեալ էհաս Մասթէնու Չէլէպի  
յԱնդրիանուպոլիս՝ անզիտացեալ զմահուանէ հօրն իւրոյ:  
Ուստի յայսմ ժամանակի եպիսկոպոս, վարդապետ, քահա-  
նայք, եւ սանուստարք եկեալ միսիքարութիւն մատուցին նմա  
ըստ արժանոյն: Եւ աստանոր գրող նախկին պատմութեան  
զանուն իւր յայտնէ՝ զոյ Երեմիս իբրեւ զԵրեմիս մարգարէ  
պատմող գոյով ինկնեան այսպիսի անցից անցելոց, որպէս  
վիպեալ էր Երեմիս մարգարէ սքանչելի իմն գրով զանցս  
Ս.Երուսաղէմի ի բարեխոնական բռնութեան:

Ուստի յորժամ լուաւ ի Փիլիպուպոլիս ժողովուրդք գա-  
մենեցոց, քէ եկեալ է Մասթէնու Չէլէպի յԱնդրիանուպո-  
լիս, զիր միսիքարութեան յեցիկն առ նա վայելուչ պատու-  
ասիրութեամբ, եթէ քահանայք եւ եթէ զյիսաւոր սանուստ-  
արք ի շեռն պատշաճաւոր անչին պատմաբանելով նմա  
զերախիսիս հօրն իւր եւ սակաւ ինչ դրամ յառաջագոյն  
յղելն. եւ զբովանդակ ծախսն հատուցանել խոստանալն.  
եւ ի ցուցանելն զհաշուագիրն քէ զնացեալ է ի պէտս եկե-  
ղեցոյ շինութեան հազար վեց հարիւր երեսուն եւ վեց  
մատչիլ ինկն Մասթէնու Չէլէպին վասն այս պատճառի  
զհօրն արարեալ կտակն ամբողջապէս հատոց եկելոց՝  
զգոյն հարազատ որդոյ եւ նման հօրն իւրոյ հաստատելով:  
Ապա յորժամ հասին ի Փիլիպուպոլիս այսոքիկ երեւելի  
անչիկնք բազում շնորհակալութեամբ զպարոն Մասթէնու

Չէլէպոյն բոյորքն եւս կարի շնորհակալ լեալ՝ զաղօթս,  
պաղասանս առ Ասուած մասուցին եւ դարչեալ զգիր  
շնորհակալութեան յղեցին առ Մասթէնս Չէլէպին պաս-  
մելով անդ զբնաւ անցս անցելոց ընդ անշինս իրեանց եւ  
ի վախճանի եկեալ ի Փիլիպոսոսիս՝ զոչ գտանելն իրե-  
անց զժամաստեղին եւ զսացման պատճառ սոյն եկեղեց-  
ոյս՝ զԱբրահամ Չէլէպի զհայրն իւր. եւ զի ի միջի իրե-  
անց զբառասուն եւ ութ մտոչիլ ընդ հարիւրի ժողովելն  
վասն նորոգման. եւ այն անբաւական գոյ տեսանելով ի  
մտաբերելն յանշինս ի յեռամասրան եկեղեցոց Ամենա-  
սորբ Ասուածածնի եւ միշտ անարատ կուսի:

Որ արդ համառոտեալ ի դիւրութիւն իմացման հասա-  
րակօրէն յԱնդրիանուպոլսոյ Մեարոպ եպիսկոպոսէ ի թիւ  
հայոց հազար երկու հարիւր եօթանասուն եւ եօթն<sup>3</sup> եւ ի  
յունիսի վեշասասներորդ ի Փիլիպոսոսիս:

Իսկ արդ՝ վերսին առօրինակեալ այս ի նոյն օրինակէ  
անի ի Պեհրոս Դպրէս Տէրայ Սեպիսնեան բնիկ Անդրի-  
անապոլսեցոյ ի թիւ Հայոց ՌՄՀԷին<sup>4</sup>:

<sup>3</sup> 1277=1828:

<sup>4</sup> ՌՄՀԷ=1828:

## ՀՈՒՅՆ ԱԶԳԻՅ ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՅՈՒ ԱՌՆԵԼՈՒ ՊԱՏՈՒՄԸ

Մահմեդ Չորրորդ սուլթանի գահակալության  
քսանյոթերորդ տարում նրա բարձր հրամանով ամ-  
բողջ գորքը պատերազմ սկսեց Լեհաստանի դէմ և  
գրավելով Կամենեցը՝ իրենց սովորության համա-  
ձայն լեհերի, ռուսների ու հայոց եկեղեցիներն իս-  
կույն վերածեց մզկիթների և ողջ բնակչությանը հար-  
կատու դարձրեց: Իսկ երևելի հայերից ոմանք միմ-  
յանց հետ խորհրդակցելով՝ ծնկի եկան Ադրիանա-  
պոլսի բանակի առջև, իսկ հայոց ազգից մնացածնե-  
րը, թագավորական հրամանով, իրենց ունեցվածքով  
Սև ծովի ափերին հասցվեցին և այնտեղ երեք նավե-  
րի մեջ տեղավորվելով՝ ուղևորվեցին Միջերկրական  
ծովի արևելյան կողմը: Սրանց փրկվելու արդյուն-  
քում մեկը հասավ Կոստանդնուպոլսի Ղալաթիա և  
մյուսը՝ Սև ծովի մերձափնյա Ահիոլիի Բուրգասի դի-  
մացի Սյուզեպոլսի բերդը: Իսկ երրորդը Պոնտոսի  
հարավային մասում բուռն հողմերից փոթորկի մեջ  
ընկնելով խորտակվեց՝ իննսունյոթ հոգու ջրախեղդ  
անելով: Բելգրադցի Աբրահամ Չէլէպին / Ապրո Չե-  
լեբի կոչվող/, որ այդ ժամանակ վաճառականական  
գործերով գտնվում էր արքունական պալատում, այս  
ամենը երբ լսեց, սիրտը խոցվեց ու տառապանք ապ-  
րեց կամենցիների համար:

Ուստի, իր մոտ կանչելով բանակի հետ Ադրիանա-

պոլիս ժամանած ժողովրդի գլխավորներին և մխիթարելով նրանց՝ չորս հարյուր մառչիլ տվեց այդ տեղահանված ժողովրդի համար, որն էլ Աբրահամ Չելեբիին քաջածանոթ անձինք ուղարկեցին թե՛ Ղալաթիայում, և թե՛ Սյուզեպոլսում եղող տեղահանված ժողովրդին, որոնց էլ այդժամ հրաման եկավ թագավորից, թե որքան և որտեղ էլ որ կամենցիներից հայազգի ժողովուրդ գտնվի՝ գնան Մակեդոնիա բնակվելու և այնտեղ մնան:

Ապա Աբրահամ Չելեբին փոքր-ինչ շունչ առավ: Ինչպես ասացինք, վերապրողները եկան-հասան Ֆիլիպոպոլիս և այնտեղ միմյանց հանդիպելով ցավագին արտասվում էին իրենց բաժին հասած տառապանքների և վշտերի պատճառով: Եվ դեռևս պատահածից չհանդարտված, Աստվածային վրիժառու բարկության երբևէ չտեսնված և չլսված տարածած մահ եկավ նրանց, որ նաև բոլոր ազգերից շատերին արմատից գերանդիով հնձելու նման կյանքից վերացրեց, նաև այս պատճառով վերստին տրտմության սուգ պատեց:

Այստեղ կրկին Աբրահամը սատար կանգնեց այս ժողովրդին: Քանի որ սրանց գլխավորներից ոմանք գնացել էին Ադրիանապոլիս՝ արքունական պալատ, իրենց համար մի աղոթատեղի խնդրելու, Աբրահամ Չելեբին նրանց օգնելով խնդրագրի ձևակերպմամբ և սովորեցնելով գործելու եղանակները, ընդ որում՝ նաև անձամբ խնդրելով և աղաչանքներ մատուցելով թագավորական տան երևելիներին:

Ապա հրաման հասավ արքայից՝ Ֆիլիպոպոլիս ութ հունական եկեղեցիներից մեկը տալ հայոց. այդ հրամանով մեծ ուրախություն եղավ Ֆիլիպոպոլսում, և թեպետ հույները չէին կամենում տալ եկեղեցին, բայց հրամանի և կարգադրության համաձայն հայերն ստացան այն, որ կառուցվեց Սուրբ Գևորգի անունով:

Հետո երբ տեսան, որ եկեղեցին ամենայն վերանորոգման կարիք ունի, այս իմացավ Աբրահամ Չելեբին, ով թե բանավոր և թե գրավոր հանձն առավ վճարել որքան որ ծախս կպահանջվեր՝ ի հավերժ հիշատակ իրեն և որոշ գումար ևս ուղարկեց շինարարությունը սկսելու համար. այստեղ էլ, Աբրահամ Չելեբիի խոստմանն ապավինելով, սկսեցին նորոգել: Բայց այս հոգևոր ուրախության ընթացքում վերին անդառնալի վճիռը հասավ՝ Աբրահամ Չելեբին վախճանվեց և Տիրոջով մշտնջենավոր անուն վաստակելով ննջեց հիսունհինգ տարեկանում, հայոց հազար հարյուր քսանհինգ թվականին և գերեզման դրվեց Ադրիանապոլսում: Որդի Սարգիս Չելեբին ներկա չէր, քանզի վաճառականական գործերով գտնվում էր Իտալիայում:

Իսկ երկրորդ որդի պարոն Մատթեոս Չելեբին դեռևս Չմյուռնիայում էր. նրան նամակ էր գրել իր մոտ գալու, որպեսզի մեծ Չատիկ միասին տոնեն: Եվ շարունակ աչքը ճամփին, ո՛վ Մատթեոս հառաչելով և որդուն կտակ թողնելով՝ հոգին ավանդեց մարդասեր Աստծու խնամակալ հրեշտակին: Ութ օր անց

Մատթեոս Չելեբին եկավ-հասավ Ադրիանապոլիս՝ անտեղյակ հոր մահին: Ուստի այդ ժամանակվա եպիսկոպոսը, վարդապետը, քահանաները և տոհմապետերը եկան նրա մոտ և ըստ արժանվույն մխիթարություն մատուցեցին: Եվ այստեղ նախորդ պատմության հեղինակն իր անունն է հայտնում՝ Երեմիա, իրեն նմանեցնելով Երեմիա մարգարեին, պատմելով այնպիսի անցած դեպքերի մասին, ինչպիսին սքանչելի գրվածքով պատմել էր Երեմիա մարգարեն Ս. Երուսաղեմի դեպքերը բաբելոնյան բռնակալության ժամանակ:

Երբ Ֆիլիպոպոլսի կամենցիները լսեցին, որ Մատթեոս Չելեբին եկել է Ադրիանապոլիս, նրան վայել պատվասիրությամբ մխիթարական ուղերձ հղեցին, թե քահանաները և թե տոհմապետերից մեծանունները պատշաճ անձին պատմեցին հոր բարերարությունները և որոշ դրամ ուղարկելը, նաև ամբողջ ծախսը հոգալու խոստումը: Երբ ցույց տվեցին հաշվարկած գումարը, թե եկեղեցու շինության համար ծախսվել է հազար վեց հարյուր երեսունվեց մառչիլ, Մատթեոս Չելեբին հոր թողած կտակի համաձայն և որպես արժանավոր այր, ամբողջապես հատուցեց եկածներին: Ապա երբ հասան Ֆիլիպոպոլիս, այս երևելի անձինք մեծ երախտագիտությամբ, պարոն Մատթեոս Չելեբիին բոլորն էլ շատ շնորհակալ լինելով՝ աղոթքներ, պաղատանքներ առ Աստված մատուցեցին և դարձյալ շնորհակալանքի գիր հղեցին Մատթեոս Չելեբիին, այնտեղ պատմելով իրենց հետ

կատարված բոլոր դեպքերը և Ֆիլիպոպոլիս գալը, իրենց ժամատեղ չգտնելը և այս եկեղեցին ստանալու պատճառը իր հայր Աբրահամ Չելեբին լինելը: Նաև իրենց ուժերով նորոգման համար հարյուրի փոխարեն քառասունութ մառչիլ հանգանակելը և դա անբավական լինելով՝ Ամենասուրբ Աստվածածնի և հավերժ Անարատ Կույսի եռամատրան եկեղեցուն աղոթելը:

Ահա սույնը իմանալու համար դյուրընթեռնուլի համառոտ գրառեց Ադրիանապոլսի Մեսրոպ եպիսկոպոսը՝ հայոց հազար երկու հարյուր յոթանասունյոթ թվականի հունիսի տասնվեցին Ֆիլիպոպոլսում:

Իսկ այժմ այդ նույն օրինակից սա վերստին արտագրվեց Պետրոս Դպիր Տեր Ստեփանյանիս կողմից՝ Հայոց ՌՄՀԷ-ին:

ՄԻԼԻՎՐԻԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԺԱՄԱԳՐՔԻ  
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ<sup>1</sup>

Ա

Առումն Սուրբ Գեորգ եկեղեցոյս ի շէռանէ Հոռոմոց  
ազգին, քվիին Ռ Ճ Ի Դ<sup>2</sup> ամին որ է ԴԿՂՄԵ ֆիչապէնս Հ Տ.

Գրէ մարգարէն յառաժն իւր ասելով, Շրջեցարուք զՍի-  
օնիս, պաշտպանեցէք զնա եւ պատեցէք զաշտարակս նրա:

Չոր իբրև ընթեռնոյր այրս Աբրահամ Չէլեպիս՝ ցան-  
կայր և զնոյնն կասարել ըստ որում և միւս մարգարէն Երա-  
նի որ ունիցի զաւսկ ի Սիօն՝ որ մասնաւորին է յարմարե-  
լի. սա փանիցս առաւել յարգելի զի զնոյն ինքն զքոյրն  
Սիօն սսացաւ զաւսկ, առ ի յիշատակումն Տեառն խորհր-  
ոյ՝ իսաչելոյն՝ զայնս Գողգոթայ յարմարէր, հաստատելով  
զեկեղեցիսն Ասուծոյ, զաւերակսն ի տեղիս տեղիս վերա-  
նորոգելով: Եւ մասնաւանդ իսկ նախարարք բազաւորին  
հարկեալ ի սէր եւ ի իսաքր սորա առեալ ի շէռաց Հոռոմոց  
զեկեղեցիս եւ ետուն ազգիս Հայոց ի կրայս Սիլիվրիսն  
յաւունն Սրբոյն Գեորգայ ըստ նախնական անուամբ դար-  
չեալ վերահաստատեալ: Եւ Աբրահամ Չէլեպիս որ եղիւք  
ունէր զերկնամասնացոյցին, սիսա արդեամբք ի յայտ բե-  
րէր զի, որ վաճառականն էր անհաս հանճարով, որպէս  
ճանապարհորդք սաէ Կղիսարբոս՝ ի տունս եւ ի հայրենիս

<sup>1</sup> Ականավոր հայագետ Արշակ Ալպոյաճյանը Սիլիվրիի հայոց  
եկեղեցուն հայտնաբերել է մի Ժամագիրք՝ չորս հիշատակա-  
րաններով, որոնք ընդօրինակել է և առաջին անգամ հրատա-  
րակել «Բիզանդիոնի» 1909թ. 29 հուլիս – 11 օգոստոսի  
համարում:

<sup>2</sup> = 1675թ.

ընթանան փութով, իսկ իմասունք ի իսկս եւ յիմասու-  
քին, վասն որոյ եւ ասէր Սուրբն Պօղոս երեւելի արարա-  
ծովքս զաներեւոյթն տեսանեմք. Ասուծոյ ճանաչել զա-  
ռաւելութիւն գիտութեան սիրոյն Քրիստոսի, լցեալ լրութե-  
ամբն Ասուծոյ: Ըստ առակի Տեառն՝ քէ իբրև եգիս  
զգանչն ծածկեալ եւ զոր ինչ ունէր վաճառեաց և զնեաց  
զայն մարգարիս: Իսկ իմաստասիրական արեւոսք ունէր  
ճոխացեալ՝ զնոցայն ընտանեաց փիլիսոփայիցն ճեմէր  
զիսանդիսականն հոռոմոսիսն, խորհեալ զանցեալն օրի-  
նակաւ սպառնոյն, փանգի սպազայն անցելոյն փութով  
սայ զգիտութիւն: Եւ ասէր ըստ Փիլոնի քէ ի կենաց աշխար-  
հիս որպէս ի սեղանոյ պարս է առնել՝ ոչ փաղեալ եւ ոչ յա-  
գեալ եւ զորս ունէր բազում որդիս պայազասացեալս  
Լ<sup>3</sup> աւօր ամոք եւ Ի<sup>4</sup> աւօր ամոք դարչեալ ասէր՝ ցանկամ  
թողոյ յէս մնաց ինչ՝ զջանս եւ զառաքինութիւնս եւ զի-  
մաստութիւնս իմ, ըստ Աղեքսանդրոս եւ միշտ Սոկրատոս բա-  
նիք մարգեալ ի հրահանգս մասնից ասէր՝ լա ւ է զգան-  
չարանս բանից պահել փան ընչից: Իսկ ներակրթելովք  
Հին Կտակարանօքն լսէր զայն քէ՝ զպսուղս արմեաց փոց  
առաջնոց բերցիս ի տուն Տեառն Ասուծոյ փո եւ որք ի մար-  
գարէիցն վերոգրեցան: Եւ նոր ուխտիս զոր ասացեալն էր  
ի շէռն Երեմիայ մարգարէի, որ էր միջնորդն Յիսուս, ըստ  
որում ասէր փան զայս սէր ոչ գոյ՝ զի ոք զանչն իւր դնէ ի վե-  
րայ բարեկամաց իւրոց որպէս եւ կասարեաց, ի սա յոյս  
կանխեաց՝ եւ ի սոյն սէր անսաց՝ եւ ի սոյն հաւատ եռացե-  
ալ զոր վաճառականութեամբ վերաբեւեաց՝ եւ ներհմու-  
քեամբ Հին եւ Նոր Կտակարանօքն ճոխացաւ՝ եւ փիլիսո-

<sup>3</sup> = 30

<sup>4</sup> = 20

փայտկանոց գիր ցուցաւ՝ եւ սոյն արդեամբք որ զեկեղեցիս  
Սրբոյն Վերգայ սւացեալ եւ պայծառացուցանէ: Յիշեա-  
ջիք յաղօթս չեր եւ զարդիւն ընդ իւր յերկար ամօք եւ ան-  
սայթափապէս պահել ի պարծանս բազմաց, եւ յաղօթս  
յիշեր Ձեր, Աստուած ողորմի ասելով, ի որն Պեկրացի  
Մահեստ Խօճայ Սուրբ Խանին եւ մորն Եստրեանին,  
պապուն Խօճա Արիիարին եւ եղբորն իւրոյ Պեհրոս Չէլե-  
պոյ եւ ամենայն արեան մերշաւորացն եւ նախնեաց իւ-  
րոց՝ զի տակեանն Քրիստոսի արժանաւորեացին ի փառս  
արքայութեան յաիտենական կենօք. ամէն:

Եղաւ յիշատակս որ կոչի Ժամագիրք եւ Սաղմոսարան  
ի բուսկանիս Ռ-Ճ-Ի-Գ սկիզբն ամի ամանն եկեղեցոյս  
Սրբոյն Վերգայ:

Բ

Ընտրիս ասէնիագին Աստուծոյ, յամի հանրից փրկչին  
1787 Յուլիսի 14, ի գալն մեր ի Թրակիոս ի Կոստանդնու-  
պոլիս, եւ հանդերձեալ, ի կրայն Սիլիվրի, չոգափ ի յուխս ի  
Սուրբ Վերգ կեկեղեցին զոր սւացեալ է հաւոյն իմո Մաս-  
թնու աղայի ի որ, Ապրո Չէլեպոյ արդեամբն, որպէս զրի ի  
վեր անդր ի հանդէպ յիշատակարանում մասենիս: Եւ տե-  
սեալ իմ զմասեանս քայքայեալ եւ սկզբան տեսն պակաս-  
եալ, եւ ասպականեալ ի չեռն մանկոց, առ որ ցաւեցայ  
յոյժ, զի այս իսկ է հազուագիս, մանաւանդ յիշատակագ-  
րութեամբն, զոր արշան իմն է դիտողաց, եւս առաւել զա-  
ռումն եկեղեցոյն յիշատակէ, եթէ չիցէ այս մասեան չու-  
նին այլ պատմաբան, վասնորոյ պահելի է բազում զգուշ-  
ութեամբ: Ուսի եւս, լուսահոգի Պեհրոս Աղայի որդի Աս-  
տուծասուր Ապրոս, որ եւ թոռանորդի լուսահոգի Ապրո

Չէլեպուն, ստեալ իմ եւ զմասեանս եւ բերեալ ի Պոլիս, ի  
նորոյ կազմեցուցեալ եւ զպակասն զրեցուցեալ ի յիշատակ  
նախնեաց իմոց, վերսին դարչուցի ի տեղի իւր, զոր  
Սուրբ Վերգ բարեխօս եղիցի առ տէր վասն բժշկութեան  
Մասթոս որդոյս. ամէն: 1787 Հոկտ. 8, Պոլիս:

Գ

Ընտրիս Ամենակարողին Աստուծոյ Ըստմաբոյն դէպ ի  
յիգմիր գնալս՝ Քրիստոսի ծառայ Մարգար Ապրոեանս որ-  
դի լուսահոգի Աստուծասուր Ապրոեանին՝ եկի ասս  
Սուրբ Վերգայ Եկեղեցոյն երկրպագութիւն զոր Տէր Աս-  
տուած հաստատ պահեացէ. ամէն:

Թվին ՌՄԽԳ<sup>5</sup> Յունվարի ԻԸ<sup>6</sup>»:

Դ

Ես փանորդի Աստուծասուր Աղայի Պողոսս եւս էի  
Մարգար աղային հետ ի միասին:

<sup>5</sup> = 1795թ.

<sup>6</sup> = 28

## ՄԻԼԻՎՐԻԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅՈՒ ԺԱՄԱԳՐՔԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

### Ա

Սուրբ Գևորգ եկեղեցին հույն ազգից առնելը ՌՃԻԴ թվականին, որ Հ.Տ. ԴԿՂՄՆ տարին է:

Մարգարեն իր պատգամում գրում է, ասելով՝ Շրջեցեք Սիոնով, պաշտպանեցեք նրան և շրջապատեցեք նրա աշտարակները:

Որն էլ երբ կարդում էր Աբրահամ Չելեբի այրը, ցանկանում էր ինքը նույնը կատարել համաձայն մյուս մարգարեական խոսքի՝ Երանի նրան, ով Սիոնում զավակ կունենա, որ պատշաճ է մասնավոր առումով: Նա առավել մեծարգո եղավ, քանի որ բուն Սիոնը Տերունական խաչելության խորհրդի հիշատակությամբ վաստակեց Գողգոթային համապատասխան, հաստատելով Աստծու եկեղեցիները, տեղ-տեղ ավերվածները վերանորոգելով: Թագավորի նախարարներն անգամ նրա սիրուց և քաղցր բարքից հարկադրված՝ հույների ձեռքից եկեղեցին վերցրեցին և տվեցին հայոց ազգին՝ վերահաստատելով Միլիվրյան բերդի Սուրբ Գևորգ նախկին անունով: Եվ Աբրահամ Չելեբին, որ եռակի երկնաքաղաքացիություն ուներ, ահա իր վաստակն էր ի հայտ բերում, քանզի անճառելի հանճարով վաճառական էր՝ Կղիտարքոսի ասածի պես. ինչպես որ ճանապարհորդներն են փութալով տուն և հայրենիք դառնում, իսկ իմաստունները՝ իմաստնությանն ու հան-

ճարին, ինչի մասին ասում էր Սուրբ Պողոսը՝ երևացող արարածներով աներևույթն ենք տեսնում, Աստծուն ճանաչում ենք Քրիստոսի սիրո գիտությամբ, լցվելով Աստծու լիությունից: Համաձայն Տիրոջ առակի՝ երբ գտավ այդ թաքնված գանձը, ինչ որ ուներ վաճառեց և գնեց այդ մարգարիտը: Իսկ իմաստասիրական արվեստի ունակությամբ պերճացած՝ նրանց ընտանի փիլիսոփաների հրապարակային ճարտասանությամբ էր վարժվում, անցյալի մասին խորհրդածելով ապագայի օրինակից ելնելով, քանզի ապագան անցյալի գիտությունն է արագ ցույց տալիս: Եվ Փիլոնի նման ասում էր, թե այս աշխարհի կյանքից պետք է ելնել ինչպես ճաշկերույթից՝ ո՛չ քաղցած, և ո՛չ էլ հագեցած, և որերեսնամյա և քսանամյա ժառանգորդ որդիներ ուներ, անդրադառնալով ասում էր՝ ցանկանում եմ ինձանից հետո մնացողներին Ալեքսանդրի նման թողնել իմ ջանասիրությունը և առաքինություններն ու իմաստնությունը, և միշտ Սոկրատի խոսքով վարժվելով, գրքերի խրատներով առաջնորդվելով, ասում էր՝ լավ է խոսքի գանձարաններ պահել, քան՝ ունեցվածքի: Իսկ Հին Կտակարանով ինքնակրթված ընդունում էր այն, որ մարգարեներին վերագրվեց և որն ասում էր՝ Քո բերքի երախայրիքը բեր քո Տեր Աստծու տուն: Նաև Նոր Կտակարանով, Հիսուսի միջնորդ Երեմիա մարգարեի ասած խոսքի, թե՛ Ավելի մեծ սեր չկա, քան եթե մեկն իր կյանքը նվիրաբերի իր բարեկամներին, ինչպես որ ինքը կատարեց. հույսի ակնկալությամբ հնազանդ-

վեց սիրուն, և նույն այս հավատով ջերմացած, ինչ որ վաճառականությամբ վաստակեց, նաև պերճացած Հին և Նոր Կտակարանների կրթությամբ, նաև՝ փիլիսոփայական գրքերից խրատված, նաև այս վաստակներով է, որ Սուրբ Գևորգի եկեղեցին շինեց և պայծառացրեց: Հիշե՛ք ձեր աղոթքներում նրան՝ երկար տարիներ կատարած բարերարության, շատերի բարեկեցությունն անասան պահպանելու համար:

Ձեր աղոթքներում հիշեք նաև, ասելով՝ ողորմյա Աստված հորը՝ Բելգրադի Մահտեսի Խոջա Մուրադ Խանին և մորը՝ Յահրիդանին, պապին՝ Խոջա Ալփիարին ու եղբորը՝ Պետրոս Չելեբիին և իր բոլոր արյունակիցներին, իր նախնիներին, որպեսզի արքայության փառքերում հավիտենական կյանքով Զրիստոսի հայացքին արժանանան. ամեն:

Գրվեց Ժամագիրք և Սաղմոսարան կոչված գրքի հիշատակարանը ՌՃԻԴ Սուրբ Գևորգ եկեղեցու առման առաջին տարում:

Բ

Աստծու շնորհիվ համայնի Փրկչի 1787 թվականի հուլիսի 14-ին Թրակիայից գալով Կոստանդնուպոլիս՝ մենք Սիլիվրիի ամրոց ուխտի գնացինք Սուրբ Գևորգ եկեղեցի, որ շինվել էր իմ նախնի Մատթեոս աղայի հոր՝ Ապրո Չելեբիի վաստակով, ինչպես և գրված է վերոհիշյալ մատյանի հիշատակարանում: Եվ ես մատյանը քայքայված, սկզբի թերթերը պակասած և մանկանց ձեռքով վնասված տեսնելով, խիստ

ցավ զգացի, քանի որ սա իսկապես հազվագյուտ է, մանավանդ՝ հիշատակագրությամբ, որը տեսնողների համար մի կոթող է, առավել ևս որ եկեղեցու շինությունն է հիշատակում, և թե այս մատյանը չլինի, ուրիշ պատում չկա, այդ իսկ պատճառով պետք է մեծ զգուշությամբ պահպանվի:

Ուստի ես՝ լուսահոգի Պետրոս աղայի որդի Աստվածատուր Ապրոս, թոռնորդիս լուսահոգի Ապրո Չելեբիի, վերցրեցի և մատյանը բերեցի Պոլիս, նոր կազմելով և իմ նախնիների հիշատակի գրվածի պակասը լրացնելով՝ դարձյալ վերադարձրեցի իր տեղը, որպեսզի Սուրբ Գևորգը բարեխոս լինի Տիրոջ մոտ որդու՝ Մատթեոսի բժշկման համար. ամեն:

1787, հոկտեմբերի 8, Պոլիս

Գ

Ամենակարող Աստծու շնորհիվ Ստամբուլից Իզմիր գնալիս, Զրիստոսի ծառա Մարգար Ապրոյանս՝ լուսահոգի Աստվածատուր Ապրոյանի որդին, եկա այստեղ Սուրբ Գևորգ եկեղեցում երկրպագության, որը Տեր Աստված թող անասան պահպանի. ամեն:

ՌՄԽԴ թվի ԻԸ հունվարի

Դ

Ես՝ Աստվածատուր աղայի քեռորդի Պողոսս էլ էի Մարգար աղայի հետ միասին:

ԱՊՐՈՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԾՆՉԻ  
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ՝ ԳՐՎԱԾ 1691Թ.  
ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ<sup>1</sup>

Ես Մասթէնու Տեանն ծառայ անասս հոգի,  
Որ եւմ որդի բարեպաշտին Աբրահամի,  
Չոր մականուամբ Ապրօ կոչեալ միշտ յորջորջի  
Միթէ սէրն իմ հոգու նորին յար գրքասցի  
-Ի բուսկանիս հազար հարիւր երեսն յեօթնի<sup>2</sup>  
Ի յամսեանննն նոյեմբերի սասնեւիհնգի  
Խորհուրդ մի գաղտ սրբի իմում հասստեցի  
Բիզանդեայ չուեալ եկեալ Իզմիրս իջի:  
-Ամ մի ողջուն ի սանս այրոց բնակեցի,  
Բայց դիրութիւն ըս իմում մսացս ես ոչ գրի,  
Այնուհետեւ միսք եւ չեոք իմ ի գործ արկի.  
Չի սագնապաւ ի շինութեանց յոյժ ջանացի:  
-Եկեալ յաւարս կասարեցաւ որքան տուն էր.  
Ամբան չմբան մէջ օբարան որքան հարկ էր,  
Մեծաւ ծախիւք յօրինուածօք որպէս յանկ էր  
Պէսպէս դռներք ամուր փակերք գոր պասշաճ էր:  
-Չի նոյն բունջ որ ի սկիզբն կարգեցաք,  
Եկեալ մինչեւ յունիս ամսու երեսունն հասաք  
Ամենայն ինչ ըս պասշաճին կասարեցաք.  
Որպէս իմ կամք էր յօրինեալ զարդարեցաք:  
-Յորժամ սրիսքն ի վեշասաննն լմնեցաք  
Վասն ինչ կարի հարկաւ արանց շուկայն գնացաք

<sup>1</sup> Տպագրված է՝ Վ. Չարդարեան, Յիշատակարան, Կ.Պոլիս, 1911թ.:

<sup>2</sup> Քր. ծննդ. 1687թ.:

Առեալ գնասս փոքրանակի յեսս դարչաք  
Եկեալ մինչ մեր Հայոց եկեղեցին հասաք:  
-Յայնժամ սէրն իմ վասն իմ մեղացն յոյժ բարկացեալ.  
Յօղ մրրկեալ սարեք իստնեալք սիւնն դողացեալ,  
Մասիկ քնդին ի յանդնորոց վեր առաքեալ  
Յոյժ ահագին Իզմիրոյնս շարժումն եղեալ:  
-Չորից կողմանց յորնննք քարինք եւ ի յիս դիմեալ.  
Մասիկ յաեւս յոյժ սագնապաւ փախուտս առեալ,  
Չեան իմ ի սուրբ Ստեփաննոսի յորննք չըգեալ  
Չիս նս յանչնեալ եւ ի յԱստուած սպաւինեալ:  
-Քարինք ի վերայ իմ տեղեալ եւ զիս ծածկեալ  
Լոյս արգիլեալ մէգ եւ իսաարնն զիս պատեալ  
Այնուհետեւ համարեցայ ես զիս մեռեալ  
Մեղայ գոչեալ ելման հոգոյ իմում սպասեալ:  
-Բայց բարեար Աստուածն իմ յոյս յիս գրքացեալ  
Ողորմութեամբ եւ քաղցրութեամբ նախախնամեալ  
Ազդմամբ հոգոյն զիս իսելամոս կարողս արար  
Չի ոյժ առեալ որպէս գ՛լազար արսաքս ելեալ:  
-Յայնժամ ես ի յոսին կանգնեալ եւ յիս նայեալ  
Տեսի արեամբ զիս ճապաղեալ վիրաւորեալ,  
Իսկոյն տունն իմ ի միտ ամեալ անդ սրլացեալ  
Չի ի հիմանց էր սապալեալ բլրուր եղեալ:  
-Միայն զամուսինն իմ գերծեալ պարսիզին կայր,  
Չմայր եւ գորդիքս ներեւ հողու էին մնացեալ  
Մեծաւ ջանք բազումն առեալ մայրս գեալ  
Եւ ընդ նմին զոքանչն իմ ծեր ի դուրս ելեալ:  
-Այսս գորդիքս մսարեալ յոյժ փոշկեալ  
Լալոս աչօք կառկառ քարանց ի քաց հերկեալ  
Յորժամ ելին մարմինքն անցին յոյժ խողիտեալ

Հոգոց հանեալ միջակսոր ւրսաբեկեալ:  
-Յորժամ տեսի զլեարդ եւ զաղիս իմ խարշասեալ  
Իբր զիսաղոդ մէջ հնչանի էին ճնկեալ  
Հառաչանօք աւաղելով զկեանս իմ անցեալ  
Չի բազում երկամբք աշխատանօք էաք սնուցեալ:  
-Չփառեակ մանկունս բարչմամբ ի գիրկ շիրիմ սարեալ  
Ես զկնի մորմոհելով աղէկիզեալ  
Միում վայրկեան ժամանակի լինին փախեալք  
Էկին ի մէջ իսկ հեռացեալ եւ անջասեալք:  
-Մարտափելով էլեալ զնացաք դուռն ժամուն,  
Միքէ յորմունք եկեղեցի կայր ի կանգուն  
Ընդ վարդապետն նստեալ լայեաք պատելն զնոյն  
Կայր պաշարեալ շեռն կցեալ յոյժ կըսկըծոյն:  
- Եւ ֆաղափս էր սապալեալ եւ կործանեալ  
Յոյով մարդիք ընդ կենդանոյն ներքեւն առեալ  
Ոմանք անկեալ, ոմանք բեկեալ, ոմանք կորեալ,  
Ոմանք զերծեալ խելաց, քափեալ եւ ցնորեալ  
-Ոմանք կիսով ի ծերայ փայտի ֆարի անկեալ  
Ոմանք ներքոյ ծածկի մնացեալ եւ արգելեալ  
Ոմանք տեղի նստեմացեալ էին մնացեալ  
Ոմանք ըզհայր, զեղբայր, զորդիս միմեանց շայնեալ  
Յայնժամ լուսք շայն աղէտի կսկծայի  
Վայոց ճիջոց եւ հառաչումն սարսըռելի  
Ով ոք իցէ կարող պատմել որ ոչ հեզնի  
Անհրևարին երկունք պատեաց յոյժ սագնապի:  
-Եւ մինչ մեք սուգ առեալ, լացաք եւ ողբացաք  
Թէ զպատիժս վասն մեղաց մերոց կրեցաք  
Միս սագնապ եւ չար համբաւ եւս լուսք  
Ճայքմունք եւ շայնք սհազնաակի սիւ պատեալք:

-Յանկարծակի հուր հրդեհեալ բորբոհեցաւ,  
Յարեւմեան հողմն սասիկ դէմ հնչեցաւ  
Ի սող ժամու բազում տեղիս սարածեցաւ  
Բողոր խաներք եւ ապարսնք ճարակեցաւ:  
-Անքի անչիւնք ընդ կենդանոյն հրով այրեցան,  
Աղիողորմ շայնիս հնչմամբ տոչորեցան  
Հայր եւ որդիք յօգնել միմեանց ժամ ոչ գտան,  
Միայն զինքեանս ազատելոյ հնարեցան:  
-Ելեալք ի սանց եւ յընտանեաց փախուս դարչան  
Մտացուածք եւ գանձք ոչինչ համարեցան  
Մասիկ էր տասնն բարկութիւն ոչ ժուծեցան  
Իսկոյն անկեալ ի մէջ այգեաց բնակեցան:  
-Ոմանք ժուծկալ ոմանք անտի եւս փախեան  
Ոմանք ի նաւ ոմանք ի գիւղ անկեալ զերծան  
Յոյովք հարուստ աղբասացան, ընչից մերկացան  
Բազումք աղբասք եւ աւազակք փարքամացան:  
-Չնորաչէն տունն իմ ֆակեալ ֆայֆայեցան  
Չոքս ծառայս եւ աղախնեայս ջախջախեցան  
Չի պէսպէս վիշտ ինչ եւ սանն իմ պատահեցան  
Շնորհիս Տեսուն բարչեալ ի մէջ եւս հեռացան:  
-Չայս կրեցի վասն իմ մեղացն իմացայ եւ  
Խրատելով իրաւեաց Տէր զիսացի եւ  
Ոչ քէ իսպառ յուսահատեալ սրտեցայ եւ  
Վլ զոհացեալ մարդասիրէն փառս ետու եւ:  
-Որ զիսն եհար նոյն կարող է բժշկել զիս  
Հոգեւորօք մարմնականօք սիրովել զիս  
Կրկին սայով հանգոյն Յոքայ պերճ առնէ զիս  
Ըստ հաճոյից կամաց իւրոց հաւտուցէ զիս:  
-Վլ զոհաւան միշտ յարարչէն հեշտարուէ

Մեղաւորաց դարչ եւ զղջումն կամեցող է  
Չի հաւասով խնդրուածոց կասարող է  
Ի հառաչանս իւր ծառայից խոնարհող է:  
-Լուր Տէր գրած եւ ողորմած, յար հառաչեմ  
Չսխ եւ զգիշեր կողկողագին եւզ պաղատեմ  
Շնորհեա ինչ Տէր ւրի բարի յոյժ կարօս եւ  
Յուսով, սիրով եւ հաւասով եւզ դիմեալ եմ:  
-Կաթիլ ջրոյդ արժան արա ծարաւի եւմ  
Ի յաղբերէդ բոյ արբեցող պապակեալ եւմ  
Ոչ պակասի բոյոյ բարեացդ գիտակ իսկ եւմ  
Պետդս սալ, վէրս բուժել անյասակ եմ:  
-Լողդս աղօթից հայեցուածոց լուա ինչ Տէր,  
Չողբ զարսաւոյս իւր ծառայի ընկալալ Տէր,  
Ես մխիթար իմ Աբրահամս, սիրտիեաց Տէր,  
Չսրմութիւնս եւ զնեղանս փարսեաց Տէր:  
-Ոչ բէ իմում փոխան բարեացն հասոյց ինչ Տէր  
Այլ ըս իւր առաս գրութեան պարգեւեաց Տէր  
Չայս առնելով զիս յորդորէ ի կամս իւր Տէր  
Կամի փրկել ինչ որսորդի նեփն Տէր:  
-Այժմ որ ունիմ զմանկիկս Տեառն շնորհեալ  
Դեռաբուսիկ ծաղկափթիթ նոր բողբոջեալ  
Սովաւ երարչ զարսուր աչաց մերոց ժիրեալ  
Եւ զուարճացոյց մեծաւ սիրով որպէս զհայր:  
-Յորժամ լո՛ւ չայնս երգոց եղանակաց  
Խօսի լեզուաւ որպէս զչազս աղանեաց  
Խնդայ աչօք պարէ չեոք ի դէմս բազմաց  
Ուրախ առնէ զբազմականս սիրս ծնողաց:  
-Ի Քեն հայցեմք ֆաղցր եւ բարի ներող գրած  
Չի եւս առաս յանխակալ եւ ողորմած

Ինչ եւ զաւակս ի եւզ յանչնեմ Քրիստոս Ասուած  
Չմեզ պահպանեալ զի արեամբդ բոյ եւմ զնած:  
-Հայրն իմ նախկին զոր ծանուցի Աբրահամն է  
Չմայրն իմ համեաւ, արի, զգաւս Կիւլիսան է  
Աւագ եղբայր իմ զոր Մախսոս կոչեցեալ է  
Չոր այժմ երկրին յաշինացոց զեփեղեալ է:  
-Երիցս եղեալ զչեզ աղերսեմ ով ընթերցող  
Ասուածաբուխ ստոխս պատմող եւ հեփտող  
Յիշել յաղօթս զիս եւ զեղբայրս հանդերչ ծնողաւ  
Ողորմիս սալ յջմտութեամբ ւրի մօք:  
-Չայս գրեցաւ ի բուսկանիս հայկականի  
Հազարորդի հարխորդի ֆառասնորդի  
Ի յամսեանին փեփոսարի սասն եւ ութի  
Դուռն արբոյ եկեղեցոյս Մեփիաննոսի  
Բանի Յովսէփի անթիս մեղաց պարսապանի  
Եպիսկոպոս Իզմիլոյիս Ասիայի  
Որք հաղիպիք եւ ընթեռնուք սաք ողորմի  
Միթէ Տէրն իմ չեզ եւ ի մեզ ողորմեացի:

**ԱՊՐՈՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ  
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ՝ ԳՐՎԱԾ 1691 Թ.  
ՓԵՏՐՎԱՐԻ 18-ԻՆ**

Ես Տիրոջ ծառա Մատթեոս նվաստահոգի,  
Որ որդին եմ բարեպաշտ Աբրահամի,  
Որ Ապրո մականվանմամբ է հավետ հայտնի,  
Թող որ իմ հոգու Տերը նրան հավիտյան գթության  
արժանացնի:

Հազար հարյուր երեսունյոթ թվականին,  
Նոյեմբեր ամսի տասնհինգին,  
Իմ սրտում մի գաղտնի խորհուրդ հաստատեցի,  
Բյուզանդիայից գաղթելով՝ եկա հասա Իզմիր:

Ամբողջ տարի ուրիշների տներում բնակվեցի,  
Բայց կարծածս հանգստին չհանդիպեցի,  
Այնուհետև խելքս ու ձեռքն իմ գործի դրի,  
Որպեսզի փութով կառուցումն ավարտեմ շենքի:

Գալով հասա տան շինության ավարտելուն,  
Ամռան ձմռան սենյակներով, ինչպես որ պետք էր,  
Թանկարժեք հարդարանքով, ինչպես վայել էր,  
Ամուր փականքով, պես-պես դռներով, ինչ հարկավ էր:

Այդ նույն տարում, որ սկիզբը դրեցինք,  
Եկանք հասանք մինչ երեսուն հունիս ամսի,  
Ամեն ինչ ըստ արժանվույն վերջացրեցինք,  
Ինչպես կամեցել էի, նույն ձևով էլ զարդարեցինք:

Երբ եկավ ժամը տասնվեցը դարձավ,  
Պետքի համար դաշտավայրի շուկա հասանք,  
Գնելով դրանք փութով վերադարձանք,  
Եկանք մինչև հայոց եկեղեցին հասանք:

Այդժամ Տերն իմ մեղացս պատճառով հույժ զայրացավ,  
Սյուները երկրի տարերքի մրրկահողմից դողողացին,  
Անդունդներից բարձրագոչ թնդյուն ելավ,  
Զմյուռնիայում խիստ ահավոր երկրաշարժ եղավ:

Չորս կողմերից քարե պատերը վրաս եկան,  
Մաստիկ ահից մեծ խուճապով փախուստի տվեցի,  
Ձեռքն իմ դեպ Սուրբ Ստեփանոսի որմնապատը պարզեցի,  
Ինձ Նրան հանձնեցի և Աստծուն ապավեն ինձ դարձրեցի:

Քարերն իմ վրա տեղացին և ինձ ծածկեցին,  
Մեզից լույսը մթնեց և խավարը ինձ շրջապատեց,  
Այնուհետև ես ինձ մեռած համարեցի,  
Մեղա կանչելով իմ հոգու ելքին սպասեցի:

Բայց հույսիս բարեմիտ Աստվածն ինձ գթաց,  
Ողորմությամբ և քաղցրությամբ նախախնամեց,  
Հոգու ազդմամբ մտոք ինձ զորացրեց,  
Զի ուժ առա Ղազարոսի նման դուրս ելնելով:

Այդժամ ոտքի ելա և ինձ նայեցի,  
Ինձ տեսա ոտքից գլուխ համակ արյան մեջ մի վիրավոր,

Իսկույն ին տունը մտաբերելով՝ այնտեղ սուրացի,  
Որ հիմքերից խորտակվելով վերածվել էր մի բլուրի:

Միայն կինս էր պարտեզում լինելով փրկվել,  
Մայրս ու որդիներս հողով ծածկված էին մնացել,  
Մեծ ջանքեր գործադրելով դժվարությամբ մորս գտա,  
Եվ նրա հետ իմ ծեր զոքանչ էլ դուրս եկավ:

Ապա որդիներին հիշելով կսկծալի արտասավեցի,  
Արցունքոտ աչքերով քարակույտերը մի կողմ դիզեցի,  
Հոգոցց հանեցի սիրտս կոտրած հուսալքված,  
Երբ դուրս եկան նրանց մարմինները խիստ խոշտանգված:

Երբ այս տեսա ներսս ամբողջ ասես հրով մրրկեց,  
Հնձանի մեջ ճմլվող խաղողի մմանվեց,  
Հառաչանքով ավաղեցի կյանքս անցած,  
Քանզի տառապալի դժվարությամբ էին մեծացրած:

Չորս մանուկներ գիրկս առած շիրիմ տարա,  
Ապա հետո մորմոքում էի աղեկեզ, գալար,  
Ժամանակի մի ակնթարթում անհայտացան,  
Մեզնից էլան, օտար, պանդուխտ դարձան:

Մարսափահար ելանք գնացինք ժամի դուռը,  
Գոնե պատերը եկեղեցու կային կանգուն.  
Վարդապետի հետ նստած լացինք շրջելով շուրջբոլորը,  
Նա էլ խիստ մորմոքից ձեռքերն էր շարժում կսկծալի:

Նակ քաղաքն էր տապալվել և ավերվել  
Շատ մարդկանց էլ ողջ-ողջ փլատակների տակ առել.  
Ոմանք մեռած, ոմանք խեղված, ոմանք էլ կորած,  
Ոմանք խելքը թոցրած, մտազար ու ցնորված:

Ոմանք կիսով չափ՝ քար ու փայտի ճեղքերի մեջ:  
Ոմանք փլված կտուրի տակ արգելափակված,  
Ոմանք խավար նկուղներում էին մնացել,  
Ոմանք հորը, եղբորը, որդիներին էին կանչում:

Այդժամ հասավ աղետի լուրը կսկծալի,  
Վայոց, ճիչեր և հառաչանք սահմոկելի.  
Ով կարող է պատմել որ չհուզվի,  
Խիստ խուճապի տագնապ հասավ անելանելի:

Եվ մինչև մենք սուգ անելով, ողբում էինք և լաց լինում,  
Թե մեր մեղքերի պատիժներն ենք կրում.  
Ուրիշ փորձանք և չար նոր գույժի էլ պատահեցինք,  
Ճայթյուններով և ահագնագոչ աղմուկով ահավոր  
շրջապատվեցինք:

Անակընկալ հրդեհի հուրը բորբոքվեց,  
Արևմտյան սաստիկ հողմը հանդիպակաց շառաչեց,  
Կարճ ժամանակում շատ տեղեր տարածվեց,  
Բոլոր խաներն ու ապարանքները հրո ճարակ դարձրեց:

Անթիվ մարդիկ ողջ-ողջ հրով այրվեցին,  
Աղիողորմ ձայն հանելով տոչորվեցին,

Հայր ու որդի իրար օգնելու հնար չունեցան,  
Հազիվ միայն իրենց ազատելու հնար գտան:

Տուն ու ընտանիքից փախեփախ եղան,  
Ունեցվածք ու գանձ առ ոչինչ համարեցին,  
Մարտելի էր տեսարանը, պատուհասի դիմանալ  
չկարողացան,

Իսկույն այգի դուրս գալով՝ այնտեղ հաստատվեցին:

Ոմանք դիմացան, ոմանք այնտեղից էլ փախան,  
Ոմանք նավով, ոմանք գյուղ գնալով ազատվեցին,  
Հարուստներից շատերն աղքատացան, ունեցվածքը կորցրին,  
Բազում աղքատներ և ավազակներ էլ հարստացան:

Իմ նորակառույց տունը քանդվեց խորտակվեց,  
Յոթ ծառաներս ու աղախիններս կոտորվեցին,  
Քանգի տանս պես-պես վշտեր պատահեցին,  
Տիրոջ շնորհով նաև մեր միջից էլ վերանալով հեռացան:

Այս իմ մեղքերի պատճառով կրեցի՝ ես հասկացա,  
Խրատելով ինձ Տերը խրատեց՝ ես իմացա,  
Ոչ թե իսպառ հուսահատված ես տրտմեցի,  
Այլ գոհանալով Մարդասերից՝ փառք տվեցի:

Ով ինձ հարվածեց, ինքը կարող է և ինձ բժշկել,  
Հոգևորով ու մարմնավորով ինձ սփոփել,  
Հոբի նման դարձյալ տալով ինձ բարձրացնել,  
Կամքս հաճության համաձայն ինձ հատուցել:

Բայց գոհանում եմ միշտ դյուրալուր Արարչից,  
Որ մեղավորների զղջումն ու դարձը կամեցողն է,  
Քանի որ հավատով խնդրածների կատարողն է,  
Իր ծառաների հառաչանքին անսացողն է:

Լսիր, գթառատ ու ողորմած Տեր, միշտ հառաչում եմ,  
Գիշեր-ցերեկ կողկողագին Քեզ պաղատում եմ,  
Շնորհիր Տեր ինձ բարություն սրտի, խիստ կարոտ եմ,  
Հույսով, սիրով և հավատով Քեզ եմ դիմում:

Ձրի կաթիլիդ արժանացրու՝ ծարավ եմ,  
Քո հագեցնող աղբյուրից խմելու պապակ եմ,  
Բարությունդ անպակաս է՝ հաստատ գիտեմ,  
Պտուղ տալու, վերք բուժելու հնար չունեմ:

Աղոթքներս լսող եղավ Տերը,  
Իր ծառայի արտասավալի ողբն ընդունեց Տերը,  
Աբրահամի մխիթարություն տվեց, սփոփեց ինձ Տերը,  
Տրտմություններն ու նեղությունները վերացրեց Տերը:

Ոչ թե իմ արած բարության փոխարենը հատուցեց Տերը,  
Այլ իր առատ գթության չափով պարգևեց Տերը:  
Այս անելով իր կամքն անելու է հորդորում Տերը,  
Որսորդի նետից փրկել է ինձ կամեմում Տերը:

Այժմ որ ունեմ Տիրոջից մանուկ շնորհված,  
Նորաբողբոջ ծաղկափթիթ դեռահաս,  
Նրանով վերացրեց արտասուքը մեր աչքերից տխրած,  
Եվ մեծ սիրով զվարթացրեց ինչպես հայր:

Երբ նվազի ձայնն է լռում,  
Խոսում է լեզվով ինչպես ձագ աղավնու,  
Ծիծաղում է աչքերով, պարում ձեռքերով շատերի դիմաց,  
Ուրախացնում է ծնողների սիրտը բազմածների դիմաց:

Քեզնից ենք հայցում քաղցր ու ներող բարեգութ,  
Քանզի առատաձեռն ես, անոխակալ և ողորմած,  
Ինձ ու զավակիս Քեզ եմ հանձնում, Քրիստոս Աստված,  
Մեզ պահպանիր, քանզի Քո արյանք ենք փրկագնված:

Իմ հայրը, որ հայտնեցի, Աբրահամն է,  
Իմ մայրը՝ համեստ, արի, խոհեմ Գյուլիհանն է,  
Իմ ավագ եղբայրը, որի անունը Մաքսուդ է,  
Այժմ լատինների երկրում գտնվողն է:

Երրորդության անունով ձեզ եմ աղերսում, ով ընթերցողներ,  
Աստվածաշունչ գրոց պատմողներ և հետևորդներ,  
Հիշեք ձեր աղոթքներում ինձ և եղբորս ծնողներով հանդերձ,  
Ի սրտե ողորմյա ասելով լրջմիտ խորհրդով:

Մա գրվեց հայոց թվականի հազար հարյուր քառասունին,  
Փետրվար ամսի տասնութին,  
Մուրբ Ստեփանոս եկեղեցու դռանը,  
Ասիայի Չմյուռնիայում՝ անթիվ մեղքերի պարտապան  
Եպիսկոպոս Հովսեփի խոսքով,  
Որ հանդիպեք և ընթերցեք՝ ողորմյա ասացեք,  
Գուցե իմ Տերը մեզ ու ձեզ ողորմության արժանացնի:

ГРАМОТА ПЕТРА I  
О ПРИВЕЛЕГИЯХ, ДАННЫХ СМИРНСКИМ  
АРМЯНАМ ПИТЕРУ АБРО И ЕГО БРАТЬЯМ

1717 Г. ЯНВАРЯ 28

Божиею милостию мы ПЕТР ПЕРВЫЙ, царь и самодержец всероссийский и прочая, и прочая, и прочая.

Объявляем сим в силе кому о том ведати надлежит, особливо же Правительствующему нашему Сенату, Губернаторам, Вице-Губернаторам, Комендантам, Ландратам и всякаго чина, Военскаго и Гражданскаго управителям и в городах Инспекторам, Бурмистрам и Таможенным Служителям, понеже в бытность Нашу в Голландии Армянин Питер Абро, всепокорнейше Нам чрез Мемориал свой доносил, что он и два брата его Абрам и Стефан Абро, пребывающия в Смирне великие торги имеют в Индии, Персиде, в Турецкой земле и в здешних Европейских Государствах, который торг их состоит, большая часть в шелку и других Персидских и Остинских товарах и притом во всепокорности представлял Нам, что он и его помянутыя братья, намерены для того своего торговаго промыслу чрез Наши Государства и земли в Персию ездить и оттуда тамошния товары в сии край вывозить и оными торговать чрез города Наши Астрахань и Ерославль, город Архангельской, Москву и Резиденцию Нашу Санкт-Петербург. Також и в Государствах наших всякими теми товарами торговать, с платежем достойно пошлины; но чтоб токмо повелели Мы с оных товаров их, которые они сами и их прикащики как в Персидь так и из Персиды в Наши

Государства, чрез которые нибудь Наши города и пристани, которым путем они заблагоразсудят, вывозить или бо оные в Нашем Государстве продавать, или токмо чрез оное в здешнии краи провозить похотят, со оных пошлину имать во всем против того, как природныя Персидския подданныя жулфинцы платят, на что он от Нас привиллегии и соизволения всепокорнейше просил; того ради, Мы для умножения в Государствах и землях наших комерции, не токмо на сие ево прошение склонность всему составить восхотели, но и сию ему жалованную Грамоту Нашу и привиллегию дать соизволили, повелевая вышепомянутым Правительствующему Нашему Сенату, Губернаторам, Вице-Губернаторам, Комендантам, Ландратам, и всякаго чина Воинскаго и Гражданскаго управителям, а в городах Инспекторам, Бурмистрам и Таможенным Служителям, помянутых Петра, Абрама и Стефана Абро, когда они сею Нашею Грамотою для торговаго промыслу Государства Наши путь имети будут или от себя прикащиков с товары своими пошлют, оных везде свободно и без задержания сухим путем и водою, каким путем и на которые города оныя ехать похотят, со всеми их людьми и вещьми, пропускать, нечиня им никакого озлобления и препятствия; но паче потребованию их чинить оным всякое вспоможение; о товарах же их, которые при них обретаются или с прикащиками их посланы будут таможенным Инспекторам и Бурмистрам и протчим служителям, таким образом во всех чинить и пошлину, також и провозные деньги в указанных местах в нашу казну с них брать, во всем против того как с Персидских подданных армян жулфинцев по учиненному с ними договору берется, а сверх того ничего от них самих и

от прикащиков их вымогать и им ни каких налог и озлобления чинить никто из подданных наших, под опасением нашего гнева и жестокаго штрафа, отнюдь да не дерзает, також Мы Великий Государь, наше Царское Величество всемилостиво соизволяем как оным самим, так и их прикащикам в нашей резиденции в Санктпетербурге и в протчих вышеозначенных городах свободное пребывание иметь и торговать всякими не заказанными товары и отъезжать для торгу в другие наши города и в чужественное Государство и товары свои возить и не отпускать водою и сухим путем с платежем, как выше упомянуто надлежащей пошлины, во всем против тех же Персидских подданных Армян, и сверх того повелеваем Мы, дабы ему Питеру Абро и братьям его и прикащикам чинено было во всем и вяшее пред другими охранение и вспоможение, дабы на то смотря и другие их братья Армяна и других народов купецкие люди заохочены были, то купечество чрез наши земли в Персиду отправлять, чего ради и во утвержение сие Нашею собственною рукою подписали и Государственною Нашею печатью утвердить повелели и сию Нашу грамоту в городе и где пошлины обыкновенно сбор чинится, списывая в книгу отдавать им или прикащикам их по прежнему дефеликому из них или из прикащиков их случится и без сей нашей Грамоты для того купечества в Государства Наши, приехать тож вольно, и того во свидетельство будет, когда список с сей Нашей Грамоты за подписью его Питера Абро и печатью объявят, по которому чинить во всем тож, и якобы и сия Наша подлинная Грамота объявлена была. Дан в Амстердам, Генверя 28 дня 1717-го, Царствования Нашего 35 года.

ՊՅՈՏԻ Ի-Ի ՇՆՈՐՀԱԳԻՐԸ  
ԶՄՅՈՒՌՆԱՅԻ ՀԱՅԵՐ ՊԵՏՐՈՍ ԱՊՐՈՅԻՆ ԵՎ ՆՐԱ  
ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ

1717թ. ՀՈՒՆՎԱՐԻ 28

Ասժո ողորմածությամբ, Մեկն ՊՅՈՏԻ ԱՌԱՋԻՆՍ, համառուսասանյան ցար և ինճակալ և այլն, և այլն, և այլն:

Մույնով հայտարարում եմք ում որ հարկն է, հասկապես Մեր Կառավարական Մեկնաշին, Նահանգապետերին, Փոխ-Նահանգապետերին, Պարեաներին, Լսնորսներին և բոլոր մյուս պաշտոնյաներին, Չինվորական և Քաղաքացիական կառավարիչներին և Բաղադատական Տեսուչներին, Բուրմիսրներին և Մաքսային Ծառայողներին, որ Հոլանդիայում Մեր գտնված ժամանակ Հայ Պիսեր Աբրնի իր Հուշագրով խոնարհաբար մեզ գեկուցել է, որ ինճն ու Չմյուռնիայում գտնվող իր երկու եղբայրներ Աբրամ ու Սեֆան Աբրոները մեժ առևտուր ունեն Հնդկաստանում, Պարսկաստանում, Թուրքաց հողում և այլուցի Եվրոպական Պետություններում, այդ առևտուրը մեժով մասամբ կազմում են մեքսաբը և այլ Պարսկական ու Հնդկական սպրահները և ընդ որում խոնարհաբար ներկայացրեց Մեզ, որ ինճն ու հիշյալ իր եղբայրները մտադիր են իրենց առևտրական նպասակներով Մեր Պետություններով ու հողերով Պարսկաստան մեկնել և սպրահներ բերել այլուցի և առևտրի նպասակով դրանք տեղափոխել Մեր Բաղադատ Ասրախանով, Յարուսալիով, Արխանգելսկով, Մոսկովայով ու Մեր Նասալայր Սանկ-Պետերբուրգով: Ինչպես նաև

այդ սպրահներով Մեր Պետություններում այդ սպրահներով առևտուր անել՝ վճարելով պասշաճ տուրք. բայց միայն թե Մեկն հրամայեմք, որ նրանց այդ սպրահներից, որոնք իրենք կամ իրենց գործակալները կտանեն Պարսկաստան կամ Պարսկաստանից Մեր Պետություններով, Մեր Բաղադատներով ու նավահանգիստներով ինչպես կկամենան տեղափոխել կամ դրանք Մեր Պետությունում վաճառել կամ այլուցի բերել՝ դրանցից տուրք գանձվի այնքան, որքան վճարում են Պարսկաստանի ջուղայեցիները, ինչի համար Մեզնից խոնարհաբար առանձնաշնորհներ ու բույրսվություն խնդրեց. որպեսզի Մեր Պետություններում ու հողերում զարկ ստեղծեն նրա այս խնդրանքին ոչ միայն համաշայնություն սալու ցանկություն ունեցանք, այլև Մեր սույն Շնորհագիրը և առանձնաշնորհները սվեցինք, հրամայելով Մեր Կառավարական Մեկնաշին, Նահանգապետերին, Փոխ-Նահանգապետերին, Պարեաներին, Լսնորսներին և սարքեր դասի Չինվորական ու Քաղաքացիական կառավարիչներին, իսկ Բաղադատական Տեսուչներին, Բուրմիսրներին ու Մաքսային Ծառայողներին, որ հիշյալ Պիսեր, Աբրամ ու Սեֆան Աբրոներին, երբ նրանք Մեր սույն Շնորհագրով առևտրի նպասակով Մեր Պետություններ կգան կամ իրենց գործակալներին սպրահներով կուղարկեն, նրանց ամենուրեք ազատ և առանց ուշացնելու ցամաքային թե ջրային որ ճանապարհով և որ Բաղադատները որ կկամենան մեկնել, իրենց մարդկանցով և իրերով բաց թողնել՝ չհարուցելով ոչ մի դժգոհություն ու խոչընդոտ. այլևին, նրանց առաջին իսկ պահանջի դեպքում ըստ ամենայնի աջակցել. իսկ սպրահներից, որ նրանց մոտ կլինեն կամ կուղարկվեն գործակալներին հեռ մաքսային Տեսուչները ու Բուրմիսրները և այլ ծառայողները սվալ տեղերում այնքան տուրք, ինչպես նաև փո-

խաղաղարշ պէտք է մեր գանձարանին նրանցից վերցնեն, որքան Պարսկաստանի ջուղայեցի հայերից՝ ըստ նրանց հետ կնքած պայմանագրի. իսկ դրանից ավելի նրանցից ու նրանց գործակալներին մեր հայաստաններից ոչ ոք չհամարձակվի կորզել և ոչ մի այլ հարկ ու դժգոհություն չհարուցի՝ աչքի առաջ ունենալով մեր զայրույթը և դաժան տուգանքը, քանզի Մեկն Մեծն Արքայն, մեր ցարական Մեծությունը ողորմածաբար թույլ եւնի սալիս ինչպէս նրանց, այնպէս էլ նրանց գործակալներին ազատ այցելել մեր նստավայր Սանկպետքուրգ ու վերոնշյալ այլ քաղաքներ և առևտուր անել ամեն ժամանակ չարգելված ապրանքներով և առևտրի նպասակով մեկնել մեր այլ քաղաքներ և օտար Պետություն և իրենց ապրանքները սանել և ցամաքային ու ջրային ճանապարհով բաց թողնել այն մասնավճարով, ինչպէս նույն Պարսկաստանի Հայերը, և բացի այդ Մեկն հրամայում եւնի, որ Պիտեր Աբրոյին ու նրա եղբայրներին և գործակալներին մյուսներից զատ ըստ ամենայնի ցուցաբերվի պահանջություն և աջակցություն, որպէսզի դա թուանելով նրանց մյուս Հայ եղբայրները և այլ ժողովուրդների առևտրական մարդիկ ցանկություն ունենան իրենց առևտուրը Պարսկաստանի հետ մեր հողերի միջոցով անել, հանուն ինչի հաստատումն Մեկն Մեր Պետական Կնիքով կնքել հրամայեցիմ սույն Մեր Ընդհանուրը և քաղաքում, որտեղ մասն է գանձվում, գրեթե զրանցել ու նրանց կամ նրանց գործակալներին ազատելն թույլ տալ առևտրի նպասակով մուտք գործել Մեր Պետությունները առանց սույն Ընդհանուրի, և եթե Պիտեր Աբրոյն իր ստորագրությամբ ու կնիքով հավաստի Մեր սույն Ընդհանուրը, ապա հարկ է նույն կերպ վարվել, որովհետև կունենա Մեր այս իսկական Ընդհանուրի ուժը: Տրված է Ամստերդամում, 28 հունվարի 1717-ի, Մեր Իշխանության 35 սարում:

ԷՋԵՐ

5 \*Ներկայիս հայկական Ապրոյան, Ափրոյան, Աբրոյան, ռուսալեզու *Апроян, Аброян* ազգանունների հիմքում Աբրահամ անունն է:

7 \*Չելեբի – ազնվականական երանգ ունեցող մակդիր, որ հին ժամանակ Թուրքիայում տրվում էր սուլթանագուն իշխաններին և բառացի նշանակում է «աստվածաշուք», «դիցաշուք», թուրքերեն չելեբ՝ «դիք» բառից:

\*\*Երեմիա Չելեպի Քեօմիւրճեան (1637, Կ.Պոլիս-1695, Կ.Պոլիս) – XVII դ. մշակութային գործիչ, մատենագիր, բանաստեղծ, թարգմանիչ, տիրապետել է մի շարք օտար լեզուների:

Հեղինակ է բազմաթիվ կրոնական-հակաճառական, ջատագովական, տարեգրական ու պատմական երկերի, թարգմանությունների, ուղերձների, ներբողների, տաղերի: Այս ամբողջ գրավոր ժառանգության մեջ հատկապես արժեքավոր է նրա «Պատմութիւն համառօտ Գճ տարւոյ Օսմանցոց թագաւորացն» չափածո՝ 1811 երկտող տնից բաղկացած պատմական տարեգրային աշխատությունը, որն Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված առաջին ամբողջական երկն է:

\*\*\* Թագավորագնյա Հեթումի և Լևոնի նման Աբրայազուն Աբրահամը նույն սահմանմամբ Մեկն է նրանցից՝ ամեն ինչով նրանց հավասար<sup>1</sup>:

<sup>1</sup> Գրքի այս և գրաբարից աշխարհաբար կատարված մյուս բոլոր թարգմանությունները հեղինակն ամենևին չի համարում անթերի:

11 \*Մահտեսի (մուղտեսի, մղտեսի) – պատվավոր մակդիր, որ կրում էին Երուսաղեմ ուխտի գնացած հայերը: Ծագում է արաբերեն *մոկդիսի* բառից. արաբերեն Կուդս՝ նշանակում է Երուսաղեմ: Թուրքերեն *մուկադդեսի*՝ նշանակում է երուսաղեմացի, երուսաղեմական:

13 \*Քանունի – օսմաներենից թարգմանաբար՝ օրենսդիր:

15 \*Պուղտանաց աշխարհ – Մուղավիա:

\*\* Եվ սրա ժամանակ ջալալիները ձյան պես ծածկել էին Անատոլիա աշխարհը: Սուլթան Մուրադից սկսվեց հրակայծակների բորբոքումը և հոր՝ սուլթան Մուհամեդի օրոք աշխարհով մեկ ջալալիների հրի բոցն այնպես վառվեց, որ ոչ մի տեղ խաղաղություն չկար, բացառությամբ Կոստանդնուպոլսի և թրակացիների աշխարհի, որ Ռումել է կոչվում: Ինչի պատճառով էլ ամբողջ աշխարհից հայերն ու տաճիկներն այստեղ ժողովվեցին և ցրիվ եղան մինչև Բելգրադ, մինչև պուղտանացիների, գոթերի և բոլոր սկյութացիների աշխարհը:

\*\*\* Երբ Կաֆայից Ստամբուլ եկանք, ամբողջ հայոց աշխարհից՝ Թեոդոսուպոլսից ներքև, ոմանք երկու տարի առաջ էին եկել և ոմանցից շատերը մեզ հետ եկան, որ 1605-ին էր, և հետո եկան ուրիշ շատերը ու ցրվեցին Անատոլիայի և Ռումելի բոլոր քաղաքներում՝ մինչև Բելգրադ, մինչև պուղտանացիների և լեհերի աշխարհը:

16 \*Ասլանը՝ նախնիներից քաջածանոթ մեկը և ներկայիս Ապրոյանների փարթամ տոհմից, այնտեղ է ուղարկում իր ազգական Հակոբին և Անկոնայից վաճառելու համար բարձած պղպեղ:

17 \*Դարձյալ նաև թող հիշվի Պարոն Չելեպի Աբրահամը և ես՝ անարժանս, որին նա իր բարեսրտությամբ սեր ցուցաբերելով՝ հյուրընկալեց իր ընտանիքում:

18 \* *Իմ սրտի սիրելի, ով Չելեքի,  
Թող լինենք ծառա՝ գերի,  
Չանսաս նրան, ով որ կասի  
Տպարան հիմնել անտեղի:*

\*\*Դրանք էին Ն. Շնորհալու «Յիսուս Որդի»-ին («Գիրք որ ի մնացորդացն Յիսուս Որդոյ գրոցն տեառն Ներսիսի Կլայեցոյ», 1677թ.) և իր «Տեղեաց տնօրինականաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի», 1678թ.: Ապա ինչ-ինչ նկատառումներից ելնելով՝ Ե. Քեօմիւրճեանը 1678թ. տպարանն ամբողջ գույքով հանձնեց Գրիգոր Մարգվանցուն, որն այն վերասարքավորեց և շարունակեց պոլսահայ տպագրական գործը:

\*\*\* Իր բարեպաշտ և քրիստոսասեր հայր մահտեսի Մուրադխանը և իր համեստագույն մայր Յահիրիդանը:

19 \* Խոջա – պարսկերեն նշանակում է «տեր», «իշխող», «տանուտեր», «ժարուստ»: Այս վերջին երկու իմաստով Պարսկաստանում խոջա մակդիրը կրում էին մեծ տանուտերերն ու հարուստ վաճառականները:

\*\* Ֆիլիպոպոլիս (հայկ. աղբյուրներում՝ Ֆիլիպե) – քաղաք Թրակիայում, որ Զ.ծ.ա. 342թ. հիմնել է մակեդոնացի Ֆիլիպ II-ը: Ներկայումս՝ Պլովդիվ (Բուլղարիա):

20 \*Վենետիկյան Հանրապետություն (լրիվ անվանումը՝ Վենետիկյան Սրբազան Հանրապետություն) – պետական կազմավորում, որ գոյատևել է 697-1797թթ.: Գտնվում էր ներկայիս Իտալիայի հյուսիս-արևելյան մասում, գաղութներ ուներ Ադրիատիկ, Էգեյան, Մարմարյան և Սև ծովերի ավազան-

ներում: Պաշտոնական լեզուները՝ վենետկերեն և լատիներեն, իշխող եկեղեցին՝ Հռոմի կաթոլիկական:

Լիակատար գերիշխանություն ունենալով Ադրիատիկ ծովում և օգտվելով աշխարհագրական հարմար դիրքից՝ առևտրական լայն կապեր է պահպանել Մերձավոր ու Միջին Արևելքների հետ: XVդ. հարուստ, հզոր ու ծաղկուն պետություն էր, ուր զարգանում էին գիտությունն ու արվեստը:

Ուներ կառավարման բարդ ու բազմաստիճան համակարգ: Թեպետ անվանական ղեկավարը դոժն (դուքս) էր, սակայն նրան վերահսկում և ինքնուրույն գործառույթներ էին իրականացնում Մեծ խորհուրդը, Փոքր խորհուրդը, Սենատը, Քառասունի խորհուրդը, Տասի խորհուրդը, իսկ ամբողջ իշխանությունը պատկանում էր Տասի խորհրդի, Սենատի կոլեգիայի և Փոքր խորհրդի կողմից ձևավորվող Լիակատար կոլեգիային:

Վ.Հ. աստիճանական անկումն սկսվել է 1498-ից, երբ պորտուգալացի ծովագնաց Վասկո դա Գաման հայտնագործել է Հնդկաստան տանող ծովային ուղին: 1797թ. մայիսի 16-ին Վենետիկը գրավել է Նապոլեոն Բոնապարտը, որից հետո Հանրապետության՝ Էչա գետի ձախակողմյան տարածքն անցել է Ավստրիային, իսկ աջակողմյանը՝ Ցիզալպյան Հանրապետությանը (հետագայում Իտալական թագավորություն):

**\*\***Կանդիա – Կրետեի ամենախոշոր քաղաք Իրակլիոնի նախկին անվանումներից մեկը:

- 23 \*Մեղանավոր (սարաֆ, լումայափոխ) – խոշոր դրամատեր, ով զբաղվում էր ֆինանսավարկային պարզ գործունեությամբ՝ տոկոսով փող տրամադրելով:

**\*\*** Ով աննշան էր և խիստ աղքատ, շատ հայերից պարտք էր խնդրել,

*Շատ ջանացել Տրաբլուսին տիրանալ, բայց դրամ չէր կարողացել հայթայթել:*

- 27 \*Բիոգրադ-նա-Մորու (հայկ. աղբյուրներում՝ Մորա) – գտնվում է Ադրիատիկ ծովի Պաշման նեղուցի ափին: Առաջին անգամ հիշատակվել է X դ. տարեգրություններում. հիմնվել է հրվաթ թագավորների կողմից, եղել է հրվաթական թագավորության մայրաքաղաքը: 1409թ. միացվել է Վենետիկյան Հանրապետությանը: Թուրքերի հետ վենետիկցիների մղած պատերազմների ժամանակ երկու անգամ ավերվել է (1521թ. և 1646թ.): Վենետիկյան Հանրապետության անկումից հետո (1797թ.) միացվել է Ավստրիային: Առաջին աշխարհամարտից հետո սերբերի, հրվաթների ու սլովենացիների թագավորության (ավելի ուշ՝ Հարավսլավիայի) մաս է կազմել:

1991-ից՝ անկախ Հրվաթիայի կազմում է:

**\*\*** Զյոփրյուլուն վեզիր դարձավ գորբերին տիրելով և պարոններին ու բեզլերբեզերին ջարդելով. շատերի հետ սպանեց նաև Դելի Հուսեյին փաշային: Կալանեցին նաև Չելեբիին, խլեցին նրա դրամը:

- 29 \*Կաստրո – Կրետեի ամենախոշոր քաղաք Իրակլիոնի նախկին անվանումներից մեկն է, որը գործածվել է Բյուզանդական կայսրության ժամանակներում:

**\*\***Մեծ բերկրանք ապրելուց հետո, պարոն Աբրահամը, ինչպես միշտ, դարձյալ մեզ նամակ ուղարկեց, նաև այն ավետիսը մեր ականջին հասցնելով՝ ըստ իմ ականակության, թե՛ որդյակ իմ, քո աղոթքներով իմ այս պանդխտեղի Կաստրո քաղաքում մի եկեղեցի ստացա:

**\*\*\*** *Ձի երեք նավ պատրաստ էին Կրետե գնալ, Շտապեցի նրանց հասնել և Չելեբիի գործը տեսնել:*

30 \*Կամենեց-Պոդոլսկ – ներկայումս՝ քաղաք Ուկրաինայի Խմելնիցկու մարզում, Կամենեց-Պոդոլսկի վարչական կենտրոնը:

Սկզբում եղել է Կիևյան Ռուսիայի, XIII-XIVդդ.՝ Գալիցկ-Վոլինսկի իշխանության կազմում, ապա գրավվել թաթար-մոնղոլների կողմից: XIVդ. երկրորդ կեսին քաղաքը նվաճել է Լիտվան, 1430-ից՝ Լեհաստանը, 1463-ից եղել է Պոդոլյան վոյեվոդության կենտրոնը: 1672-1699թթ. գտնվել է Օսմանյան Թուրքիայի իշխանության ներքո, ապա վերադարձվել Լեհաստանին: 1793թ., Լեհաստանի երրորդ բաժանումից հետո, աջափնյա Ուկրաինայի հետ անցել է Ռուսաստանին: 1918-1921թթ.՝ Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետության գործերի կազմավորման և զինվորական ղեկավարության տեղակայման կենտրոնատեղի:

Քաղաքում մինչ օրս պահպանվել են Հայկական ջրհորը, հայոց Դատաստանական և Առևտրային տները, Հայկական շուկա հրապարակը, Սբ. Նիկողայոս եկեղեցին:

35 \*Կարլովիցի դաշնագիր – կնքվել է 1699թ. հունվարի 26-ին Ավստրիայի, Լեհաստանի, Վենետիկյան Հանրապետության և Օսմանյան կայսրության միջև: Ըստ դրա, օսմանցիներից Ավստրիային անցան ամբողջ Հունգարիան, Տրանսիլվանիան և Տիմիշոարան: Վենետիկյան Հանրապետությունը ամրագրեց դեռևս 1686թ. գրաված Մորեա թերակղզին ու Դալմացիան: Լեհաստանը վերադարձրեց Բուչաչայի դաշնագրով կորցրած հողերը, այդ թվում՝ Պոդոլյեն և Աջափնյա Ուկրաինայի մյուս տարածքները:

Այս պայմանագրի ստորագրումը արդյունք էր այն բանի, որ 1697թ. սեպտեմբերի 11-ին Չենտի մատույցներում օսմանյան բանակը ծանր պարտություն կրեց ավստրիացիներից: Կարլովիցի դաշնագիրը Ավստրիային դարձրեց Եվրոպայի գորեղ տերություններից մեկը:

36 \*Մոզոպոլ (հայկ. աղբյուրներում՝ Սյուզեպոլիս) – բուլղարական ափի ամենահին քաղաքը, գտնվում է Բուրգասի ծովածոցի հարավում՝ երկու գեղատեսիլ թերակղզիների վրա: Հիմնել են հույները՝ Ք.ծ.ա. VII դ. և կոչել Ապոլոնիա: Ք.ծ. V դ. ստացել է ներկայիս անվանումը: 705թ. նվաճել են օսմանցի թուրքերը:

\*\* Եկել-հասել էին Ֆիլիպոպոլիս, այնտեղ միմյանց տեսնելով՝ խիստ արտասվեցին իրենց բաժին հասած տառապանքների և կրած բազում վշտերի պատճառով:

37 \*Միլիվրի – քաղաք Թուրքիայի եվրոպական մասում: Գտնվում է Մարմարյա ծովի ափին, Ստամբուլից 65 կմ հեռավորության վրա: Այստեղ է ծնվել հայ մեծանուն գրող, Յեղասպանության զոհ Ռուբեն Սևակը (1885-1915):

\*\*Իսլիմիյե – բուլղարական Սլիվեն քաղաքի թուրքական անվանումը:

\*\*\*Մահալըճ – գյուղ, որ ենթադրաբար գտնվել է Բրուսայի շրջակայքում:

\*\*\*\*Էդիրնե (հուն. Ադրիանուպոլիս) - քաղաք Թուրքիայի հյուսիս-արևմուտքում: Գտնվում է երկրի եվրոպական մասում, Հունաստանի հետ սահմանի վրա:

\*\*\*\*\* Սա է տապանը հանգստյան Բելգրադցի մահտեսի Մուրադիսանի որդի պրն. Աբրահամ Չելեբիի,

որ հանգավ Քրիստոսի ՌՃԻԵ.

Տերունական 1676 թ. ապրիլի 15-ին

38 \*Քրիստոսասիրտ և ողջախոհ

39 \*Ապրո Չելեբի որդի Մաքսուդի. 4 ապրիլի ՌՃԿԲ:

40 \*Ստադիում – 178 մետր:

41 \*Հում մետաքս – մետաքսաբուծից չհանված հումք, որը վերամշակվում էր Եվրոպայում ու շատ բարձր գին ուներ: Կային հում մետաքսի մի քանի տեսակներ:

46 \*Գխտոր – ընկուզեղենի տարատեսակ, որից ստացվում էր քանաք:

47 \*Ալիկոնայ – Լիվոռոյի հայկական անվանումներից մեկը:  
\*\* ՌՃԻԳ թվի նոյեմբերի 8-ին, երկուշաբթի օրվա առավոտյան ժամը 11-ին, ես՝ Մատթեոս, պսակվեցի Իզմիրում:

Նույն թվականի նոյեմբերի 11-ին, հինգշաբթի, աղային նավով ճամփա դրեցինք, որ գնաց Ալիկոնա: Աստված բարի ճանապարհ տա:

48 \*ՌՃԻԹ թվականի հունվարի իններորդ օրը, ուրբաթ, ժամը 1-ից հետո ծնվեց Սարան, տարվա խորհրդանշանը՝ Կարին: Միածին Քրիստոսը թող երկար օրեր պարգևի. ամեն: Չորս ամիս էր կենդանի և հետո մահացավ:

Փառք ու պատիվ և գովություն ու երկրպագություն Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, որ իր առատ ողորմածությամբ և բարեխոսությամբ իր Սուրբ Կույս ծնողի ՌՃԼԱ թվականի հունվարի երեսունին, երկուշաբթի կեսօրին, ինձ պարգևեց դուստր Հռիփսիմեին: Աստված երկար օրեր տա՝ Սուրբ Կույս Աստվածածնի և բոլոր սրբերի բարեխոսությամբ. ամեն:

\*\*Մառչիլ – փողի միավոր: Ըստ Գուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի», գործածության մեջ է եղել մի շարք եվրոպական և ասիական երկրներում: Ունեցել է տարբեր փոխարժեքներ. Բասրայում 1 մառչիլը = 3 արասի, Բաղդադում = 8 բաղդադի, Հոռոմում՝ 15 մառչիլը = 1 թումանի: Օսմանյան Թուրքիայում 500 մառչիլը = 1 քիսայի (քսակ):

51 \*Մեր Տեր Հիսուս Քրիստոսի փառքով, աշտանակի յոթնաջահ լույսով գահ բարձրացավ Քրիստոսասեր Լյուդովիկոս թագավորը, որ արքայություն ստանձնեց՝ հովվելու Տիրոջ բազմահազար ազգերին: Որոնց էլ արժանավորապես կարգավորեց և զորացրեց, ինչպես նաև ինքն իրեն հոգեպես պայծառացրեց և մեղքերի աղտեղությունը վերացրեց՝ հեռու վանելով իրենից և ընթացավ տերունական շավիղներով, որ կյանքի ճշմարիտ ճանապարհն է: Ինչի համար խնդրենք և հարատև աղոթք մատուցենք ամենակարող բարձրյալ Քրիստոսին, որպեսզի իր արժանավոր ծառա Լյուդովիկոս XIV թագավորին ստույգ ճանապարհով և կյանքով հասցնի օրհնյալ արքայության անապական և հավիտենական փառքերին: Եվ իր ազնվագարն արքայազուն թագածառանգ որդիներին թագավորական փառքով պսակի սերնդեսերունդ ամբողջ կյանքով՝ հանուն իր ժողովրդի պարծանքի և հաղթության. ամեն:

54 \*Սա է տապանը Ապրոյան Մաթոս աղայի որդիներ Աբրահամ և Մուրադխան աղաների, որ ՌՃԼԷ թվի հունիսի ութին մահացան երկրաշարժից:

56 \*Սկզբնական շրջանում մեկ բաժնետոմսն արժեր 3 գուլդեն, որով կարելի էր գնել 3 սայլ ցորեն:

57 \*Մալակա – այժմ՝ Մալայզիայի կազմում:  
\*\*Սիան – այժմ՝ Թայլանդ:  
\*\*\*Ֆորմոզա – այժմ՝ Թայվան:

61 \*Երբ ժամանում է հիշյալ քաղաքը, այստեղ կար կառուցված հայոց եկեղեցի, որը նվիրագործելով ամենասուրբ Հոգու անունով՝ մեծ հանդիսավորությամբ օծեց, և սա եղավ Տիրոջ հաջողելով:

- 63 \*Ի դեպ, հայերը Մոսկվայում առաջին անգամ պաշտոնապես հիշատակվում են 1390թ. «Загорелся посад за городом от Авраама, некоего ерменина»: Фашտաթուղթը հրատարակված է «Продолжение летописи по Воскресенскому списку, Полное собрание русских летописей, т. 8, СПб., 1859г., с. 60:
- 69 \*Ռուսերեն բարձրագույնը՝ «Записки Я. К. Номена о пребывании Петра Великого в Нидерландах в 1697/98 и 1716/17 гг.» վերնագրով, հրատարակվել է Կիևում, 1904թ.:  
\*\*Այդ ժամանակ Գլխավոր նահանգները նիդերլանդական գավառների բարձրագույն դասային ներկայացուցչական մարմիններն էին: «Պարոնայք նահանգներ» ասելով՝ հեղինակը նկատի ունի իրենց գավառի բարձրաստիճան պաշտոնյաներին, ավագներին:
- 71 \* Իմ ենթադրությունը կողմնակի մի ապացույց էլ ունի: Վ. Չարդարյանը բառացիորեն գրել է. «Ապրոյան Աբրահամ, Պետրոս և Ստեփան: 1715-ին հայտնվել են Ամստերդամում: «Լավություն» են արել Պետրոս Ա-ին» (Հիշատակարան – 1942, Կահիրե, 1941թ., էջ 69): «Լավություն» բառը չակերտների մեջ վերցնելն ու գործածելը նշանակում է, որ Պետրոսը Պյոտրին ինչ-ինչ ծառայություններ է մատուցել: Թե Վ. Չարդարյանն ինչի հիման վրա է այս պնդումն արել, դժբախտաբար, չի նշել: Կամ, միգուցե, ենթադրել է:
- 72 \*Կուզենայի մի խեղաթյուրանքի առնչությամբ անել հետևյալ պարզաբանումը: 1974թ. լույս տեսած «Հայկական սովետական հանրագիտարանի» 1-ին հատորի 517-րդ էջում Աբրահամ, Պետրոս և Ստեփան Ապրոների մասին գրված է. «Մեծահարուստ և ձեռներեց վաճառականներ, մետաքսագործներ: Վաճառատներ են ունեցել Ասիայում ու

Եվրոպայում: Ամստերդամում ծանոթացել են Պյոտր I-ի հետ, որը նրանց հրավիրել է Ռուսաստան՝ մետաքսագործությունը տարածելու նպատակով: 1717-ի հունվարի 28-ի կայսերական հրովարտակով նրանց շնորհել է ամբողջ կայսրությունում ազատ առևտուր անելու արտոնություն: Շուրջ 10 տարի ապրել են Մոսկվայում, ապա վերադարձել Չմյունխա»: Այս բառ-հոդվածի հեղինակը Հ. Ղազարյանն է: Ակնհայտ է, որ մեջբերված հատվածում առկա են անճշտություններ. ա) Ապրոներից և ոչ մեկը մետաքսագործ չի եղել, նրանք նաև հում մետաքսի վաճառականներ էին, բ) Պյոտր I-ի հետ Ամստերդամում առնչվել է Պետրոսը, իսկ 1717թ. Աբրահամն ու Ստեփանը գտնվում էին Չմյունխայում: Բայց առավել տարօրինակ է այն պնդումը, թե շուրջ 10 տարի ապրել են Մոսկվայում: (Ի դեպ, նույնը, ավելի «ծաղկեցված» տեսքով, «քոչել» է «Հայկական համառոտ հանրագիտարան», ուր ասված է. «Աբրահամը (1689-1719), Պետրոսը և Ստեփանը եղել են վաճառականներ և մետաքսագործներ: Պետրոս I-ի հրավերով Ամստերդամից տեղափոխվել են Ռուսաստան, զբաղվել մետաքսագործությամբ, 1717-ին ստացել կայսրությունում ազատ առևտրի իրավունք, 1727-ին անցել Չմյունխա», Ե., 1990թ., էջ 251):

Հ. Ղազարյանը բառ-հոդվածում նշել է մեկ աղբյուր՝ Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» (հտ. Ա, Ե., 1959թ.) աշխատությունը, որտեղ, սակայն, ոչ մի նման բան չկա: Ուրեմն ումի՞ց է օգտվել Հ. Ղազարյանը: Թերևս, Թիֆլիսի «Արփի» շաբաթաթերթի խմբագիր Հ. Տեր-Աստուածատրեանցի 1906թ. Փարիզում լույս տեսած «Հայ վաճառականութիւնը Ռուսիայում: Պատմական տեսութիւն վաերաթղթերով, Է-ԺԸ դար» գրքից: Այս հեղինակը Պետրոս Ապրոյի մասին գրում է. «Ապրոյի մասին մեր աղբիւրները շատ քիչ են, միայն այսքան գիտենք, որ Ապրոն դեռ 1731-ին (եթէ ոչ ինքը գոնէ նրա ժառանգները) Պետերբուրգում առեւ-

տուր էր անում» (էջ 43): Թե Հ. Տեր-Աստուածատրեանը որտեղից «գիտե»՝ որևէ աղբյուր չի նշում, այսինքն՝ մերկապարանոց հայտարարություն է:

Հօգուտ այն փաստարկի, որ ոչ Պետրոս Ապրոն, ոչ նրա ժառանգները կամ եղբայրները երբևէ չեն եղել Ռուսաստանում ապացուցվում են այլ իրողություններով:

Նախ, Ապրո եղբայրներին անդրադարձած բազմաթիվ հեղինակներից (Ն. Ակինյան, Հ. Քյուրտյան, Կ. Եզյան, Առ. Սարուխան, Մ. Պոտուրյան, Վ. Չարդարեան, այլք) և ոչ ոք նման փաստ չի նշել:

Երկրորդ, XVIII դ. հայ-ռուսական հարաբերություններն ուսումնասիրած խորհրդահայ պատմաբաններից որևէ մեկը (Լեո, Աշ. Հովհաննիսյան, Ռ. Խաչատրյան, Վ. Դիլոյան, Վ. Ոսկանյան, Վ. Բայբուրդյան, Շ. Խաչիկյան և ուրիշներ) նույնպես նման փաստ չի արձանագրել:

Երրորդ, Պյոտր I-ը վախճանվել է 1725թ. հունվարի 25-ին, ինչի հետևանքով նրա թղթերը կիրարկման ուժը կորցրեցին, հետևաբար ոչ մինչև 1727թ. կամ առավել ևս 1731թ. Ապրոնները չէին կարող գտնվել Պետերբուրգում և օգտվելով շնորհագրից՝ ազատորեն զբաղվել առևտրով:

Բացի այդ, երկարամյա ուսումնասիրության ընթացքում տողերիս հեղինակը ևս որևիցե նման հիշատակության չի առնչվել:

Այս ամենը հիմք է տալիս վստահաբար պնդելու, որ Ապրոնները Ռուսաստանում չեն եղել:

Մույն ճշգրտումը կատարում ենք այն պատճառով, որ առայսօր «Հայկական սովետական հանրագիտարանը» ոմանք համարում են «վերին» ճշմարտություն, և, ի թիվս բազմաթիվ անճշտությունների, Ապրոների վերաբերյալ պատմական խեղաթյուրանքը ևս ինքնաբերաբար տեղ է գտնում մերօրյա հրատարակություններում:

78 \*Մուհամեդ Ալի (1769-1849) – Եգիպտոսի ինքնիշխան պետության հիմնադիրը, իրականացրել է բազմաթիվ քաղաքական, տնտեսական, սոցիալական բարեփոխումներ: 1811թ. ոչնչացրել է մանյուկների շարժումը, ապա վարել նվաճողական քաղաքականություն. նրա զորքերը ներխուժել են Սաուդյան Արաբիա, Հունաստան, գրավել Սուդանը, օսմանյան նահանգներ Սիրիան ու Լիբանանը: Ռազմական այս հաջողություններն անհանգստացրել են արևմտյան պետություններին ու Ռուսաստանին, որոնք նրան ստիպել են թողնել նվաճված տարածքները (բացառությամբ Սուդանի): Դրա փոխարեն 1840թ. Մուհամեդ Ալին ճանաչվել է ձևականորեն Օսմանյան կայսրության մեջ մնացած Եգիպտոսի ժառանգական տիրակալ, ինչի հետևանքով նրա հետնորդները իշխել են շուրջ 150 տարի (1805-1914՝ խտիվներ, 1914-1922՝ սուլթաններ, 1922-1952՝ բազավորներ):

79 \*Խեղիվ (հայկ. աղբյուրներում՝ խտիվ) – 1805-1914թթ. այսպես էին կոչվում Եգիպտոսի միապետները, որոնք ձևականորեն ենթակա էին օսմանյան սուլթանին:

81 \*Ով ազգասեր հոգի Պողոս բեյ Յուսուֆյան, որ մայր Հայաստանին և նրա հարազատներին անժամանակ սուգի մեջ թողնելով՝ վերացար հայոց 1843 դեկտեմբերի 29-ին. սա հավերժ հիշատակ է քո չնաշխարհիկ հանճարին՝ ազգակիցներից սիրով շինված Տիրոջ տաճարում, ընդունիր և ննջիր:

Ֆրանկների 1844թ. հունվարի 10:

82 \*Այս հասկացությունը ծագում էր միջնադարյան Գերմանիայից և մատնանշում կառավարման կարգավիճակ: Սկզբնական շրջանում կար երկու հիմնական ձև՝ *կայսերական քաղաք* և *ազատ քաղաք*: Առաջինը ենթարկվում էր անմիջականորեն կայսրին, այսինքն՝ քաղաքային համայնքի

ընտրովի ղեկավարությունը շահութահարկ էր վճարում ոչ թե տեղական հողատեր ֆեոդալներին՝ իշխաններին ու հերցոգներին, այլ՝ անձամբ կայսրին: Երկրորդը կառավարում էր իշխան-եպիսկոպոսը: XVդ. *ազատ և կայսերական քաղաքները* որպես դաս ներկայացված էին ռեյխստագներում՝ «ազատ և կայսերական քաղաքներ» անվամբ: Ժամանակի ընթացքում, խոսակցական լեզվում, հասկացությունը փոփոխում կրեց և ստացավ «ազատ կայսերական քաղաք» ձևը:

83 \*Բախտախնդիր բառը տվյալ ենթատեքստում պետք է հասկանալ *բախտ որոնող, բախտի ետևից գնացող* իմաստով:

84 \*1817 թ. պարենամթերքի սղության պակասության ժամանակ, նա շատ անգամ ավագանուն և քահանաներին քաղաքի սովյալների համար ցորեն էր բաժանել տալիս. նաև նորաշեն քաղաքում աղքատանոցների, հիվանդանոցների և որբանոցների կառուցման համար առատապես հանգանակություն էր անում՝ գերազանցելով բոլորին:

85 \*Այդ ժամանակ, գնահատանքով պատմում են մեր մեծատունները, ոչ միայն մեծահոգաբար իր աջակցությունը ցուցաբերեց, այլև հաշվենկատ տնտեսվարությամբ արդյունքի հասավ՝ բացելով իր գանձատունը բոլորի համար, ովքեր մեծ գումարների կարիք ունեին, և այնուհետև բոլոր վաճառատներում շրջանառվում էին նրա բազում դրամները և փոխանակագրերը, և վաճառականների միությանը միանվագ հարյուր հազար ֆիորին տվեց՝ հարյուրի դիմաց հինգ տոկոսով, վաճառականների միության առաջ խոստացավ, թե նրանք, ովքեր ազատորեն կցանկանան դրսում հանգանակել, ինքը կրկնապատիկը կտա:

Վաճառականների միությունը զարմացած նրա բարերա-

րությունից, ոչ միայն շնորհակալագրով մեծարեց նրան՝ տալով մեծ և առաջին քաղաքացու կոչում, այլև ընդունեց որպես անշահախնդիր և անբասիր կենցաղավարության տիպար:

\*\* Նորին վսեմություն Պողոս Բեյը իսկույն հոժարական իր ստորագրությամբ փոխ տվեց 32.500.000 տաճկական դուրուշ, որը Տրիեստում պիտի վճարվեր իր եղբայր մեծարգո Յուսուֆյան Պետրոս աղային: Ուստի Նորին Մեծություն փոխարքան էլ անցյալ տարվա բամբակից 100 հազար դանթար ուղարկեց վերոհիշյալ մեծաշուք հայազգի աղային, որ իր հաշվին վաճառի, ինչպես նաև նոր հունձքի բամբակից էլ բավականաչափ ապրանք ուղարկեց:

86 \*Գորիցա – անապակ օդով գեղեցիկ գյուղակ Բուլղարիայում, Սոլնեչնի Բերեգից 20 կմ հեռավորության վրա:

\*\* Ամբողջ քաղաքը հավաքվեց նրա հանդիսավոր հուղարկավորությանը, որովհետև չկար մեկը, ով նրա բարերարություններից անմասն մնացած լիներ, առավել ևս բոլորը ողբում էին նրա մահը որպես հասարակության հոր, և մեծաշուք պայծառությամբ քաղաքի համայն քահանաների բազմությունը՝ խնկարկելով և մոմավառությամբ, նրան տարա-դրեց մայր եկեղեցում, և երեք օր հետո նրա զմռսված պատվական դիակը շոգենավով ժամանեց Ջմյուռնիա՝ այնտեղ ամփոփվելու հայրենական շիրիմներում՝ իր հոր և մոր դամբանում, ինչպես որ ավանդել էր կտակով:

87 \*1881թ. դեկտեմբերի 27-ին Թազվոր փաշա Հակոբյանի (1827, Ջմյուռնիա – 1888, Ալեքսանդրիա) նախաձեռնությամբ ու նրա տրամադրած 6000 եգիպտական ֆունտ ստերլինգով սկսվեց Սբ. Պողոս-Պետրոսի վերակառուցումը և վերածովեց 1844-ին:

88 \* Հիշիր Տեր ողորմությանը Քո հոգիները Յուսուֆյան Պողոս և Պետրոս երկու հարազատ եղբայրներին և բոլոր ննջեցյալներին, որոնք շինեցին Սուրբ Եկեղեցին և դրան նվիրեցին շատ սպասք և ընդարձակ պարտեզ: Տեր Աստված Քո փառքերի մեջ ընդունես և, նրանց բոլոր մեղքերին թողություն շնորհելով՝ երկնային արքայությանը արժանացնես նրանց հոգիները: Ամեն:

Սա գրվեց Գաբրիել Արքեպիսկոպոսի հրամանով մեր Փրկչի 1844 թ.-ի հունվարի 1-ին:

90 \* Չմյուռնիայի Սուրբ Մեսրոպյան հայոց վարժարան: Հին հիշատակ մինչ այժմ ավանդությանը իմացված Ապրոյանների տոհմի: Սույնը կառուցվել է 1825-ին՝ հին վայրում, սուրբ եկեղեցու ջանքով. ուսունարանի դռան վերին ճակատին ունի այսպիսի հիշատակություն.

Այս դարատունը հիմնովին նորից կառուցվել է տիրապահ քաղաք Չմյուռնիայի Սբ. Ստեփանոս եկեղեցու ջանքով ու ծախքով՝ օրինյալ ազգիս դեռահաս մանուսներին կրթելու համար: Տերունական 1825-ի նոյեմբերի 15:

93 \* «Երբ ողորմածություն անես, թող քո ձախը չիմանա, թե ինչ է անում աջդ, որպեսզի քո ողորմածությունը ծածուկ լինի, և քո Հայրը, որ տեսնում է ծածուկը, քեզ կհատուցի հայտնապես»:

94 \* Ըստ որոշ տվյալների, Ապրոններն ունեցել են ստամոքսի գեներտիկական անբուժելի հիվանդություն:

95 \* Իսմայիլ փաշա – խտիվ Իսմայիլ Առաջին (1863-1879):  
\*\*Մասաուա – քաղաք Աֆրիկյան մայրցամաքի հյուսիսարևելյան մասում գտնվող և 1993թ. Եթովպիայից անկախացած Էրիտրեա պետությունում, նավահանգիստ Կարմիր ծո-

վի ափին: Տարբեր ժամանակներում գաղութացվել է Պորտուգալիայի, Եգիպտոսի, Օսմանյան կայսրության, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի կողմից:

98 \* Սուրբ Հռիփսիմեի անվան իգական դպրոց, որ հիշատակ է Պողոս Բեյի և Պետրոս Ամիրա Յուսուֆյանների քրոջ դուստր բարեպաշտուհի Հռիփսիմե տիկնոջ, Իզմիր, 1849:

99 \* Պատվո լեզոնի խաչ – հիմնվել է Նապոլեոն Բոնապարտի կողմից: Բաղկացած է հինգ աստիճաններից՝ ա) Մեծ խաչ, բ) Մեծ սպա, գ) Հրամանատար, դ) Սպա, ե) Ասպետ:  
\*\*Աբաս Ա (1813-1854) – Թոսուն փաշայի որդին, Մուհամեդ Ալիի թոռը: 1848-ին հաջորդել է իր հորեղբայր Իբրահիմ փաշային, որպես Եգիպտոսի միապետ:  
\*\*\*Սայիդ փաշա – 1854-1893թթ. Եգիպտոսի խտիվ:

101 \* Նոյեմի-Վարդուհի Նուբարի Նուբարյան (1853, Ալեքսանդրիա- 1947, Փարիզ) – ամուսնացել է Լևոն բեյ Գափամանյանի հետ: Բարեգործուհի, դրամական խոշոր նվիրատվություններ է կատարել ՀԲԸՄ-ին, Փարիզի Աղքատախնամ ընկերությանը:

103 \* Լատինական լեզուներում դի ազգանվանակերտ նախածանցի ի-ն սղվում է և ապոստրոֆ դրվում, եթե հաջորդ բառն սկսվում է ձայնավորով (դիցուք, Dicran d'Abro, Aslan d'Abro և այլն): Դի նախածանցով ազգանուններ ունեցել են եվրոպաբնակ շատ հայեր (օրինակ, Պետրոս դի Սարգիս Գիլանենց): Բայց դա չի նշանակում, թե նրանք բոլորն ապրել կամ գործել են Եվրոպայում (օրինակ, Աստրախանում՝ հայտնի էին Աղազար դի Խաչիկին, Գրիգոր դի Սաֆարը):  
Բանն այն է, որ մինչև XVIIIդ. կեսերը գործածվում էր պատկանելություն ցույց տվող որդի բառը (ասենք, Հակոբ

որդի Սարգսի) և «հայտնագործված» չէր –յան ազգանվանակերտ վերջածանցը: Այդ իսկ պատճառով օտար երկրներում բնակվող հայերն օգտագործում էին լատինական di, ռուսական -**еВ**, -**об**, երբեմն էլ թուրքական օղլի ածանցները:

**\*\* Ա. Գարտաշեանը** իր «Նիւթեր Եգիպտոսի պատմութեան համար, հտ. Բ, Պատմութիւն եգիպտահայ բարերարներու և կրթական հաստատութիւններու» աշխատության 191-րդ էջում նշում է ա՛յս տվյալը: Մակայն նույն գրքի 105-րդ էջում գրում է, թե Տիգրան դ՛Ապրոն ծնվել է 1846թ. հունվարի 15-ին և մկրտվել այդ թվականի ապրիլի 10-ին: Հավաստի են համարել 191-րդ էջում նշվածը, մտածելով, որ Ա. Գարտաշեանը հավանաբար լրացուցիչ տվյալներ է հայտնաբերել, այդ էջն ավելի ուշ գրել՝ մոռանալով խմբագրում կատարել:

104 \*Խառը դատարան – Եգիպտոսում հիմնված դատարան, որ կազմված էր եվրոպացի ու տեղացի անդամներից: Մինչ այդ եվրոպացիների ու տեղացիների միջև ծագած վեճերը քննում էին միայն եվրոպացի դատավորները:

105 \*Սուեզի ջրանցք – Միջերկրական և Կարմիր ծովերն իրար միացնող ջրանցք. բացվել է 1869-ին:

109 \*Ա. Գարտաշեանն իր վերոհիշյալ գրքի 106-րդ էջում նշում է այս տվյալը, սակայն 191-րդ էջում գրում, թե ծնվել է 1886թ. հունիսի 17-ին Փարիզում: Հավաստի են համարել առաջինը:

110 \*Էվիան-լե-Բեն – նշանավոր առողջարան Ժնևյան լճի հարավային ափին:

113 \* «Հանգուցյալ Տիգրան Փաշա Տեր Ապրո Բագրատունու և վսեմաշուք Պողոս Նուպար փաշայի անվան՝ Կահիրեի Ազ-

գային Առաջնորդարանի կառուցմանը նպաստողների՝ անմոռանալի հիշատակին»:

Այս արձանագրությունը այստեղ դրվեց իբրև նշանակ համայն Եգիպտոսի Հայոց հավերժական սիրո և երախտագիտության. 1930-Ռ-ՁԸԸ:

115 \*Ինչի դ՛Ապրո-Ջինորիի մասին առկա է ևս մեկ հիշատակություն, ճիշտ է՝ ոչ-հավաստի և խիստ կասկածելի: Խարդախության համաշխարհային պատմության մեջ կա մի անկրկնելի անձնավորություն՝ ռուս կորնետ Նիկոլայ Մավին: Ֆինանսական զեղծարարությունների, խարդախությունների, քաղաքական բանասարկությունների համար այս մարդն իր կյանքի շուրջ 25 տարին անցկացրել է Ռուսաստանի, ինչպես նաև եվրոպական և ասիական տարբեր երկրների բանտերում:

1913թ. ռուսական լրագրերից մեկը տպագրեց նրա հուշագրությունը՝ «Կորնետ Մավինի նոթերը»: Ուշադրության է արժանի այդ արկածախնդրի հուշապատումը Ֆլորենցիա կատարած այցելության վերաբերյալ: Նա գրում է, «Թատրոնում ինձ ներկայացրեցին իտալական հասարակության մի քանի տիկնանց, այդ թվում և երկու չքնաղ գեղեցկուհիների՝ մարկիզուհի Ֆլորիին ու մարկիզուհի Ջինորիին: Երկու տիկնայք էլ, հիրավի, հրաշագեղ էին, բայց գեղեցկությամբ՝ միանգամայն հակադիր կերպարներ: Մարկիզուհի Ֆլորին զուտ իտալական տիպար էր՝ բարձրահասակ, բարեկազմ, ուղիղ դիմագծերով, ձյութի պես սև վարսերով ու աչքերով, բայց, ինչը խիստ տարօրինակ էր, բավականին պաղարյուն էր:

Մարկիզուհի Ջինորին առաջինի լիակատար հակապատկերն էր: Ցածրահասակ էր, ուներ հիասքանչ ոսկեգույն վարսեր, սև, արտահայտիչ մեծ աչքեր և գեղեցկահրաշխաղ խաղացկուն դեմք: Մարկիզուհին ծնունդով իսպանուհի էր՝ Կուրա կղզուց, և, ինչպես բոլոր իսպանուհիները, սիրում

էր շաղակրատել: Ես կախարդվել էի նրա խելքով ավելի, քան գեղեցկությամբ»:

Եթե ընդունենք, որ կորնետ Սավինը սխալվում է (ինչը նրա նոթերի սովորական հատկանիշն է), և «սև, արտահայտիչ մեծ աչքերով» մարկիզուհի Ջինորին ոչ թե իսպանուհի էր, այլ հայուհի, ապա կունենանք Ինջիի արտաքին նկարագրությունը:

Սակայն, կրկնում եմ, սա միայն ենթադրություն է, ոչ ավելի:

- 117 \* Միրա կամ Միրոս – հունական Կիկլադյան կղզիներից մեկը, որը գտնվում է Էգեյան ծովի հարավային մասում, արշիպելագի գրեթե կենտրոնում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

### Ց Ա Ն Կ

Ալիշան Դ., Միսական, Վենետիկ, 1892թ.

Ալիենեան Ն., Երեմիա Չելչյի Քեօմիրճեան. կեանքն եւ գրական գործունէութիւնը, Վիեննա, 1933թ.

Ալիենեան Ն., Օրագրութիւն Երեմիա Չելչյի Քեօմիրճեանի, Երուսաղեմ, 1939թ.

Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., 1961թ.

«Արշալոյս Արարատեան», 1842թ.

«Արշալոյս Արարատեան», 1843թ.

«Արշալոյս Արարատեան», 1844թ.

«Արշալոյս Արարատեան», 1864թ.

«Արշալոյս Արարատեան», 1875թ.

«Արշալոյս Արարատեան», 1904թ.

Արսլանեան Գ., Ուղեորութիւն յ'Եթովպիա, Կ.Պոլիս, 1933թ.

«Բազմավէպ», 1844թ.

«Բազմավէպ», 1846թ.

«Բազմավէպ», 1918թ.

«Բազմավէպ», 1919թ.

«Բազմավէպ», 1922թ.

«Բազմավէպ», 1925թ.

«Բազմավէպ», 1953թ.

«Բիւզանդիոն», 1909թ.

Գարտաշեան Ա., Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, հտ. Ա, Կահիրէ, 1943թ.,

Գարտաշեան Ա., Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, հտ. Բ, Պատմութիւն եգիպտահայ բարերարներու եւ կրթական հաստատութիւններու, Վենետիկ, 1986թ.

Դիմաքսեան Հ., Շիքք մ'անունք ի Միջերկրականէ, Կ.Պոլիս, 1878թ.

Երեմիա Քեօմիրճեան, Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ Օսմանցոց քազաւորացն, աշխատասիրությամբ Ժ.Ավետիսյանի, Ե., 1982թ.

Չարդարեան Վ., Յիշատակարան տարեգիրք 1941 տարւոյ, Կ. Պոլիս, 1911թ.

Շամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, աշխատասիրությամբ Մ. Նշանեանի, Երուսաղէմ, 1915թ.

Խառատյան Ա., Հայ գաղթականությունը Էգեյանի մերձափնյա շրջանում (XIV-XVIIIդդ.), ՊԲՀ, թիվ 4, 1988թ.

«Հանդէս Ամսօրեայ», 1890թ.

«Հանդէս Ամսօրեայ», 1926թ.

«Մասեաց Աղանի», 1857թ.

«Յուսաբեր», 1940թ.

Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավայան Ա., Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Ե., 1988թ.

«Ս. Էջմիածին», Վենետիկ, 1903թ.

Սարուխան Ա., Հոլլանդան և հայերը ԺՁ-ԺԹ դարերում, Վիեննա, 1926թ.

Վանդալ Ա., Հայերը և բարենորոգումները Թուրքիայում, Ե., 2001թ.

Քօսեան Յ., Հայք ի Չմիտնիա եւ ի շրջակայս, հտ. Ա., Չմիտնիա եւ հայք, հետազօտութիւն արձանագրութեանց եւ յիշատակարանաց, Վիեննա, 1899թ.

Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քեօմիրճեանի, աշխատասիրությամբ Մ. Նշանեանի, Երուսաղէմ, 1939թ.,

Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, т. II, ч. I, Е., 1964г.

Опыт трудов Вольнаго Российскаго собрания, ч. 4, 1778г., ч 5, 1780г.

Посольский наказ к Персидскому шаху 1618 года, Опыт трудов Вольнаго Российскаго собрания, ч. 4, 1778г., ч 5, 1780г.

Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898г.

<http://www.vostlit.info/Texts/rus15/Nomen/frametext.htm>

<http://lugovoy-k.narod.ru/marx/12/013.htm/>

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան .....	5
Աստվածատուր տոհմավազ .....	11
Ասլան և Ալփիար. “պատերազմի քաղաքի” բնակիչները.....	13
Ապրո չելէքի. “այր լայնախորհուրդ” .....	17
Չմյոտնիա՝ մյոտնից ծնվածը .....	40
Մատթեոս Ապրո. Աստծո կամքն ու երկրաշարժը .....	46
Պետրոս Ապրոն և Պյոտր Առաջինը.....	55
Ազգակցական կապեր - Ա .....	75
Յուսուֆյան եղբայրներ.....	76
Պողոս բեյ Յուսուֆյան.....	76
Պետրոս ամիրա Յուսուֆյան .....	82
Եղբայրների բարերարությունը.....	87
Աբրահամ Ապրո. կապիտալիստը, հայը, հայրը .....	91
Ազգակցական կապեր -Բ .....	98
Նուբարյաններ.....	98
Հայրեր և զավակներ .....	102
Տիգրան փաշա դ’Ապրո Բագրատունի. պետական այրը.....	103
Ինջի դ’Ապրո-Չինորի .....	114
Արամ դ’Ապրո .....	115
Իշխան Ասլան դ’Ապրո Բագրատունի. երջանիկ նկարիչը և դժբախտ հայրը .....	117
Վկայագրեր .....	131
Չմյոտնիայի հոգևոր առաջնորդ Մարտիրոս եպիսկոպոսի՝ Ապրոյանների ազգաբանության վերաբերյալ 1804թ. այրիլի 20-ի վկայագիրը .....	138
Հովհաննես դպիր Լեհացու Աստվածաշնչի (1656թ.) հիշատակարանից .....	146
Հույն ազգից Մակեդոնիայի Սուրբ Գևորգ եկեղեցու առնելու պատումը .....	153
Միլիվրիի հայոց եկեղեցու ժամագրքի հիշատակարանները .....	162
Ապրոների ընտանեկան Աստվածաշնչի հիշատակարանը՝ գրված 1691թ. փետրվարի 18-ին.....	172
Պյոտր I-ի շնորհագիրը զմյոտնացի հայեր Պետրոս Ապրոյին և նրա եղբայրներին տրված առանձնաշնորհների մասին (1717թ. հունվարի 28) .....	182
Ծանոթագրություններ .....	185
Օգտագործված գրականության ցանկ .....	205

ԽԱՉԱՏՈՒՐ ԶԱՎԵՆԻ ԴԱԴԱՅԱՆ

## ԱՊՐՈՅԱՆ

ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(XVIդ.-XXդ. առաջին քառորդ)

Համակարգչային էջավորողներ՝  
Վահագն Իսոյան, Վահրամ Մանուսաջյան

Սրբագրիչներ՝  
Նոնա Գասպարյան, Մարինե Դուրուկյան

Տպագրվել է «Գասպրինո» տպագրատանը

9(47.925

+ 7-12

հ

...Պիտեր, Աբրամ ու Ստեֆան Աբրոններին,  
երբ նրանք Մեր սույն Շնորհագրով  
առևտրի նպատակով Մեր Պետություններ  
կգան, նրանց ամենուրեք ազատ և առանց  
ուշացնելու ցամաքային թե ջրային որ ճա-  
նապարհով և որ քաղաքները որ կկամենան  
մեկնել, իրենց մարդկանցով և իրերով բաց  
թողնել՝ չհարուցելով ոչ մի դժգոհություն  
ու խռչրնդոտ...

ՊՅՈՏԲ 1-ի ՇՆՈՐՀԱԳՐԻՑ

1717թ. հունվարի 28